



ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ՄԱՍ 2



ՎՃՏԱՐԵՆ



**FRIEDRICH NAUMANN
FOUNDATION** *For Freedom.*

Հարավային Կովկաս

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

ՄԱՍ 2



Աճաքրես
Երևան
2021

Հրատարակող՝
Ֆրիդրիխ Նաումանի
«Հանուն Ազատության» հիմնադրամ



**FRIEDRICH NAUMANN
FOUNDATION** For Freedom.

Հարավային Կովկաս

*Սույն գրքում տեղ գտած կարծիքների և դիրքորոշումների համընկնումը
Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն Ազատության» հիմնադրամի և
Նրա աշխատակիցների տեսակետի հետ պարտադիր չէ:*

Կազմեց Արամ Մանուկյանը

Խմբագիրներ՝
Լիզա Ճաղարյան
Սեդա Մեսրոպյան
Իրավական խմբագրում՝
Արմեն Խաչատրյան

**Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական
բարեփոխումները: Մաս 2:– Եր., Անտարես, 2021.– 268 էջ:**

Ժողովածուում տեղ են գտել մի շարք հոդվածներ 90-ականներին Հայաստանում իրականացված քաղաքական բարեփոխումների վերաբերյալ (դատաիրավական համակարգ, իրավունք, կուսակցություններ, քաղիասարակություն, ազատ մամուլ, կրոն և խղճի ազատություն և այլն): Հոդվածագիրները հիմնականում այն պաշտոնյաներն են կամ գործիչները, որոնք ղեկավարել կամ իրականացրել են այդ գործընթացները:

Գիրքը նվիրվում է ՀՀ Գերագույն խորհրդի կազմավորման և Անկախության հռչակագրի ընդունման 30-ամյակին:

ISBN 978-9939-76-682-9



ԱՆՏԱՐԵՍ

© Ֆրիդրիխ Նաումանի
«Հանուն Ազատության» հիմնադրամ, 2021
© Անտարես (տպագրության համար), 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	5
Արամ Մանուկյան	
ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ	11
Բաբկեն Արարքցյան	
ԻՆՉՊԵՄ ՄՏԱԾԵԼ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	27
Ժիրայր Լիպարիտյան	
ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՒԼ	43
Աշոտ Ոսկանյան	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	65
Վահե Ստեփանյան	
ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄԸ ԵՐԿՈՒՆՔԻ ՄԵՋ	89
Գագիկ Զհանգիրյան	
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ.....	122
Հրանտ Նազարյան	
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1990-1995 ԹԹ.)	143
Վահե Ստեփանյան	
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԻՇԻԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ	164
Վլադիմիր Հովհաննիսյան	
ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	176
Աշոտ Սարգսյան	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ	
ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՂՍԵՆՍՈՒՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	190
Նժդեհ Հովսեփյան	
ԱԶԱՏ ՄԱՄՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ	
ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	204
Արամ Արքահամյան	
ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ	
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ	
ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	220
Վահե Սայադյան	
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ	
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ	
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ	235
Լուսինե Խառատյան	
ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ	254
Խաչատուր Բեգիրջյան	

ԱՌԱՋԱԲԱՆ

2020 թ. օգոստոսին լույս տեսավ «Հայաստանի Հանրապետության անկախությունը և ազատական բարեփոխումները» գրքի առաջին մասը (գրքի էլեկտրոնային տարբերակը կարող եք գտնել հետևյալ հղումով՝ <http://armunicat.nla.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=1734667>), որտեղ ներկայացված են 90-ականներին Հայաստանում իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումները: Հոդվածները մասնավորապես ներկայացնում են հողի սեփականաշնորհումը, հարկային, մաքսային, բանկային համակարգերում կատարված բարեփոխումները, արդյունաբերությունում, էներգետիկայի, կրթության, սոցիալական, առողջապահության, տեղական ինքնակառավարման համակարգերում անցումային շրջանի դժվարություններն ու հաջողությունները:

Ինչպես հույս էի հայտնել առաջին գրքում, հնարավոր դարձավ իրականացնել ժողովածուի երկրորդ մասի հրապարակումը, որը նույնպես նվիրվում է ՀՀ Գերագույն խորհրդի ձևավորման և Անկախության հռչակագրի 30-ամյակին:

Ժողովածուներում տեղ գտած բոլոր բարեփոխումները հասարակաստեղծ ու պատմաստեղծ համարձակ ու ազատական գործընթացներ էին: Այդ ժամանակահատվածի քաղաքական իշխանության կամքի ու աշխատանքի շնորհիվ դրանք դարձան ծրագրեր, օրենքներ, որոշումներ և հետևողականորեն նաև իրականացան:

Ներկայացնեմ մի քանի խոսուն օրինակ:

Գերագույն խորհուրդն իր գործունեության հինգ տարվա ընթացքում ընդունել է 1400 օրենք և որոշում, վավերացրել է շուրջ 150 միջազգային պայմանագիր ու համաձայնագիր: Սա հսկայական քանակ էր նորաստեղծ ոչ պրոֆեսիոնալ խորհրդարանի համար: Սրանց էլ

հաջորդել են մի քանի անգամ ավելի շատ ենթաօրենսդրական ակտեր ու կառավարության որոշումներ: Առաջին խորհրդարանն ու կառավարությունները բարեփոխումների դարբնոց էին: Բարեփոխումներն ընթանում էին զուգահեռաբար երկու ուղղությամբ. տնտեսական բնագավառում՝ շուկայական տնտեսության կայացում, սեփականաշնորհում և ապապետականացում, գների ազատականացում, դրամի ներդրում և այլն, ինչպես նաև ժողովրդավարական համակարգերի՝ իրավունքի, դատաիրավական համակարգի, խոսքի ու մամուլի, կրոնի ու խղճի ազատության, բազմակուսակցական, քաղաքացիական և ընտրական համակարգերի կայացում:

Միաժամանակ Հայաստանը ջանքեր էր գործադրում միջազգային կազմակերպություններին անդամակցելու և ազգերի ընտանիքին միանալու համար: Վերը նշված գործընթացները ճիշտ պատկերացնելու համար հարկավոր է նշել, թե ինչ ծանր պայմաններում էր գտնվում երկիրն այդ տարիներին: Դրանք էին՝ ավերիչ երկրաշարժի հետևանքները, տասնյակ հազարավոր զոհերն ու հաշմանդամները, քայքայված տնտեսությունը, հարյուր հազարավոր փախստականներն ու գործազրկության համատարած մակարդակը, պարտադրված պատերազմը՝ իր բոլոր ծանր հետևանքներով, Հայաստանը շնչահեղձ անող երկարատև ու տոտալ շրջափակումը, փլուզված Միության նախկին տնտեսական կապերի վերացումը և այլն: Սրանցից յուրաքանչյուրը կարող էր նորանկախ պետությունը ձախողման տանել, բայց Հայաստանը ոչ միայն պատվով հաղթահարեց դժվարությունները, այլև համարձակ իրականացրեց դժվարագույն բարեփոխումներ:

Այսպես, ՀՀ ԳԽ-ն 1991 թ. փետրվարի 26-ին ընդունեց «Հայաստանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որով վերջ դրվեց միակուսակցական քաղաքական համակարգին, ստեղծվեց բազմակուսակցական և կուսակցությունների համար իրավահավասար համակարգ: Կուսակցությունները դուրս եկան հիմնարկ-ձեռնարկություններից, կրթական համակարգից, զինվորական մասերից և դարձան տարածքային կառույցներ, ապաքաղաքականացվեց իրավապահ համակարգը: ՀՀ-ում ստեղծվեցին 80-ից ավելի քաղաքական կուսակցություններ: Առաջին խորհրդարանում կային 18 հասարակական-քաղաքական

կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչն այդպես էլ չգերազանցվեց հետագա խորհրդարաններում:

Օրենքի ընդունման շնորհիվ 10 տարվա ընթացքում գրանցվեց 2300 հասարակական կազմակերպություն, որոնք դարձան Հայաստանի ժողովրդավարացման կարևոր բաղադրիչը: ՀԿ-ներն ընդգրկեցին հանրապետության բոլոր ոլորտները՝ բարեգործությունից մինչև բնապահպանություն, իրավունքից մինչև միջազգային հարաբերություններ, մշակույթից, կրթությունից մինչև տարբեր ծառայություններ:

1991 թ. հունիսին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը հնարավորություն տվեց ազատականացնելու այս դաշտը, ինչի շնորհիվ արդարադատության նախարարությունում գրանցվեց 65 կրոնական կազմակերպություն: Հայ Առաքելական եկեղեցուն հանձնվեցին տասնյակ եկեղեցիներ ու վանքեր, հարյուրից ավելին դարձան գործող: Իրենց գործունեությունը պաշտոնապես սկսեցին ծավալել Հայ ավետարանչական, Կաթոլիկ, Ուղղափառ եկեղեցիները, Իրանի Իսլամական Հանրապետությանը հանձնվեց Կապույտ մզկիթը, բացվեց Սինագոգ, նաև այլ եկեղեցիներ ու աղոթատեղիներ:

Հաջորդ արմատական բարեփոխումը վերաբերում էր ազատ խոսքին: 1991 թ. հոկտեմբերի 8-ին ընդունվեց «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքը, հաջորդ տարիներին Հայաստանում սկսեցին տպագրվել 100-ից ավելի տպագիր միջոցներ, ստեղծվեցին մի քանի տասնյակ ռադիոկայաններ ու հեռուստաալիքներ: Համեմատելու համար ասենք, որ Խորհրդային Հայաստանում գործում էին երկու հեռուստաալիք ու մեկ ռադիոկայան, տպագրվում էին սահմանակափակ քանակով թերթեր:

1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո՝ դրա հիմքի վրա սկսվեց նոր դատական համակարգի, ոստիկանության, դատախազության, նախաքննական մարմինների ստեղծումը, որոնք պետք է համապատասխանեին ժողովրդավարական պետությանը, ապահովեին մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների ապահովումը և դրանց իրացումը: Ստեղծվեց մրցակցային եռաստիճան դատական համակարգ, սահմանադրական արդարադատությունը սկսեց իրականացվել Սահմանադրական դատարանի կողմից, համակարգը

սկսեց գործել հակակշիռների ու զսպումների մեխանիզմների հիման վրա, Վճռաբեկ դատարանին տրվեց իրավունքի զարգացման լիազորություն, ինչը նորանոր իրավահարաբերությունների և օրենսդրական դաշտի թարմացման համար լուրջ նախադրյալներ ստեղծեց:

Անկախությունից անմիջապես հետո ՀՀ-ն դիմեց անդամագրվելու միջազգային կառույցներին, ինչպես նաև աշխարհի տարբեր երկրների՝ դիվանագիտական կապեր հաստատելու նպատակով: Մեկ տարվա ընթացքում ՀՀ-ն անդամակցեց տասնյակ միջազգային կառույցների և դիվանագիտական կապեր հաստատեց աշխարհի 60 երկրների հետ, միացավ իրավունքի և այլ ոլորտների կարևորագույն կոնվենցիաների ու միջազգային համաձայնագրերի: Այս ամենի շնորհիվ Հայաստանը Հարավային Կովկասում համարվեց ժողովրդավարության կղզյակ: Հանրահավաքներն ու ցույցերը քաղաքական ուժերի համար դարձան քաղաքական գործունեության միջոց: Ազատության հրապարակը դարձավ այլախոհության և ըմբոստության հարթակ, իսկ ընտրությունները՝ քաղաքացիների ու քաղաքական ուժերի համար կամարտահայտման, մտքերի և ծրագրերի մրցակցման հնարավորություն: Ազգային մտածողության օրակարգից հանվեց զոհի, վախի, տեր փնտրելու հոգեբանությունը: Նոր քաղաքական միտքը թոթափեց հյուսիսից հարավ, արևելքից արևմուտք դեգերելու կարծրացած բարդույթը: Երազներով ու հեքիաթներով ապրելու քաղաքականությանը փոխարինեց իրատեսության ու հաշվարկների, հնարավորությունների հիման վրա պետականություն կառուցելու քաղաքականությունը: Երկիրը սկսեց գործել՝ առանց արկածախնդրությանն ու պոռոտախոսությանը տրվելու: Այս ամենի արդյունքում ձևավորվեց երկրի մեծագույն հարստությունը՝ ազատ քաղաքացին:

Ժողովածուն կազմելիս պարզվեց, որ անկախության տարիներին կատարված բարեփոխումների վերաբերյալ գրեթե բացակայում են համակարգված ուսումնասիրություններն այս ամենի մասին: Ավելին, վերջին 23 տարիներին խեղաթյուրվել ու վարկաբեկվել են դրանք՝ զրկելով աշակերտներին, ուսանողներին, ուսումնասիրողներին մեր նորագույն պատմության այդ հատվածի մասին անաչառ ու ամբողջական տեղեկություններ ստանալու հնարավորությունից: Կարծում եմ,

որ երկու ժողովածուներն էլ կարող են ծառայել որպես կից ուսումնական նյութ՝ ուսումնասիրողների ու հետաքրքրվողների, հասարակության լայն շերտերի համար:

Ժողովածուի ստեղծման աշխատանքներին աջակցության համար շնորհակալություն եմ հայտնում Բաբկեն Արարքցյանին, Ժիրայր Լիպարիտյանին, Վահե Ստեփանյանին և բոլոր հոգվածագիրներին, շնորհակալ եմ նաև Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամին՝ գրքի ստեղծման գաղափարը հավանության արժանացնելու և հրատարակումը կազմակերպելու համար:

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՀ ԳԽ պատգամավոր, 1990-1995 թթ.

ՀՀ ԱԺ պատգամավոր, 1995-1999, 2012-2017 թթ.

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

*Չկա գործ, որն իրականացնելն ավելի դժվար լինի,
վարելը՝ վտանգավոր, հաջողությունը՝ կասկածելի,
քան հին կարգերի փոխարինումը նորով:
Ով էլ ձեռնարկի նման գործ,
իրեն սպասում է թշնամանքը
նրանց, ում շահավետ են հին կարգերը, և
սառնությունը նրանց,
ուր ձեռնտու են նոր կարգերը:*

Մաքիավելի

Անկախ պետականություն ունենալու հայ ժողովրդի դարավոր երազանքն իրողություն է: Մեր սերնդի աչքի առջև ծնվեց և սկսեց առնականանալ Հայաստանի Հանրապետությունը, որը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ, դարձավ Միավորված ազգերի կազմակերպության անդամ և միջազգային համագործակցության լիարժեք սուբյեկտ: Հայաստան պետության ստեղծմանն ու կայացմանը անմիջականորեն ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանը: ԽՍՀՄ սահմանադրության համապատասխան հողվածով արձանագրված կոմունիստական գաղափարախոսական քողի վերացումից հետո Հայաստանում, նախկինից ժառանգած օրենսդրության համաձայն, հաստատվեց պառլամենտական համակարգ:

Անկախ Հայաստանի Հանրապետության հիմնադիր խորհրդարանը՝ Գերագույն խորհուրդը, կազմավորվել է 1990-ին, երբ գործող, ըստ էության, ձևական ընտրական համակարգում ընձեռվեց ընտրություն կատարելու իրական հնարավորություն: Հայաստանում, որն այդ ժամանակ խորհրդային հանրապետություն էր, Գերագույն խորհրդի ընտրությունները կազմակերպվել էին ԽՍՀՄ և ՀԽՍՀ սահմանադրություններին և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրությունների մասին օրենքին համապատասխան: Սակայն 1990-ի մայիսի 20-ին և հունիսի

3-ին (ընտրությունները տեղի ունեցան մեծամասնական ընտրակարգով՝ երկու փուլով) անցկացված ընտրություններն արմատապես տարբերվում էին խորհրդային իշխանության տարիներին կայացած բոլոր ընտրություններից. դրան նախորդած երկու տարիներին Հայաստանում ձևավորվել էր սկզբունքորեն նոր իրավիճակ, որովհետև ընտրություններին համապատասխան ծրագրով և իր թեկնածուներով մասնակցեց նոր ձևավորված այլընտրանքային քաղաքական ուժ՝ Հայոց համազգային շարժումը: 1988-ի փետրվարին Հայաստանում սկիզբ առած Ղարաբաղյան շարժումը՝ «Ղարաբաղ» կոմիտեի, իսկ 1989-ից՝ Հայոց համազգային շարժման ջանքերով, աստիճանաբար վերածեց ժողովրդավարական շարժման՝ խնդիր դնելով ստեղծել ազգային անկախ պետություն, լուծել Ղարաբաղյան հիմնահարցը: Ազգային վերելքի պայմաններում տեղի ունեցած ընտրություններում, չնայած կոմունիստական վերնախավի ջանքերին և միասնական կենտրոնի ամեն տեսակ ճնշումներին, քաղաքական իրադարձությունների հորձանուտում հայտնված Հայաստանի քաղաքացիները բազմաթիվ ընտրատարածքներում իրենց ձայնը տվեցին ժողովրդավարական ուժերի ներկայացուցիչներին: Ընտրությունների արդյունքում ստեղծվեց հասարակության մեջ իշխող տրամադրություններն արտացոլող, իր կազմով սկզբունքորեն նոր խորհրդարան, թեև շատ կողմերով դեռևս խորհրդային, քանի որ Հայաստանը շարունակում էր մնալ ԽՍՀՄ կազմում, և գործում էր խորհրդային օրենսդրությունը: Սակայն հենց այդ խորհրդարանը՝ դեռևս ԽՍՀՄ օրոք, ստանձնեց Հայաստան անկախ պետության իրավական ու քաղաքական հիմքերի ստեղծման առաքելությունը:

260 պատգամավորական տեղերից բաղկացած նոր խորհրդարանը սկսեց գործել հուլիսի 20-ից և առաջին իսկ օրերից ակտիվ ու բարդ պայքարում ձեռնամուխ եղավ նոր պետականության ստեղծմանը, կյանքի կոչեց ընդհանուր ժողովրդավարական վերափոխումները: Դրանք առաջին հերթին իրականացվեցին բուն խորհրդարանում: Նախ «Ժամանակավոր կանոնակարգում» (11.08.1990), հետագայում (08.07.1991) նաև Գերագույն խորհրդի կանոնակարգում նախատեսվեցին նոր մեխանիզմներ, որոնք ապահովում էին պատգամավորների կամքի անկաշկանդ արտահայտումը, մասնավորապես՝

կուսակցական խմբակցությունների, պատգամավորական խմբերի կազմավորումը: Այդ խմբակցությունների և խմբերի համար սահմանվեցին լրացուցիչ իրավունքներ, ինչը բնականոն պայմաններ էր ստեղծում դրանց արդյունավետ գործունեության համար: Այսպիսով, խորհրդարանում սկզբից ևեթ ապահովվեցին բազմակուսակցականությունը և խոսքի ազատությունը, որոնք էլ հիմք հանդիսացան Հանրապետությունում ներքաղաքական դաշտի զարգացման, նոր կուսակցությունների ձևավորման համար: Նշենք, որ խորհրդարանում ընտրվել էին հիմնականում ՀՀՇ-ի, կոմկուսի ներկայացուցիչները և մի խումբ, այսպես կոչված, անկախ խորհրդարանականներ: Աստիճանաբար պատգամավորների մի մասն անդամագրվեց տարբեր կուսակցությունների, 142 պատգամավորներին առաջին խորհրդարանում ներկայացնում էին 18՝ հիմնականում խորհրդարանի գործունեության ընթացքում ստեղծված հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Գործում էին «Արցախ», «Ազգային ժողովրդավարներ», «Ազատ խորհրդարանականներ», «Ազգային առաջադիմություն», «Լիբերալ-դեմոկրատներ», ՀՀԴ պատգամավորական խմբերը և ՀՀՇ, Հայկոմկուս կուսակցական խմբակցությունները: Իսկ խորհրդարանի գործունեության տարիներին գործել են ընդամենը 12 պատգամավորական խումբ և 5 կուսակցական խմբակցություն: Առաջին պատգամավորական խմբերը՝ «Արցախի կանչ» (1992-ից՝ «Արցախ») և «Ազգայնական» (գործել է մինչև 1991-ի մարտը), կազմավորվեցին 1990 թ. սեպտեմբերի 17-ին, իսկ դեկտեմբերին կազմավորվեց «Հանրապետությունը» (գործել է մինչև ՀՀՇ խմբակցության կազմավորումը): Հետագայում կազմավորվեցին նաև «Կոմունիստ» (1991 թ. մարտ, լուծարվել է առանց հայտարարության), «Անկախ ժողովրդավարներ» (1991 թ. հուլիս - 1993 թ. մարտ), «Ազգային ժողովրդավարներ» (1991 թ. նոյեմբեր), «Ազատ խորհրդարանականներ» (1992 թ. հունիս - 1994 թ. սեպտեմբեր, սակայն մեկ շաբաթ անց մասնակիորեն փոփոխված կազմով վերագրանցվեց), «Ագրարային» (1992 թ. հունիս - 1992 թ. հոկտեմբեր), «Համաձայնություն» (1992 թ. փետրվար, լուծարվեց առանց հայտարարության), «Լիբերալ-դեմոկրատներ» (1994 թ. սեպտեմբեր), «Ազգային առաջադիմություն» (1994 թ. նոյեմբեր), ՀՀԴ (1995 թ. հունվար) պատգամավորական խմբերը:

Օրենսդրության փոփոխությանը զուգահեռ՝ սկսած 1992-ից, խորհրդարանում կազմավորվեցին ՀՀՇ (1992 թ. փետրվար), ՀՌԱԿ (1992 թ. մարտ), ՀՀԴ (1992 թ. մարտ), ՀԱԺԿ (1992 թ. հոկտեմբեր), ՀԿԿ (1993 թ. մարտ) կուսակցական խմբակցությունները, դրանցից ՀՌԱԿ-ը (1994 թ. նոյեմբեր) և ՀԱԺԿ-ը (1993 թ. հունիս) դադարեցրին գործունեությունը՝ իրենց անդամների կուսակցությունից դուրս գալու կամ այլ խմբակցությունների ու պատգամավորական խմբերի անդամագրվելու պատճառով: ՀՀԴ խմբակցությունը գոյատևել է մինչև 1995 թ. հունվար, երբ հանրապետության Գերագույն դատարանի որոշմամբ ժամանակավորապես կասեցվեց այդ կուսակցության գործունեությունը, և ՀՀԴ խմբակցությունը վերափոխվեց պատգամավորական խմբի:

Արմատական փոփոխություններ կատարվեցին խորհրդարանի աշխատանքների կազմակերպման առումով: Նախկինում պառլամենտական երկիր հանդիսացող Հայաստանում Գերագույն խորհուրդը նստաշրջանները գումարում էր տարեկան երկու, երբեմն էլ՝ երեք անգամ մի քանի օրով, մշտական գործող էր ԳԽ ղեկավարությունը, լայն լիազորություններով էր օժտված ԳԽ նախագահությունը: Հասկանալի է, որ այդ կարգով և սկզբունքներով գործող զուտ ձևական մարմին հանդիսացող խորհրդարանը չէր կարող լուծել իր առջև դրված կենսական նշանակություն ունեցող խնդիրները, ուստի խորհրդարանը որոշեց աշխատանքն իրականացնել գոնե մասամբ պրոֆեսիոնալ հիմքի վրա, որովհետև գործող օրենսդրությունը չէր բացառում պատգամավորական լիազորությունների համատեղումն այլ գործունեության հետ, իսկ պատգամավորների մի մասը չցանկացավ հրաժարվել իր աշխատանքից: Խորհրդարանում ստեղծվեց 16 մշտական հանձնաժողով, որոնց մեջ ընդգրկվեցին հարյուրից ավելի պատգամավորներ: Խորհրդարանը դարձավ մշտապես գործող և հնարավորություն ստացավ իրականացնել սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության բարձրագույն մարմնի գործառույթները:

1990 թ. օգոստոսի 4-ին խորհրդարանում ներկայացված երկու հիմնական ուժերի՝ Հայաստանի կոմկուսի և Հայոց համազգային շարժման ներկայացուցիչների միջև սկզբունքային պայքարի մի քանի

քվեարկությունների արդյունքում Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Հայոց համազգային շարժման վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Սա այն ճամփաբաժանն էր, որից բացվեց Հայաստանի պատմության նոր՝ ոչ համայնավարական էջը: ՀՀ ներկայացուցչի՝ ԳԽ նախագահ ընտրվելն աներկբա նախանշեց խորհրդարանի որդեգրած ուղին: Խորհրդարանի ընդունած առաջին կարևորագույն փաստաթղթերից է սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին» Հռչակագիրը (23 օգոստոսի 1990 թ.), որը հռչակեց «անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»: Հռչակագիրը առաջին արեց կոմունիստական գաղափարախոսության հիմքի վրա ստեղծված հասարակական, քաղաքական համակարգը, սահմանեց պետական և հասարակական կարգի կառուցման հիմնական սկզբունքները՝ իշխանությունների բաժանում, սեփականության ձևերի իրավահավասարություն, խոսքի, մամուլի, խղճի ազատություն, քաղաքական բազմակարծություն, բազմակուսակցականություն և կուսակցությունների իրավահավասարություն, զինված ուժերի և իրավապահ մարմինների ապաքաղաքականացում: Ուշագրավ էր նաև, որ թեև կայացած ընտրություններում ՀՀ միասնական ցուցակով առաջադրված թեկնածուներից առաջին երկու փուլում պատգամավոր էին ընտրվել միայն 72-ը (11-ը՝ Արցախից ընտրված պատգամավորներ)՝ Հայաստանի կոմկուսի ցուցակով առաջադրված ու ընտրված թեկնածուներից պակաս, սակայն ՀՀ թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանի՝ ԳԽ նախագահ ընտրվելուց հետո խորհրդարանում որոշիչ էր դառնում նոր քաղաքական ուժի՝ ՀՀ քաղաքական գիծը: Դրա վառ ապացույցն էր ՀՀ ծրագրային հիմնադրույթների հիման վրա ձևավորված «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի ընդունումը, որին կողմ քվեարկեց քվեարկությանը մասնակցած պատգամավորների ճնշող մեծամասնությունը:

Միասնականության նման աննախադեպ մթնոլորտում ընդունված Հռչակագիրը հիմնարար նշանակություն ունեցող փաստաթուղթ էր և իր շատ դրույթներով հակասում էր խորհրդային գործող սահմանադրությանը՝ փաստորեն շրջանառությունից դուրս թողնելով վերջինիս համապատասխան հոդվածները: Հռչակագիրը ոչ միայն հայտարարում էր անկախ պետականություն հաստատելու իր հավատամքը,

այլև սկզբնավորում և ճանապարհ էր հարթում հասարակական նոր հարաբերությունների, քաղաքական, տնտեսական և իրավական արմատական բարենորոգումների, ժողովրդապետության հաստատման համար: Հռչակագիրը միանշանակ ցույց տվեց գերագույն իշխանություն կրող մարմնի՝ Գերագույն խորհրդի վճռականությունը՝ շարունակել ազգային պետության կառուցումը և մերժել կոմունիստական հասարակարգի վերահաստատման հնարավորությունը:

Հռչակագրին համապատասխան՝ Գերագույն խորհուրդը որոշեց ՀԽՍՀ-ն վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ 12-րդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ (24.08.1990):

Հռչակագիրը միաժամանակ դարձավ ազգային օրենսդրության և նոր սահմանադրության ստեղծման հիմքը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր Հռչակագրի սկզբունքներին, ուստի խորհրդարանը ստիպված էր անընդհատ կատարել սահմանադրական փոփոխություններ ու շտկումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանն ընդունեց առաջին սահմանադրական օրենքը՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» (10.12.1990), որի համաձայն՝ մինչև նոր սահմանադրության ընդունումը դադարեցվեց սահմանադրական այն դրույթների գործողությունները, որոնք հակասում էին Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին: Անկասկած, այդ փոփոխությունները խաթարում էին խորհրդային սահմանադրության ամբողջականությունն ու ներքին տրամաբանությունը, քանի որ դրանք իրավաբանորեն հստակ կերպով համապատասխանում էին ամբողջատիրության պահանջներին՝ կոմկուսին ընձեռելով իշխանությունը բռնադատելու անսահմանափակ հնարավորություններ: Ակնհայտ էր, որ միայն փոփոխություններով՝ անգամ արմատական, հնարավոր չէր ստեղծել նոր սահմանադրություն: Այդ իսկ պատճառով ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով (15.11.1990), որի վրա դրվեց նոր Սահմանադրության նախագծի մշակման բարդ ու պատասխանատու խնդիրը:

Խորհրդարանը, շարունակելով պետականության հաստատման և ամրապնդման քաղաքականությունը, 1991-ին հանդես եկավ «ԽՍՀՄ

Գերագույն խորհրդի 1991 թվականի հունվարի 16-ի «ԽՍՀՄ-ի պահպանման հարցով ԽՍՀՄ հանրաքվե կազմակերպելու և անցկացումն ապահովող միջոցառումների մասին» որոշման վերաբերյալ» հայտարարությամբ (16.01.1991), որով հստակորեն ձևակերպեց իր բացասական վերաբերմունքը ԽՍՀՄ հանրաքվեի անցկացման նկատմամբ, հաջորդ հայտարարությամբ (30.01.1991) ԽՍՀՄ պահպանման հարցի մասին ԽՍՀՄ հանրաքվեն համարեց չնախապատրաստված, իսկ դրա անցկացումը՝ անընդունելի, ընդգծելով, որ նման հանրաքվեն խոչընդոտում է հանրապետությունների, ինքնավար կազմավորումների ինքնորոշման իրավունքի իրագործումը: ՀՀ ԳԽ-ն, հետևողականորեն շարունակելով անկախ պետականության հաստատման քաղաքականությունը, որոշեց ՀՀ տարածքում չանցկացնել ԽՍՀՄ հանրաքվեն (01.03.1991), միաժամանակ ընդունվեց ԽՍՀՄ օրենսդրությանը համապատասխան «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը (01.03.1991):

1991-ի սեպտեմբերի 21-ին ՀՀ տարածքում տեղի ունեցավ հանրաքվե՝ հետևյալ հարցով. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս»: Հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 2 միլիոն 56 հազար 758 քաղաքացիներից 2 միլիոն 42 հազար 627-ը (94,39 %) Հայաստանի անկախությանը պատասխանեցին՝ «Այո»: Գերագույն խորհուրդը՝ ՀՀ հանրաքվեի արդյունքների հիման վրա, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն (23.09.1991): Հանրաքվեի անցկացման օրը՝ սեպտեմբերի 21-ը, Գերագույն խորհրդի որոշմամբ (24.09.1991) համարվեց տոնական օր: Հարկ է նաև ընդգծել, որ Հայաստանը միակն էր ԽՍՀՄ հանրապետություններից, որ ԽՍՀՄ-ի կազմից դուրս եկավ բացառապես գործող Սահմանադրության և օրենքներին համապատասխան:

Անկախ պետության հռչակումից և հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանը թևակոխեց զարգացման նոր փուլ՝ պետականության ամրապնդման, ժողովրդավարության ավանդույթների խորացման շրջան, որում շարունակում էր մեծ դեր խաղալ Գերագույն խորհուրդը:

Հետևելով օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման վերաբերյալ անկախության մասին Հռչակագրի դրույթներին և ՀՀ քաղաքական համակարգի արդիականացման ու զարգացման պահանջներին՝ Գերագույն խորհուրդը հիմնեց Հայաստանի նախագահի պաշտոն (25.06.1991): Գերագույն խորհուրդը, գործող սահմանադրությանը համապատասխան, իր ձեռքում էր կենտրոնացրել ողջ իշխանությունը, սակայն, ելնելով պետության ավելի արդյունավետ կայացման բարձրագույն շահերից, հաստատեց նախագահական կառավարման համակարգ՝ վերջինիս զիջելով իր լիազորությունների մի մասը: «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքին համապատասխան՝ նախագահը ղեկավարում է գործադիր իշխանությունը, իսկ Գերագույն խորհուրդն իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Իշխանությունների այսպիսի տարանջատումն ամրագրվեց «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով (25.09.1991) և «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքով (19.11.1991): Արդեն ստեղծված նոր օրենսդրությամբ 1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը:

Առաջին իսկ օրերից խորհրդարանն ուշադրության կենտրոնում է պահել ժողովրդավարացման և մարդու իրավունքների պաշտպանության հարցերը: Ելնելով անկախության մասին Հռչակագրում ամրագրված սկզբունքներից՝ խորհրդարանն ընդունել է բազմաթիվ օրենքներ և որոշումներ, որոնց շնորհիվ հնարավոր է եղել ոչ միայն հակադրվել միակուսակցականությանը, այլև հանրապետությունում իրապես հաստատել բազմակուսակցականություն, կուսակցությունների հավասարություն, ստեղծել մամուլի ու խոսքի ազատության համար իրական նախադրյալներ: Այս առնչությամբ հիշատակենք «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին» ՀՀ ԳԽ որոշումը (05.11.1990), ըստ որի՝ արգելվեց կոլեկտիվներում կուսակցական կազմակերպությունների բջիջներ ստեղծելու սկզբունքը՝ սա փոխարինելով տարածքային

սկզբունքով: Այս որոշումն առաջին հերթին նպատակաուղղված էր բազմակուսակցականության հաստատմանը, կուսակցությունների իրավահավասարության ապահովմանը, կոմկուսի քաղաքական մենաշնորհի վերացմանը, որը, փաստորեն, բոլոր կոլեկտիվներում ուներ ճյուղավորված ցանց, բայց և միաժամանակ՝ այդ որոշումով բոլոր կուսակցությունները ստանում էին նույն կարգավիճակը և, հետևաբար, դառնում էին իրավահավասար:

Հետագայում ևս այդ ուղղությամբ խորհրդարանն ընդունեց մի շարք այլ օրենսդրական ակտեր, ինչպիսիք են՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը (26.02.1991), որով օրենսդրորեն հաստատվեցին բազմակուսակցականությունն ու կուսակցությունների իրավահավասարությունը, «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքը (8.10.1991), «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը (17.06.1991) և այլն: Միաժամանակ, խորհրդարանի որոշումներով Հայաստանը միացավ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին, քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագրին ու դրան կից ֆակուլտատիվ արձանագրությանը և բազմաթիվ այլ միջազգային կոնվենցիաների ու համաձայնագրերի: Հանրապետության քաղաքացիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը բազմիցս հաստատվել է ԳԽ ընդունած բազմաթիվ ակտերով, որոնցով լուծվել են հանրապետության կենսապահովման և քաղաքացիների առանձին կատեգորիաների հետ առնչվող բազմաթիվ հիմնահարցեր: Իր գործունեության ընթացքում ԳԽ-ն երկու անգամ օրենք է ընդունել (1990, 1992) ամնիստիայի (համաներման) մասին:

Խորհրդարանը յուրաքանչյուր առանձին դեպքում ուշադրությամբ քննարկել է և, ցուցաբերելով քաղաքական վճռականություն, համապատասխան որոշումներ է ընդունել հանրապետությունում դրսևորվող ամեն տեսակի լարվածությունները, ճգնաժամային իրավիճակները մեղմելու, հետագա լարվածությունները կանխելու ուղղությամբ: Դա մասնավորապես դրսևորվեց 1990-ի օգոստոսին, երբ առանձին զինված խմբավորումներ սպառնում էին ապակայունացնել իրավիճակը: Իրադարձությունների հետագա բարդացումը կանխելու

նպատակով հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն, ինչը մեծապես նպաստեց իրադրության կայունացմանը և կանխեց հնարավոր զինված բախումները:

Խորհրդարանն իր գործունեության ընթացքում անմիջականորեն և մշտապես զբաղվել է հանրապետության տնտեսության արմատական վերափոխումների, քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների հաստատման հիմնահարցերով: Արդեն իսկ անկախության մասին Հռչակագրում ամրագրվել էին այդ վերափոխությունների, տնտեսական բարենորոգումների հիմնական սկզբունքները, ապա ընդունվեցին նաև բազմաթիվ կոնկրետ օրենքներ, որոշումներ, որոնք կարգավորում էին հանրապետության տնտեսական ոլորտում ձևավորվող արմատական նոր իրավահարաբերությունները: Այդ օրենքների շարքում հարկ ենք համարում նշել «Սեփականության մասին» օրենքը (31.10.1991), որով ամրագրվեց սեփականության բոլոր ձևերի օրինականության ու հավասարության, սեփականության ժառանգման և այլ սկզբունքները. «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը (22.01.1991) և «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը» (29.01.1991) վճռական նշանակություն ունեցան գյուղում տնտեսական նոր հարաբերությունների կայացման և ագրարային բարեփոխումների զարգացման հարցում: Այդ օրենքներին համապատասխան՝ հողը որպես սեփականություն հանձնվեց գյուղացիներին, և դրա հետ միաժամանակ հնարավորություն ընձեռվեց կամավորության հիման վրա ստեղծել գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ՝ ի հակադրություն ստիպողական կոլեկտիվացման, ինչը տեղերում իրականացնելուն մեծ մասնակցություն ցուցաբերեցին ԳԽ պատգամավորները:

Տնտեսական բարենորոգումների իրականացման խնդրում կարևորագույն տեղ է հատկացվել ապապետականացմանը և սեփականաշնորհմանը: Խորհրդարանը բազմիցս անդրադարձել է այդ հարցին, մանրամասն քննարկել դրանք և ընդունել համապատասխան օրենքներ ու որոշումներ՝ սկսած 1991-ի սկզբից (այդ շարքում առաջինը «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքների մասին» օրենքն է (13.02.1991)): Աստիճանաբար

խորհրդարանը խորացրել, զարգացրել է սեփականաշնորհման հայեցակետը՝ մեծապես նպաստելով դրա իրականացմանը: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» օրենքով (10.06.1993) քաղաքացիներին հնարավորություն ընձեռվեց՝ որպես սեփականություն անհատույց ստանալ պետական բնակարանային ֆոնդը: Հետագայում խորհրդարանը, արդեն կուտակված փորձի հիման վրա, ընդունեց մի շարք այլ օրենքներ և ստեղծեց մշտապես գործող սեփականաշնորհման պետական հանձնաժողով: Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացին մեծապես խթանեցին «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարական օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը (27.08.92) և այդ օրենքում 1993-ին և 1994-ին կատարված փոփոխությունները: Այդ օրենքով, փաստորեն, սկսվեց պետականորեն ծրագրված սեփականաշնորհման և ապապետականացման իրագործման նոր փուլ: Այդ օրենքով ՀՀ բոլոր քաղաքացիներին սահմանված կարգով տրվեցին սեփականաշնորհման սերտիֆիկատներ, իսկ պետական ձեռնարկության գույքի 20%-ը անհատույց սեփականաշնորհվեց տվյալ ձեռնարկության աշխատակիցներին:

Խորհրդարանը բազմիցս անդրադարձել է մասնավոր ձեռնարկատիրության զարգացման խնդիրներին, հարկային և ֆինանսավարկային քաղաքականության, բանկային համակարգի ձևավորման սկզբունքներին:

Խորհրդարանը բացառիկ դերակատարություն ստանձնեց ազգային արժույթը շրջանառության մեջ դնելու հարցում: 1993 թ. հոկտեմբերին, ՀՀ ԳԽ որոշմամբ, դրամաշրջանառության կարգավորման համալիր միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով ստեղծվեց ՀՀ դրամաշրջանառության կարգավորման պետական միջգերատեսչական հանձնաժողով, որի վրա դրվեցին իրավիճակային որոշումներ ընդունելու պատասխանատվությունը և ազգային արժույթը շրջանառության մեջ դնելու գործառույթի իրականացումը: 1993 թ. նոյեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում ազգային արժույթը՝ դրամը, դարձավ օրինական միակ վճարամիջոցը:

Մինչ այդ Արժույթի միջազգային հիմնադրամին և Համաշխարհային բանկի խմբի կառույցներին անդամակցելու մասին ընդունված համապատասխան օրենքի (28.04.1992) շրջանակներում ծավալված համագործակցության, «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» և «Բանկի և բանկային գործունեության մասին» օրենքների (30.03.1993) կիրառմամբ և ԿԲ ղեկավար մարմինների ձևավորմամբ հիմք դրվեց ՀՀ ժամանակակից ֆինանսական ու մասնավորապես բանկային համակարգի ստեղծմանն ու զարգացմանը:

Խորհրդարանական քննարկումների, լսումների ընթացքում մշտապես արծարծվել են շրջափակման պայմաններում տնտեսական ճգնաժամից դուրս գալու ուղիները, աղետի գոտու վերականգնման, բռնագաղթվածների տեղավորման և բազմաթիվ այլ խնդիրներ:

Հարկ է նաև նշել, որ առաջին խորհրդարանի պատգամավորները, որոնց զգալի մասը բավականին մեծ հեղինակություն էին վայելում ՀՀ-ում, անմասն չէին Հայաստանում տեղի ունեցող տարաբնույթ գործընթացներին, խորհրդարանի գործունեության առաջին օրվանից ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում երկրում իրականացվող բարեփոխումներին, գործադիր իշխանության ներկայացուցիչների հետ միասին տեղերում աշխատանք էին տանում թե՛ օրինակ՝ ագրարային բարեփոխումների, մասնավորապես հողի սեփականաշնորհման կազմակերպման, թե՛ ձեռնարկությունների մասնավորեցման ժամանակ, թե՛ տարածքային կառավարման մարմինների ձևավորման, թե՛ հանրապետության ողջ տարածքում բնակչության կենսական շահերին առնչվող բազմաբնույթ սուր խնդիրների լուծման ու հակասությունների կարգավորման ուղղությամբ:

Խորհրդարանի գործունեությունում կարևորվել է այլ երկրների խորհրդարանների հետ բազմազան կապերի հաստատումը: Սկզբնապես այդ կապերն ունեին պատահական բնույթ, սակայն աստիճանաբար դրանք խորացան և դարձան համակարգված: Այդ կապերն օգնում էին ոչ միայն ուսումնասիրելու խորհրդարանային տարաբնույթ աշխատանքների կազմակերպման փորձը, այլև մեծապես նպաստում էին միջպետական հարաբերությունների խորացմանը: Սկսած 1992-ից, միջխորհրդարանական կապեր են հաստատվել բազմաթիվ երկրների խորհրդարանների հետ, իսկ մի շարք երկրների՝

Վրաստանի (19.05.1993), Լիբանանի (21.12.1993), Սիրիայի (24.12.1993), Ռուսաստանի (10.06.1994), Ֆրանսիայի (09.03.1995), Ուկրաինայի (17.03.1995) խորհրդարանների հետ ստորագրվել են միջխորհրդարանական համագործակցության վերաբերյալ համաձայնագրեր:

Այս ամենից բացի, միջխորհրդարանական կապերն ընդլայնելու նպատակով խորհրդարանում ստեղծվել էին տարբեր երկրների խորհրդարանների հետ համագործակցության պատգամավորական խմբեր: Գործում էին «Հայաստան-Ֆրանսիա», «Հայաստան-Մեծ Բրիտանիա» «Հայաստան-Կանադա» «Հայաստան-Ավստրալիա», «Հայաստան-Իրան», «Հայաստան-Լիբանան», «Հայաստան-Գերմանիա» պատգամավորական խմբեր, իսկ այդ երկրներում գործում էին համանման պատգամավորական խմբեր:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատվիրակություններն ակտիվորեն մասնակցում էին մի շարք միջազգային խորհրդարանական կազմակերպությունների աշխատանքներին: Մասնավորապես, Հայաստանը դարձել էր դեռևս 1889-ին ստեղծված տարբեր երկրների խորհրդարանները միավորող միջազգային կազմակերպության՝ Միջխորհրդարանական միության լիիրավ անդամ:

Մեր պատվիրակությունը պաշտոնապես մասնակցում էր Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության աշխատանքներին, շարունակում էր Եվրոպայի խորհրդի կազմակերպությանն անդամագրվելու գործընթացը: Հայաստանի Հանրապետության խորհրդարանն ԱՊՀ մասնակից պետությունների և Սևծովյան տնտեսական համագործակցության միջխորհրդարանական վեհաժողովների հիմնադիր անդամներից էր և իր գործունեությամբ նպաստում էր դրանց աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, հանրապետության խորհրդարանի նախագահը 1995-ի հունիսից դարձել էր Սևծովյան համագործակցության խորհրդարանական վեհաժողովի նախագահ:

Նորաստեղծ խորհրդարանը միշտ իր առաջնահերթ պարտքն է համարել սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդար պայքարին, քանի որ Ղարաբաղյան հիմնահարցի լուծումը նշանակում էր հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնում: ԽՍՀՄ և ԽՄԿԿ ղեկավարությունն այդ հիմնահարցի լուծումը

մտցրել էր փակուղի՝ դրանով իսկ վտանգելով Լեռնային Ղարաբաղի բնակչության բուն գոյությունը: ԽՍՀՄ զինված ուժերի և ՆԳՆ հատուկ ստորաբաժանումների անմիջական մասնակցությամբ ամբողջովին հայաթափվեցին Ադրբեջանի հայաշատ շրջանները: Ուստի հասկանալի է, որ հայոց խորհրդարանը չէր կարող անտարբեր վերաբերմունք դրսևորել և, բնականաբար, մշտապես ու հետևողականորեն՝ բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանել և օժանդակել է Լեռնային Ղարաբաղին: Եվ ամենևին պատահական չէր, որ ԳԽ-ում, ի թիվս մյուս մշտական հանձնաժողովների, ստեղծվեց Արցախի հարցերի հատուկ հանձնաժողով (13.08.1990), որի հիմնական խնդիրն էր խորհրդարանին տեղյակ պահել Արցախում կատարվող իրադարձությունների մասին և ներկայացնել համապատասխան որոշումների նախագծեր ու առաջարկություններ: Արցախում զարգացող իրադարձություններին համապատասխան, Գերագույն խորհուրդը միշտ ձեռնարկել է անհրաժեշտ և համարժեք գործողություններ, դրանք մշտապես խորհրդարանում դարձել են քննարկման առարկա, ԳԽ-ի տարբեր մակարդակների ներկայացուցիչներ մասնակցել են երկկողմ ու բազմակողմ բանակցությունների, ձեռնարկվել են անհրաժեշտ դիվանագիտական քայլեր: 1993 թ.-ին ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովը՝ ՀՀ պատվիրակության նախաձեռնությամբ, ստեղծեց ԼՂՀ-ի հարցով խաղաղարար խումբ՝ Ղրղզստանի խորհրդարանի նախագահի գլխավորությամբ: Խմբի անդամները մի քանի անգամ այցելեցին տարածաշրջան, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղ:

Խմբի և ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի նախաձեռնությամբ 1994 թ. մայիսի 5-ին ստորագրվեց Բիշքեկյան արձանագրությունը, ինչը հիմք դարձավ պատերազմի դադարեցման և ստեղծեց հրադադարի պայմաններ: Հրադադարն ուժի մեջ մտավ 1994 թ. մայիսի 12-ին: Բիշքեկյան արձանագրությունը ստորագրեցին Լեռնային Ղարաբաղի, Հայաստանի, Ռուսաստանի, Ղրղզստանի խորհրդարանների նախագահները, Ռուսաստանի Դաշնության նախագահի ներկայացուցիչը, ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի քարտուղարության ղեկավարը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կատարած աշխատանքների ծավալը պատկերացնելու համար նշենք, որ 10

նստաշրջանների ընթացքում տեղի է ունեցել 459 լիազույժար նիստ (այդ թվում՝ 37 արտահերթ), ԳԽ-ն ընդունել է 188 օրինագիծ, 1211 որոշում, վավերացրել է 151 միջազգային պայմանագիր ու համաձայնագիր:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, լինելով Հայաստանի նորանկախ պետության առաջին խորհրդարանը, բացառիկ պատմական առաքելություն է ունեցել հայոց պետականության կայացման գործում: ԳԽ-ն պետք է կարողանար ստեղծել պետության կայացման և գոյության համար անհրաժեշտ իրավական դաշտ, արմատապես վերակառուցել հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող համապատասխան պետական կառույցների համարյա բոլոր ոլորտները՝ տնտեսությունը, ֆինանսները, սոցիալական, կրթական ու մշակութային ոլորտները, դատական համակարգը, իրավապահ մարմինները, ազգային բանակը, արտաքին քաղաքականությունը, էկոլոգիան, հարկային ու մաքսային ծառայությունները և այլն՝ ըստ էության երկրի կյանքի անխտիր բոլոր ոլորտները: Խորհրդարանը՝ համապատասխան որոշումներով և օրենքներով քայլ առ քայլ կարողացավ, ըստ էության, բոլոր հիմնական ոլորտներում կատարել անհրաժեշտ փոփոխություններ, ինչպես նաև ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք նախկինում գոյություն չէն ունեցել առհասարակ:

Հիմնարար նշանակություն ունեցավ ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի աշխատանքը ՀՀ նոր սահմանադրության մշակման ուղղությամբ: ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովը 1993-ին սկսեց ՀՀ Սահմանադրության առաջին նախագծի մշակման աշխատանքները: Նախագծեր էին ներկայացրել նաև մի քանի կուսակցություններ: Համաժողովրդական քննարկումից և ԳԽ-ում քննարկումից հետո (1994 թ.) Սահմանադրական հանձնաժողովի ընդլայնված կազմը (քննարկումների արդյունքում որոշվեց հանձնաժողովը համալրել ԳԽ-ում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչներով)՝ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի և ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքյանի համանախագահությամբ, մշակեց նոր բարեփոխված տարբերակ, որը, ՀՀ սահմանադրական օրենքին (27.03.1995) համապատասխան, ԳԽ-ի հավանությանն արժանանալուց հետո դրվեց հանրաքվեի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները 1995 թ. հուլիսի 5-ի հանրաքվեի ժամանակ իրենց վճռական «Այո»-ն ասացին ՀՀ Սահմանադրությանը, որը հանդիսացավ մեր պետության քաղաքական գարգացման հիմնական ուղենիշը:

Այժմ, հետադարձ հայացք գցելով Անկախ Հայաստանի Հանրապետության հիմնադիր խորհրդարանի ողջ գործունեության ընթացքի վրա, ընդհանուր առմամբ ակնհայտ է դառնում, որ չնայած բարդ ռազմաքաղաքական և տնտեսական պայմաններին՝ ՀՀ ԳԽ-ն կատարեց իր պատմական առաքելությունը, դրեց պետականության հիմքերը, իրական պայմաններ ստեղծեց պետականության կայացման և հաստատման, նրա հետագա զարգացման համար:

Սկսելով իր աշխատանքները «Անկախության հռչակագրի» և ավարտելով համաժողովրդական հանրաքվեով Հայաստանի պատմության մեջ առաջին սահմանադրության ընդունմամբ՝ ԳԽ-ն հանդիսացավ պետության կազմավորման և զարգացման հիմնական կենտրոնը, որին հաջողվեց համեմատաբար կարճ ժամկետում ստեղծել անհրաժեշտ պետական ինստիտուտներ: Դժվար է վիճարկել մեր հասարակությունում ծավալվող և այսօր իշխող դարձած այն տեսակետը, որ առաջին խորհրդարանը՝ ՀՀ Գերագույն խորհուրդը, լավագույնն էր մեր նորագույն պատմության օրենսդիր մարմինների շարքում:

Հայաստանի Հանրապետությունը դարձավ միջազգային հանրության՝ որպես Անկախ պետության լիարժեք սուբյեկտ՝ անդամակցելով Միացյալ ազգերի կազմակերպությանը (03.03.1992), և մեր եռագույնը ծածանվեց ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի առջև:

ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՅԱՆ

ՀՀ ԳԽ նախագահի 1-ին տեղակալ, 1990-1991 թթ.

ՀՀ ԳԽ նախագահ, 1991-1995 թթ.

ՀՀ ԱԺ նախագահ, 1995-1998 թթ.

ԻՆՉՊԵՄ ՄՏԱԾԵԼ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մտածելակերպերի պայքարը

Հայաստանի Երրորդ հանրապետության հռչակումից երեք տասնամյակ անց պատմաբանը կարող է հետադարձ ակնարկով հարց տալ, թե որոնք են եղել այս ժամանակաշրջանի ամենակարևոր փոփոխությունները: Չէ՞ որ պատմության էությունը փոփոխությունները տեսնելը, գնահատելը, արժևորելն է ու դրանք ավելի լայն ծիրի մեջ տեղավորելը:

Ընթերցողը կարող է շատ արագ պատասխանել այդ հարցին ու նշել մի քանի շատ հստակ երևույթ. Ղարաբաղյան շարժում ու հակամարտություն, հետո՝ պատերազմ, անկախություն, ժողովրդավարության ու շուկայական հարաբերությունների հաստատման գործընթաց, ներքին քաղաքական վերիվայրումներ:

Եվ այդ պատասխանը ճիշտ պատասխան կլինի: Միայն թե ամբողջական չի լինի:

Պատմության մեջ կան փոփոխություններ, որոնք այնքան էլ տեսանելի ու շոշափելի չեն, որովհետև չունեն թվական, չունեն պայթյուն, չունեն տարեդարձ, չունեն հուշարձան: Սակայն առանց դրանց դժվար թե տեսանելի երևույթներ տեղի ունենային:

Այդ փոփոխությունները վերաբերում են մտածողության՝ ինչպես քաղաքական մտածելակերպի մեջ, այնպիսի շրջադարձերի, որոնց ազդեցությունը երբեմն ավելի խորն է, քան իբրև հեղափոխություն որակված ռեժիմային վերիվայրումները: Երբ հարցականի են ենթարկվում տիրապետող մտածելակերպի ենթադրույթները, որոնք ընդունված էին որպես բնատուր ճշմարտություններ, որոնք այնքան անքննարկելի են, որ նույնիսկ պետք չունեն ձևակերպվելու, ենթադրույթներ, որոնք ի վերջո մերժվում են և մի կողմ են ձգում այդ տիրապետող մտայնությունը, դա հեղափոխություն է:

Այն, ինչ պատահեց Հայաստանում՝ աննկատելիորեն սկսվելով 1970–ականներից, հասունացավ 1980–ականներին և որպես քաղաքական մտքի մեջ հիմնական նորություն՝ արտահայտվեց Ղարաբաղյան

շարժման ստեղծած արագ զարգացումների ծիրի մեջ, ոչ այլ ինչ էր, քան հեղափոխությանը համահավասար փոփոխություն:

Փոփոխության էությունը մի պարզ թվացող հարցի պարզ պատասխանի մեջ էր:

«Արդյո՞ք Հայաստանը կարող էր անկախ պետություն լինել»:

Պատասխանը, որը մինչ այդ եղել էր «ոչ», դարձավ «այո»: Ոչ միայն դա, այլ փաստորեն՝ Հայաստանը դարձավ անկախ պետություն:

Իսկ այդ հեղափոխական մտածելակերպի աղբյուրը «Ղարաբաղ» կոմիտեն էր, որը վերաճեց Հայոց համազգային շարժում կուսակցության և ստանձնեց նոր մտածողությունը քաղաքականության վերածելու և այդ անկախությունը ձեռք բերելու քաջությունն ու պատասխանատվությունը:

Հայաստանը կարող է անկախ պետություն լինել:

Պետականություն ունենալու կամ նրանից զրկված լինելու խնդիրը մեր ժողովրդի պատմության և պատմագրության հիմնական առանցքներից մեկն է: Երբ պետականություն ունեինք, մեր ժողովրդի առջև դրված հիմնական խնդիրներն ավելի լուծելի էին, իսկ մեր պատմագրությունն այդ կառույցն ընդունել է որպես առանցք: Պետականության բացակայության պայմաններում մեր ժողովուրդը շատ ավելի ծանր վտանգների առջև է կանգնել, իսկ մեր պատմագիրները դժվարություն են ունեցել պատում շարադրելու: Նման ժամանակներում, որը բուն Հայաստանի պարագայում ընդգրկում է գրեթե ամբողջ երկրորդ հազարամյակը, մեր ժողովրդի տարբեր դասեր մտածել են, երբեմն նույնիսկ գործել՝ պետականություն ստեղծելու ուղղությամբ:

Հարցը շարունակել է հայ քաղաքական միտքը չարչրկել նույնիսկ Առաջին Հանրապետության հիմնադրության մի քանի տարիներին: Այն ժամանակ Հայաստանի Հանրապետության սովետականացումը տվեց այդ հարցի պատասխանը, որը եղել է «ոչ»: Այսինքն՝ Առաջին Հանրապետության որոշ հատկանիշներ, կառույցներ մնացել են, սակայն անկախությունը չի մնացել: Հայաստանի կառավարման ձևը, տնտեսական ու մշակութային զարգացման սկզբունքներն ու

հատկանիշները, ինքնավարության աստիճանը և արտաքին ու պաշտպանական քաղաքականությունը ամբողջովին ճշտվել են այլ տեղ:

Ուրեմն, հարցը մնացել է հետևյալ ձևակերպումով. Հայաստանը կարո՞ղ է ձեռք բերել ռազմավարական և քաղաքական հնարավորություն՝ ի գորու լինելու իբրև ինքնիշխան պետություն, սահմանելու և տնօրինելու իր կենսական շահերը, թե՞ շարունակելու է պահպանել իր գոյության մանդատը՝ իբրև կայսերական իշխանությունից կախյալ պետություն՝ ի հատուցումն վերջինիս խոստացած պաշտպանության:

Սովետականացումից հետո մի քանի տասնամյակ Հայաստանի ներքին քաղաքականության մեջ ազատության ու անկախ պետականության գաղափարները պահպանվել էին Սփյուռքի մի հատվածում, Հայ հեղափոխական դաշնակցության ու իր համակիրների շրջանակի մեջ: Սակայն 1970–ական թվերից սկսյալ՝ այդ կուսակցությունն էլ, Սփյուռքի մյուս կուսակցությունների նման, Սովետական Հայաստանը որդեգրեց որպես պետականության ընդունելի տարբերակ՝ անկախություն և ազատություն ձեռք բերելու նպատակը դատապարտելով երազային լոզունգների:

Ուրեմն, խնդիրն այն չի եղել միայն, որ օտար, ավելի ուժեղ մի պետություն մեզանից խլել է այդ անկախությունն ու ազատությունը, այլ մեր քաղաքական կուսակցությունները, կոմունիստները՝ Սովետական Հայաստանում, իսկ դաշնակցությունը, հնչակյաններն ու ռամկավարները՝ Սփյուռքում, ազատության ու անկախության բացակայությունն ընդունել են ոչ միայն որպես փաստ, այլ նաև՝ որպես դրական տարբերակ: Իսկ հայ քաղաքական միտքը, եթե կարելի է այդ որակումը տալ նման երևույթի, այդ երկու իրավունքներից հրաժարվել է՝ կացությունը պատկերացնելով որպես փոխզիջումային տարբերակ: Ըստ այդ տարբերակի՝ ազատության ու անկախության իրավունքներից հրաժարվելն անհրաժեշտ է՝ ստանալու համար կայսերական պետության պաշտպանությունը Թուրքիայից, որը, ըստ այդ պատկերացման, պատրաստ է Հայաստանի ժողովուրդը բնաջնջելու, եթե Հայաստանը չենթարկվի Ռուսաստանին և անկախ պետություն դառնա:

Այդ վախն է անկախության նկատմամբ ժխտական դիրքորոշման հիմքը՝ իր պարզեցված, սակայն ոչ պարզունակ ձևակերպման մեջ:

Մի շարք կոտորածներով և քսաներորդ դարում իրականացված ցեղասպանությամբ հարուցված, վայրագ թուրքի պատկերով ամրապնդված, պանթուրքիզմի մշտական ուրվականով սնուցված, իբրև զոհի ու գաղութացվածի հոգեբանություն ներշնչած, Հայաստանի ինքնահռչակ դատապաշտպանների կողմից հմտորեն բանեցված այդ վախն է, որ փաստորեն աղճատել է ազգային շահերի ընկալումը:

Խնդիրն այն է, որ այդ վախը շփոթվել էր ռազմավարական հիմնադրույթի հետ:

Ցեղասպանությունը, դրա շահարկումը և Թուրքիայի կողմից դրա մերժումը կաթվածահար էին արել հայ ժողովրդի հավաքական ոգին: Մեր ամբողջ պատմությունը և բոլոր կարելիությունները տրորվել էին, երբ ցեղասպանությամբ էր սահմանված մեր անցյալը: Ազգը չի կարող պատկերացնել անկախ ապագա, եթե ապագայի նրա միակ պատկերացումը կրկին զոհ դառնալու հեռանկարն է: Քաղաքականության հիմքում դրված էին ցեղասպանության վախը և առկախված անկախության կարելիությունը: Այդ բոլորը ներկայացուցված էր որպես իրապաշտ ու զգոն մտածողություն: Այդ կուսակցությունները ամեն կարելի բան արեցին, որպեսզի այդ «մտածողությունից» դուրս ամեն բան նկատվի արկածախնդրություն, եթե ոչ՝ դավաճանություն:

Խնդիրն այն չէ, որ ցեղասպանություն չէր եղել կամ որ պետք չէր հաշվարկների մեջ տեղ տալ տարբեր սցենարների: Խնդիրն այն էր, որ այդ մարդիկ այլ սցենարներ չէին ուզում պատկերացնել: Թե ինչու կայսերակալի ներշնչած այդ զիջումը դարձրեցին մերը, մեր շահերին համապատասխանող զիջում՝ այլ քննարկման նյութ է: Այստեղ կարող եմ միայն նշել, որ կարծեք՝ ցեղասպանության տիրապետությունը մեր մտածողության վրա որպես և՛ անցյալ, և՛ ապագա՝ առանց ներկայի, հետը բերել է նաև զոհի հոգեբանությունը՝ որպես տիրապետող քաղաքական մշակույթ: Իսկ զոհը պատմության կերտմանը չի մասնակցում, նրա դերը միայն սպանվելն է: Այդ աշխարհայացքի պատմության կերտման մեջ դեր ունեն միայն թուրք զոհարարը և օտար «փրկարարը»: Նման պատմագրության առավելությունն այն է, որ զոհը պատասխանատվություն չի վերցնում իր արածի ու չարածի, ասածի ու չասածի համար:

Հայաստանի ազգային ժողովրդավարական շարժումը հարցականի տակ դրեց վախի վրա հիմնված չափանիշի վավերականությունը, կասկածի ենթարկեց պանթուրքիզմին վերագրված ճակատագրապաշտ դերը, վերահաստատեց ազգային օրակարգ սահմանելու իրավունքը, և բանական խոսակցությունը վերահաստատվեց իբրև հարցերի քննարկման ձև՝ փոխարինելով անքննարկելի վախին:

1989 թ. դեռևս Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի բանավեճերից սկսած՝ Հայոց համազգային շարժումն (ՀՀՇ) այս հարցերին տվեց մի շարք խիստ հստակ պատասխաններ. եթե Հայաստանը կենսունակ և անկախ պետություն դառնալու հույս է փայփայում, պետք է հաղթահարի ավանդական մտածողությունը: Այս դրույթը հակադրվեց հայ քաղաքական մտքի կողմից ընդունված պատկերացմանը: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը՝ ՀՅԴ-ի ուժեղ աջակցությամբ, դեմ կանգնեց անկախության գործընթացին՝ վկայակոչելով ցեղասպանության անմիջական ու անխուսափելի վտանգը: Բնազդական հակադրությունը ՀՀՇ-ին և Լևոն Տեր-Պետրոսյանին, ինչպես Հայաստանի քաղաքական կյանքում նրանց տիրապետության օրոք, այնպես էլ՝ իշխանությունից հեռանալուց հետո, ուղղակիորեն կապված է այս հիմնական հարցում նրանց որդեգրած դիրքորոշման հետ: Հարցի էությունը պարզ էր. ինչի՞ վրա պիտի հիմնվեր հայ քաղաքական միտքը, ինչի՞ պետք էր դիմել անկախության հարցին պատասխան տալու համար. չքննադատված վախի՞, թե՞ բանական խոսակցության ու քննարկման:

Ուշադրություն պետք է դարձնել նաև ՀՀՇ-ի մտածելակերպի մեկ այլ կողմին: Մեր քաղաքական մտածելակերպը՝ մանավանդ սփյուռքյան, առաջ էր մղում մի հսկայական պարադոքս: Մի կողմից մարդիկ պնդում էին, որ Թուրքիայի նկատմամբ վախն այնքան անմիջական ու անխուսափելի էր, որ պետք էր անկախությունից ու ազատությունից կամովին հրաժարվել, մյուս կողմից՝ այդ նույն մարդիկ անդադար սուր էին ճոճում Թուրքիայի դեմ, հողեր ու փողեր պահանջում և հայիոյում. հստակ չէր՝ ո՞ւմ նկատի ունեին որպես դաշնակից, որ իր համար պիտի իրականացներ այդ բոլորը: Նման պարադոքսը կարելի էր շարունակել, եթե միայն քաղաքական մտքի ու գործի մեջ կապ չեն

տեսնում, երբ պատասխանատու չեն զգում իրենց ասածի ու արածի համար և կամ՝ երբ մենք ո՛չ մեզ ենք լուրջ ընդունում, ո՛չ էլ մեր ասածը:

Նոր մտածելակերպը մեր քաղաքականությունը տեղավորեց իրականության, պատասխանատվության ու լրջության գետնի վրա:

1980-ական թվականների վերջերին ԽՍՀՄ-ը, որի բաղկացուցիչ մասն էր Հայաստանը, մոտ էր պայթյունի, սակայն ոչ մի կառավարություն աշխարհում չէր սպասում դրան, և սոսկ սակավաթիվ անհատներ էին ակնկալում դա: ԽՍՀՄ-ը դեռևս գերտերություն էր, և բոլոր որոշումները, ռազմավարությունը, հաշվարկները կատարվում էին այն գիտակցությամբ, որ այն շարունակելու է գոյատևել: ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար և երկրի փաստացի ղեկավար Միխայիլ Գորբաչովը «բացել էր» խորհրդային հասարակությունը իր «գլասնոստով» (ինչ-որ աստիճանի քաղաքական հրապարակայնություն) և «պերեստրոյկայով» (սահմանափակ տնտեսական վերակառուցում), որ ԽՍՀՄ-ն իբրև սոցիալիստական համակարգ և իբրև կայսրություն պահպանելու վերջին ճիգն էր: Նույնիսկ եթե մարդիկ, հատկապես Արևմուտքում, չէին ցանկանում տեսնել դա, Գորբաչովը քաջ գիտեր, որ համակարգը տնտեսապես ու քաղաքականապես սնանկ էր:

Ղարաբաղյան շարժման հետ Հայաստանի քաղաքական կյանքը լցվեց կուսակցություններով, որոնք ներկայացնում էին ծայրահեղ աջից մինչև ծայրահեղ ձախ ներկայանակի բոլոր երանգները, եթե այստեղ առհասարակ տեղին է «ավանդական» տերմինի գործածումը: Սակայն պայքարի մի հատուկ տեսակ է, որ պայմանավորեց Լ. Տեր-Պետրոսյանի օրոք քաղաքական պայքարի ենթահողը: Երբ անկախությունը արդեն փաստ էր, պայքարը տեղափոխվեց այլ տեղ: Հստակացան երկու ճամբարներ:

Լ. Տեր-Պետրոսյանն ու Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) ներկայացնում էին առաջին ճամբարի միջուկը և պաշտպանում էին հետևյալ աշխարհայացքը. պետք էր հաղթահարել տանջահար անցյալը՝ որպես ապագայի ճշտորոշիչ, գիտական գնահատական տալ ցեղասպանությանը, Հայաստանին ու հայ ժողովրդին հասցնել նորմալ վիճակի, խուսափել գաղափարախոսական կապանքներից և պրագմատիկ ուղի բռնել: Այս խումբը միավորում էր մի շարք քաղաքական

գործիչների ու խմբավորումների, որոնք ՀՀՇ-ի ու Լ. Տեր-Պետրոսյանի հետ առանձին հարցերում տարաձայնություններ ունեցան, սակայն, իմ կարծիքով, կիսում էին միևնույն հիմնական համոզմունքները:

Երկրորդ ճամբարը՝ Վազգեն Մանուկյանի ղեկավարած Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ), Հայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ) և Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ), յուրաքանչյուրն իր ուրույն ձևով փառաբանում էր «ազգային գաղափարախոսությունը», որը Հայաստանին ու հայ ժողովրդին վերագրում էր «բարձրագույն» գաղափարի, իդեալի, առաքելության դեր կամ նորաստեղծ պետականությունը տեսնում էր միայն որպես միջոց՝ «ծովից ծով Հայաստան» ստեղծելու տեսլականի համար: Այս ճամբարի մարդիկ Հայաստան պետությանն ու նրա ժողովրդին մի նախասահմանված դեր էին հատկացնում շատ ավելի, քան այդ ժողովրդի արժանապատիվ գոյության ապահովումն էր:

Երկրագնդի վրա Հայաստանի ու հայության զբաղեցրած տեղի այս երկու տարամետ և միմյանց ավելի ու ավելի ընդդիմացող հայացքները մթազնեցին ամեն մի նորմալ բանավեճ: Մոլեգին պայքար էր Հայաստանի ոգու համար: Երկրորդ ճամբարի գաղափարախոսների մոտեցումը հիմնված էր անհանդուրժողականության և անձնականացած ատելության վրա հանդեպ այն հերձվածողի, որը մարմնավորում էր «ազգային գաղափարախոսության» բացակայությունը, և որի անունն էր՝ Լևոն Տեր-Պետրոսյան:

Լ. Տեր-Պետրոսյանն ու ՀՀՇ-ն

Լ. Տեր-Պետրոսյանի ու ՀՀՇ-ի համար պետականության նպատակն այն էր, որ Հայաստանի քաղաքացիներն իրենք կարողանան սահմանել իրենց պետական շահերը, խնդիրները և անվտանգության հասնելու ռազմավարությունը: Պետականությունը մի մեխանիզմ էր, որի միջոցով տվյալ երկրի բնակիչներն ապահովում են միջազգային հանրության մեջ իրենց օրինական տեղը՝ այն ձևով, ինչպես իրենք են դնում իրենց սեփական խնդիրները, սահմանում իրենց ազգային շահերը և հետապնդում դրանց՝ իրենց հարմար ձևով: Կառավարության նպատակներն են երկրի ու ժողովրդի անվտանգության ապահովումը,

այնպիսի պայմանների երաշխավորումը, որոնք հանգեցնում են քաղաքացիների քաղաքական, տնտեսական ու սոցիալական բարեկեցության և այն խնդիրների հաղթահարումը, որոնք սպառնում են կամ վտանգում այդ նպատակներին: Հասարակության վերափոխումը և ժողովրդի բարեկեցության ապահովումը ժամանակ են պահանջում, դրանք լավագույնս երաշխավորված են լինում, երբ իրականացվում են շրջահայացությամբ: Ոչ մի հեղափոխություն, գաղափարախոսություն կամ ռեժիմ չի կարող ստեղծել ակնթարթային տնտեսական զարգացում կամ արդյունավետ գործառույթ կառույցներ: Գաղափարախոսական ավյունը չի կարող փոխարինել ժամանակին, գերեռանդուն ազգայնականությունը չի կարող փոխարինել շրջահայացությանը: Անկախության նպատակն էր Հայաստանի ժողովրդին հնարավորություն տալ զգալու և գործելու այնպես, ինչպես անում են նորմալ ժողովուրդները:

Այս մտածողությունն ուներ նաև մեկ այլ բաղկացուցիչ կողմ: Անկախությունը անհրաժեշտ էր ո՛չ միայն ձերբազատվելու համար այլ պետության տիրապետությունից և ստանձնելու համար ինքն իր շահերը սահմանելու և հետապնդելու իրավունքը, այլ նաև կարենալ փոխելու համար կառավարման անազատ, միակուսակցական, մենատիրական ձևը, որը պարտադրվել էր այդ տիրապետող պետության կողմից: Այս տրամաբանությամբ ժողովրդավարությունն անքակտելիորեն կկապվեր անկախության գաղափարին. մի բան, որն այնքան էլ հիմնական չէր այլ քաղաքական ուժերի մտածողության մեջ:

Լ. Տեր-Պետրոսյանն ու ՀՀԾ-ն Հայաստանի անկախության երաշխիքը որոնում էին հավասարակշռված արտաքին քաղաքականության մեջ, իսկ առավելագույն անվտանգությունը՝ բոլոր հարևանների հետ բնականոն հարաբերությունների մեջ:

Թուրքիայի հետ հարաբերությունների նորմալացումն այս պրագմատիկ արտաքին քաղաքականության մասն էր և ժողովրդի կյանքի նորմալացման նախապայմանը: Սակայն ինչպես իրագործել նման խնդիր մի հարևանի հետ, եթե ճիշտ է, որ նա քո ժողովրդին առաջին իսկ առիթով ոչնչացնելու էր: Այստեղ Տեր-Պետրոսյանն ու ՀՀԾ-ն ավելի նուրբ ու ճշգրիտ ընկալում ցույց տվեցին Ցեղասպանության իմաստին ու մեր քաղաքականության մեջ դրա դերին: Անկախության

պարագայում նոր և անխուսափելի ցեղասպանության վախից մեկնությանը՝ անկախության դեմ գնացող քաղաքական ուժերի համար ջարդելն ու սպանելը թուրքի և թրքական պետության համար բնածին հատկանիշներ էին, անկախ շրջապատից ու պայմաններից: Նման վարկածներն այդ քաղաքական ուժերի համար ընդունված և անքննարկելի ճշմարտություններ էին: Լուրջ քննարկման պարագայում կարող էր քաղաքական մտածելակերպի ամբողջ կառույցը փլվել:

Իսկ Տեր-Պետրոսյանն ու իր գործակիցները Ցեղասպանությունը տեսնում էին որպես պատմական, թերևս՝ նաև մշակութային երևույթ, որն արդյունք էր պատմականորեն բացատրելի հանգամանքներում, բացատրում էին, որ ազգի բնության հետ կապելը հակազիտական է ու կծառայի միայն հայության մեջ անկախության ձգտման արգելակմանը: Իսկ այն չափով, որ տակավին որևէ վտանգ կա, կարելի է դրա վտանգը նվազեցնել դիվանագիտական ու լայն շրջանակների փոխհարաբերություններ ձեռնարկելով, բայց նաև Ռուսաստանի հետ փոխադարձ պաշտպանական պայմանագիր ապահովելով:

Մտածելակերպի մեջ հեղափոխության հիմքում կար այդ քննարկումը: Առանց այդ պատմության ճիշտ մեկնաբանության ու զգաստ մտածողության՝ Շարժումը դժվար պիտի կարողանար հասցնել անկախության: Վախը հաղթահարել, մտահոգությունը վերածել պետական մակարդակի լուծելի խնդրի:

Ազգային զարթոնքի առաջին հանգրվանում կար Լեռնային Ղարաբաղի հարցը: ՀՀԾ-ի համար Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը Ղարաբաղի ժողովրդի անվտանգության ու կոլեկտիվ իրավունքների ապահովման մեջ էր: 1988 թ.-ին այդ իրավունքները հետապնդվում էին Հայաստանի հետ միավորման նպատակի միջոցով: 1992 թ.-ին այդ նպատակը հարմարեցվեց հետխորհրդային իրողություններին: Ղարաբաղը Հայաստանի խնդիրներից մեկն էր, որքան էլ այն խիստ յուրահատուկ և էական լիներ: Ո՛չ դրա էությունը, ո՛չ լուծման ռազմավարությունը չեն կարող սահմանվել կամ հետապնդվել Հայաստանի իրողություններից անջատ: Լ. Տեր-Պետրոսյանը գտնում էր, որ տնտեսապես, սոցիալապես ու քաղաքականապես թույլ և դիվանագիտության մեջ մեկուսացված Հայաստանը պիտանի չէր լինի Ղարաբաղի տարածքի կամ ժողովրդի պաշտպանության համար:

ՀՀՇ-ի և Լ. Տեր-Պետրոսյանի համար Ղարաբաղյան պատերազմը պարտադրված էր Ղարաբաղին ու Հայաստանին, և այն պետք էր շահել, քանի որ Հայաստանի ոչ մի կառավարություն չէր կարող նոր ցեղասպանություն կամ տեղահանություն թույլ տալ: Սակայն, երբ նրանց անվտանգությունն արդեն ապահովված լիներ, հակամարտությունը պետք է լուծվեր, որպեսզի Հայաստանին ու Ղարաբաղին նորմալ վիճակի հասնելու հնարավորություն ընձեռվեր:

Ըստ այդմ՝ Ղարաբաղի պատերազմը պաշտպանողական պատերազմ էր, ոչ թե նվաճողական: Հայաստանը տարածքային հավելում չէր որոնում ընդհանրապես: Ղարաբաղի հիմնախնդիրը պետք է լուծվեր միջազգային օրենքի շրջանակներում՝ Ղարաբաղի կենսական շահերի, այլ ոչ թե ձևական կամ խորհրդանշական առավելությունների հիման վրա:

Լ. Տեր-Պետրոսյանը, բարեփոխումների ու անկախության ամրացման համար քաղաքական, տնտեսական ու սոցիալական բազա ստեղծելու առումով, խաղաղության պայմանագրի դերը վճռորոշ էր համարում: Դրա համար նա պատրաստ էր ընդունել ադրբեջանական ու հայկական կողմերի փոխադարձ զիջումների վրա հիմնված այնպիսի մի կարգավիճակ ապահովող լուծում, որը բացառում էր Ադրբեջանի գերակայությունը Ղարաբաղի նկատմամբ, ապահովում էր անվտանգության երաշխիքներ՝ ներառյալ սահմանային կարգավորումները, որոնցով Ղարաբաղը սահմանակից էր դառնում Հայաստանին: Բուն կարգավիճակի հարցի լուծումը կարելի էր, նույնիսկ անհրաժեշտ էր հետաձգել: Սակայն հակամարտությունը պետք է վերջ գտներ:

Այս լուծումն այն ամենը չէր, ինչ ուրիշները կարող էին ցանկանալ, սակայն այն ամենն էր, ինչ անհրաժեշտ էր Ղարաբաղին: Ղարաբաղի անվտանգության համար ոչ անհրաժեշտ տարածքների վերադարձը լինելու էր խաղաղության այդ պայմանագրին հասնելու միջոցը: Առանց կարգավիճակի համաձայնության՝ խաղաղության պայմանագիրն ընդունելի էր, քանի որ այն, փաստորեն, անձեռնմխելի էր թողնում Ղարաբաղի փաստացի կարգավիճակը՝ Ադրբեջանից անկախ և Հայաստանի հետ գրեթե միավորված:

Հակամարտությունը ժամանակին լուծելու դեպքում նաև ավարտվելու էին Հայաստանի շրջափակումները, բացվելու էին

հաղորդակցության միջոցներն ու ճանապարհները՝ դրանցով թույլ էր տրվելու, որ Հայաստանը դեր ունենա տարածաշրջանային ու միջմայրցամաքային կապերի մեջ, և վերացվելու էին արտաքին ներդրողների մեծամասնության կողմից Հայաստանը վտանգավոր ու անապահով գնահատելու հիմքերը: Ղարաբաղի հակամարտության ժամանակին լուծումը չորս հարևաններից երկուսի՝ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ ևս նորմալ հարաբերություններ կապահովեր և կմեղմեր մյուս երկու հարևանի՝ Վրաստանի ու Իրանի, ինչպես նաև միջազգային մնացած հանրության հետ հարաբերությունների լարվածությունը:

Մնում էր պետության հարաբերությունների հարցը՝ իր սահմաններից դուրս բնակվող հայության հետ: Հայոց պետությունը սովորական պետություն էր, որ պատկանում էր իր քաղաքացիներին, թե՛ համայն հայության «տունն» էր՝ անկախ այն բանից, թե որևէ հայ որտեղ է բնակվում և թե որ երկրի քաղաքացի է: Հայաստանի կառավարությունը պատասխանատու է ողջ հայության, նրա իղձերի ու երազանքների համար: Եվ, ի վերջո, ինչ է նշանակում հայ լինել:

ՀՀԸ-ի և Լ. Տեր-Պետրոսյանի կարծիքով պետությունը պետք է ստանձներ այն հարցերի պատասխանատվությունը, որ անհրաժեշտ էին իր շահերի համար և իր սահմաններից ներս ապրող ազգաբնակչության համար: Պետությունը նաև իր ներդրումն է կատարում՝ միջազգային օրենքի սահմանների շրջանակում պաշտպանելու համար այլ երկրների հայության շահերն ու կարիքները: Ամեն դեպքում երկրի սահմաններից դուրս բնակվող հայերը, բացի Ղարաբաղի ու դրա բնակիչների մասնավոր դեպքից, հայ ժողովրդի մի մասն էին՝ թեև ոչ իրավական առումով: Հայերը մեկ ժողովուրդ են պատմականորեն և որոշ չափով՝ մշակութային առումով, նույնիսկ՝ հոգեպես: Սակայն իրավականորեն՝ սփյուռքահայերն այլ երկրների քաղաքացիներ են: Նրանք հնարավորություն ունեն վերադառնալու հայրենիք և վայելելու բոլոր բարիքներն ու ստանձնելու քաղաքացիության բոլոր պատասխանատվությունները: Սակայն ուտոպիստական, նույնիսկ վտանգավոր է իրավական տարբերությունների զանցառումը: Ազգի երկու հատվածները շատ բան ունեին միմյանց տալու, սակայն հարաբերությունները պետք է հիմնված լինեին փոխադարձ հարգանքի ու տարբերությունների ընդունման վրա:

Սա էր աշխարհայացքը: Այն նվաճումների երկար ցանկ չի պարունակում: Տեսակետը ներկայացնում է այն համատեքստը, որի միջով էին դիտվում պրորբլեմները և ընդունվում քաղաքական գլխավոր որոշումները: Այն չի ապահովում, որ յուրաքանչյուր պաշտոնյա յուրաքանչյուր դեպքում գործի այլասիրաբար կամ ուղղակիորեն այս իդեալի սահմաններում: Այն նաև չի արդարացնում ճախողումները՝ անձնական թե քաղաքական, որոնք քայքայեցին քաղաքականությունը և ՀՀԾ-ի ու, վերջիվերջո, Լ. Տեր-Պետրոսյանի նկատմամբ ժողովրդի մի մասի վստահությունը:

Սակայն ճախողումները չեն նսեմացնում այս մոտեցման դերը՝ ըմբռնելու համար Լ. Տեր-Պետրոսյանի ղեկավարած Հայաստանի բռնած ուղին և հասկանալու համար դրա ներկայացրած արժեքների ու նպատակների դեմ եղած հակադրությունը:

Այն մտածելակերպը, որի վրա հիմնված է անկախ պետականության հիմնավորումը, կթելադրի նաև այդ երկրի դիվանագիտության ոճն ու նկարագիրը: Այդ շրջանի դիվանագիտության առաջին և, թերևս, ամենակարևոր հատկանիշը ղեկավարության կողմից անկախության և պետականության նկատմամբ պատասխանատվություն ստանձնելն էր: Այսինքն, մենք ստեղծում ու պահպանում ենք անկախությունն ու պետականությունը, դրանք նկատելով էական նպատակներ, որոնց հաջողությունը պայման է՝ ապահովելու համար ժողովրդի անվտանգությունը, ազատությունն ու բարօրությունը և երկրի առջև ծառայած խնդիրները երկրի շահերի հիման վրա լուծելու համար:

Հայաստանը եղավ Սովետական Միության այն հանրապետություններից, որոնց ժողովրդային շարժումը և անկախության համար ձգտումը հիմնովին ցնցեցին այդ միության հիմքերը՝ նրանից հետ խլելով օրինակարգության դիմակը և այդ ձևով կարելի դարձնելով իր անկախության ձեռքբերումը:

Հայաստանն այդ ծրագիրն իրականացրեց խաղաղ ու օրինական միջոցներով, ժողովրդին խնայելով վտանգավոր ցնցումներից: Դիվանագիտական մեծածավալ աշխատանքով իրականացրեց՝

- ◀ Անկախության ճանաչման համար օգտագործելով նաև Սփյուռքի տարբեր համայնքների միջոցները
- ◀ Շատ արագ դեսպանատներ բացեց՝ սկսելով ամենակարևոր երկրներից
- ◀ Հաստատեց իր հավատարմությունը միջազգային դաշնագրերին և կոնվենցիաներին
- ◀ Անդամակցեց Միացյալ ազգերի կազմակերպությանը, նորանկախ երկրների հասարակապետությանը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը և այլն՝ դառնալով միջազգային հասարակության լիիրավ անդամ:

Հայաստանն առաջնահերթ կարևորություն տվեց երկրի անվտանգության համար ամենակարևոր կռվանին՝ իր հարևանների հետ բնականոն բարիդրացիական հարաբերություններ հաստատելու աշխատանքին: Իրանի և Վրաստանի հետ դա հաջողվեց արագ: Դժվար լուծելի էր Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների հարցը: Այդ ուղղությամբ Հայաստանի դիվանագիտությունն իր խնդիրը նկատեց այդ դժվար հարցերի լուծումը:

- ◀ Ադրբեջանի պարագայում Ղարաբաղյան հակամարտության լուծումը դարձավ Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր առանցքը: Երբ հակամարտությունը վերածվեց պատերազմի, կարելի եղավ այդ պատերազմը հաջողությամբ ավարտի բերել 1994-ին, խուսափել նոր պատերազմից և փոխադարձ զիջումների հիման վրա խաղաղություն հաստատել: Այդ նպատակի համար էլ Հայաստանը ծավալեց իրապաշտ և եռանդուն գործունեություն՝ հիմնված միջազգային միջնորդությանն աջակցող և դրան խթանող իր իսկ նախաձեռնությունների վրա:
- ◀ Պատմությունը ցույց տվեց, որ Տեր-Պետրոսյանի մոտեցումն էր ճիշտ:
- ◀ Թուրքիայի հետ դիվանագիտական երկկողմանի բնականոն և բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար Հայաստանը ձեռնարկեց ուղղակի բանակցություններ: Թեև այդ նպատակը կարելի չեղավ իրականացնել Ղարաբաղյան պատերազմի պատճառով, համենայն դեպս՝ կարելի եղավ խաղաղ

հարաբերություններ ունենալ և որոշ բնագավառների պարագայում առաջընթաց արձանագրել: Ամեն դեպքում, նոր ցեղասպանություն տեղի չունեցավ:

- ◀ Ռուսաստանի հետ Հայաստանն իր հարաբերությունները դրեց բարեկամական ու փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա՝ ի վերջո ստորագրելով երկրի անվտանգության համար հիմնաքար դարձած երկկողմանի ու երկարատև դաշինք:
- ◀ Հայաստանը բազմակողմանի և բազմաոլորտ գործակցություն հաստատեց Եվրոպական երկրների, Եվրոպական միության և ԱՄՆ-ի հետ:

Այսինքն՝ Հայաստանը մի կողմից մշակեց տարածաշրջանային անվտանգության, իսկ մյուս կողմից՝ միջազգային հասարակության գործոն և հարգված անդամ դառնալու ճգտող հավասարակշռված արտաքին քաղաքականություն: Եվ այդ բոլորը բխում էին այդ նոր մտածողությունից, որը մերժում էր պատմությունն ու ժողովրդի ցավն օգտագործել՝ նրան զլանալու համար իր ազատությունն ու անկախությունը, մերժում էր երազների, պատրանքների, անիրական գաղափարախոսությունների քաղաքականությունը և, փոխարենը, հետապնդում էր մեր և այլոց պատմության դասերի պարտադրած պետականության ու ժողովրդի իսկական, անմիջական և ապագա շահերի ու կարելիությունների քաղաքականությունը:

Վերջին նկատողություն: Վերջում բոլոր կուսակցություններն էլ պաշտոնապես ընդունեցին անկախությունը՝ նույնիսկ ժխտելով, որ իրենք դեմ էին եղել անկախությանը և գործել էին դրա դեմ: Սակայն նրանցից կան, որոնք տակավին չեն ընդունել անկախության պահպանման համար անհրաժեշտ քաղաքական և պատմական պատասխանատվությունը, ամենօրյա աշխատանքը, ինքնուրույն և հնարամիտ մտածելու, գործելու անհրաժեշտությունը, բարդ հաշվարկների վրա հիմնված որոշումներ առնելու ունակությունը: Եվ նախընտրում են պարզամիտ, հնավանդ, մեր իսկ պատմության ընթացքի համար այլ պետությունների որոշումներին սպասող ծուլ, վախկոտ ու պատեհապաշտ քաղաքականությունը:

Ծուլությունը ճիշտ հասկանալը կարևոր է և այստեղ ձևակերպված չէ որպես բարոյական կատեգորիա: Այդ մարդիկ և քաղաքական

ուժերը վարժվել են մեծ պետություններին բարոյականության դասեր տալուն և իրենց իսկ շահերը իրենց բացատրելուն, հանդիսատեսի նման բամբասելուն, միջազգային իրավունքի մասին քարոզելուն, բայց պատրաստ չեն պետականության պահպանման, քաղաքականության մշակման, ամենօրյա անվերջ ջանք պահանջող աշխատանքին: Իրենց համար ամենօրյա քննարկման, նոր կացությունների միջով խուսանավման, դատողության կարիք չկա, որովհետև նրանց համար աշխարհում կան միայն հայասեր կամ հայատյաց պետություններ, կարիք չկա նրբությունների մասին մտածելու, դրանք շատ աշխատանք են պահանջում: Իսկ ամենաշատ աշխատանք պահանջողը հարափոփոխ միջազգային զարգացումների մեջ ամեն օր ճշտելն է, թե մեր շահերը ինչպես կարող ենք հետապնդել այդ պայմանների մեջ: Նրանց համար, ուրեմն, այդ մեծ խնդիրներից խուսափելու նպատակով նախընտրելի է ընդունել մի պաշտպանի տիրակալությունը՝ այդ բոլորը պահ տալով ազգայնականության, հերոսապաշտության, «մշտական բարեկամների ու մշտական թշնամիների» պարզամիտ, բայց նաև վտանգավոր լոզունգի թիկունքում: Ծուլությունը դա է:

Անկախության հիմնադրությունից ի վեր՝ ներքին վերիվայրումները կարևոր չափով կարելի է վերագրել կողմերի միջև այդ հիմնական տարբերությանը:

Անկախության գաղափարին ու իրականությանը միայն մակերեսային հավատարմություն տվողների այդ պայքարի նպատակն ի վերջո քաղաքական մտածելակերպի մեջ վերը նշված հեղափոխությունը տապալելն էր: Եվ մեծ մասամբ այսօր հաջողեցին անել դա: Դժվար չէր անկախությունը և պետականությունը կարելի, փափագելի և անհրաժեշտ նկատել ու դա թմբկահարել, սակայն, միևնույն ժամանակ, խոսել ու գործել այն սկզբունքների հիման վրա, որոնք տկարացնում են այդ պետականությունն ու անկախությունը. սկզբունքներ՝ ինչպիսիք են «իմ երազը ավելի կարևոր է, քան քո իրականությունը», «կուսակցությունն ավելի մեծ արժեք է, քան պետությունը», «ազգը ավելի մեծ արժեք է, քան պետությունը», «մեր չորս հարևաններից երկուսը հավերժ թշնամիներ են», «մեր հույսը օտարներն են», «այս Հայաստանը մեր ուզած Հայաստանը չէ, և պետք է դրա դեմ կռվենք, եթե

նրա ղեկավարները Մեծ Հայաստանի գաղափարին չեն նվիրված», «ապազգային ես, եթե գերնպատակներ չես հետապնդում» և այլն:

Որքան բարձր աղմկեն գերհայրենասիրության թմբուկները, այնքան կհեռանանք այս Հայաստանի և այս ժողովրդի հարցերը լուծելու օրակարգից և կլուծենք մի այլ՝ երազային, անիրական, անժողովուրդ Հայաստանի հարցերը:

ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏՅԱՆ

ՀՀ նախագահի խորհրդական, 1991-1994 թթ.

ՀՀ ԱԳ նախարարի առաջին տեղակալ, 1993-1994 թթ.

ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական,
հատուկ հանձնարարությունների գծով դեսպան,
անվտանգության խորհրդի քարտուղար, 1994-1997 թթ.

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՒԼ

Մուտքի փոխարեն

Խորհրդային փլուզման տարիներին Հայաստանն առաջնորդած և երկիրն անկախության հանգրվանին հասցրած Հայոց համազգային շարժման մասին գրվել է, գրվում է և դեռ բազմիցս գրվելու է: Ցավոք, ցայսօր այդ գրությունների զգալի մասն իր վրա կրել է կամ շեշտված ջատագովության կամ բացահայտ թշնամության կնիքը: Դրան նպաստել է հայերիս քաղաքական կյանքի ավանդական հատվածականությունը. պետական լծակներ նվաճած յուրաքանչյուր իշխանություն աշխատել է վարկաբեկել նախորդին կամ առավել վատթար՝ պատմության աննալներից ընդհանրապես ջնջել նրա անունը:¹ Ջարմանալի չէ, որ նման վերաբերմունքն առաջ է բերել նույն որակի հակազդեցություն: Արդյունքում ձևավորվել են սերունդներ, որոնք ադեկվատ պատկերացում չունեն ոչ միայն երեք տասնամյակ առաջ գոյություն ունեցած Խորհրդային Հայաստանի, այլև անկախության տարիներին տեղի ունեցած քաղաքական անցուդարձի մասին:

Երրորդ հանրապետության մոտեցող երեսնամյակը պատեհ առիթ էր հետադարձ հայացք նետելու անկախ Հայաստանի քաղաքական և հասարակական կյանքի ապրած կերպափոխումների և ելևէջումների ողջ շղթային: Իսկ 2020-ի աշնանը վրա հասած ազգային փլուզումն այդ առիթը վերածել է անկասկած հրամայականի: Իրականում, սակայն, Հայոց համազգային շարժման բնույթը և նրա դերը հասկանալու համար անհրաժեշտ է ավելի հեռուն գնալ՝ այն քննելով հայկական արդիականացման և լուսավորության պատմության համատեքստում:

¹ Վերջին տարիներին հրատարակված պատմության դասագրքերը դրա ցցուն ապացույցներն են:

Արդիականացումը որպես լուսավորություն

Այստեղ տեղը չէ կանգ առնելու հայկական արդիականացման դարեր տևած ընթացքի վրա:¹ Բավարարվեմ մեթոդաբանական դիտարկումով: Խնդիրը հասկանալու համար անհրաժեշտ է տարբերակել արդիականությունը (modernity) և արդիականացումը (modernization): Առաջինը դարաշրջան է, որում քաղաքական և հանրային հաստատությունները, տնտեսությունը և հասարակության այլ բաղադրիչները հենվում են բանականության և ռացիոնալ կազմակերպման վրա, երկրորդը նախատեսվում է արդիականության գործընթացներից ուշացած կամ դրանցից ընդհանրապես դուրս մնացած ազգերի համար: Սրա դրական կողմն արագ, հետամուտ զարգացումն է, բացասականը՝ դրսից պարտադրվող սխեմատիզմը: Վերջինս հնարավոր է մեղմել միայն այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ բարեփոխումները զուգակցվում են լուսավորությամբ, այսինքն՝ արդիականության բովանդակության ներքին յուրացմամբ:

Հայ ժողովուրդը որքան էլ մասնակցել է համաշխարհային արդիականության ձևավորման հիմնական փուլերին, այնուամենայնիվ պատկանում է «հետամուտ» ժողովուրդների թվին, որոնց նկատմամբ կիրառելի է արդիականացման գաղափարը: Դա պայմանավորված է 15-16-րդ դարերում առաջ եկած մեծ խզումով, որի արդյունքն է եղել պետական և հասարակական կառույցների ջախջախումը, նրանց հանգեցումը հարևան կայսրությունների ենթակայության ներքո գոյատևող համայնքային կամ անհատական միավորների: Անկասկած է իհարկե, որ հայերի ներգրավվածությունը մեծ պետությունների հանրային կյանքի մեջ ինքնին նպաստել է հայկական արդիականացմանը, սակայն վերջինս ընթացել է այդ պետությունների քաղաքակրթական պարտադրանքի ներքո:

Սրան զուգահեռ, հայ ժողովուրդը ձևավորել է լուսավորության վրա հիմնված արդիականացման սեփական ավանդույթը, որը կոչված է եղել ապահովելու հայոց մուտքն արդիության դարաշրջան՝ մինևույն ժամանակ դիմակայելով հարձակողական ունիվերսալիզմի ճնշումներին:

¹ Այդ մասին պատմող անգնահատելի աղբյուրներից է հայր Լևոն Զեքեյանի մենագրությունը՝ Levon Zekian, *The Armenian Way to Modernity*, Supernova, 1997:

Թեզք

Սույն գրության մեջ պաշտպանվող թեզն այն է, որ Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ), որն ի սկզբանե առաջ է եկել Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման մղումով՝ վերածվելով համընդգրկուն քաղաքական շարժման, հայոց հետխորհրդային արդիականացման գործընթացն իրականացրել է քաղաքականության մասին ավանդական պատկերացումների քննադատական վերաիմաստավորման, դրանց փաստացի վերառնման միջոցով: Այդ քննադատությունը ձև է ստացել հանրային բանավեճերի ընթացքում, մարմնավորվել է բացորոշ արձանագրված ծրագրային դրույթներում, մատուցվել է լայն ժողովրդական զանգվածներին և առարկայացվել է քաղաքական գործընթացներում: Սրանով ՀՀՇ-ն իրականացրել է լուսավորական գործառույթ, հանդես գալով որպես հայկական լուսավորական ավանդույթի քաղաքական բաղկացուցիչի զարգացման նոր փուլ:

Մասնակցի հեռանկարից

Նշյալ թեզի հիմնավորումը տողերիս հեղինակը նախատեսում է իրականացնել մասնակցի հեռանկարից: Դա չի նշանակում, որ ստորև ներկայացվելու են հեղինակի մասնակցությամբ տեղի ունեցած դրվագներ կամ անհատական տպավորություններ այս կամ այն իրողության կամ անձնավորության մասին: Խոսքս պատմական ռեֆլեքսիայի մասին է՝ Շարժման բնույթի, նպատակների, հաջողությունների և տապալումների վերաբերյալ, մտորումների, որոնք հեղինակը ժողովել է և փորձել է իմաստավորել անցած տարիների ընթացքում:¹

Վերակառուցումը և Շարժումը

Ակնհայտ է, որ Հայաստանում ՀՀՇ-ի ձևավորումն անհնարին կլիներ առանց 1985-ից ծայր առած գորբաչովյան վերակառուցման: Նաև հատկանշական է, որ վերջինս՝ որպես իրական և իշխանության

¹ Գործը նախաձեռնելու դրդապատճառներից էր նաև Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնի երիտասարդ գործընկերներիս խնդրանքը՝ որևէ կերպ փոխանցելու Շարժման հետ կապված փորձառությունս՝ սերունդների միջև կապ ապահովելու և անկախության տարիներին տեղի ունեցած զարգացումների ներքին տրամաբանության ըմբռնմանը նպաստելու համար: Եվ վերջապես, անհրաժեշտ էր ազատվել մի բեռից, որը վաղուց արդեն ծանրացած էր սրտիս «ինչպես վաղուց տրված մի խոստում կամ ինչպես ժամանակին չվճարված պարտամորիակ»:

կողմից չչարտադրված լուգունգային գործընթաց, Հայաստան է հասել երեք տարի ուշացումով: Ընդ այդմ, շրջանցելով քաղաքական համակարգի բարենորոգման խնդրի շուրջ խորհրդային մամուլում (մասնավորապես՝ «հաստ ամսագրերում») ընթացող բուռն քննարկումների, ինչպես նաև նախկինում արգելված կամ միայն «սամիզդատի» կարգավիճակով շրջանառող գրքերի հրատարակման փուլը,¹ այն ասպարեզ է իջել որպես զուտ ազգային խնդիր՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայաստանի հետ միավորելու պահանջ: Սա լիովին տեղավորվում է խորհրդահայ քաղաքական պատմության ընդհանուր տրամաբանության մեջ. հետազոտողներն արձանագրել են, որ Խորհրդային Հայաստանի գոյության ընթացքում գործած բոլոր այլախոհական շարժումները եղել են ազգայնական՝ որպես հիմնական նպատակ ունենալով Հայաստանի անկախությունը²: Սակայն Ղարաբաղյան շարժումը, վերջիններիս համեմատ, աչքի ընկավ ոչ միայն կազմակերպվածության ավելի բարձր աստիճանով, այլև նախ և առաջ՝ պրագմատիկ, ռացիոնալիստական մոտեցումներով, որոնք արմատապես տարբերվում էին «այլախոհական» փուլի հուզական կամ ֆորմալ-իրավական մոտեցումներից:

Ես չեմ պատրաստվում կանգ առնել Ղարաբաղյան շարժման (մասնավորապես՝ «Ղարաբաղ» կոմիտեի) ձևավորման և գործունեության պատմության վրա: Այդ ամենը քաջ, թեև, ցավոք, ոչ լայնորեն, հայտնի է և նկարագրված³: Կուզեի ուշադրություն հրավիրել Շարժ-

¹ Իմ հիշելով՝ այդ տարիներին Հայաստանում հրատարակված միակ նման գիրքը Երվանդ Օտյանի «Ընկեր Փանջունին» է եղել (1989):

² Տե՛ս, մասնավորապես, Սիրանուշ Դվոյան, «Վաչե Սարգսյանի վերադարձը», *Ակեղ-դամա. Անկրկնելի պատմություն*, հ. 1, Հովհաննիսյան ինստ., Երևան, 2019, էջ 423-425: Ավելորդ չէ նշել, որ Շարժման ազգային բնույթը անհանգստացրել էր ոչ միայն խորհրդային ղեկավարությանը, այլև վերակառուցման առաջամարտիկներին (прорабы перестройки): Այդ առումով, հիշատակելի է ռուս գրող Անդրեյ Նույկինի ընդարձակ հոդվածը *Литературная газета*-ում, ուր նա կշտամբում էր հայերին՝ իրենց ազգայնական խնդիրները մեջտեղ բերելով ողջ վերակառուցման ընթացքը խաթարելու մեջ: Հմնտ. տողերիս հեղինակի պատասխան նամակը Նույկինին՝ Ашот Восканян, «Открытое письмо А. Нуйкину от 18.05.88», Нагорный Карабах. Информационные материалы. Специальный выпуск, Ереван, 1988: Սակայն, գոնե մտավորականության շրջանում մոտեցումները փոխվեցին, և Նույն Նույկինը դարձավ Ղարաբաղին սատարող ռուս գրողների խմբի նախագահը:

³ Տե՛ս, մասնավորապես, Աշոտ Սարգսյան, *Ղարաբաղյան շարժման պատմություն. 1988-1989*, Անտարես, Երևան, 2018, ինչպես նաև՝ *Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի 30-ամյակը: Փաստաթղթերի ժողովածու*, Անտարես, Երևան, 2020:

ման ցանցային բնույթի, գործելակերպի և գաղափարական հիմքերի վրա:

Շարժման ցանցային բնույթը

Անհրաժեշտ է նշել, որ չնայած Շարժման հանրահավաքները սկզբից ի վեր ահռելի ժողովրդական զանգվածներ են հավաքել, այն երբեք չի հանգեցվել «Ղարաբաղ կոմիտե-զանգվածներ» երկանդամին, այլ հենվել է տեղական (շրջանային, հիմնարկային) «Ղարաբաղ» կոմիտեների լայն շրջանակի վրա: Շարժմանն էին միացել նաև արդեն գոյություն ունեցող կանաչների միավորումները¹, ինչպես նաև, այսպես կոչված՝ «սահմանադրական խմբերը»²: Այսպիսով, ձևավորված կառույցը կենտրոնաձիգ էր այնքանով, որ համակարգվում էր կենտրոնական «Ղարաբաղ» կոմիտեի կողմից, բայց և ցանցային էր, քանի որ ուներ ինքնավար տեղական մարմիններ և համահանրապետական ընդգրկում:

Ժողովրդավարությունը՝ որպես միջոց և նպատակ

Շարժման հիմնարար բնորոշիչներից մեկը ազգայինի և ժողովրդավարականի օրգանական միասնությունն է եղել: Ժողովրդավարությունը չի իջեցվել վերևից՝ վերակառուցման գաղափարախոսների կամ արևմտյան դոկտրինների կողմից, և չի պարտադրվել զանգվածներին՝ որպես վերացական գաղափար: Այն ի սկզբանե օգտագործվել է որպես *միջոց*³՝ ազգային խնդիրները (նախ և առաջ՝ Լեռնային Ղարաբաղի, բայց նաև՝ բնապահպանության, հայոց լեզվի պահպանության և այլ հարցերը) լուծելու համար, և – իր գործնական արդյունավետության շնորհիվ – նաև հասարակության լայն շերտերի կողմից ընդունվել է որպես *նպատակ*⁴՝ որպես ժողովրդավարական հասարակություն ունենալու հրամայական:

Նույնը վերաբերում է նաև «մարդու իրավունքներին»: Վերը հիշատակված սահմանադրական խմբերի խնդիրը ոչ թե վերացականորեն ըմբռնված իրավունքների հռչակումն է եղել, այլ քաղաքացիների

¹ Հակոբ Սանասարյանի ղեկավարած «Գոյապահպանությունը» գործել է 1985-ից, 1989-ից՝ Հայաստանի կանաչների միություն:

² Որոնց հիման վրա 1989-ին ձևավորվեց «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությունը (նախագահ՝ Հրանտ Խաչատրյան):

առանձին, շատ դեպքերում կենցաղային խնդիրների լուծմանն օժանդակելը՝ հենված ՀԽՍՀ սահմանադրության և օրենքների վկայակոչման վրա:

Լեգալիզմը

Դրանով էր պայմանավորված շարժման *լեգալիստական* բնույթը, որը միտված էր Խորհրդային Միության սահմանադրության և օրենքների ընձեռած հնարավորությունների օգտագործմանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրանց խաղաղ միջոցներով վերափոխմանը¹: Քանի որ ՀԽՍՀ կուսակցական և խորհրդային իշխանության ղեկավար մարմինները պատրաստ չէին նման զարգացումների, նախատեսվում էր դա անել խաղաղ զանգվածային ճնշումների միջոցով: Այդ ռազմավարությունն իր դրսևորումները գտավ Շարժման բոլոր փուլերում, որոնցից առավել հիշարժաններն են՝ ԼՂ-ի ՀԽՍՀ-ի հետ վերամիավորման վերաբերյալ ՀԽՍՀ ԳԽ որոշումը (15.06.1988), Շարժումը ներկայացնող առաջին պատգամավորների մուտքը Գերագույն խորհուրդ, սահմանադրական խմբերի գործունեությունը, Օպերայի և բալետի շենքում Շարժման նախաձեռնությամբ կազմակերպված ՀՍԽՀ ԳԽ արտահերթ նիստը,² ՀԽՍՀ ԳԽ հերթական ընտրությունների միջոցով իշխանության նվաճումը 1990-ին, ԽՍՀՄ կազմից դուրս գալու համար ընտրված սահմանադրական ճանապարհը (1991):

Քաղաքականության բաց, հակապոպուլիստական բնույթը

Լեգալիզմն ինքնին լուսավորական երևույթ է, քանի որ նպատակ ունի հասարակական կյանքն ուղղորդելու ռացիոնալ ձևակերպված օրենքների հունով: Սակայն, այն կարող է օգտագործվել նաև հակալուսավորական, պոպուլիստական, երբեմն՝ արխայիկ նպատակներ հետապնդող քաղաքական ուղղությունների կողմից: Հետևաբար, կարևոր է շեշտել, որ ՀՀԾ լուսավորական բնույթը պայմանավորված է եղել նախ և առաջ նրա նպատակադրումների ռացիոնալ

¹ Տե՛ս՝ «Հայոց համազգային շարժման ծրագիր (19 օգոստոսի, 1988 թ.)», *Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի 30-ամյակը: Փաստաթղթերի ժողովածու*, էջ 20:

² Կայացել է 1988-ի հոկտեմբերի 24-ին: Ուղղված էր նոր միութենական պայմանագրի պարտադրման վտանգի դեմ: Արձանագրել է, որ միութենական օրենքները կարող են գործել ՀՀ տարածքում միայն ՀՀ ԳԽ-ի վավերացումից հետո:

ուղղվածությամբ՝ ոչ միայն պրագմատիզմի, այլև պոպուլիզմի մերժման առումով: Վերջինս դրսևորվել է ազգային մտածողության մեջ անվերապահորեն իշխող կլիշեներին հակադրվելու, դրանք ռացիոնալ փաստարկներով կազմաքանդելու միջոցով:

Նշված քաղաքականությունն իրականացվել է բաց, ժողովրդի իմացությամբ: Շարժման ղեկավարները ոչ միայն չեն կերակրել հանրահավաքային զանգվածին զուտ հուզական, ազգայնական կարգախոսներով, այլև ամեն ինչ արել են նման կարգախոսները բացառելու համար¹: Հանրահավաքների հուզական լիցքն ապահովվում էր Ղարաբաղին վերաբերող վերբալ բանաձևերի վանկարկմամբ, շեփորի հռչակավոր մեղեդիով², ինչպես նաև այդ օրերին տարածում գտած ֆիդայական երգերով: Մնացյալը դասական լուսավորական աշխատանք էր՝ բաղկացած քաղաքական իրավիճակի ռացիոնալ վերլուծությունից, անելիքների քննարկումից և ժողովրդին առաջարկվող խնդիրներից: Բարդ իրավիճակում Կոմիտեի անդամների ելույթները կարող էին վերածվել բարձրաձայն մտորումների, երբ ելքը փնտրվում էր զանգվածների ներկայությամբ և նրանց հետ մեկտեղ³: Դա մի գործելակերպ էր, որ հիմնված էր ոչ թե մանիպուլյացիայի, այլ ժողովրդական զանգվածներին կրթելու և քաղաքական խնդիրների ըմբռնման նրանց մակարդակը բարձրացնելու վրա:

Հայոց համազգային շարժման գաղափարական հիմքերը

Շարժման գաղափարաբանությունը բյուրեղացել է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ազատագրական պայքարի և Առաջին հայկական հանրապետության բացասական փորձի քննադատական իմաստավորման և վերառնման հիման վրա: Ընդ որում, խոսքն այստեղ ինչպես հայկական պատմաքննադատական մտքի դասականների

¹ Այսպես, օրինակ, եթե հարթակին հայտնված պատահական մեկը փորձեր որևէ օտարա-տյաց կարգախոսով (ասենք՝ «մահ թուրքերին») գրգռել հավաքվածներին, նա անպայման կիջեցվեր հարթակից այն բացատրությամբ, որ «մենք ոչ մեկի դեմ չենք, մենք մեր կողմն ենք»:

² Հանրահայտ է, որ Արտեմի Այվազյանի «Ինչու է աղմկում գետը» ֆիլմի համար գրված մեղեդին՝ շեփորի կատարմամբ, դարձել էր Շարժման ոչ պաշտոնական օրհներգը:

³ Նույն այդ լուսավորական ավանդույթի ուշ նմուշներ եղան Լևոն Տեր-Պետրոսյանի «քաղաքական դասախոսությունները» 2008-ի հանրահավաքներում:

մասին է (Լեո,¹ Հովհաննես Քաջազնունի,² Դավիթ Անանուն³), այնպես էլ՝ ոչ հեռու անցյալը հասկանալու սեփական ջանքերի:⁴

ՀՀ մոտեցման յուրահատկությունն ըմբռնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ խորհրդահայ «ազգային գաղափարախոսությունը»⁵ առնվազն 1965-ին Հայոց մեծ եղեռնի 50-ամյակը նշելու ժամանակներից կրել է արմատական թրքատյացության դիմագիծ և իր գլխավոր, թեև բացորոշ չարտիկուլացվող նպատակն է համարել կորուսյալ Արևմտահայաստանի վերադարձը: Մոտավորապես նույն ժամանակից այդ կեցվածքը (որն ըստ էության բացառել է հայերի ԽՍՀՄ-ից դուրս գոյատևելու հնարավորությունը) խրախուսվել է նաև խորհրդային ղեկավարության կողմից: Այդ ավանդական գաղափարախոսությունն իր դասական դրսևորումն է գտել նաև վաթսուներկանների հայ մտավորականության գործերում (Հովհ. Շիրազ, Պ. Սևակ, այլք):

ՀՀ գաղափարական հիմնադրույթները ձևավորվել են այս պատկերացումների նկատմամբ հակադրության մեջ: Դրանցից մի քանիսը, ինքնին վերցրած, ծեծված ճշմարտություններ էին, ինչպես օրինակ՝ «չկան հավերժական բարեկամներ կամ թշնամիներ, կան հավերժական շահեր» կարգախոսը, բայց դրանք էլ 1988-ի «քաղաքականության վերադարձի» պայմաններում ընկալվում էին որպես հայտնություն:

Հիշյալ թեզի ընդլայնված տարբերակը մեկնաբանվում էր իշխանյանական ձևակերպմամբ՝ որպես «երրորդ ուժի բացառման օրենք»,⁶ որը հավակնում էր ներկայացնել ապագա անկախ Հայաստանի արտաքին քաղաքականության հարացույցը և ենթադրում էր, որ երկիրը սեփական ջանքերի միջոցով պետք է կարգավորեր իր հարաբերությունները հարևանների հետ՝ առանց ապավինելու «հովանավոր» երկրների միջամտությանը:

¹ Տե՛ս, մասնավորապես, Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, Շաղիկ, Երևան, 1994:

² Տե՛ս Հովհաննես Քաջազնունի, Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Շաղիկ, Երևան, 1994:

³ Տե՛ս Դավիթ Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870)*, հ. 1-3, 1916-1926:

⁴ Այստեղ էական դեր է ունեցել Ռաֆայել Իշխանյանի հարցադրումների շուրջ ժողոված համախոհների խմբակը (Վազգեն Մանուկյան, Բաբկեն Արաբքյան, այլք):

⁵ Այդ եզրի մասին տե՛ս ստորև:

⁶ Տե՛ս Ռաֆայել Իշխանյան, «Երրորդ ուժի բացառման օրենքը», *Որն է մեր ճանապարհը*, Երևան, 1990:

Երրորդ ուժի բացառման պահանջը դիվանագիտական մակարդակով ձևակերպվեց որպես հրաժարում «կողմնորոշման սկզբունքից»: Եթե Հայաստանում դարեր շարունակ խոսքը եղել է «ինչ կողմնորոշում ընտրելու» մասին, ապա այժմ կասկածի տակ էր դրվում կողմնորոշման սկզբունքը՝ որպես այդպիսին:¹

Հետադարձ հայացք նետելով այդ բավականին կոշտ ձևակերպված դրույթին՝ համոզվում ենք, որ այն, ինչ-որ իմաստով, անելանելիության դրսևորում էր կապված այն հիմնարար հանգամանքի հետ, որ Հայաստանը, ի տարբերություն ԽՍՀՄ մնացած ԲՈՒՆՈՐ հանրապետությունների, Ռուսաստանից հեռանալու պարագայում, այլընտրանքային դաշնակից ձեռք բերելու իրատեսական հնարավորություն չուներ: Եթե բալթյան երկրները իրենց ապագան կապում էին ԵՄ-ի հետ, Մոլդովան՝ Ռումինիայի, Բաքուն՝ Թուրքիայի, վրացիք՝ գոնե Սև ծովի, ապա Հայաստանը միակն էր, որն իր անկախության երաշխիքը տեսնում էր հարևաններից հավասար դիստանցավորման, հետևաբար՝ բացառապես սեփական ուժերին ապավինելու մեջ:

Ընդ այդմ, հյուսիսային մեծ հարևանի հետ ամենասերտ և բարեկամական հարաբերություններ ունենալու անհրաժեշտությունը երբևէ կասկածի տակ չի դրվել: Խոսքը ազատության որոշակի աստիճան ձեռք բերելու մասին էր, որի շնորհիվ հնարավոր կլիներ ճկուն գործողությունների միջոցով հետապնդել սեփական երկրի շահերը:

Անկախության հանգրվանը

Աներկբա է, որ Շարժման առաջնորդները Հայաստանի անկախացումն ի սկզբանե դիտարկել են որպես գերխնդիր: Սակայն, ի տարբերություն «անկախական այլախոհների»՝ նկատի ունենալով փլուզվող ԽՍՀՄ-ի և թշնամական Թուրքիայի միջև սեղմված և ԼՂ խնդրով ծանրաբեռնված Հայաստանի հանգամանքները, նրանք ընտրել են նպատակին հասնելու զգուշավոր և պրագմատիկ ճանապարհ:² Եվ այդ գիծը պահվեց մինչև վերջ՝ Հայաստանը եղավ

¹ Հրապարակախոսական մակարդակով այն դրսևորվեց որպես պայքար «խրայելիորհմի» դեմ: Ավելորդ չէ նշել, որ դեպի այս կամ այն մեծ տերությունը կողմնորոշվելու միտումը որոշակի վերաիմաստավորման է ենթարկվել արդեն հայ բոլշևիկների մոտ, որոնք աշխարհաքաղաքական կողմնորոշումը փոխարինել էին քաղաքականով. «Ամենալավ կողմնորոշումը խորհրդայինն է», – ասում էր Ալ. Մյասնիկյանը:

² Այդ մոտեցման կարևոր հանգրվան է Վազգեն Մանուկյանի «Գնացքից թռչելու ժամանա-

միակ միութենական հանրապետությունը, որը ԽՍՀՄ-ից դուրս եկավ խորհրդային օրենքով նախատեսված ընթացակարգի պահպանմամբ:¹

Նորանկախ Հայաստանի սեփական ուժերի վրա հենվող արտաքին քաղաքականությունը, բնականաբար, կարիք ուներ հրաժարվելու անհրաժեշտության (առնվազն՝ տվյալ պատմական փուլում) նշաճողերից և այնպես ձևակերպել խնդիրները, որպեսզի դրանք բանակցելի լինեն ինչպես հարևանների, այնպես էլ միջազգային հանրության տեսակետից:

ԼՂ խնդիրը՝ որպես ինքնորոշման խնդիր

Ամենասկզբունքայինն այս առումով Լեռնային Ղարաբաղի խնդրի վերաձևակերպումն էր: Երկրորդ պլան մղվեցին «պատմական արդարության վերականգնմանը» կամ «Ստալինյան Կավքյուրոյի անօրինական որոշմանը» հղող փաստարկները, մի կողմ դրվեց «Ադրբեջանից հողային պահանջների» թեզը՝ որպես միջազգային նորմերին հակասող և դրանով իսկ վտանգավոր: Լեռնային Ղարաբաղի խնդիրը վերաիմաստավորվեց որպես «ազգերի ինքնորոշման իրավունքի» իրագործմանը միտված պայքար, որով հնարավոր դարձավ Արցախի խնդրի ներկայացումը, քննարկումը և պաշտպանությունը միջազգային հարթակներում:

Մեծ Եղեռնի խնդիրը Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում

Եթե ԼՂ խնդրի ձևակերպման համաձայնեցումը միջազգային իրավունքի նորմերին մեծ հանրային դժգոհություն չառաջացրեց, ապա ՀՀՇ որդեգրած վերաբերմունքը Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ թեժ վեճերի տեղիք տվեց: Շարժման առաջնորդները ելնում էին նրանից, որ հովանավոր չունեցող նորանկախ

կը» հողվածը (տես «Որն է մեր ճանապարհը» ժողովածուն, էջ 7-43): Խնդրի մասին իմ պատկերացումները ես շարադրել եմ հետևյալ հրապարակման մեջ՝ Աշոտ Ոսկանյան, «Ինչ ենք մենք ուզում», *Գրական թերթ*, 12 (2368), 16.03.1990:

¹ Խնդրի իրավական կողմը պահպանելու վճռականությամբ է բացատրվում Հայաստանի անկախության հայտարարության թվացյալ ուշացման պատճառը: Հանրաքվեն նշանակվել է 1991-ի մարտի 21-ին և, ԽՍՀՄ օրենքի համաձայն, անցկացվել է վեց ամիս հետո՝ սեպտեմբերի 21-ին:

Հայաստանի բնականոն հարաբերությունների ձևավորումը Թուրքիայի հետ չի կարող հաջողել, եթե Հայոց ցեղասպանության հետ կապված բարդագույն հարցերի համալիրը ներառնվի հայկական դիվանագիտության պաշտոնական օրակարգ: Այդ դիրքորոշումն արտացոլում գտավ Անկախության հռչակագրում, որտեղ խնդիրը սահմանափակվեց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը սատարելու կետով:¹

Հարցն ավելի սրվեց ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման ընթացքում, քանի որ նախագահ Տեր-Պետրոսյանի հրաժարումը ցեղասպանության ուղիղ հիշատակումը ներառել սահմանադրության տեքստի մեջ՝ կատաղի դիմադրություն առաջացրեց Սահմանադրական բազմակուսակցական հանձնաժողովի շատ անդամների մոտ: Ընդ այդմ, բողոքները պայմանավորված չէին զուտ կուսակցական պատկանելությամբ, այլ արտացոլում էին հասարակության մեջ տիրող ընդհանուր մտայնությունը:² Գտնված լուծումը փոխզիջումային էր և այդ իմաստով՝ լուսավորական: Թեև հայոց ցեղասպանությունն անմիջականորեն չհիշատակվեց Սահմանադրության տեքստում, սակայն նրանում հատուկ նշումով ՀՀ Անկախության հռչակագիրը ճանաչվեց որպես ՀՀ սահմանադրության անքակտելի մաս:³

Սովորական, թե՛ համաշխարհային

Ավանդական մտավորականության արձագանքը նույնքան սուր եղավ Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հարաբերությունների հարցում: Այստեղ էլ խնդիրը պատմություն ուներ: Արմատներում Շարժման երկու առաջնորդների՝ Վազգեն Մանուկյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի գաղափարական վեճն էր՝ կապված հայ ժողովրդի անցած ճանապարհի գնահատականի հետ: Մանուկյանը հակված էր հայերին դիտարկել որպես «համաշխարհային ազգ»՝ նկատի ունենալով սփռվածությունը և շեշտը դնելով ազգային

¹ Տես Անկախության հռչակագիր, կետ ԺԱ:

² Այստեղ կարելի է նշել Սահմանադրական հանձնաժողովի անկուսակցական անդամների՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտոր Յուրի Սարգսյանի և փիլիսոփա Համլետ Գևորգյանի անունները:

³ Պատեհ է նշել, որ այս խնդրում ՀՀԾ-ի մոտեցումը բավական մոտ էր Խորհրդային Հայաստանում (թեև այլ պատճառներով) որդեգրած մոտեցմանը, որի դասական դրսևորումը Ս. Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» բանաստեղծությունն է:

ինքնակազմակերպման այնպիսի մոդելի վրա, որը կընդգրկեր հայ ժողովրդի բոլոր հատվածները՝ հայրենիքում և ի սփյուռս աշխարհի: Տեր-Պետրոսյանը, ի տարբերություն գործընկերոջ, հայերին «սովորական ազգ» էր համարում՝ շեշտելով, որ ՀՀ-ը ինքնուրույն պետական միավոր է, որի քաղաքականության ձևավորմանը սփյուռքը չպետք է մասնակցի անմիջականորեն:¹ Այն մասին, որ նշված երկու առաջնորդների գաղափարական հակասությունը հարացուցային նշանակություն է ունեցել ողջ Շարժման համար, վկայում է արդեն իսկ վերջինիս անվանումը. բուն հայաստանյան քաղաքական կազմավորումն իրեն դիրքավորել է որպես «Հայոց համազգային շարժում», ի ցույց դնելով երկու հիմնարար հավակնություն՝ դա պետք է լինի բոլոր հայերի շարժումը և պետք է զբաղվի բոլոր համազգային հարցերով: Ակնհայտ է, որ այս դիրքորոշումը «վազգենական է» և պատահական չէ, որ այն՝ Վազգեն Մանուկյանի՝ ՀՀՇ-ից հեռանալուց հետո շարունակեց մնալ իր ստեղծած նոր կուսակցության՝ ԱԺՄ-ի գաղափարական հենասյուններից մեկը:² Տեր-Պետրոսյանի թեզը գերակայություն ստացավ և գտավ իր ձևակերպումը ՀՀ-ում երկքաղաքացիությունն արգելող սահմանադրական դրույթի մեջ (սփյուռքահայերի իրավունքները պաշտպանելու համար մտցվեցին մշտական կացության հնարավորություն ընձեռող հատուկ անձնագրեր):

Անկախ նրանից, թե որքանով է այդ որոշումը համոզիչ թվում այսօր,³ այն անմիջականորեն արտահայտում էր Շարժման հակապոպուլիստական ուղղվածությունը՝ արգելակելով սփյուռքի ավանդական պահանջատիրական ազգայնականության անմիջական ազդեցությունը հայաստանյան քաղաքականության վրա:

¹ Լևոն Տեր-Պետրոսյանն այստեղ էլ շարունակում էր Չարենցից և հայ բոլշևիկներից եկող ավանդույթը, որի դրսևորումներից է Ալ. Մյանիկյանի արձանագրությունը՝ «Ես ամենայն հայոց նախագահը չեմ»:

² Հատկանշական է, որ երբ Տեր-Պետրոսյանը ստեղծեց քաղաքացիական ՀԱԿ-ը, նա այնուամենայնիվ, չհրաժարվեց «ազգային» բառից:

³ Գիտենք, որ երկքաղաքացիության արգելքը հետագայում հանվել է, և նշված մտահոգությունների փարատման համար իրավական այլ կարգավորումներ են առաջարկվել:

Ազգային գաղափարախոսությունը

Հասկանալի է, որ վերոհիշյալ արմատական փոփոխությունները չէին կարող հակազդեցություն չառաջացնել նախ և առաջ ավանդական մտավորականության շրջանում: Պարադոքսն այն էր, որ ԽՍՀՄ գոյության ընթացքում որոշակի պետական հոգատարություն վայելող այդ խավը,¹ որն այնուամենայնիվ իրեն գաղափարական առումով ճնշված էր զգում, քանի որ հայոց ավանդական «իդեերի» արտահայտումը որոշ սահմանափակումների էր ենթարկվում Խորհրդային Հայաստանում, ակնկալում էր, որ անկախ Հայաստանը կպահպանի իրենց արտոնությունները՝ միևնույն ժամանակ խրախուսելով «հայ դատի» ոգով տարվող ազգային քարոզչությունը: Տեղի ունեցավ հակառակը: Դաժան «նախակապիտալիստական» շուկայի պայմաններում մտավորականությունը կորցրեց պետության նյութական հովանավորությունը՝ միևնույն ժամանակ բախվելով ավանդական թեմաներով վարվող քարոզչության նկատմամբ պետության բացասական վերաբերմունքին: Նորից պետության «գիրկը» վերադառնալու ձևերից մեկը կարող էր լինել համապարփակ «ազգային գաղափարախոսություն» ստեղծելու պետական պատվերը: Նույն հարցը՝ կապված ազգային ինքնակազմակերպման համընդգրկուն մոդելի ստեղծման հետ, բարձրացնում էին նաև ավանդական ազգային ուղղությանը պատկանող կուսակցությունները:

Նման պայմաններում Լևոն Տեր-Պետրոսյանի դրույթն այն մասին, որ «ազգային գաղափարախոսությունը կեղծ քաղաքական կատեգորիա» է, չէր կարող դժգոհության զգալի ալիք չառաջացնել: Քչերը պատրաստ եղան ընդունել, որ խոսքը ոչ թե հայ ժողովրդի հոգևոր և մշակութային միասնության ժխտման մասին է, այլ այնպիսի *քաղաքական* պարտադրանքի բացառման, որը կվտանգեր հայաստանյան հասարակության քաղաքական բազմակարծությունը և նոր, այս անգամ՝ ազգայնական, կարգախոսների ծխածածկույթի տակ կվերականգներ խորհրդային տարիներին իշխող միակուսակցական համակարգը:

Բոլորովին անտեսվեց (և այսօր էլ դեռ անտեսված է) Տեր-Պետրոսյանի առաջադրած թեզի կապը արդի քաղաքագիտության

¹ ԽՍՀՄ-ում մտավորականության կարգավիճակի մասին տես Симон Кордонский, Интеллигентность как административно-рыночный товар, <http://polit.ru/article/2004/09/07/kordon/>, 25.01.2021:

անկյունաքարային՝ «գաղափարախոսությունը կեղծ գիտակցություն է» դրույթի հետ: Այդ՝ որևէ լուրջ գիտնականի կողմից չվիճարկվող թեզի իմաստը ոչ թե աշխարհայացքների *raison d'être*-ի մերժումն է, այլ արձանագրությունն այն պարզ իրողության, որ ցանկացած գաղափարախոսություն արտահայտում է այս կամ այն սոցիալական խմբի շահերը, որոնք սակայն ներկայացվում են որպես *համամարդկային* (մեր դեպքում՝ *համազգային*) շահեր: Այսինքն, կեղծ է ոչ թե գաղափարական հղացքը, այլ նրա ունիվերսալիստական հավակնությունը:

Քաղաքական համակարգի վերածնունդ

Անցումը նախագահական համակարգին, որքան էլ երանգավորված շարժման առաջնորդների բարդ անձնական հարաբերություններով, քաղաքական անհրաժեշտություն էր՝ պայմանավորված օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև համագործակցության դժվարությունները հաղթահարելու հրամայականով: Չնայած 1990-ին ընտրված Գերագույն խորհրդի բազմակուսակցական բնույթին՝ քաղաքական համակարգը շարունակում էր պահպանել խորհրդային շրջանի գործելակերպը: Սակայն շուտով պարզվեց, որ նման ձևով գործելն անհնար է, քանի որ խորհրդային կառավարման համակարգից հանված էր նրա առանցքը՝ Հայաստանի կոմկուսը: Վերջինիս ամրակուռ ողնաշարը՝ ՀԿԿ կենտրոնական կոմիտեն, իր բազմաթիվ շրջանային ճյուղերի հետ միասին համակարգում և ուղղորդում էր ՀԽՍՀ գործադիր և օրենսդիր մարմինների աշխատանքը բոլոր ոլորտներում: Դա ոչ լավ էր, ոչ վատ. պարզապես իրողություն էր, որ մնացել էր անցյալում:

Այդ բացն է, որ կոչված էր լցնելու ՀՀ նախագահի ինստիտուտը: Ընտրված «կիսանախագահական» (ֆրանսիական) մոդելի առավելությունն այն էր, որ դա ապահովում էր ուժեղ պետական իշխանություն այն դեպքերում, երբ ՀՀ Նախագահը և Վարչապետը պատկանում էին միևնույն կուսակցությանը, և տալիս էր հակամարտ ուժերի հավասարակշռման հնարավորություն, եթե Նախագահը չէր ներկայացնում Վարչապետին ընտրած կուսակցական մեծամասնությունը: Քանի որ նախագահական և խորհրդարանական ընտրությունները տարանջատված էին ժամանակի մեջ, ընտրողները հիասթափության

դեպքում հնարավորություն ունեին հավասարակշռելու նախագահական ընտրությունների արդյունքները խորհրդարանականով, և հակառակը:¹

Այդ համակարգն ապացուցեց իր կենսունակությունը նաև ճգնաժամային պահերին՝ ապահովելով իշխանության անցնցում փոխանցումը Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականի պայմաններում: Նրա հետևողական կազմաքանդումը սկսվեց նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամկետների համատեղմամբ,² որն անխուսափելի դարձրեց երկու բարձրաստիճան պաշտոնյաների պատկանելությունը միևնույն քաղաքական մեծամասնությանը՝ վարչապետին վերածելով նախագահի տնտեսական կցորդի: Հաջորդ քայլը կոշտ նախագահական համակարգի ներմուծումն էր, որով հեշտացվեց իշխանության շարժը դեպի ավտորիտարիզմ:

Ազատական, թե՛ սոցիալական

Իրողություն է, որ Հայոց համազգային շարժումն իր բնույթով էապես ազատական է եղել՝ ինչպես խղճի, խոսքի, մամուլի, մարդու այլ իրավունքների և ժողովրդավարության պաշտպանության, այնպես էլ՝ որդեգրած տնտեսական քաղաքականության տեսակետից: Վերջին առումով, նորանկախ Հայաստանի առաջին կառավարությունների գործելակերպն ակնհայտ զուգահեռներ ունի նույն ժամանակում Ռուսաստանյան դաշնության գայդարյան կառավարության հետ: Երկուսի գործողություններն էլ պարտադրված էին, քանի որ պետք է անցում ապահովեին փլուզված խորհրդային տնտեսությունից դեպի շուկայական հարաբերություններ, բայց և *շոկային*, քանի որ անցման արդյունքում առաջ եկածը քայքայված նախկին հարաբերությունների և «վայրի կապիտալիզմի» հիբրիդային խառնուրդն էր, որը կասկածի տակ դրեց բնակչության պատկառելի մասի բարեկեցությունը:

Պարադոքսն այն է, որ կառավարության՝ իրավիճակով պարտադրված արմատական լիբերալիզմը որոշակի հակասության մեջ էր

¹ Չանդրադառնալով քաղաքական նրբություններին՝ նշեմ, որ այդ տարիների Հայաստանում հանդիպել են ինչպես համախոհ (Լևոն Տեր-Պետրոսյան – Հրանտ Բագրատյան), այնպես էլ հակամարտ (Լևոն Տեր-Պետրոսյան – Ռոբերտ Քոչարյան) գույզերի տարբերակները:

² Նման որոշումները հիմնավորող փաստարկները հայտնի են և չեն փոխվում երկրից երկիր՝ միջոցների տնտեսում և խուսափում ցնցումներից:

գտնվում ինչպես ՀՀԵ երկրորդ համագումարում ընդունված դրույթների, այնպես էլ ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթի հետ, որոնց առաջադրած տեսլականը «սոցիալական շուկայական տնտեսությունն» էր:¹ Այնուամենայնիվ, աներկբա է, որ սոցիալական արդարության հասնելու նպատակով կառավարությունը զանգվածային սեփականաշնորհման մի քանի մեծ քայլ է ձեռնարկել: Դրանից առաջինը՝ արդյունաբերական օբյեկտների վաուչերային սեփականաշնորհումը, ակնհայտորեն չի ծառայել նշված նպատակին, երկրորդը՝ գյուղատնտեսության մեջ, թեև հնարավորություն է տվել գյուղացուն նվազագույն ապրուստ ապահովել դժվարին անցումային տարիներին, սակայն միևնույն ժամանակ բերել է գոյություն ունեցող պետական տնտեսությունների քայքայմանը և որակազրկմանը: Առավել հաջողված կարելի է համարել բնակարանային ֆոնդի սեփականաշնորհումը, որը բնակչության մի զգալի հատվածի ապահովեց իրական սեփականությամբ և կարևոր դեր խաղաց մարդկանց հետագա կյանքում:

Որքան էլ այս բոլոր դժվարություններն անխուսափելի էին, փաստն այն է, որ հասարակության զգալի մասի դժվարին տնտեսական վիճակը և նոր ձևավորվող կապիտալիստական հարաբերությունների պայմաններում կոռուպցիայի դեպքերը զգալի դժգոհություն առաջացրին հասարակության մեջ, ինչը չկարողացավ մեղմել նույնիսկ Արցախյան ճակատում տարած փայլուն հաղթանակը:

Առաջին Արցախյան պատերազմի «անսպասելի» արդյունքները

Սույն գրությունը չի անդրադառնալու Արցախյան պատերազմի թեմային. դա չափազանց մեծ, բարդ և զգայուն նյութ է, որի հիմնական տեսանկյունների թվարկումն իսկ հնարավոր չէ մեկ-երկու պարբերության շրջանակներում: Կանգ կառնեմ միայն պատերազմի

¹ Տե՛ս ՀՀԵ ծրագիր, Երևան, 1992, էջ 10 և ՀՀ Սահմանադրություն, Երևան, 1995, հոդվ. 1: Տողերիս հեղինակն անմիջական մասնակցություն է ունեցել այդ դրույթի ամրագրմանը երկու փաստաթղթերում. առաջին դեպքում տեքստը շարադրելով ԳԴՀ Քրիստոնյա-ժողովրդավարական կուսակցության ծրագրի օրինակով, երկրորդում՝ որպես սահմանադրական հանձնաժողովի անդամ, հասնելով սոցիալական պետության մասին դրույթի ամրագրմանը Սահմանադրության անփոփոխելի մասում: Այսօր, սակայն, ստիպված ենք արձանագրել, որ ձեռք բերված *տեսական* համաձայնությունը գործնական քայլերի չի վերածվել:

երկու անսպասելի հետևանքների՝ «ցուրտ ու մութ տարիների» սինդրոմի և Երկրապահի ֆենոմենի վրա:

Այն, որ հետխորհրդային տարածքի հետ բոլոր տնտեսական, այդ թվում՝ էներգետիկ կապերի փաստացի ընդհատման և երկկողմ շրջափակման պայմաններում ուժերի գերագույն լարում պահանջող պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի համար 1992-1995 թթ. ծմեռներն առանձնահատուկ ծանր են եղել, ցավոտ իրողություն է, բայց զարմանալի չէ: Զարմանալին այլ տեղ է: Հաղթանակած երկրներում պատերազմի ժամանակ կրած դժվարությունները, որպես կանոն, դառնում են հատուկ ակնածանքի և նույնիսկ առասպելացման առարկա: Դրա ցայտուն օրինակներից է լենինգրադյան բլոկադան, որը խորհրդային և ռուսական պատմագրության մեջ մնացել է որպես տառապանքի և մահվան, բայց և տոկունության, մաքառման և հաղթանակի խորհրդանիշ: Սակայն երրորդ հանրապետության պատմաբանները հաջողեցրել են սերունդների համար պահպանել երիտասարդ երկրի ինքնահաստատման այդ ժամանակը որպես «ցուրտ ու մութ տարիներ», որի խորհրդանշանը ոչ թե հաղթանակած հայաստանցին է, այլ միֆական «մազութ լափողները» և էլեկտրականության ֆանտաստագորիկ «գետնանցումները»: Եվ այդ սինդրոմը մինչ այժմ հաղթահարված չէ:

Այդու չկանխատեսված հետևանքը պատերազմին մասնակցած ազատամարտիկների «Երկրապահ միության» ստեղծումն էր (1993), որով հանրային ասպարեզ իջավ կիսառազմականացված ուժային կազմավորում, որը հետագայում ի ցույց դրեց իր քաղաքական հավակնությունները: Տեղին է հիշել, որ 1991-ին՝ անկախ Հայաստանի բանակի ձևավորման փուլում, իշխանություններին հաջողվել էր զինաթափել և վնասազերծել նույնանման հավակնություններ ունեցող մեկ այլ կազմավորում՝ Հայ ազգային բանակը (ՀԱԲ), և խուսափել պաշտոնական ու ոչ պաշտոնական զինված կազմավորումների վտանգավոր զուգահեռումից: Հետպատերազմական շրջանում դա չհաջողվեց և չէր էլ կարող հաջողվել, և ոչ միայն այն պատճառով, որ նոր կազմավորման ղեկավարն ինքը պաշտպանության նախարարն էր: Դեր խաղաց նաև այն, որ 1995-ի խորհրդարանական և 1996-ի նախագահական ընտրություններում Երկրապահը,

անտեսելով իր քաղաքական չեզոքության մասին հայտարարությունները, աներկբայորեն սատարեց իշխող ՀՀՇ-ին: Բայց արդեն 1997-ին Երկրապահի առաջնորդները հանդես եկան քաղաքական ծրագրով, որը բացորոշ հակադրվում էր տեր-պետրոսյանական ՀՀՇ-ի գաղափարական հիմնադրույթներին՝ հարց բարձրացնելով ազգային գաղափարախոսության, սփյուռքի հետ դաշինքի և Ղարաբաղյան պատերազմի նվաճումները ամեն կերպ պահպանելու անհրաժեշտության մասին:¹

Շրջադարձ (լուսավորության սահմանները)

Հանրային տրամադրությունների փոփոխությունը, անկասկած, գիտակցվել է Շարժման առաջնորդների կողմից, որոնք 1995-ի խորհրդարանական ընտրությունների նախօրեին, նպատակ ունենալով շահագրգռել նոր ձևավորվող գործարար խավին, առաջարկեցին հետաձգել նոր սահմանադրության այն հոդվածների կիրառությունը, որոնք արգելում էին Ազգային ժողովի պատգամավորի դիրքի համատեղումը պետական կամ այլ վճարովի պաշտոնի հետ:² Արդյունքում Շարժումն Ազգային ժողովում ստացավ իրեն պաշտպանող, բայց քաղաքական որոշակիությունից զուրկ մեծամասնություն, այդ թվում՝ բազմաթիվ երկրապահներ, որոնք ճգնաժամային իրադրության մեջ հրաժարվեցին Շարժման գաղափարական պլատֆորմից:

Ճգնաժամը, սպասելիորեն, կապված էր Արցախյան հարցի լուծման Լևոն Տեր-Պետրոսյանի ծրագրի հետ, որի առաջադրման համար, ըստ իս, արտաքին կատալիզատորի դեր խաղաց 1996 թվականին

¹ Պաշտպանության նախարարի այդ գաղափարները ոչ լիովին էին տեղավորվում ռացիոնալիստական հարացույցի շրջանակներում: 1999-ի սեպտեմբերին (խորհրդարանական ահաբեկչությունից մոտ մեկ ամիս առաջ) Հայաստան – Սփյուռք համաժողովում Վազգեն Սարգսյանի ունեցած ծրագրային ելույթը ակնհայտորեն ցույց է տալիս նրա մտածողության դիցաբանական բնույթը (այդ ճառի իմ վերլուծությունը տես Ashot Voskanyan, «The Staging of Politics and the “Folklorization” of Political Discourse», *Representations on the margins of New Europe. Politics and Identities in the Baltic and South Caucasian States* (ed. by T. Darieva, W. Kaschuba), Frankfurt/New York: Campus, 2007):

² Տողերիսի հեղինակը պատիվ է ունեցել պատկանելու «երիտհիշականների» յոթնյակին (Էդվարդ Եգորյան, Բագրատ Ասատրյան, Կարապետ Ռուբինյան և այլք), որը կտրականապես դեմ է եղել այդ որոշմանը, համարելով, որ դրանով խորհրդարանը կարող է կորցնել իր քաղաքական նկարագիրը և վերածվել ամորֆ մարմնի: Ցավոք, կուսակցության ղեկավարության հետ մի քանի ժամ տևած բաց և լարված բանավեճի ընթացքում հաղթեց հակառակ տեսակետը:

տեղի ունեցած ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթնաժողովը: Թեև այդ հարթակում հայկական պատվիրակությանը վետոյի կիրառման միջոցով հաջողվեց արգելակել անբարենպաստ որոշման ընդունումը, այնուամենայնիվ ակնհայտ էր, որ միջազգային հանրության դիրքորոշումը միահամուռ է, և նրա արմատական փոփոխությունը՝ գործնականում անհնար:

Ներքին դրդապատճառը տնտեսական փակուղին էր, որում հայտնվել էր երկու թշնամի երկրների կողմից շրջափակված Հայաստանը:

Ըստ ամենայնի, Նախագահի սթափ վերլուծությունը ղարաբաղյան հարցի փոխզիջումային լուծման և երկրի տնտեսական զարգացման միջև անխուսափելի կապի վերաբերյալ «չափազանց ռացիոնալիստական» էր ժողովրդական զանգվածների ընկալման համար: Համենայն դեպս, 1996-ի նախագահական ընտրությունների ժամանակ այդ թեզի բարձրաձայնումը բացասական հետևանքներ ունեցավ: *Լուսավորության սկզբունքը հասել էր իր սահմանին*: Հնարավոր չէ շահել ընտրությունները՝ ընտրազանգվածին տեղեկացնելով, որ ինքն առաջիկայում «լավ չի ապրելու»:¹ Առնվազն՝ Հայաստանում:²

«Հայտնի ուժերից» բաղկացած եռյակը (Վազգեն Սարգսյան, Ռոբերտ Քոչարյան, Սերժ Սարգսյան), մերժելով առաջին նախագահի առաջարկությունը Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման փուլային տարբերակի վերաբերյալ, հատուկ անդրադարձ է կատարել խնդրի տնտեսական կողմին՝ հայտարարելով, որ Հայաստանի տնտեսական բարդությունները ոչ թե փակ սահմանների արդյունք են, այլ վատ կառավարման, և որ տնտեսության զարգացումը հնարավոր է ապահովել նաև չլուծված հակամարտության պայմաններում:³

Առաջին նախագահի հրաժարականին նախորդեց Երկրապահի խորհրդարանական «շրջադարձը»:

¹ Երկի իրավացի էր առաջին նախագահը՝ մասնավոր մի զրոյցում նկատելով՝ մեզ համար դժվար է լավ քաղաքական գործիչ լինելը, քանի որ մեր մտածողությունը չափազանց գիտական է:

² Բրիտանիայում դա մեկ անգամ հաջողվել է Չերչիլին. «Ես ձեզ չեմ կարող առաջարկել ոչինչ, բացի արյունից, ծանր աշխատանքից, արցունքներից և քրտինքից» (13.05.1940-ի ելույթը Համայնքների պալատում):

³ Տես մասնավորապես՝ http://www.aniarc.am/2021/01/23/vazgen-sargsyan-press-conference-23-january-1998/?fbclid=IwAR2tKgtvFHe5nMOaN5UosjO5TmC_dygidgfn_cL56yRRrBF4yLCvh4-wG3w, այց՝ 25-րդ. 01.2021:

All politics is local

1998-ի պետական հեղաշրջման հարցն առանձին հետազոտության առարկա է: Միակ հարցը, որ ես ցանկանում եմ դնել այդ կապակցությամբ, հետևյալն է. ինչո՞ւ նախագահ Տեր-Պետրոսյանը որոշեց հրաժարական տալ, ինչո՞ւ նա չհակադրվեց քաղաքական և ռազմական էլիտաներին՝ անմիջականորեն դիմելով ժողովրդին:

Ենթադրությունս այն է, որ պատճառները ոչ ամբողջովին են պայմանավորված եղել հայաստանյան հասարակության կողմից Լեռնային Ղարաբաղի խնդրի ընկալման յուրահատկությամբ: Ներքին կյանքում ծայր առած բարդությունները և առաջին հերթին՝ 1996 թվականի ցնցումներով անցած նախագահական ընտրությունները ձևավորեցին այն հոգեբանական մթնոլորտը, որը խնդրահարույց էր դարձրել հանրության վերաբերմունքը նրա հարցադրումների նկատմամբ:

Լուսավորական հարացույցի քայքայումը

Առաջին նախագահի հրաժարականը նշանավորեց հայաստանյան քաղաքականության լուսավորական հարացույցի քայքայումը: Վերջինս տեղի ունեցավ երկու փուլով:

Հայաստանում 2000-ականներին սկիզբ առած և մինչև 2018-ը գոյատևած քրեաօլիգարխիկ ռեժիմը հիմնված էր պաշտոնական ձևական-իրավական «առաջնամասի» և լռելյայն գործող ոչ պաշտոնական մեխանիզմների զուգակցման վրա: Պաշտոնականի և մասնավորի միջև ահագնացող ճեղքվածքը հանգեցրեց «կրկնամտության» (doublethink) տարածմանը, խրախուսմանը և պաշտոնականացմանը: Մյուս կողմից, տարեցտարի աճող սոցիալական բևեռացումը զսպելու համար ընտրվեց «արտաքին ոսոխի դեմ միավորվելու» կարգախոսը, որի շնորհիվ արցախյան խնդիրը փաստացի սկսեց դիտվել որպես հայկական հարցի բաղկացուցիչ և, միավորվելով Հայոց ցեղասպանության ճանաչման պահանջի հետ, իր պաշտոնական մարմնավորումը գտավ ազգ-բանակ հղացքում: Նույն «կրկնամտությունը» իշխում էր նաև Արցախի հարցում, քանի որ արտաքին քաղաքականության մեջ «ազգերի ինքնորոշման դիսկուրսը» պահպանվեց, իսկ քաղաքական ընտրախավերը քաջ գիտակցում

էին գրավյալ տարածքները հանձնելու անխուսափելիությունը: Հասկանալի է, որ նման կեցվածքը բացառում էր բաց և ռացիոնալ հաղորդակցությունը ժողովրդի հետ:

2018-ի դեպքերը զանգվածներին ներքաշեցին քաղաքականության մեջ: Սակայն լուսավորության վերադարձ տեղի չունեցավ: Անսահման պոպուլիզմի և «զրկվածների» ressentiment-ի անխնա շահագործման վրա կառուցված ռեժիմը ոչ միայն չհաջողեց «քաղաքացիական ազգի» ձևավորման մեջ, այլև անցում կատարեց դեպի համաշխարհային պատմությունից քաջ հայտնի վտանգավոր մոդելը, որում ժողովրդական զանգվածների և նրանց իղձերին (համա)պատասխանող առաջնորդի հաղորդակցումն իրականացվում է անմիջականորեն, հուզական մակարդակով՝ շրջանցելով հասարակական ինստիտուտները և հնից մնացած «էլիտաներին»: «Նախկինների» մեղադրանքներից խուսափելու և զանգվածների համակրանքը պահպանելու համար իշխանությունները վերջնականապես հրաժարվեցին ինքնորոշման դիսկուրսից և վերադարձան «պատմական իրավունքների» հռետորաբանությանը: Ապոթեոզը Սևրի պայմանագիրը ՀՀ արտաքին քաղաքականության հիմնաքար հռչակելն էր:

Նոյեմբերյան փաստաթուղթն այդ քաղաքականության անմիջական արդյունքն է: Անձնական ռեյթինգի և երկրի համար պատասխանատվության միջև ընտրության առջև կանգնած գործիչն անխուսափելիորեն գերադասեց ռեյթինգը:

Անավարտ, թե՛ ջախջախված նախագիծ

Անցյալ դարի ութսունականներին գերմանացի փիլիսոփա Յուրգեն Հաբերմասի այն դիտարկմանը, որ արդիականությունը դեռևս «անավարտ նախագիծ է», ֆրանսիացի մտածող Ֆրանսուա Լիոթարը պատասխանել է. «Արդիականությունը ոչ թե անավարտ, այլ ջախջախված նախագիծ է»: Նկատի ունենալով արդիականության և լուսավորականության անքակտելի կապը, որի մասին խոսեցինք սույն գրության սկզբում, մենք էլ ստիպված ենք մեզ հարց տալ այսօր. արդյոք լուսավորական քաղաքականությունը Հայաստանում անավարտ, թե տապալված նախագիծ է:

Պատասխանը մեզանից է կախված: Գիտենք առնվազն, որ Հաստատանի իրական արդիականացումն անհնար է առանց լուսավորության: Բայց հասկանում ենք նաև, որ գալիք լուսավորական քաղաքականությունը չի կարող հաջողել՝ պարզապես կրկնելով մեկ անգամ եղածը: Հայկական քաղաքականությունը նոր *ռացիոնալության*, հետևաբար՝ լուսավորության նոր մոդելի պահանջ ունի:

ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀՀ ԳԽ պատգամավոր, ՀՀ ԳԽ մշտական հանձնաժողովի նախագահ, 1990-1995 թթ.

ՀՀ ԱԺ պատգամավոր, 1995-1998 թթ.

ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՅՎԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1995 թ. Սահմանադրության նախագծի նախապատրաստումը և ընդունումը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի վրա անմիջական աշխատանքները Սահմանադրական հանձնաժողովում սկսվեցին 1992 թ. աշնանից: Սահմանադրական հանձնաժողովի՝ 1992 թ. հոկտեմբերի 23-ի նիստում քննարկվեցին կիսանախագահական կառավարման ձև ամրագրող Սահմանադրության առաջին նախագծի նկատմամբ սկզբունքային մոտեցումները, և խնդիր դրվեց կողմնորոշվել նախագծի հետագա քննարկման կարգի ու ժամկետների հարցում: Գերագույն խորհրդի պետականության հաստատման և ազգային քաղաքականության հարցերի հանձնաժողովի նախագահ Է. Եգորյանը ներկայացրեց նախագծի կառուցվածքը և հանգամանորեն անդրադարձավ դրա քաղաքական հիմքին ու նպատակներին: Նախապատրաստական աշխատանքի ընթացքում նախագծի հիմքում դրված կողմնորոշումների վերաբերյալ լրացումներով հանդես եկավ Սահմանադրական հանձնաժողովի փոխնախագահ Վ. Ստեփանյանը: Նախագծի հեղինակները պատասխանեցին բարձրացված հարցերին: Այս ծավալվեց մտքերի փոխանակում, որի արդյունքում որոշվեց ներկայացված տարբերակը ենթարկել լրացուցիչ վերամշակման, իսկ այլ նախագծերի առկայության դեպքում՝ աշխատել յուրաքանչյուրի վրա և համաժողովրդական քննարկման ներկայացնել առավել կատարյալ տարբերակը¹:

Սահմանադրության նախագծի հետագա լրամշակման ընթացքում հայ գործընկերներին տեղում օգնություն ցույց տալու նպատակով, Ֆրանսիայի կառավարության որոշմամբ, 1993 թվականի մարտին

¹ Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնի հաղորդագրությունը՝ «Սահմանադրական հանձնաժողովի նիստում», Հայաստանի Հանրապետություն, 24 հոկտեմբերի, 1992:

Հայաստան էին գործուղվել Ֆրանսիայի սահմանադրական իրավունքի մասնագետներ՝ «Փարիզ 1» համալսարանի պրոֆեսոր, համեմատական-իրավական հետազոտությունների հաստատության տնօրեն Միշել Լեսաժը և Ֆրանսիայի պետական խորհրդի անդամ Մարսել Պուշարը: Կազմակերպվեցին աշխատանքային քննարկումներ Սահմանադրական հանձնաժողովի անդամների և տարբեր քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Քննարկումների հիմնական առարկան Սահմանադրության նախագծում իշխանությունների տարանջատման սկզբունքի, դրանց միջև հավասարակշռության ապահովման հարցերն էին: Ֆրանսիացի մասնագետները դրական կարծիք հայտնեցին Սահմանադրության ներկայացված նախագծի վերաբերյալ՝ միաժամանակ շարադրելով իրենց դիտողություններն ու առաջարկությունները¹:

Սահմանադրության լրամշակված նախագիծը Սահմանադրական հանձնաժողովի մի քանի նիստում քննարկվելուց և լրամշակումից հետո 1993 թ. հունիսի 24-ի նիստում հավանության արժանացավ 13 «կողմ» և 2 «ձեռնպահ» ձայների համամասնությամբ: Որոշում ընդունվեց Սահմանադրության նախագիծը Գերագույն խորհուրդ ներկայացնելու և համաժողովրդական քննարկման համար հրապարակելու, ինչպես նաև պաշտոնապես միջազգային իրավաբանական փորձաքննության ուղարկելու մասին: Որոշվեց նաև լիազորել հանձնաժողովի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին՝ հանձնաժողովի անունից նախագիծը ներկայացնել խորհրդարանում, իսկ հանձնաժողովի փոխնախագահ Վ. Ստեփանյանին՝ քննարկման փուլում այն ներկայացնել հոդված առ հոդված²:

Գերագույն խորհրդի որոշմամբ՝ այդ նախագիծը ներկայացվեց համաժողովրդական քննարկման: Քննարկումը տևեց ինն ամիս, և նախագծի վերաբերյալ ստացվեցին հազարից ավելի դիտողություններ ու առաջարկություններ: Սահմանադրական հանձնաժողովը մի շարք նիստերում քննարկումներից և լրացուցիչ մշակումներից հետո

¹ Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնի հաղորդագրությունը՝ «Սահմանադրության աշխատանքային քննարկումները», Հայաստանի Հանրապետություն, 2 մարտի, 1993:

² Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնի հաղորդագրությունը՝ «Քննարկումները սկզբունքային էին, բայց և հանդուրժողական...», Հայաստանի Հանրապետություն, 25 հունիսի, 1993:

հավանություն տվեց Սահմանադրության նախագծին և 1994 թ. հունիսին այն կրկին ներկայացրեց ՀՀ Գերագույն խորհրդի քննարկմանը:

Իրավաբանական գրականության մեջ առկա են տրամագծորեն հակադիր գնահատականներ այն հարցի շուրջ, թե որքանով են արդյունավետ օգտագործվել համաժողովրդական քննարկումների արդյունքում կատարված դիտողություններն ու առաջարկությունները նախագծի հետագա կատարելագործման ընթացքում: Այսպես՝ Հ. Խաչատրյանը կարծում է, որ մեծածավալ աշխատանք կատարվեց ժողովրդական քննարկման ընթացքում արված առաջարկությունների, լրացումների և դիտողությունների գիտական մշակման ու հաշվառման ուղղությամբ, ինչի արդյունքում նախագծում տեղ գտան որակապես նոր լուծումներ և գաղափարներ, հղկվեցին ու ճշգրտվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի շատ նորմեր¹: Մինչդեռ Վ. Պողոսյանի և Հ. Թովմասյանի կարծիքով՝ չնայած կատարված բազմաթիվ առաջարկություններին՝ Սահմանադրական հանձնաժողովի կողմից ընդունված նախագիծը չէր պարունակում էական փոփոխություններ: Այն դարձյալ պահպանում էր հանրապետության նախագահի գերակա դիրքը Գերագույն խորհրդի և Կառավարության նկատմամբ²:

Թերևս, ինչպես դա հաճախ է պատահում նման իրարամերժ գնահատականների պայմաններում, ճշմարտությունը մեջտեղում է: Իսկապես, արված դիտողությունների հաշվառման և իրացման ուղղությամբ կատարվել էին մեծածավալ աշխատանքներ: Սակայն ակնհայտ է, որ ոչ բոլոր դիտողությունները կարող էին հաշվի առնվել՝ թեկուզ այն պարզ պատճառով, որ որոշ դիտողություններ անհամատեղելի էին նախագծում ամրագրված պետական կառավարման կիսանախագահական ձևի հետ: Ինչ վերաբերում է Վ. Պողոսյանի և Հ. Թովմասյանի այն գնահատականին, որ այդ նախագիծը պահպանում էր Հանրապետության նախագահի գերակա դիրքը Գերագույն խորհրդի և Կառավարության նկատմամբ, ապա բնական է, որ այդ հեղինակները, լինելով խորհրդարանական կառավարման սկզբունքային

¹ Խաչատրյան Հ., Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Երևան, 1998, էջ 20:

² Պողոսյան Վ., Թովմասյան Հ., նշվ. աշխ. էջ 12:

կողմնակիցներ, կիսանախագահական կառավարման ցանկացած մոդելի կտային նույնաբովանդակ գնահատական:

Սահմանադրական հանձնաժողովի նախագծից բացի նախապատրաստվել էին նաև Սահմանադրության այլ նախագծեր: Առաջին այլընտրանքային նախագիծը 1992 թ. ներկայացրեց ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ Հենրիկ Խաչատրյանը: 1993 թ. հունիսին Սահմանադրության նախագիծ ներկայացրեց ՀՅԴ-ն, իսկ նույն թվականի օգոստոսին՝ ՀՌԱԿ-ը: Հետագայում ՀՅԴ-ի և ՀՌԱԿ-ի նախաձեռնությամբ ստեղծվեց ընդդիմության միասնական, այսպես կոչված, վեցյակի Սահմանադրության նախագիծը: Բացի ՀՅԴ-ից և ՀՌԱԿ-ից, վեցյակի կազմում ընդգրկված էին նաև ՍԻՄ-ը, հանրապետական, դեմոկրատական և ագրարային ժողովրդավարական կուսակցությունները: Հետագայում Սահմանադրության այլընտրանքային նախագծեր ներկայացրեցին նաև կոմունիստական կուսակցությունն ու Գերագույն խորհրդի պատգամավոր Մ. Գաբրիելյանը:

Ուստի սահմանադրական հանձնաժողովի նախագծի հետ միաժամանակ քննարկման էր ներկայացվել նաև Սահմանադրության այլընտրանքային ևս չորս նախագիծ, որոնցից հիմնական այլընտրանքը վեց ընդդիմադիր կուսակցությունների ներկայացրած տարբերակն էր:

Գերագույն խորհրդի նիստում Սահմանադրության նախագծի հիմնադրույթները, դրանում ամրագրված սկզբունքները և հիմնախնդիրները ներկայացրեց Լ. Տեր-Պետրոսյանը: Նա նաև մանրամասնեց նախագծի հիմքում առկա առանձին հիմնարար դրույթների առնչությամբ Սահմանադրական հանձնաժողովի տեսակետները և հիմնավորեց կիսանախագահական կառավարման մոդելի նպատակահարմարությունը: Սահմանադրական հանձնաժողովի մշակած Սահմանադրության նախագիծը բովանդակային և կառուցվածքային առումներով ներկայացրեց հանձնաժողովի փոխնախագահ Վ. Ստեփանյանը: Խորհրդարանը քննարկեց նաև վեց կուսակցությունների ներկայացրած Սահմանադրության նախագծի տարբերակը, որի սկզբունքային և հիմնարար դրույթների հիմնավորումներով հանդես եկավ Վ. Նազարյանը: Քննարկման արդյունքում նախագծերից ոչ

մեկը չստացավ ձայների անհրաժեշտ որակյալ մեծամասնություն, և Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց վերադարձնել նախագիծը Սահմանադրական հանձնաժողովին լրամշակելու՝ հաշվի առնելով նաև այլընտրանքային նախագծերը¹:

Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց նաև «Սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնման մասին»²: Սահմանադրական հանձնաժողովի կազմում ընդգրկվեց դրանում ներկայացուցիչ չունեցող կուսակցությունների և այլընտրանքային նախագծերի հեղինակների մեկական ներկայացուցիչ: Նոր կազմում ընդգրկված էր 32 անդամ: Ինչպես արդարացիորեն նշում էր Է. Եգորյանը, աշխատանքի հաջող ընթացքին էպես նպաստեց Վ. Նազարյանը³: Միաժամանակ Գերագույն խորհրդի նախագահ Բ. Արարքցյանն ընտրվեց Սահմանադրական հանձնաժողովի համանախագահ:

1994 թ. օգոստոսի 4-ին ընդլայնված Սահմանադրական հանձնաժողովը ստեղծեց հինգ հոգուց կազմված աշխատանքային խումբ, որի կազմում ընդգրկվել էին բացառապես իրավագետներ՝ Վ. Ստեփանյանը, Վ. Զուռնաչյանը, Վ. Նազարյանը, Ռ. Պետրոսյանը և Ֆ. Խառատյանը: Աշխատանքային խմբի առաջարկություններին համապատասխան՝ նախագծում կատարվեցին մի շարք փոփոխություններ, և 1995 թ. ապրիլի 13-ին Սահմանադրության նախագծի վերջնական տեքստն ընդունվեց հանձնաժողովի կողմից և կրկին ներկայացվեց Գերագույն խորհրդի քննարկմանը: Նախագծին դեմ քվեարկեցին ՍԻՄ նախագահ Հ. Խաչատրյանը, կոմկուսի ներկայացուցիչ Ֆ. Խառատյանը և ՀՅԴ ԳՄ անդամ Ռ. Հակոբյանը⁴:

Սահմանադրության նախագծի նախապատրաստման աշխատանքներին զուգահեռ՝ Գերագույն խորհրդում սուր բանավեճեր էին ընթանում Սահմանադրության ընդունման կարգի մասին: Գերագույն խորհրդի 1994 թ. ապրիլի 12-ի նիստում որոշում ընդունվեց շահագրգիռ կողմերին հնարավորություն ընձեռել ներկայացնելու Սահմանադրության ընդունման կարգի շուրջ իրենց մոտեցումները:

¹ Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնի հաղորդագրությունը «ՀՀ ԳԽ նստաշրջանում», Հայաստանի Հանրապետություն, 16 հունիսի, 1994:

² ՀՀ ԳԽՏ, 1994/12:

³ Եգորյան Է., Ճանապարհը, Հայաստանի Հանրապետություն, հուլիսի 5, 1996:

⁴ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., նշվ. աշխ., էջ 14:

Սահմանադրական հանձնաժողովի տեսակետը ներկայացրեց հանձնաժողովի փոխնախագահ Վ. Ստեփանյանը: Արձանագրելով Սահմանադրության շուտափույթ ընդունման անհրաժեշտությունը՝ նա կարևորեց համաժողովրդական քվեարկությամբ դրա ընդունման նպատակահամարությունը: Զեկուցողը նկատեց, որ Սահմանադիր ժողովի կամ Գերագույն խորհրդի կողմից Սահմանադրության ընդունման մասին առաջարկությունները հարցը տանում են փակուղի, իսկ լավագույն դեպքում՝ անորոշ ժամանակով ձգձգում են գործընթացը: Վ. Ստեփանյանը հանձնաժողովի անունից չբացառեց նաև միաժամանակ մի քանի նախագծերի ներկայացումը համաժողովրդական քվեարկության:

Սահմանադրությունը սահմանադիր ժողովի կողմից ընդունելու առաջարկության հիմնավորմամբ վեց կուսակցությունների անունից հանդես եկավ Վ. Նազարյանը: Հիմնավորելով իր կողմից պաշտպանվող տեսակետը՝ նա անհամաձայնություն հայտնեց այն որպես միասնական փաստաթուղթ համաժողովրդական քվեարկության միջոցով ընդունելու մոտեցմանը: Սկզբունքորեն դեմ չլինելով Սահմանադրությունը Գերագույն խորհրդի կողմից ընդունելու տարբերակին՝ զեկուցողը քաղաքական ուժերի հարաբերակցության վերլուծության արդյունքում դա համարեց աննպատակահարմար:

Հայաստանի կոմունիստական կուսակցության դիրքորոշումը ներկայացրեց Ֆ. Խառատյանը: Սահմանադիր ժողովի միջոցով Սահմանադրությունն ընդունելու առաջարկը համարելով ոչ նպատակահարմար՝ զեկուցողն արտահայտվեց գործող Սահմանադրության շրջանակներում կողմնորոշվելու և փաստաթուղթը Գերագույն խորհրդի կողմից ընդունելու օգտին: Նա հնարավոր համարեց նաև մինչև Սահմանադրության ընդունումը խորհրդարանական նոր ընտրությունների անցկացումը և կարևորագույն այդ փաստաթղթի ընդունման իրավունքի վերապահումը նորընտիր խորհրդարանին:

Որպես միջանկյալ տարբերակ՝ իր նկատառումները ներկայացրեց Ռ. Պետրոսյանը: Անընդունելի համարելով իշխանությունների ճյուղերից մեկի՝ օրենսդիր մարմնի կողմից հիմնական օրենքի ընդունումը՝ նա միաժամանակ աննպատակահարմար գտավ սահմանադիր ժողով հրավիրելու մոտեցումը և առաջարկեց համամասնական

սկզբունքով կազմել սահմանադրական ժողով (ասամբլեա), որում կընդգրկվեն խորհրդարանի, Հանրապետության նախագահի և խորհրդարանում ներկայացված կուսակցությունների ներկայացուցիչները: Նման կառույցի ստեղծումը պայմանավորելով բոլոր քաղաքական ուժերի կողմից ընդունելի մեկ միասնական նախագիծ մշակելու մոտեցմամբ՝ զեկուցողը նշեց, որ Սահմանադրության ընդունման իրավունքն ի վերջո հանրաքվեի միջոցով պետք է վերապահվի ժողովրդին¹:

Քննարկվող հարցի վերաբերյալ բանավեճեր ծավալվեցին Գերագույն խորհրդի հաջորդ օրվա նիստում: Իր ելույթում Գերագույն խորհրդի նախագահ Բ. Արարքյանը նշեց, որ Սահմանադրության ընդունման առնչությամբ որոշումները պետք է լինեն իրավաբանորեն անխոցելի, այսինքն՝ ընդունվեն պատգամավորների ձայների որակյալ մեծամասնությամբ: Բանն այն էր, որ այդ ժամանակ դեռևս գործող խորհրդային Սահմանադրությամբ ամրագրված էր, որ Սահմանադրությունը կարող է ընդունվել կամ փոփոխվել Գերագույն խորհրդի կողմից՝ պատգամավորների ձայների որակյալ մեծամասնությամբ: Սակայն նաև կարծիք էր հայտնվում, որ հիմնվելով 1990 թ. դեկտեմբերի 10-ի սահմանադրական օրենքի վրա՝ կարելի է այդ կարգը փոփոխել պատգամավորների ձայների պարզ մեծամասնությամբ ընդունված սովորական օրենքով: Այդ մոտեցումը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ օրենքն ընդունվել է Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիման վրա: Սակայն ակնհայտ էր, որ այդպիսի մոտեցման դեպքում պետության հիմնական օրենքի լեգիտիմությունը կասկածի տակ կհայտնվեր:

Քննարկվող հարցի կապակցությամբ հանդես եկավ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: Նա մասնավորապես նշեց, որ հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը, հետագայում բացառելով իշխանության մարմինների լիազորությունների վերաբաշխման վտանգավոր միտումը, ամուր հիմք կդառնա պետության կայունության և քաղաքական համերաշխության համար:

¹ Գերագույն խորհրդի մամուլի կենտրոնի հաղորդագրությունը՝ «ՀՀ Գերագույն խորհրդի նտաշրջանում», Հայաստանի Հանրապետություն, ապրիլի 13, 1994:

Հիմնական զեկուցողների՝ եզրափակիչ խոսքով հանդես գալուց հետո հաջորդաբար քվեարկության դրվեցին Սահմանադրության ընդունման կարգի շուրջ ներկայացված բոլոր նախագծերը: Քվեարկության արդյունքում նախագծերից և ոչ մեկը անհրաժեշտ թվով (2/3) ձայներ չհավաքեց, և նպատակահարմար համարվեց շարունակել այդ հարցի շուրջ քննարկումները՝ շահագրգիռ կողմերին հնարավորություն ընձեռելով անցկացնելու լրացուցիչ քաղաքական խորհրդատվություններ:

Սահմանադրության ընդունման կարգի մասին հիմնախնդիրն իր փոխզիջումային լուծումն ստացավ 1995 թ. մարտի 27-ի սահմանադրական օրենքով, որի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվում է Գերագույն խորհրդի կամ Հայաստանի Հանրապետության հանրաքվեի միջոցով՝ Գերագույն խորհրդի հավանությամբ»¹: Այդպիսով՝ Գերագույն խորհրդին վերապահվեց իր որոշմամբ Սահմանադրության ընդունման կարգը սահմանելու լիազորություն:

Երկարատև քննարկումներից և այդ քննարկումների արդյունքներով նախագծում լրացուցիչ փոփոխություններ կատարելուց հետո Գերագույն խորհուրդը 1995 թ. մայիսի 12-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մասին» հետևյալ որոշումը.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծին:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման նպատակով 1995 թ. հուլիսի 5-ին անցկացնել հանրաքվե՝ քվեարկության դնելով հետևյալ հարցը. «Համաձայն եք, արդյոք, ընդունել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»²:

1995 թ. հուլիսի 5-ին անցկացվեց սահմանադրական հանրաքվե, որին Հայաստանի Հանրապետության՝ ընտրական իրավունք ունեցող

¹ ՀՀ ԳԽՏ, 1995/6:

² ՀՀ ԳԽՏ, 1995/9:

2,189,804 քաղաքացիներից մասնակցեց 1,217,531-ը: Մասնակիցներից 828,370-ը պատասխանեցին «այո» և 349,271-ը՝ «ոչ»: Անվավեր ճանաչվեց 39,440 քվեաթերթիկ: Այդպիսով՝ հանրաքվեին մասնակցած քաղաքացիների 68.04 տոկոսը կողմ արտահայտվեց Սահմանադրության ընդունմանը:

1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված կիսանախագահական կառավարման մոդելի առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևն իր հիմնական հատկանիշներով համապատասխանում էր դասական՝ Ֆրանսիայի հինգերորդ հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված կիսանախագահական կառավարման մոդելին:

Կիսանախագահական կառավարման հայտնի բոլոր մոդելների հիմնական առանձնահատկությունները պայմանավորված են պետական կառավարման համակարգում հանրապետության նախագահի իրավական կարգավիճակով և դերով:

Բոլոր այդ մոդելների հիմնական հատկանիշներն են՝ ա) հանրապետության նախագահն ունի առաջնային մանդատ՝ ընտրվում է քաղաքացիների կողմից ուղղակի ընտրությունների միջոցով, բ) հանրապետության նախագահն օժտված է լայնածավալ լիազորություններով՝ հանդիսանում է պետության գլուխը, օժտված է լայնածավալ լիազորություններով գործադիր իշխանության ոլորտում և հանդիսանում է գերագույն հրամանատարը, գ) գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կառավարությունն է, որը գործում է նախագահի ընդհանուր ղեկավարության ներքո: Կառավարությունը նշանակվում է նախագահի կողմից, սակայն կարող է գործել միայն խորհրդարանի վստահությունը վայելելու պայմաններում: Խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելը հանգեցնում է կամ կառավարության հրաժարականին, կամ խորհրդարանի արձակմանը¹:

Ուստի քննարկվող կառավարման մոդելի առանձնահատկությունների վերլուծության համար կարևոր նշանակություն ունի

¹ Конституционное право зарубежных стран, М., 2004, с. 124.

հանրապետության նախագահի գործառույթների և դրանց իրականացումն ապահովող կոնկրետ լիազորությունների վերլուծությունը, իսկ կիսանախագահական կառավարման հայաստանյան մոդելի համար՝ անաչառ ուսումնասիրությունը: Այդ մոդելի դրական և բացասական հատկանիշների օբյեկտիվ գնահատման համար չափազանց կարևոր է դրանց դիտարկումը կիսանախագահական կառավարման առանձնահատկությունների համատեքստում՝ համեմատական վերլուծության մեթոդի հիման վրա:

Պետք է նկատել, որ ի տարբերություն այլ պետությունների սահմանադրությունների՝ 1995 թ. Սահմանադրությամբ տրված չէ հանրապետության նախագահի իրավական կարգավիճակի ընդհանրական բնորոշում: Այս հանգամանքը պայմանավորված էր ինչպես բովանդակային, այնպես էլ տերմինաբանական առումներով:

Այդպես՝ Սահմանադրական հանձնաժողովում գերիշխում էր այն ճիշտ մոտեցումը, որ իշխանությունների տարանջատման սկզբունքն ինքնին բացառում է «պետության ղեկավար» կամ «բարձրագույն պաշտոնատար անձ» հասկացությունները: Կիսանախագահական կառավարման ձևի պայմաններում, ինչը ենթադրում է կառավարության ինստիտուտի առկայություն, նախագահը չի հանդիսանում նաև գործադիր իշխանության ղեկավար, ուստի նրա նկատմամբ կիրառելի չէ նաև «գործադիր իշխանության ղեկավար» եզրույթը:

Տերմինաբանական առումով հայերենում, ի տարբերություն, ասենք, ռուսերենի, որտեղ առկա են երկու տարբեր եզրույթներ (голова-глава), գոյություն ունի միայն մեկ տերմին՝ գլուխ:

Ուստի չի կարելի համաձայնել հայրենական իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն կարծիքների հետ, որ 1995 թ. Սահմանադրության համաձայն՝ հանրապետության նախագահը հանդիսանում է հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը¹:

Հաշվի առնելով հենց այս հանգամանքները՝ Սահմանադրական հանձնաժողովում որոշվեց զերծ մնալ հանրապետության նախագահի պաշտոնի ընդհանրական բնութագրումներից, այլ պարզապես

¹ Джангирян Ж. Д., Разделение властей в Республике Армения: конституционная модель и практика, М., 2003, с. 84.

ամրագրել նրա գործառույթներն ու լիազորությունները: Հանրապետության նախագահի հիմնական գործառույթներն ամրագրվեցին Սահմանադրության 49-րդ հոդվածով, իսկ լիազորությունները՝ 55-րդ հոդվածով:

Պետք է նկատել, որ հանրապետության նախագահի՝ սահմանադրորեն ամրագրված իրավական կարգավիճակով են պայմանավորված քննարկվող մոդելի հիմնական առանձնահատկությունները, քանի որ հենց նախագահն է հետևում Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հետաքրքիր է, որ Ֆրանսիայի 1958 թ. Սահմանադրության հիմնական հեղինակներից մեկը՝ Միշել Դեբրեն, կիսանախագահական կառավարման մոդելի առավելությունների հիմնավորման ընթացքում այն բնութագրում էր որպես «ընտրովի միապետություն» կամ «հանրապետական միապետություն»¹: Ուստի հատկանշական է, որ պետական կառավարման այս կոնկրետ մոդելի քննադատների ուշադրությունը հիմնականում սևեռվում էր հենց նախագահի կարգավիճակի իրական կամ հորինված թերությունների վրա: Այսպես, Վ. Պոլոսյանի և Հ. Թովմասյանի կարծիքով՝ Հայաստանում կառավարման կիսանախագահական մոդելի ընդունումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ կառավարող մեծամասնության մտահոգությունը միայն այն էր, թե հանրապետության նախագահի ուժեղ դիրքի ամրագրման ընդմիջում է ավելի նախընտրելի: Չնայած այն հանգամանքին, որ սահմանադրական հանրաքվեի ժամանակ Սահմանադրության նախագիծը ներկայացվում էր որպես ֆրանսիական մոդել, Հայաստանի Սահմանադրության մոդելը զգալիորեն տարբերվում է ֆրանսիականից, քանի որ այդ մոդելի հիմքում հանրապետության նախագահի իշխանությունը հնարավորինս մեծացնելու և իշխանության մարմինների համակարգում նրա գերակա դիրքն ապահովելու գաղափարն էր²:

Հանրապետության նախագահի կարգավիճակի և, հետևաբար, քննարկվող մոդելի օբյեկտիվ գնահատման համար թերևս անհրաժեշտ է վերլուծել հանրապետության նախագահի կոնկրետ

¹ Медушевский А., Сравнительное конституционное право и политические институты, М., 2002, с. 201-202.

² Պոլոսյան Վ., Թովմասյան Հ., նշվ. աշխ., էջ 16:

լիազորությունները օրենսդիր, գործադիր և դատական իշխանության հետ հարաբերություններում:

Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-3 կետերով օրենսդիր իշխանության գործառնության ոլորտում նախագահն օժտված էր հետևյալ լիազորություններով.

- ◀ ուղերձով դիմում է ժողովրդին և Ազգային ժողովին,
- ◀ Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո քանամեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը,
- ◀ Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող է արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն: Արտահերթ ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի արձակումից ոչ շուտ, քան երեսուն և ոչ ուշ, քան քառասուն օրվա ընթացքում: Իր պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում չի կարող արձակել Ազգային ժողովը:

Նշված լիազորությունների համախմբից հայրենական գրականության մեջ առավել հաճախ և խիստ քննադատության է ենթարկվում Ազգային ժողովի արձակման՝ նախագահի լիազորությունը: Այսպես, Վ. Պողոսյանի և Հ. Թովմասյանի կարծիքով՝ այդ լիազորությունը հնարավորություն էր տալիս ճգնաժամային իրավիճակներում հակամարտությունը միշտ լուծել հանրապետության նախագահի օգտին՝ պառլամենտի լուծարմամբ¹: Հ. Կետոյանի կարծիքով՝ հանրապետության նախագահի լիազորությունը՝ իր հայեցողությամբ ցանկացած ժամանակ արձակել Ազգային ժողովը, խաթարում է պառլամենտի գործունեության կայունությունը²:

¹ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., նշվ. աշխ., էջ 15:

² Կետոյան Հ. Ս., Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2018, էջ 103:

Իհարկե, դժվար է ժխտել այն հանգամանքը, որ խորհրդարանն արձակելու լիազորությունը նախագահի ձեռքին պառլամենտի գործունեության վրա ներագդելու հզոր միջոց է: Հատկանշական է, որ խորհրդարանի արձակումը որոշ հեղինակներ գնահատում են որպես «օրինականացված պետական հեղաշրջում»¹:

Սակայն, իշխանությունների տարանջատման տեսության համատեքստում, նախագահի քննարկվող լիազորության օբյեկտիվ գնահատման համար նախ կարևոր է հաշվի առնել, որ կառավարման այս մոդելը տարբեր կերպ է գործառնում՝ կախված այն հանգամանքից, թե հանրապետության նախագահին հարող քաղաքական ուժերը պառլամենտում մեծամասնություն ունեն, թե ոչ: Այն դեպքում, երբ նախագահին հարող քաղաքական ուժերը չունեն խորհրդարանական մեծամասնություն, ձևավորվում է իշխանության երկփեղկված, դուալիստական կառուցվածք, որը քաղաքական ճգնաժամերի պայմաններում կարող է հանգեցնել սուր հակասությունների նախագահի, խորհրդարանի և կառավարության փոխհարաբերություններում²: Հնարավոր այդ հակասությունների երկու հիմնական սուբյեկտները (նախագահը և Ազգային ժողովը) օժտված են առաջնային մանդատով, ուստի այդ հակասությունները կարող են առաջացնել քաղաքական սուր ճգնաժամեր: Դրա վառ ապացույցն են Ռուսաստանի Դաշնությունում 1993 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և Ղրղզական Հանրապետությունում 2010 թ. սահմանադրական փոփոխություններից հետո առաջացած սուր ճգնաժամերը: Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Հարությունյանը, շատ կարևոր է սահմանադրություններում նման հակասությունների լուծման միջոցների ամրագրումը³:

Հենց այդպիսի հակասությունների հաղթահարման և ճգնաժամերի կանխարգելման պայմաններ ստեղծելուն է նպատակաուղղված պառլամենտը սեփական հայեցողությամբ արձակելու նախագահի ֆորմալ, իրավաբանորեն չսահմանափակված իրավունքը: Սակայն ակնհայտ է, որ հանրապետության նախագահի հայեցողության

¹ Матте П., Роспуск парламента на Западе. СПб, 1911, с. 8.

² Медушевский А., Сравнительное конституционное право и политические институты, с. 211-212.

³ Арутюнян А., Конституционные проблемы постсоветской реальности, М., 2013, с. 143-144.

շրջանակները խստորեն սահմանափակված են քաղաքական գործունեներով: Նախագահը կարող է իր այդ լիազորությունից օգտվել միայն այն դեպքում, երբ կան օբյեկտիվ տվյալներ, որ իրեն հարող քաղաքական ուժը (ուժերը) խորհրդարանական արտահերթ ընտրությունների արդյունքում կստանա(ն) մեծամասնություն: Հետխորհրդային պետություններում էլեկտորատը, որպես կանոն, շատ անկայուն է, և խորհրդարանական կամ նախագահական ընտրություններից որոշ ժամանակ անց քաղաքական ուժերի հարաբերակցությունը կարող է էականորեն փոխվել: Ուստի նշված դեպքերում խորհրդարանի արձակումը կարող է պառլամենտում ուժերի փոխհարաբերակցությունն էլեկտորատի նոր վիճակին համապատասխանեցնելու միջոց լինել:

Հատկանշական է, որ եվրոպական բազմաթիվ երկրների սահմանադրություններով, որպես կանոն, ամրագրված է խորհրդարանն արձակելու նախագահի լիազորությունը՝ սեփական հայեցողությամբ կամ որոշակի պայմանների առկայության դեպքում¹: Ավելին, որոշ սահմանադրություններով, բացի դրանից, ամրագրված է նաև նախագահի՝ խորհրդարանի նստաշրջանը հետաձգելու կամ վերջինիս աշխատանքները ցանկացած ժամանակ ընդհատելու լիազորությունը: Նախագահի այդպիսի լիազորությունն ամրագրված է, մասնավորապես, Հունաստանի Սահմանադրության 40-րդ հոդվածով² և Հունգարիայի Սահմանադրությամբ (կետ 4, § 22)³:

Հայրենական իրավաբանական գրականության մեջ առավել սուր քննադատության առարկա է նախագահ-գործադիր իշխանություն փոխհարաբերությունների սահմանադրական կարգավորումը: Իհարկե, այդ կարգավորումներն օպտիմալ չի կարելի գնահատել: Նախ պետք է նշել, որ Սահմանադրության 1995 թ. տեքստում ճշգրիտ բնորոշված չեն կառավարության տեղն ու դերը պետական իշխանության համակարգում: Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Մինչդեռ ակնհայտ է, որ, ի տարբերություն օրենսդիր

¹ Конституционное право государств Европы, М., 2005, с. 204-205.

² <https://rua.gr/law/others/3176-konstitucziya-greczii.html>; մուտք՝ 08.05.2020:

³ <https://legalns.com/download/books/cons/hungary.pdf>; մուտք՝ 08.05.2020:

իշխանության, ցանկացած պետության մեջ գործադիր և դատական իշխանությունն իրականացվում է ոչ թե մեկ մարմնի, այլ պետական մարմինների ամբողջական համակարգի միջոցով, ուստի ավելի ճիշտ է կառավարությունը բնորոշել որպես գործադիր իշխանության բարձրագույն մարմին:

Իրավաբանական գրականության մեջ նախագահ-գործադիր իշխանություն փոխհարաբերություններում առավել հաճախ առանձնացվում են նախագահի երեք խումբ լիազորություններ.

- ◀ վարչապետի և կառավարության անդամների նշանակման և պաշտոնից ազատման,
- ◀ կառավարության, կառավարության անդամների և գործադիր իշխանության այլ մարմինների գործունեության վրա ներազդելու,
- ◀ գործադիր իշխանության այլ մարմինների բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակելու և ազատելու¹:

Նախ վերլուծենք հանրապետության նախագահի լիազորությունները կառավարության ձևավորման և հրաժարականի ընթացակարգերում: Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նախագահը «նշանակում և ազատում է վարչապետին: Վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Կառավարության անդամներին»: Այս հոդվածն ընդհանուր կառուցակարգից կտրված մեկնաբանելիս տպավորություն է ստեղծվում, որ վարչապետ նշանակելու նախագահի լիազորությունը կրում է հայեցողական բնույթ. նախագահը սեփական հայեցողությամբ կարող է նշանակել ցանկացած անձի, որը համապատասխանում է տվյալ պաշտոնն զբաղեցնող անձի համար օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Սակայն Սահմանադրության 74-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է նաև Կառավարության պարտավորությունը՝ նորընտիր Ազգային ժողովի կամ իր կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում Ազգային ժողովի հավանությանը ներկայացնել իր գործունեության ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահության հարցը, իսկ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Կառավարությանը «անվստահություն հայտնելու մասին որոշում ընդունելու դեպքում

¹ Конституционное право государств Европы, М., 2005, с. 209.

վարչապետը հանրապետության նախագահին դիմում է ներկայացնում Կառավարության հրաժարականի մասին»: Սահմանադրության 55-րդ կետով սահմանված է, որ «Ազգային ժողովի կողմից Կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում քսանօրյա ժամկետում ընդունում է Կառավարության հրաժարականը, նշանակում վարչապետ և կազմավորում Կառավարությունը»: Այդպիսով՝ Կառավարության կազմավորման ընթացակարգի ամբողջական վերլուծությունը միանշանակ բերում է այն եզրակացության, որ նախագահի՝ Կառավարություն ձևավորելու լիազորությունը ամեննին հայեցողական բնույթ չի կրում: Իր այս լիազորության իրականացման ընթացքում նախագահը ստիպված է հաշվի առնել Ազգային ժողովի մեծամասնության կարծիքը: Հակառակ դեպքում Ազգային ժողովը կարող է անվստահություն հայտնել նոր Կառավարությանը, և նախագահը ստիպված կլինի Կառավարության կազմավորման գործընթացը սկսել նորից:

Իհարկե, նախագահը նշված դեպքերում կարող է նաև իրացնել Ազգային ժողովն արձակելու իր սահմանադրական լիազորությունը: Սակայն, ինչպես արդեն նշել էինք, նախագահի կողմից այդ լիազորության իրացման հնարավորությունը գործնականում նույնպես սահմանափակված է. նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը և նշանակել նոր խորհրդարանական ընտրություններ՝ միայն վերը նկարագրված պայմաններում:

Այդպիսով՝ Կառավարության կազմավորմանն առնչվող հարաբերությունների սահմանադրական կարգավորումների ամբողջական վերլուծությունը միանշանակ հանգեցնում է այն եզրահանգման, որ այս գործընթացում նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների միջև սահմանադրական նորմերով որոշակի հավասարակշռություն է ապահովված, և այդ երկու առաջնային մանդատ ունեցող սուբյեկտների փոխհարաբերություններում առկա է զսպումների և հակակշիռների կառուցակարգ: Հատկանշական է, որ, օրինակ, Ֆրանսիայում, որտեղ Սահմանադրությամբ առաջին անգամ ամրագրված էր Կառավարության կազմավորման այս ընթացակարգը, մի քանի անգամ ձևավորվել էր համակեցության իրավիճակ. հանրապետության նախագահը, հաշվի առնելով պառլամենտում

քաղաքական ուժերի հարաբերակցությունը, ստիպված է եղել ձևավորել իր նկատմամբ ընդդիմադիր կառավարություն (1957 թ., 1986 թ., 1993 թ.) և համագործակցել այդ Կառավարության հետ: Այդպիսի իրավիճակ ստեղծվեց նաև Հայաստանի Հանրապետությունում 1999 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

Ըստ էության, վարչապետին ազատելու հանրապետության նախագահի լիազորությունը հայեցողական բնույթ ունի: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նախագահը նաև այս դեպքում՝ վարչապետի պաշտոնանկությունից հետո, նոր Կառավարության ձևավորման ընթացքում սահմանափակված է խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցությամբ: Նախագահ-Կառավարություն փոխհարաբերությունների բնույթի օբյեկտիվ գնահատման համար պետք է նաև հաշվի առնել, որ Կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում ոչ միայն նախագահի, այլև խորհրդարանի առջև: Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի կողմից Կառավարությանն անվստահություն հայտնելու դեպքում նախագահը քսանօրյա ժամկետում ընդունում է Կառավարության հրաժարականը, նշանակում վարչապետ և կազմավորում նոր Կառավարություն:

Նախագահ-կառավարություն (վարչապետ) փոխհարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում առանցքային նշանակություն ունեն Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված իրավադրույթները. «Կառավարության նիստերը հրավիրում և վարում է Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը», և «Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում է Հանրապետության Նախագահը»: Այստեղ կարևորվում է այն հանգամանքը, որ Կառավարությունը գործադիր իշխանության կոլեգիալ մարմին է, որի լիազորությունների իրականացման հիմնական միջոցը նիստերում համապատասխան հարցերի քննարկումն ու որոշումների ընդունումն է: Այս առումով, թերևս, բնութագրական է, որ մինչև 2005 թ. սահմանադրական փոփոխությունները հանրապետության գործող նախագահները Կառավարության նիստեր հրավիրելու և վարելու լիազորության իրականացումը հրամանագրերով

վերալիազորում էին վարչապետներին, ինչը, սակայն, չի կարելի համարել իրավական պետությանը հարիր երևույթ: Եթե վերը նշվածին ավելացնենք նաև այն հանգամանքը, որ առանց նախագահի վավերացման Կառավարության որոշումները չէին ստանում իրավաբանական ուժ, ապա կարող ենք գալ այն եզրահանգման, որ Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունն իրականացնում է (ավելի ճիշտ՝ ղեկավարում է) ոչ թե Կառավարությունը, այլ նախագահը: Նախագահին աջակցող ուժերի խորհրդարանական մեծամասնության դեպքում վարչապետն իր փաստացի կարգավիճակով հանդիսանում է գործադիր իշխանության ղեկավարման գծով նախագահի տեղակալ, ուստի պետք է համաձայնել Հ. Կետյանի այն դիտարկմանը, որ 1995 թ. Սահմանադրությամբ գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգը հստակեցված չէր: Սահմանադրության 85-րդ հոդվածում նշվում էր, որ գործադիր իշխանությունն իրականացնում է Կառավարությունը, որը կազմված է վարչապետից և նախարարներից, իսկ հաջորդ հոդվածով ամրագրված էր, որ Կառավարության նիստերը հրավիրում և վարում է հանրապետության նախագահը կամ նրա համաձայնությամբ՝ վարչապետը¹:

Գործադիր իշխանության ոլորտում հանրապետության նախագահին վերապահված էին նաև այլ լիազորություններ: Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն՝ նախագահը օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ է կատարում քաղաքացիական պաշտոններում (կետ 5), վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազին (կետ 9), զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը (կետ 12):

Անդրադառնալով դատական իշխանության կազմակերպման, կազմավորման և գործառնության ոլորտների սահմանադրական կարգավորումներին՝ նախ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում դատական բարեփոխումների հիմքը դրվեց 1995 թ. Սահմանադրությամբ: Ի տարբերություն օրենսդիր և գործադիր

¹ Կետյան Հ. Ս., Պետական իշխանության բաժանման և հավասարակշռման սկզբունքի ապահովման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2018, էջ 101-102:

իշխանության համակարգերի, որտեղ մինչև Սահմանադրության ընդունումը օրենքների միջոցով կատարվել էին էական բարեփոխումներ, մեզանում շարունակում էր գործել նախկին՝ խորհրդային ժամանակներից ժառանգած դատական համակարգը:

Ինչպես նշում է Գ. Բաղիրյանը, «Սահմանադրությամբ համապարփակ ձևով լուծված են անկախ դատական իշխանության ստեղծման և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համապատասխան մարդու իրավունքների պաշտպանության հիմնահարցերը: Նրանում նախատեսված են մարդկության նվաճումներ հանդիսացող համարյա բոլոր առաջադիմական սկզբունքները...»¹:

Դատական իշխանության ոլորտի հարաբերությունների սահմանադրական կարգավորման ընթացքում Սահմանադրական հանձնաժողովի կողմից որդեգրվել էր այն սկզբունքային մոտեցումը, որ՝ ա) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ պետք է ամրագրվեն մարդու իրավունքների ոլորտի բոլոր միջազգային իրավական սկզբունքները և համապարտադիր (*jus cogens*) նորմերը, բ) Հայաստանի Հանրապետությունում պետք է ստեղծվի ժողովրդավարական պետությանը հարիր այնպիսի դատական համակարգ, որն ի վիճակի է ապահովելու այդ իրավունքների արդյունավետ իրացումը:

Մասնավորապես, Սահմանադրությամբ ամրագրվեցին յուրաքանչյուրի՝ ազատության և անձեռնմխելիության իրավունքը և դրան համապատասխան այն սկզբունքը, համաձայն որի՝ անձը կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով (հոդ. 18), բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ բնակարանը միայն դատարանի որոշմամբ խուզարկելու թույլտվությամբ (հոդ. 21), Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունքը (հոդ. 38), իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային

¹ Բաղիրյան Գ., Դատաիրավական բարեփոխումները և Հայաստանի Հանրապետության նոր դատական համակարգը. Երևան, 2002, էջ 42-43:

քննության իրավունքը (հոդ. 39), իրավաբանական օգնություն ստանալու յուրաքանչյուրի իրավունքը (հոդ. 40, մաս 1), ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունքը (հոդ. 40, մաս 2), օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման յուրաքանչյուրի իրավունքը և ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի՝ յուրաքանչյուր դատապարտյալի իրավունքը (հոդ. 40, մաս 3):

Միաժամանակ սահմանվեցին մի շարք արգելանքներ, որոնք ապահովում էին մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացակարգերում: Մասնավորապես, Սահմանադրության 42-րդ հոդվածի համաձայն, արգելվում էր.

- ◀ մարդուն պարտավորեցնել ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ, ինչպես նաև ցուցմունք տալու պարտականությունից ազատելու օրենքով նախատեսված այլ դեպքերում,
- ◀ օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը,
- ◀ նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող է կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով,
- ◀ մարդուն հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել,
- ◀ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքին հետադարձ ուժ տալը:

Սահմանադրական ամրագրում ստացավ նաև անմեղության կանխավարկածի սկզբունքը. Սահմանադրության 41-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

Սահմանադրության մեջ իրենց արտացոլումն ստացան նաև ժողովրդավարական պետությունում դատական իշխանության կազմակերպման կարևորագույն սկզբունքները. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան (հոդ. 91): Դատավորը և Սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են, և նրանց լիազորությունները դադարեցվում են միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով (հոդ. 96): Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամը անկախ են և ենթարկվում են միայն օրենքին (հոդ. 97):

Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրվեց նոր դատական համակարգի կառուցվածքը՝ առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ և Վճռաբեկ դատարան: Այս առումով չափազանց կարևորվում է վերաքննիչ դատարանի ստեղծումը: Պետք է նկատել, որ հետխորհրդային բազմաթիվ երկրներում այդ ժամանակաշրջանում վերաքննիչ դատարաններ չէին ստեղծվել: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունում վերաքննիչ դատարանների ստեղծումը նպատակահարմար չհամարվեց ֆինանսական նկատառումներով¹, մինչդեռ օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման յուրաքանչյուրի իրավունքը ժողովրդավարական իրավական պետությունում արդարադատության կարևորագույն սկզբունքներից է:

Սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունում գործում են նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ: Միաժամանակ արգելվեց արտակարգ դատարանների ստեղծումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակակից իրավական պետության գոյությունն անհնար է առանց սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգերի, կարևորվեց նաև Սահմանադրական դատարանի ստեղծման սահմանադրական հիմունքների ամրագրումը: Մասնավորապես, սահմանվեցին դրա կազմն ու լիազորությունների շրջանակը:

¹ Гуценко К., Судебная реформа: истоки, некоторые итоги и тенденции, Вестник Московского университета, серия 11, Право, 1995, № 5, с. 3-15.

Իրենց արտացոլումն ստացան նաև Արդարադատության խորհրդի ստեղծման սահմանադրական հիմունքները՝ կազմը, կազմավորման կարգը և լիազորությունների շրջանակը:

Այդպիսով՝ 1995 թ. Սահմանադրությամբ ստեղծվեցին անհրաժեշտ բոլոր սահմանադրական նախադրյալները ժողովրդարավարության սկզբունքներին համապատասխանող անկախ դատական համակարգի ստեղծման համար, ուստի լիովին արդարացի է Վ. Նազարյանի այն գնահատականը, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվելիք դատաիրավական բարեփոխումների էությունը խտացված ձևով արտացոլված է Սահմանադրությունում¹:

Ակնհայտ էր, որ նման լայնածավալ համակարգային փոփոխությունները չէին կարող իրականացվել կարճ ժամկետում: Դատական իշխանության նոր համակարգի ձևավորման համար նախ անհրաժեշտ էր նոր օրենսդրական ակտեր (օրենսգրքեր և օրենքներ) ընդունել Սահմանադրական դատարանի, արդարադատության խորհրդի, դատավորների իրավական կարգավիճակի մասին և այլն: Նոր համակարգի ձևավորումը ենթադրում էր նաև լայնածավալ կազմակերպական միջոցառումների իրականացում: Հատկանշական է, որ Սահմանադրության 116-րդ հոդվածում ամրագրված անցումային տասնչորս դրոյթներից ութն առնչվում են դատական իշխանության ոլորտի հարաբերություններին:

Դատական իշխանության ոլորտում հանրապետության նախագահն օժտված էր ծավալուն լիազորություններով: Սահմանադրության 94-րդ հոդվածի համաձայն՝ հենց նա էր հանդիսանում դատական մարմինների անկախության երաշխավորը:

Այդ ոլորտում նախագահի որոշ լիազորություններ կրում էին հայեցողական բնույթ: Այսպես, նախագահն է նշանակում Սահմանադրական դատարանի ինը անդամներից չորսին, իսկ վերջինիս կազմավորումից հետո՝ երեսնօրյա ժամկետում, Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի նախագահ չնշանակվելու դեպքում՝ նաև Սահմանադրական դատարանի նախագահին:

¹ Նազարյան Վ., Դատական բարեփոխումների սահմանադրական հիմքերը, Օրենք և իշխանություն, 1997, ապրիլ, էջ 22-29:

Նախագահն է գլխավորում Արդարադատության խորհուրդը և նշանակում խորհրդի անդամներին: Եթե դատավոր անդամները նշանակվում էին դատավորների ընդհանուր ժողովների կողմից՝ յուրաքանչյուր տեղի համար գաղտնի քվեարկությամբ առաջադրված երեքական թեկնածուներից, ապա նախագահի՝ Արդարադատության խորհրդի անդամ երկու իրավաբան գիտնականների նշանակման լիազորությունը նույնպես կրում էր հայեցողական բնույթ:

Դատական իշխանության ոլորտում նախագահի լիազորությունների վերլուծությունից միանշանակ հանգում ենք այն եզրակացության, որ այս ոլորտում կադրային բոլոր խնդիրների լուծման լիազորությունները վերապահված են նրան: Հանրապետության նախագահը հաստատում է Արդարադատության խորհրդի կողմից կազմված՝ դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումներ: Արդարադատության խորհրդի առաջարկով՝ նախագահը նշանակում է Վճռաբեկ դատարանի և նրա պալատների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահներին ու դատավորներին: Նա կարող է դադարեցնել դատավորի լիազորությունները, համաձայնություն տալ՝ կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու դատավորին: Արդարադատության խորհրդի առաջարկությամբ՝ նախագահը դատավորներին շնորհում է որակավորման դասեր:

Սակայն չի կարելի համաձայնել այն հեղինակների հետ, որոնք, խեղաթյուրելով իրական վիճակը, պնդում են. «Ստացվում է, որ հանրապետության նախագահը իր իսկ խորհրդի միջոցով ինքն իրեն խորհուրդներ է տալիս և առաջարկություններ ներկայացնում դատավորին նշանակելու և պաշտոնանկ անելու հարցերով»¹: Նախ՝ Արդարադատության խորհրդում կադրային հարցերով որոշումներն ընդունվում էին գաղտնի քվեարկությամբ: Բացի այդ, 1995-1996 թթ., որպես արդարադատության նախարար լինելով Արդարադատության խորհրդի նախագահի տեղակալ, ես կարող եմ վկայել, որ հանրապետության նախագահը եզակի դեպքերում

¹ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., նշվ. աշխ., էջ 20:

էր մասնակցում Արդարադատության խորհրդի նիստերին. դրանք վարում էին գլխավոր դատախազը կամ արդարադատության նախարարը: Դատական իշխանության կադրային հարցերի լուծման գործում նախագահի լիազորությունները հայեցողական բնույթ չէին կրում: Գործնականում իր այդ լիազորությունների իրացման ժամանակ նախագահը սահմանափակված էր Արդարադատության խորհրդի որոշումներով:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ պետական կառավարման քննարկվող մոդելում հանրապետության նախագահն ուներ առանցքային դեր: Միաժամանակ, այդ մոդելը սկզբունքորեն համապատասխանում էր ժողովրդավարական իրավական պետության հիմնական սկզբունքներին և օժտված էր այդ պետության համար յուրահատուկ հատկանիշներով: Կառավարման այդ մոդելն ապացուցեց իր կենսունակությունը անցումային ժամանակաշրջանի մի շարք ճգնաժամային իրավիճակներում՝ հանրապետության գործող նախագահի հրաժարական, 1998 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո համակեցության իրավիճակ, երբ գործող նախագահը, իր իսկ ձևակերպմամբ, հայտնվեց դիտորդի կարգավիճակում, խորհրդարանում 1999 թ. հոկտեմբերի 27-ին տեղի ունեցած ողբերգություն: Այդ բոլոր իրավիճակները հաղթահարվեցին առանց սահմանադրական ճգնաժամերի:

Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրությունը և դրանով ամրագրված պետական կառավարման մոդելը գործնականում ապացուցեցին իրենց կենսունակությունը և արդյունավետությունը ՀՀ առկա հասարակական-քաղաքական պայմաններում:

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Արդարադատության նախարար, 1990-1996 թթ.

ՍԴ նախագահի տեղակալ, 1996-1997 թթ.

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄԸ ԵՐԿՈՒՆՔԻ ՄԵՋ

«Հայաստանի Հանրապետության անկախության մասին» Հռչակագրով ազդարարվել էր Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման գործընթացի սկիզբը: Ի կատարումն Հռչակագրի այդ հիմնադրույթի՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների ոլորտում ընդունվել էին այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են «ՀՀ Գերագույն խորհրդի մասին», «ՀՀ նախագահի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: Այդ իրավական փաստաթղթերը պարզորոշ սահմանում էին ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանությունների ինքնուրույնությունը, նրանց անկախության երաշխիքները, իրավասությունն ու համակարգը, փոխադարձ հարաբերակցությունը:

Մինչդեռ դատական իշխանության ոլորտում շարունակում էին գործել ՀԽՍՀ և Նույնիսկ ԽՍՀՄ օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը: Հանրապետությունում գործող դատական համակարգն ու դատավարությունը ձևավորվել էին ամբողջատիրական քաղաքական ռեժիմի պայմաններում, երբ դատարանը դիտվում էր որպես գործադիր իշխանության կցորդ: Ստեղծվել և ամրապնդվել էր դատական մի համակարգ, որն ի սկզբանե կոչված է եղել՝ հլու-հնազանդ սպասարկելու տիրող քաղաքական ռեժիմը:

Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ գործող դատական համակարգն ու դատավարության շատ ինստիտուտներ վաղուց սպառել էին իրենց և շուտափույթ բարեփոխման կարիք էին զգում: Նման ճգնաժամային իրավիճակը պայմանավորված էր ոչ միայն նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակում դատական և իրավապահ համակարգերի կառույցների գործունեության, մեղմ ասած, անկարողությամբ, այլև նորաստեղծ հասարակական հարաբերություններին, հասարակական-քաղաքական արժեքներին գործող իրավունքի նյութական ու դատավարական ճյուղերի բովանդակային անհամապատասխանությամբ:

Հետևաբար, կարելի էր ուրվագծել դատական ռեֆորմի իրականացման երեք ուղի.

1. Դատարանների և իրավապահ մարմինների կազմակերպման ու գործունեության ռեֆորմ
2. Դատավարական (դատաքննություն, նախաքննություն, հետաքննություն) սկզբունքների և նորմերի ռեֆորմ
3. Նյութական իրավունքի ճյուղերի ռեֆորմ:

Վկայակոչված երեք ուղիներն անկապտելիորեն կապված էին միմյանց հետ և իրականացման գործընթացում կարիք ունեին համակարգային մոտեցման: Նման ամբողջական բարեփոխման անհրաժեշտության պայմաններում բնական հարց էր ծագում, թե բարեփոխումների ինչպիսի հաջորդականությունը պետք է նախընտրելի լիներ:

Իրավագետ պաշտոնյաների մի մասն այն կարծիքին էր, որ դասական բարեփոխումներն անհրաժեշտ է սկսել ընթացակարգային բարեփոխումներից, սպասել և տեսնել, թե դրանք ինչպես են գործում, այնուհետև միայն անցնել կառուցվածքային փոփոխություններին: Անշուշտ, դատավարական, ընթացակարգային բարեփոխումները ճշգրտումներ էին մտցնելու առանձին դատական օղակների, իրավապահ մարմինների իրավասության ֆունկցիաների, դատավարության մասնակիցների և կողմերի իրավունքների ու պարտականությունների միջև:

Հետևաբար, դժվար չէր կռահել, որ առանց կառուցվածքային վերասահմանման՝ դատավարական բարեփոխումները դատական և իրավապահ մարմինների հին կառույցների շրջաններում ձախողման էին դատապարտված: Այդ իսկ պատճառով դատական և իրավապահ մարմինների կառուցվածքային ու ֆունկցիոնալ փոփոխությունները պետք է անմիջականորեն ուղեկցվեին դատավարական իրավունքի և նյութական իրավունքի ճյուղերի վերափոխություններով:

Եթե դատական համակարգի բարեփոխման անհրաժեշտությունն այսօր քչերն են վիճարկում, ապա դրա ուղիների, դատական համակարգի կառուցվածքային փոփոխությունների, առանձին օղակների ֆունկցիաների ճշգրտման, դատական և գործադիր իշխանությունների փոխհարաբերության և այլ հարցեր տեղիք են տալիս բանավեճերի և սուր քննարկումների:

Դատական համակարգի բարեփոխման վերաբերյալ հանրապետության իրավաբանական միտքը ձևավորել էր երկու մոտեցում, որոնցից առաջինը (Ժամանակագրական առումով) իր արտացոլումն է գտել ՀՀ Գերագույն դատարանի կողմից մշակված «Դատական իշխանության մասին» ՀՀ օրենքի նախագծում, երկրորդը ՀՀ արդարադատության նախարարության դատական բարեփոխման կոնցեպցիան էր, որի հիման վրա մշակվել էին «ՀՀ դատարանակազմության մասին» և «Դատավորների կարգավիճակի մասին» օրենքների նախագծերում: Ընդ որում, վերջին երկու օրինագծերի նախապատրաստմանն անմիջական մասնակցություն են ունեցել ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի դասախոսներ Գագիկ Ղազինյանը, Հարություն Պիվազյանը և Մեսրոպ Թովմասյանը: Նշված մոտեցումների և նախագծերի առանցքային տարբերությունը դատական իշխանության անկախության սկզբունքի մեկնաբանության մեջ էր:

Առաջին տեսակետի հեղինակները բացարձակացնում էին դատական իշխանության անկախությունը, առաջարկում ստեղծել ուղղաձիգ խիստ ենթակայությամբ մի դատական համակարգ, որում, մեր կարծիքով, կվտանգվեր ինչպես առանձին դատարանի, այնպես էլ առանձին դատական ատյանի անկախությունը: Մինչդեռ արդարադատությունը չի պատկանում իշխանության այն ոլորտների թվին, որտեղ ուղղակի ենթակայության ստեղծումը և կենտրոնացումը կարող են նպաստել առանձին դատարանների կողմից արդարադատության օբյեկտիվ և անկաշկանդ իրականացմանը:

Նշված երկու մոտեցումների ու նախագծերի՝ մեծ և փոքր լսարաններում մասնագիտական բազմաթիվ համատեղ քննարկումները այդպես էլ չհանգեցրին դատական համակարգի բարեփոխման հարցում մեկ ընդհանուր դիրքորոշման ձևավորման:

ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրեց իր առաջարկը դատական հիմնադրույթների մասին՝ առաջարկելով այն դնել լայն քննարկման:

Դատարանի անկախության սկզբունքը ենթադրում էր ոչ միայն դատարանի անկախություն օրենսդիր և գործադիր մարմիններից, այլև դատական յուրաքանչյուր օղակի և յուրաքանչյուր դատարանի անկախություն՝ վերադաս դատական մարմնից և դատարանից:

Տեղին է հիշել, որ իշխանության բաժանման տեսությունը ծագել էր որպես բռնապետության ստեղծման և իշխանությունների կամայականության հակակշիռ: Ըստ այդ տեսության՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները, գործելով օրենքի շրջանակներում առանձին, միաժամանակ կոչված են միմյանց հավասարակշռելու և զսպելու: Հետևաբար, իշխանության բաժանման սկզբունքը չի ենթադրում օրենսդիր, գործադիր և դատական մարմինների՝ մեկը մյուսից բացարձակ անկախություն և մեկուսացում: Գործնականում դա հնարավոր էլ չէ, քանի որ խոսքը միասնական իշխանության տարբեր ճյուղերի մասին է:

Պատահական չէ, որ հանրապետությունում ձևավորված օրենսդիր և գործադիր իշխանություններն ունենին փոխադարձ զսպման և հավասարակշռման մեխանիզմներ: Օրինակ՝ ՀՀ նախագահի վետոյի իրավունքն օրենսդիր իշխանության հակակշռի դեր է կատարում: Գործադիր իշխանության մարմիններն իրենց հերթին հաշվետու են օրենսդիր իշխանության մարմինների առաջ, և օրենսդիրը կարող էր անվստահություն հայտնել կառավարությանը: Համանման լծակներ պետք է նախատեսվեին նաև դատական իշխանության և օրենսդիր ու գործադիր իշխանությունների հարաբերություններում:

Մոտեցումը, որ բացարձակացնում է ինչպես «դատական իշխանության» ներքին միասնությունը, այնպես էլ նրա անկախությունը «օրենսդիր և գործադիր իշխանություններից», կարող էր հանգեցնել անհեթեթության: Եթե իշխանությունների բաժանման տեսությունը մեկնաբանվում է որպես «դատական իշխանության բացարձակ սահմանազատում մյուս իշխանություններից» և նրա բացարձակ անկախություն, ապա պետք է ենթադրել, որ այդ նույն «բացարձակ» վիճակում պետք է գտնվեն, նախ, «օրենսդիր և գործադիր իշխանությունները»:

Հաճախ պնդում են, որ գործադիր իշխանության մարմինը դատարանի նկատմամբ կազմակերպական ղեկավարում իրականացնելով՝ կարող է ներազդել արդարադատության իրականացման վրա և ոտնահարել դատարանի անկախությունը:

Արդարադատության՝ միայն դատարանի կողմից իրականացման սկզբունքի համաձայն՝ ոչ ոք չի կարող քրեական պատժի ենթարկել

այլ կերպ, քան դատարանի դատավճռով: Այս սկզբունքից բխում էր, որ անձը քրեական պատասխանատվությունից և պատժից էլ պետք է ազատվի միայն դատարանի կողմից: Ուստի հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի որոշումների նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու, քրեական գործը կարճելու կամ հանցագործության մեջ մեղավոր անձի հետագա դաստիարակությունը կոլեկտիվին հանձնելու մասին և նմանատիպ այլ որոշումները՝ մինչև օրինական ուժ ստանալը, անպայմանորեն պետք է ենթարկվեն դատական ստուգման: Այդպիսի կարգը շահագրգռված կողմին դատարանի ընդունած ցանկացած որոշման եռաստիճան վերանայման հնարավորություն կընձեռի:

Ինչպես նաև համոզված էինք, որ դատական ստուգման առարկա պետք է լինեն նաև անձին կալանավորելու և ձերբակալելու որոշումները: Ընդ որում, եռաստիճան դատական համակարգն այս հարցերի առավել նպատակահարմար լուծման հնարավորություն կընձեռի:

Առաջարկված դատական ռեֆորմը պետք է վերանայեր նաև ՀՀ դատախազության, ՀՀ ՆԳ մարմինների համակարգն ու ֆունկցիաները:

Թե՛ ընդունված Սահմանադրությամբ, թե՛ կատարված դատաիրավական համակարգի բարեփոխումներից հետո մեր երկրի պատմության մեջ առաջին անգամ հռչակվեց իշխանությունների տարանջատման սկզբունքը: Ամրագրվեց դատական իշխանության անկախությունը իշխանության մյուս ճյուղերից, սահմանվեցին այդ անկախության սահմանադրաիրավական երաշխիքները: Դատական վերահսկողությունը մուտք գործեց մինչդատական վարույթ: Նախաքննական ու դատախազական մարմինների որոշումներն ու գործողությունները հայտարարվեցին դատական բողոքարկման և վիճարկման առարկա: Անձի իրավունքների ու ազատությունների կարևորագույն սահմանափակումները կարող էին արտոնվել միայն դատարանի որոշմամբ և այլն:

1997-1998 թթ. դրվեցին Սահմանադրությամբ ամրագրված դատաիրավական նոր համակարգի օրենսդրական, կառուցվածքային, կազմակերպչական հիմքերը: ՀՀ Սահմանադրության՝ ԱԺ-ի հավանությանն արժանացած դատաիրավական բարեփոխումների հայեցակարգի

հիման վրա մշակվեցին և ընդունվեցին «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «ՀՀ արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքները: Ի լրումն Սահմանադրությամբ հռչակված սկզբունքների ու դրույթների՝ օրենսդրորեն կանոնակարգվեցին ու մանրամասնվեցին դատավորների թեկնածությունների ընտրության, նշանակման գործընթացները, դատավորների անկախության իրավական, նյութական, սոցիալական երաշխիքները, անձնական անձեռնմխելիության ապահովման, կարգապահական պատասխանատվության ու հետկանչի ընթացակարգերը: Արդյունքում ձևավորվեցին ու գործնականում ներդրվեցին նախկին սովետական դատական համակարգից հիմնովին տարբեր նոր դատական համակարգ ու դատարան:

Դատական նոր համակարգի կազմավորմանն ու ներդրմանը զուգահեռ՝ իշխանությունը ձեռնամուխ եղավ նյութական և դատավարական հիմնական օրենսգրքերի ու այլ հիմնարար օրենքների մշակման աշխատանքներին: ՀՀ վարչապետի կարգադրությամբ ստեղծվեցին առանցքային օրենսգրքերի ու օրենքների նախագծերը մշակող մասնագիտական հանձնախմբեր, սահմանվեցին ժամանակացույցեր: ՀՀ նախագահի ու կառավարության անմիջական ջանքերով՝ հանձնախմբերը ապահովվեցին միջազգային փորձագիտական կենտրոնների գործուն օժանդակությամբ:

Ձեռնարկված միջոցները հնարավորություն ընձեռեցին սեղմ ժամկետներում մշակել ու ավարտել մեկ տասնյակ կարևորագույն օրենսգրքեր և օրենքներ: Դրանց ընդունմամբ՝ նոր դատաիրավական համակարգը սկսեց լիարժեք գործել:

Սակայն, չնայած գործադրած քաղաքական ու օրենսդրական ահռելի ջանքերին՝ դատական իշխանության լիակատար անկախության ապահովման խնդիրը չէր կարելի լուծված համարել: Սահմանադրության ու վերջինիս հիման վրա ընդունված մի շարք օրենսդրական ակտերով դրվել էին միայն այդ գործընթացի հիմքերը:

Թեև հնարավոր չեղավ ստեղծել կամ ավարտին հասցնել ամբողջությամբ անկախ դատական համակարգ, սակայն, որքան էլ զարմանալի է, բոլոր թերություններով հանդերձ՝ դատական ատյանների ու դատավորների կախվածության կենտրոնների բազմակիությունը

բալանսավորում-հակակշռում էր այդ կենտրոններին՝ արդյունքում ապահովելով դատարանների ու դատավորների նվազագույն ինքնավարության ինչ-որ աստիճան:

Լիարժեք անկախ դատարանի ու դատական իշխանության մասին խոսելը դեռ վաղաժամ էր: Ահա թե ինչու դարասկզբին արդեն հրատապ էր դատաիրավական բարեփոխումների իրականացման երկրորդ փուլի անհրաժեշտությունը: Բարեփոխումների առաջին փուլով արմատավորված ժողովրդավարական ձեռքբերումներն ու սկզբունքները կարիք ունեին հետագա կատարելագործման ու զարգացման:

Ստորև ներկայացնում եմ 1997 թ. մշակված և ներկայացված դատիրավական համակարգի բարեփոխումների ծրագիրը, որը, որոշ կոսմետիկ փոփոխություններով, ամբողջությամբ ընդունվեց ԱԺ Պետական իրավական հարցերի հանձնաժողովի կողմից և, ըստ էության, դարձավ այն հիմնական ֆունդամենտալ փաստաթուղթը, որի հիման վրա ձևավորվեց նորանկախ Հայաստանի դատաիրավական համակարգը:

ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ-ԾՐԱԳԻՐ¹ (15 հունվարի, 1997 թ.)

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական, սոցիալական վերափոխումները հետագա ընթացք չեն կարող ունենալ, եթե չիրականացվեն դրանց համար անհրաժեշտ քաղաքական, իրավական բարեփոխումներ:

Մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների ընդհանուր համակարգում առանցքային դեր ունի դրանց դատաիրավական պաշտպանությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված դատական իշխանության ձևավորման և գործունեության հիմնադրույթներն օրենսդրական պատշաճ մեկնության ու մանրամասնման միջոցով իրական հնարավորություններ

¹ Ներկայացվել է Արդարադատության նախարարության անունից:

կատեղծեն մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակողմանի պաշտպանության համար:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության կողմից ստեղծվել են կարևորագույն օրենսգրքերի նախագծերի մշակման հանձնախմբեր, որոնք արդեն ձեռնամուխ են եղել դատարանակազմության և իրավունքի նյութական ու դատավարական հիմնական ճյուղերի օրենսգրքերի ստեղծմանը: Դատաիրավական օրենսդրության մշակման ներկա մեկնարկային փուլում կարևոր է դատաիրավական բարեփոխման միասնական հայեցակարգի (կոնցեպցիայի) մշակումը՝ դրա կառուցվածքային և բովանդակային դրույթների պարզաբանմամբ, ինչը կապահովի իրականացվող աշխատանքների սկզբունքային միասնականությունը և կուղղորդի նոր օրենսգրքերի նախագծերը մշակող աշխատանքային խմբերին:

Սույն փաստաթուղթը հնարավորություն է տալիս պատկերացնելու Հայաստանի Հանրապետության դատաիրավական ամբողջ ապագա համակարգը՝ իր կառուցվածքով, գլխավոր ստորաբաժանումների լիազորություններով և բարեփոխման ժամանակացույցով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարաններն են՝ առաջին ատյանի դատարանները, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը:

ա) Առաջին ատյանի դատարանները: Որպես ընդհանուր իրավասության դատարանների սկզբնական օղակ՝ նրանք առաջին ատյանի կարգով քննելու են քաղաքացիական, քրեական և դատական կարգով քննվող վարչական իրավախախտումների վերաբերյալ բոլոր գործերը: Նրանց տեղաբաշխումը պետք է հարմար լինի բնակչությանը: Առաջին ատյանի դատարանները կլինեն քանակով ամենաշատը:

Առաջին ատյանի դատարանների դատական տարածքները ձևավորվում են՝ հանրապետության մարզային բաժանման համապատասխան. յուրաքանչյուր մարզի տարածք մեկ առաջին ատյանի՝ մարզի դատարանի տարածք է: Մարզի տարածքում այժմ գործող շրջանային

(քաղաքային) ժողդատարանների տարածքները կապահպանվեն որպես մարզի դատարանի դատական տարածքի մասեր:

Մարզի կենտրոնը և մարզի տարածքում գտնվող նախկին շրջկենտրոններն ու քաղաքային դատարաններ ունեցող քաղաքները դատավորների նստավայրերն են:

Մարզի առաջին ատյանի դատարանի դատավորները, որպես նստավայր ունենալով շրջանային (քաղաքային) ժողդատարանների շենքերը, կսպասարկեն այսօր գործող ժողդատարանների տարածքները:

Նման մոտեցումը հնարավորություն կընձեռի օգտագործելու գործող շրջանային (քաղաքային) ժողդատարանների շենքերը, նախկին շրջկենտրոնների հետ համայնքները կապող կոմունիկացիաները՝ սպասարկելու համար նախկին շրջանների տարածքները:

Մարզի առաջին ատյանի դատարանի նախագահը, նստավայր ունենալով մարզի վարչական կենտրոնում, կսպասարկի նախկինում մարզկենտրոնը որպես շրջկենտրոն ունեցող շրջանի տարածքը և կղեկավարի մարզի առաջին ատյանի դատարանի աշխատակազմի աշխատանքը:

Դատարանի նախագահին իրավունք կտրվի մեկ դատավորից մյուսին հանձնելու դատարանի վարույթում գտնվող քրեական և քաղաքացիական գործերը՝ կարգավորելով դատավորների ծանրաբեռնվածությունը:

Այսօր Երևանի ժողդատարանները լսում են հանրապետության դատարաններում քննվող քրեական և քաղաքացիական գործերի շուրջ 35-45 %-ը: Այս փաստը հաշվի առնելով՝ Երևանում կստեղծվեն առաջին ատյանի վեց դատարաններ, որոնք կսպասարկեն հետևյալ տարածքները՝

- 1) Շենգավիթ
- 2) Էրեբունի, Նուբարաշեն
- 3) Շահումյան, Դավիթաշեն և Աջափնյակ
- 4) Կենտրոն, Նորք-Մարաշ
- 5) Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն
- 6) Ավան, Նոր-Նորք:

Այսպիսով՝ կստեղծվեն առաջին ատյանի տասնվեց, այդ թվում Երևանում՝ վեց մարզային դատարաններ:

բ) Ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարանները: Կստեղծվեն չորս ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարաններ, որոնցից յուրաքանչյուրի իրավասության տարածքում կընդգրկվեն 3-4 առաջին ատյանի մարզային դատարանների տարածքներ (բացառությամբ Երևանի վերաքննիչ դատարանի):

Ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարանների կազմում կառանձնացվեն քրեական և քաղաքացիական գործերով դատական պալատներ:

Ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարաններից ամենամեծը՝ նրանում ընդգրկված դատավորների թվով, տեղակայված կլինի Երևանում և կսպասարկի միայն Երևանի առաջին ատյանի դատարանների դատական տարածքները:

Հաջորդ վերաքննիչ դատարանի դատական տարածքում կընդգրկվեն Վայոց ձորի և Զանգեզուրի, Արարատի և Արմավիրի մարզերի առաջին ատյանի դատարանների դատական տարածքները: Դատարանը տեղակայված կլինի Եղեգնաձորի մարզկենտրոնում:

Արագածոտնի, Շիրակի և Լոռվա մարզերի առաջին ատյանի դատարանների դատական տարածքները կընդգրկվեն ընդհանուր իրավասության մյուս վերաքննիչ դատարանի դատական տարածքում: Դատարանը տեղակայված կլինի Լոռվա մարզկենտրոնում:

Եվ վերջապես՝ Տավուշի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի առաջին ատյանի դատարանների դատական տարածքները կընդգրկվեն ևս մեկ վերաքննիչ դատարանի դատական տարածքում: Դատարանը տեղակայված կլինի Գեղարքունիքի մարզկենտրոնում:

Այսպիսով՝ կունենանք ընդհանուր իրավասության վերաքննիչ չորս դատարան:

գ) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանն իր քաղաքացիական և քրեական գործերի դատական պալատներով կամբողջացնի ընդհանուր իրավասության դատարանների կառույցը:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված հատուկ (մասնագիտացված) դատարաններից առաջինը տնտեսական դատարաններն են, որոնք կքննեն տնտեսական վեճերը:

ա) Առաջին ատյանի տնտեսական դատարանները: Ելնելով տնտեսական դատարանների իրավասությանը ենթակա վեճերի կողմերի առանձնահատկություններից և սպասվող քանակից՝ առաջին ատյանի տնտեսական դատարանների քանակը փոքր կլինի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների քանակից:

Յուրաքանչյուր առաջին ատյանի տնտեսական դատարանի տարածք, բացառությամբ Երևանի, կընդգրկի մի քանի մարզերի տարածք:

Առաջին ատյանի տնտեսական դատարանների տեղաբաշխումը և դատական տարածքները կհամընկնեն ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարանների տեղաբաշխմանը և դատական տարածքներին:

Այսինքն՝ հանրապետությունում կստեղծվի չորս առաջին ատյանի տնտեսական դատարան. մեկը՝ Երևանի համար, մեկը՝ Զանգեզուրի, Վայոց ձորի, Արարատի և Արմավիրի մարզերի համար, մեկը՝ Արագածոտնի, Շիրակի և Լոռվա մարզերի համար, մեկը՝ Տավուշի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի համար:

բ) Տնտեսական վերաքննիչ դատարանը: Երևանում տեղակայված մեկ տնտեսական վերաքննիչ դատարանը լիովին հնարավորություն կտա ապահովելու այդ գործերով ամբողջ հանրապետությունում կայացված վճիռների վերանայում դատական վերաքննության կարգով:

գ) Տնտեսական վճռաբեկ դատարանը: Տնտեսական դատարանների համակարգը կեզրափակի ՀՀ տնտեսական վճռաբեկ դատարանը:

Միջնորդ դատարանները

Տնտեսական վեճերի լուծման արդյունավետ կառույցներ են միջնորդ դատարանները, որոնք կստեղծվեն առևտրաարդյունաբերական պալատին, բորսաներին, Հայաստանի Հանրապետության առևտրական բանկերի ասոցիացիային առընթեր և առևտրական կազմակերպությունների նախաձեռնությամբ ու կողմերի համաձայնությամբ կլուծեն նրանց միջև ծագող տնտեսական վեճերը:

Միջնորդ դատարանների գործունեությունը սերտորեն կզուգորդի տնտեսական դատարանների գործունեությանը և հնարավորություն կընձեռի՝ ապահովելու շուկայական հարաբերությունների վրա հիմնված բնականոն գույքային շրջանառության ինքնակարգավորումը: Միջնորդ դատարանները կստեղծվեն՝ դրանց մասին օրենքի հիման վրա: Օրենք կընդունվի նաև միջնորդ դատարանի դատավարության մասին:

3. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

ա) Առաջին ատյանի զինվորական դատարանները: Այս դատարանների քանակի և դատական տարածքների որոշման հիմքում կդրվեն զինվորական կայազորների քանակն ու տարածքները:

Կստեղծվի առաջին ատյանի հինգ զինվորական դատարան՝ Երևանի, Սևանի, Վանաձորի, Գյումրիի և Զանգեզուրի կայազորների զինվորական դատարաններ:

բ) Զինվորական վերաքննիչ դատարանը: Կստեղծվի մեկ զինվորական վերաքննիչ դատարան՝ Երևանում:

գ) Վճռաբեկ պալատ: Ընդհանուր իրավասության վճռաբեկ դատարանում կստեղծվի զինվորական գործերով դատական պալատ, որը կհանդիսանա զինվորական գործերով վճռաբեկ ատյան:

4. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության դատախազության լիազորությունները սպառիչ սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչն էապես պայմանավորում է նաև նրա կառուցվածքը:

Զարգացած եվրոպական երկրների դատախազությունների կառուցվածքի փորձի ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ դատախազության տարածքային կառույցներն անհրաժեշտ է ձևավորել՝ դատական կառույցներին զուգահեռ: Դատախազությունն իր տարածքային կառույցները կունենա՝ ընդհանուր

իրավասության դատարանների և զինվորական դատարանների համակարգին զուգահեռ:

Տնտեսական դատարաններին զուգահեռ՝ դատախազության կառույցներ չեն ստեղծվի, քանի որ, ըստ Սահմանադրության, դատախազությունը տնտեսական գործերով դատական քննությանը մասնակցելու լիազորություն չունի:

Դատախազությունը տնտեսական դատարանում կարող է հանդես գալ որպես պետական շահերը պաշտպանող հայցվոր և բողոքարկել տնտեսական դատարանի միայն այն վճիռներն ու որոշումները, որոնցով խախտվել են պետության շահերը:

5. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ընդհանուր իրավասության դատարաններին զուգահեռ՝ ձևավորվում են դատախազության հետևյալ կառույցները.

1) Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններին զուգահեռ ստեղծվում են մարզային դատախազություններ, որոնք գլխավորում են մարզերի դատախազները: Մարզային դատախազությունները տեղակայված կլինեն մարզկենտրոններում: Մարզի առաջին ատյանի դատարանի տարածքի ենթամասերը սպասարկում են մարզի դատախազի տեղակալները, որոնց նստավայրերը գտնվում են տարածքի ենթամասերի կենտրոններում: Մարզի դատախազը (դատախազությունը) հսկողություն կիրականացնի մարզում կատարվող հետաքննության և նախաքննության վրա, մարզի առաջին ատյանի դատարանում կպաշտպանի մեղադրանքը, կբողոքարկի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճիռները, վճիռներն ու որոշումները (բացառությամբ՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռները, վճիռներն ու որոշումները ՀՀ վճռաբեկ դատարան բողոքարկելուց), հսկողություն կիրականացնի մարզի տարածքում գտնվող պատիժների և հարկադրանքի այլ միջոցների վայրերի վրա, պետական շահերի պաշտպանության հայցեր կհարուցի դատարան:

2) Ընդհանուր իրավասության չորս վերաքննիչ դատարաններին զուգահեռ՝ կկազմավորվեն համապատասխան դատախազություններ, որոնք կտեղաբաշխվեն՝ վերաքննիչ դատարանների

տեղակայմանը համապատասխան: Վերաքննիչ դատարանին զուգահեռ ձևավորված դատախազության կառույցը ղեկավարող դատախազը (դատախազությունը) կպաշտպանի մեղադրանքը վերաքննիչ դատարանում, կբողոքարկի վերաքննիչ դատարանի դատական տարածքում ընդգրկված մարզերի առաջին ատյանի դատարանների դատավճիռները, վճիռներն ու որոշումները (բացառությամբ՝ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռները, վճիռներն ու որոշումները ՀՀ վճռաբեկ դատարան բողոքարկելուց), կբողոքարկի վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները, վճիռներն ու որոշումները, կլուծի սույն հայեցակարգի 19-րդ գլխի հինգերորդ մասով նախատեսված խնդիրները:

3) Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական և քաղաքացիական գործերով դատական պալատներին զուգահեռ դատախազության ստորաբաժանումները նախատեսվում են Հայաստանի Հանրապետության դատախազության կենտրոնական կառույցում:

Զինվորական դատարաններին զուգահեռ՝ ձևավորվում են զինվորական դատախազության հետևյալ կառույցները.

1) Առաջին ատյանի զինվորական ատյաններին համապատասխան՝ զինվորական հինգ կայազորներում կստեղծվի հինգ զինվորական դատախազություն: Զինվորական կայազորի դատախազը (դատախազությունը) հսկողություն կիրականացնի կայազորի տարածքում զինվորական հանցագործությունների գործերով կատարվող հետաքննության և նախաքննության վրա, կայազորի առաջին ատյանի զինվորական դատարանում կպաշտպանի մեղադրանքը, կբողոքարկի կայազորի առաջին ատյանի դատարանների դատավճիռներն ու որոշումները (բացառությամբ՝ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն ու որոշումները ՀՀ վճռաբեկ դատարան բողոքարկելուց):

2) Վերաքննիչ զինվորական դատարանին զուգահեռ՝ կստեղծվի համապատասխան զինվորական դատախազություն: Այս դատախազությունը գլխավորող դատախազը (դատախազությունը) կպաշտպանի մեղադրանքը վերաքննիչ դատարանում, կբողոքարկի զինվորական առաջին ատյանի դատարանների դատավճիռներն ու

որոշումները (բացառությամբ՝ դատարանների օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն ու որոշումները ՀՀ վճռաբեկ դատարան բողոքարկելուց), կբողոքարկի զինվորական վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռներն ու որոշումները, կլուծի սույն հայեցակարգի 19-րդ գլխի հինգերորդ մասով նախատեսված խնդիրները:

3) Ընդհանուր իրավասության վճռաբեկ դատարանի զինվորական գործերով դատական պալատին զուգահեռ դատախազության կառույցը կնախատեսվի զինվորական դատախազության կենտրոնական կառույցում:

4) Զինվորական դատախազությունը հանրապետության դատախազության միասնական համակարգի մի մասն է և ենթակա է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին:

6. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Մարզի դատախազը և մարզի դատախազի տեղակալներն իրականացնում են Սահմանադրության 103-րդ հոդվածի շրջանակներում դատախազության մասին օրենքով նախատեսված լիազորությունները, ինչը ենթադրում է դատախազության լիազորությունների ապակենտրոնացում:

Միաժամանակ՝ որոշ լիազորությունների իրականացումը կվերապահվի միայն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին և նրա տեղակալներին: Սահմանադրության 93-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումներն ընդհանուր իրավասության վճռաբեկ դատարանում կվերանայվեն Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների բողոքի հիման վրա:

Հսկողությունը նախաքննության և հետաքննության օրինականության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների նկատմամբ՝ դատախազության տարածքային կառույցներին զուգահեռ, կիրականացնեն նաև կենտրոնական ապարատի համապատասխան ստորաբաժանումները:

7. ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հետաքննությամբ որևէ գործ չի ավարտվի:

Մեղադրյալի իրավունքների լիակատար պաշտպանության նպատակով՝ անկախ արարքի հասարակական վտանգավորության աստիճանից, բոլոր գործերով պարտադիր կկատարվի նախաքննություն:

8. ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Կապիտանվեն հետաքննության հետևյալ մարմինները՝

- 1) ոստիկանությունը
- 2) գորամասերի, գորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը՝ որոշ կատեգորիայի անձանց կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով
- 3) ուղղիչ հիմնարկների, քննչական մեկուսարանների պետերը՝ այդ հիմնարկների ներքին կարգուկանոնի հետ կապված հանցագործությունների գործերով
- 4) պետական հրշեջ հսկողության մարմինները՝ հրդեհների վերաբերյալ գործերով
- 5) հարկային պետական մարմինները՝ հարկային հանցագործությունների գործերով
- 6) մաքսային մարմինները՝ մաքսանենգության գործերով:

9. ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Նախաքննություն կատարելու իրավասությամբ օժտվելու են՝

- 1) դատական քննիչները
- 2) ներքին գործերի նախարարության քննիչները:

Սահմանադրությունում Հայաստանի Հանրապետության դատախազության լիազորությունների թվարկումը սպառիչ է, իսկ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պետական մարմինները իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ: Ուստի դատախազությունը, ի տարբերություն գործող կարգի, նախաքննության իրականացման լիազորություն չունի:

Քանի որ ազգային անվտանգության հակահետախուզության ծառայությունը պետության ներքին գործունեության ոլորտն է, ուստի այդ ծառայությունը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը: Դա նաև կնպաստի այդ ծառայության հիմնական ֆունկցիաների պատշաճ իրականացմանը:

Ազգային անվտանգության նախարարության կողմից քրեական գործերով այսօր իրականացվող նախաքննությունը հանձնվում է դատական քննիչներին:

Ներքին գործերի նախարարության համակարգում քննությունն ապակենտրոնացվելու է և զուգակցվելու է քննիչների ինքնուրույնության ապահովման միջոցառումների հետ: ՆԳ քննչական կառույցները ձևավորվելու են ըստ մարզերի և գործելու են մարզային օպերատիվ ծառայություններից անկախ:

Հիմնադրվում է դատական քննիչների ինստիտուտը: Դատական քննիչը վարչական առումով չի ենթարկվի ոչ դատարանին և ոչ էլ արդարադատության նախարարությանը: «Դատական» բառն անվանման մեջ վկայում է դատարաններին առընթեր նրա գործունեության մասին և ոչ ավելի:

Դատական քննիչի ինստիտուտը քննության ինքնուրույնության գաղափարի մարմնավորումն է: Քննիչը դատավարական կարևորագույն որոշումներն ընդունում է ինքնուրույն՝ ազատ որևէ գերատեսչական ենթակայությունից: Դատական քննիչի նշանակման իրավունքը կվերապահվի Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ներկայացմամբ:

Դատական քննիչի քննչական ենթակայությանը կհանձնվի, որպես կանոն, ծանր, առանձնապես ծանր և զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերի նախաքննությունը: Այլ կերպ ասած՝ դատական քննիչները «կփոխարինեն» այսօրվա դատախազության և ազգային անվտանգության նախարարության քննիչներին:

Դատական քննիչները կգործեն ընդհանուր իրավասության առաջին ատյանի և զինվորական առաջին ատյանի դատարաններին կից:

10. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Իրավապահ մարմինների աշխատակիցների նյութական և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումը դատաիրավական բարեփոխումների իրականացման հաջողության գրավականն է:

Նախատեսվում է հապես բարձրացնել իրավապահ մարմինների աշխատակիցների աշխատանքի վարձատրության գործող դրույքաչափերը: Վարձատրությունը պետք է համարժեք լինի աշխատանքի ծանրությանը, բարդությանը և վտանգավորությանը:

Իրավապահ մարմինների աշխատակիցները կապահովվեն տրանսպորտի, ժամանակակից կապի, կոմայուտերային տեխնիկայի և այլ միջոցներով:

11. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական ծառայության ոլորտում բարեփոխումների առաջին հիմնաքարը դրել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, որը 93-րդ հոդվածով հիմնադրեց հատուկ արտոննագիր ունեցող, վճռաբեկ դատարանում գրանցված և Հայաստանի Հանրապետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու իրավունք ունեցող փաստաբանների ինստիտուտը:

Այսօր արդեն Հայաստանում գործում են փաստաբանական ծառայություն մատուցող մի քանի տասնյակ իրավաբանական ձեռնարկություններ և հարյուրավոր անհատ փաստաբաններ:

Այս ոլորտում օրենսդրորեն կիրախուսվի ազատ մրցակցությունը, որը մարդու իրավունքների որակյալ պաշտպանության երաշխիք է:

12. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՎՃԻՌՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԱՐՄԻՆԸ

Դատական որոշումների, վճիռների և դատավճիռների կատարման պարտականությունը դրվում է արդարադատության նախարարության վրա: Կատարողական վարույթի կազմակերպական ապահովման նպատակով արդարադատության նախարարության

համակարգում կհիմնադրվի դատական ոստիկանություն, որը կաջակցի դատական տեսուչների (կատարածունների) աշխատանքին, կապահովի դատական վճիռների կատարման անկախությունը, օպերատիվությունը, ինչով նաև կնպաստի դատարանի հեղինակության բարձրացմանը:

Դատական ոստիկանությանը կվերապահվի նաև դատարանի շենքերի, դատական նիստերի ժամանակ կարգուկանոնի, անհրաժեշտության դեպքերում՝ դատավորների անձնական ապահովության պահպանությունը:

Կատարողական ոլորտում պատշաճ կարգուկանոն սահմանելու նպատակով նախատեսվում է ընդունել օրենք (այսօր այդ ոլորտում գործող բազմաթիվ հրահանգների փոխարեն) «Կատարողական վարույթի մասին»: Այն կսահմանի դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների կատարման մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, կկանոնակարգի կատարողական վարույթի ամբողջ ընթացքը:

13. ՈՒՂՂԻՉ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհում պենիտենցիար (ուղղիչ) հիմնարկները գտնվում են քաղաքացիական գերատեսչությունների, մասնավորապես՝ արդարադատության նախարարությունների ենթակայության ներքո: Հայաստանի Հանրապետության ուղղիչ հիմնարկները և կալանավայրերը կհանձնվեն արդարադատության նախարարությանը:

Ուղղիչ հիմնարկները արդարադատության նախարարությանը հանձնելը, հուսով ենք, կբերի դրանցում քաղաքացիական հասարակությանը բնորոշ միջանձնային հարաբերությունների հաստատմանը, կնպաստի դատապարտյալների ուղղմանը և նրանց կողմից հասարակության մեջ ընդունված վարքագծի նորմերի յուրացմանը:

Արդարադատության նախարարությանը կհանձնվեն նաև ձերբակալվածներին պահելու վայրերը (հիմնարկները), ինչը, կարծում ենք, կնպաստի հետաքննության և նախաքննության մարմինների կողմից

ապօրինի ձերբակալությունների, ապօրինի ազատության սահմանափակումների դեպքերի կանխմանը:

14. ԱՆԿԱԽ ԴԱՏԱՐԱՆ

Դատաիրավական բարեփոխման իմաստն անկախ դատարանի ստեղծումն է: Դատարանի անկախության և միայն օրենքին ենթարկվելու սկզբունքը հռչակված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է դատարանի անկախության մի շարք այլ երաշխիքներ: Այսպես, օրինակ, դատավորների նշանակման հատուկ կարգը, նրանց անձեռնմխելիությունը, դատավորների անփոփոխելիությունը, նրանց կարգապահական պատասխանատվության և լիազորությունների դադարեցման հատուկ կարգը և այլն:

Դատարանի անկախության ապահովմանն է կոչված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված նոր դատական համակարգը: Այն հնարավորություն է ընձեռում քրեական գործերի, քաղաքացիական, տնտեսական վեճերի, առաջին ատյանի, վերաքննության և վճռաբեկության կարգով դատաքննությունն իրականացնել միմյանցից անկախ ձևավորված և գործող դատական ատյաններում:

Ի թիվս նշվածների՝ դատարանի և դատավորի անկախության նյութական, կազմակերպչական, սոցիալական երաշխիքների մի ամբողջ համակարգ կնախատեսվի «Հայաստանի Հանրապետությունում դատավորների իրավավիճակի մասին» օրենքով: Մասնավորապես՝ նախատեսվում է դատարանների ֆինանսավորումը կատարել ուղիղ պետական բյուջեից: Կարևորելով դատարանի անկախության նյութական երաշխիքները՝ չի կարելի անտեսել նրա դատավարական անկախությունն ապահովող երաշխիքները:

Դատարանն իրոք անկախ կարող է լինել միայն այն դեպքում, երբ վեր է կանգնած կողմերի և մասնակիցների դատավարական շահերից և մեղքի ապացուցման պարտականություն չի կրում:

Հայաստանի Հանրապետությունում գործող դատարանը և դատավարությունը առայժմ մեղադրական միտում ունեն: Բավական է

նշել միայն, որ գործող քրեական դատավարական օրենսդրությունը հնարավոր է համարում գործի դատաքննությունը՝ առանց մեղադրանքը պաշտպանող դատախազի մասնակցության: Դատավարության մեղադրական միտումի լավագույն ապացույցը արդարացման դատավճիռների խիստ սակավաթվությունն է:

Հայաստանի Հանրապետության ապագա քրեական դատավարության օրենսգրքի հիմնական կոչումը կլինի անկախ դատարանի գործունեության ապահովումը:

15. ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության սկզբունքը նախատեսված է քրեական դատավարության գործող օրենսգրքում, սակայն այն երևութական է: Ապացուցման պարտականության ծանրության տեղափոխումը կողմերի և մասնակիցների վրա՝ դատարանին հնարավորություն կընձեռի հանդես գալ անկախ արբիտրի դերում:

Բնականաբար, մրցակցային դատարանը կպահանջի դատավարության կողմերի և մասնակիցների որակապես նոր կարգավիճակ, կվերահաստատի նրանց իրավունքների ու պարտականությունների ամբողջ համակարգը:

Դատավարության կողմերն ու մասնակիցները պետք է ունենան ոչ միայն հավասար իրավունքներ և պարտականություններ, այլև այդ իրավունքների իրականացման դատավարական հավասար երաշխիքներ և հնարավորություններ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որոշակի հավասարակշռություն մտցրեց մեղադրանքի և պաշտպանության կողմերի փոխհարաբերություններում, սակայն հարցի ամբողջական և վերջնական լուծումը կիրականացվի քրեական դատավարության նոր օրենսգրքով: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է պաշտպանության կողմի իրավունքների ապահովման դատավարական երաշխիքների ընդլայնմանը:

Միջազգային ստանդարտներին համապատասխան՝ արմատական փոփոխություններ կկատարվեն քաղաքացիական դատավարությունում, որոնց նպատակը կլինի ներկայիս հետաքննող դատավարության փոխարեն ստեղծել կողմերի իրական հավասարության

և ազատ մրցակցության վրա հիմնված քաղաքացիական դատավարություն, որում դատարանը կիրականացնի անկողմնակալ և անշահախնդիր իրավարարի իր առաքելությունը:

16. ԿԱԼԱՆՔԻ, ԽՈՒՋԱՐԿՈՒԹՅԱՆ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ, ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՓՈՍՏԱՅԻՆ, ՀԵՌԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ ԿԱԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Մարդու բնակարանի անձեռնմխելիության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքները սահմանված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18, 20 և 21-րդ հոդվածներով:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության այս կարևորագույն դրույթներն ի չիք կդառնան, եթե դրանց իմաստը տեսնենք միայն դատավարական գործողությունների կատարումը թույլատրող սուբյեկտների փոփոխության մեջ: Անձի նկատմամբ խափանման միջոցը կալանք ընտրելու՝ դատարանի որոշումը կընդունվի դատական նիստում, որտեղ անձի նկատմամբ խափանման միջոցը կալանք պահանջող մեղադրող կողմը կներկայացնի իր ապացույցներն ու փաստարկները, պաշտպանության կողմը՝ իրենը: Դատարանը իրավունք կունենա հետազոտելու գործի հանգամանքները օբյեկտիվ, լրիվ ու բազմակողմանի և նոր միայն որոշում կայացնելու՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ մերժելու մասին:

Խուզարկության, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու գործողությունների օպերատիվության և գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը կպայմանավորի դատարանի կողմից այդ որոշումների ընդունման արարողակարգի առանձնահատկությունը. դրան կմասնակցի միայն խուզարկության կամ փոստ-հեռագրային թղթակցության վրա կալանք դնելու միջնորդությամբ հանդես եկած պետական մարմնի ներկայացուցիչը:

Կալանքի, խուզարկության կամ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու՝ առաջին աստիճանի դատարանի որոշումները կարող են գանգատարկվել համապատասխան վերաքննիչ դատարան:

17. ԴԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

Նախատեսվում է դատարանի որոշումների, վճիռների և դատավճիռների վերանայման երկու՝ վերաքննության և վճռաբեկության կարգ:

Դատարանների որոշումների, վճիռների և դատավճիռների վերանայումը վճռաբեկ և վերաքննիչ դատարաններում կատարվում է դատավորների կոլեգիալ կազմով:

Դատարանի որոշման, վճռի և դատավճռի դեմ փաստի հիմքով բերված գանգատների ու բողոքների հիման վրա գործերը դատական վերաքննության կարգով վերանայում են վերաքննիչ դատարանները:

Դատարանի որոշման, վճռի և դատավճռի դեմ իրավունքի հիմքով բերված գանգատների ու բողոքների հիման վրա վճռաբեկության կարգով գործերը վերանայում են վճռաբեկ դատարանները:

Վճռաբեկ դատարանները դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները, վճիռները և դատավճիռները վերանայում են նաև դատական ռեկվիզիտի, նոր ի հայտ եկած հանգամանքների հիման վրա:

Դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած որոշման, վճռի և դատավճռի դեմ գործը վճռաբեկ և վերաքննիչ դատարանում վերանայելու նպատակով վերաքննիչ կամ վճռաբեկ գանգատ կամ բողոք բերում են կողմերը, դատապարտյալը, արդարացվածը, նրանց շահերի պաշտպանը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը, նրանց օրինական ներկայացուցիչները, գործին մասնակցող մեղադրողը (դատախազը), վերադաս դատախազը:

Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման, վճռի և դատավճռի դեմ գործը վճռաբեկ և վերաքննիչ դատարանում վերանայելու նպատակով վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) վերաքննիչ դատարանում՝ մարզի դատախազը, զինվորական կայազորի դատախազը, վերաքննիչ դատարանը սպասարկող դատախազության ստորաբաժանումը գլխավորող դատախազը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, հատուկ արտոնագիր ունեցող և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանները:

2) վճռաբեկ դատարանում՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, նրա տեղակալները, հատուկ արտոնագիր ունեցող և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանում գրանցված փաստաբանները:

18. ԵՐԴՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ հոդվածին համապատասխան օրենքով նախատեսված դեպքերում դատավարությունն իրականացվում է երդվյալների մասնակցությամբ:

Երդվյալները մասնակցելու են դատավարությանը միայն մահապատիժ և ցմահ ազատազրկում նախատեսող հանցագործությունների վերաբերյալ գործերով՝ ամբաստանյալի պահանջով:

Երդվյալները կլուծեն միայն ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը: Ամբաստանյալին մեղավոր ճանաչելու դեպքում պատիժը սահմանում է դատարանը:

Քրեական դատավարության օրենսգրքում կնախատեսվի հատուկ բաժին, որտեղ կարտացոլվեն երդվյալների մասնակցությամբ դատավարության առանձնահատկությունները:

Անհրաժեշտ է համարվում երդվյալների մասին օրենքի ընդունումը: Այն կսահմանի երդվյալների ընտրության, դատարան հրավիրելու կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվության հիմքերը և այլն:

19. ԴԱՏԱԽԱՋԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ

Հետաքննության և նախաքննության մի քանի մարմինների առկայության պայմաններում կբարձրանա դատախազական հսկողության դերը դրանց գործունեության օրինականության նկատմամբ:

Ուժեղ դատախազի գաղափարը կզուգակցվի ինքնուրույն քննիչի գաղափարի հետ:

Դատախազը կլինի հետաքննության և նախաքննության կազմակերպիչ:

Դատախազը առանձին քննչական գործողությունների կատարման իրավունք կունենա:

Քննիչի ինքնուրույնության ապահովման նպատակով կսահմանվի դատախազի որոշ ցուցումների (որպես մեղադրյալ պատասխանատվության ենթարկելու, հանցագործությունը որակելու և մեղադրանքի ծավալի, մեղադրյալին դատի տալու համար գործն ուղարկելու կամ գործը կարճելու մասին) վերաբերյալ վերադաս դատախազին դիմելու քննիչի իրավունքը:

Դատախազն իրավունք կունենա առանձին դեպքերում օրենքով սահմանված հիմքերով փոխել գործերի նախնական քննության ենթակայությունը:

20. ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության նոր քաղաքացիական օրենսգիրքը միասնական կարգուկանոն կհաստատի բարդ ու բազմաբնույթ շուկայական հարաբերություններում, կապահովի քաղաքացիների ու տնտեսվարող մյուս սուբյեկտների գույքային, անձնական և ոչ գույքային իրավունքների պաշտպանությունը:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի հիմքում կդրվեն իրավական պետության պայմաններում վերածնվող մասնավոր իրավունքի ոգին արտահայտող սկզբունքներ՝

- 1) գույքային շրջանառության մասնակիցների իրավահավասարությունը,
- 2) սեփականության անձեռնմխելիությունը,

3) պայմանագրի ազատությունը,

4) մասնավոր գործերում որևէ մեկի, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կամայական միջամտության անթույլատրելիությունը,

5) քաղաքացիական իրավունքների անխոչընդոտ իրականացման անհրաժեշտությունը,

6) խախտված իրավունքների անվերապահ վերականգնման ապահովումը,

7) իրավունքների դատական պաշտպանությունը:

Քաղաքացիական օրենսգրքում հետևողականորեն կիրականացվի այն հայեցակետը, համաձայն որի՝ տնտեսական ազատությունը միայն այն ժամանակ է դառնում առաջընթացի հիմք, երբ այն ամրագրված է իրավական սկզբունքների ընդհանուր համալիրում, մարմնավորված է իրավունքում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նախագծի մշակումը կզուգորդվի դրանից բխող այնպիսի կարևորագույն օրենքների նախագծերի նախապատրաստման հետ, ինչպիսիք են հետևյալ օրենքները.

1) իրավաբանական անձանց (առևտրական և ոչ առևտրական կազմակերպությունների) պետական գրանցման մասին,

2) հողի, այլ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ու դրանց հետ կատարվող գործարքների պետական գրանցման մասին,

3) առևտրաարդյունաբերական պալատների մասին,

4) արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին,

5) գործունեության առանձին տեսակների լիցենզավորման մասին,

6) նոտարիատի մասին,

7) ապահովագրության մասին և այլն:

21. ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հրամայական է Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի ստեղծումը: Քրեական օրենսդրության արմատական բարեփոխումը երկրում իրականացվող ընդհանուր բարեփոխումների կարևոր մասն է:

Քրեական օրենսդրությունը կկատարելագործվի հետևյալ ուղղություններով.

1) օրենսդրորեն կամրապնդվեն և հետևողական կիրականացվեն օրինականության, պատասխանատվության անխուսափելիության, ըստ մեղքի պատասխանատվության և մարդասիրության սկզբունքները,

2) մարդու իրավունքների և ազատությունների առաջնային պաշտպանությունը,

3) գործող քրեական օրենսգրքից կհանվեն այն նորմերը, որոնք խանգարում կամ կաշկանդում են նոր հասարակական հարաբերությունների զարգացմանը կամ պատասխանատվություն են նախատեսում հանրորեն ցածր վտանգավորություն ունեցող արարքների համար, և ընդհակառակը՝ կմտցվեն այնպիսի նորմեր, որոնք պաշտպանում են նոր հասարակական հարաբերությունները (ապաքրեականացում և քրեականացում),

4) քրեական օրենսդրությունը կլրացվի այնպիսի նորմերով, որոնք բխում են ձևավորվող ազատական տնտեսական և հասարակական հարաբերություններից,

5) օրենքի առջև բոլորի հավասարությունը և մարդասիրությունը զուգահեռ կիրացվեն պատասխանատվության խմբակային հանցագործությունների և ռեցիդիվի համար,

6) քրեական օրենսգրքի նորմերը (հատկապես՝ սանկցիաները) կկառուցվեն այնպես, որ դրանցում լիովին արտացոլվի արդարության սկզբունքը, և հնարավորին չափ բացառվի սուրբեկտիվ հայեցողությունը,

7) կօգտագործվի քրեական օրենսդրության համաշխարհային փորձը:

Մինչև մահապատժի վերացումը, ինչը ենթադրվում է 2001 թվականին (Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակի

առթիվ), զգալիորեն կկրճատվի մահապատիժ սահմանող հոդվածների թիվը:

22. ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Քաղաքացիական օրենսգիրք»	1996 թ. 4-րդ եռամսյակ
«Դատավորների կարգավիճակի մասին»	1997 թ. 1-ին եռամսյակ
«Դատարանակազմության մասին»	1997 թ. 1-ին եռամսյակ
«Քրեական օրենսգիրք»	1997 թ. 2-րդ եռամսյակ
«Դատախազության մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Փաստաբանական ծառայության մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Քրեական դատավարության օրենսգիրք.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Քաղաքացիական դատավարության օրենսգիրք.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Միջնորդ դատարանների մասին.....	1997 թ. 2-րդ եռամսյակ
«Միջնորդ դատավարության մասին.....	1997 թ. 2-րդ եռամսյակ
«Քրեակատարողական օրենսգիրք.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Դատական որոշումների կատարման մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Առևտրաարդյունաբերական պալատների մասին.....	1997 թ. 1-ին եռամսյակ
«Հողի, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և դրանց հետ կատարվող գործարքների պետական գրանցման մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ

«Գործունեության առանձին տեսակների լիցենզավորման մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Նոտարիատի մասին.....	1997 թ. 4-րդ եռամսյակ
«Վարչական օրենսգիրք.....	1998 թ. 2-րդ եռամսյակ
«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին.....	1998 թ. 1-ին եռամսյակ
«Ոստիկանության մասին.....	1998 թ. 1-ին եռամսյակ
«Օրենք արտաքին հետախուզության մասին.....	1998 թ. 2-րդ եռամսյակ
Դատաիրավական բարեփոխումն ապահովող այլ օրենսգրքերի և օրենքների ընդունում.....	1998-1999 թթ.:

Քրեական, քաղաքացիական, քրեական դատավարության, քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, դատարանակազմության և դատախազության մասին օրենքները գործողության մեջ կդրվեն 1999 թվականի հունվարից:

23. ՕՐԵՆՍԳՐՔԵՐԻ ԵՎ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ

Մշակվող օրենսգրքերի և կարևորագույն օրենքների պատշաճ քննարկումը Հայաստանի Հանրապետության կառավարությունում և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ապահովելու նպատակով, դրանց մշակմանը զուգընթաց, կնախապատրաստվեն համապատասխան գիտագործնական մեկնաբանություններ, որոնք տվյալ օրենսգրքի կամ կարևորագույն օրենքի ընդունումից անմիջապես հետո կիրատարակվեն մասսայական տպաքանակով:

Նման մեկնաբանությունները, որոնցում հանգամանորեն պարզաբանվում և վերլուծվում են օրենսգրքի կամ օրենքի բոլոր

դրույթները, մեծապես կնպաստեն դրանց քարոզչության գործին, միաժամանակ կօգնեն դատավորներին, դատախազներին, դատավարության մյուս մասնակիցներին ու իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց՝ ճշգրիտ ու միանշանակ կիրառելու օրենքների պահանջները:

Գիտագործնական մեկնաբանությունները հիմք կծառայեն նաև իրավունքի համապատասխան ճյուղերի, բուհական դասագրքերի և ուսումնական ու մասնագիտական այլ գրականության ստեղծման համար:

Օրենսգրքերի մշակման աշխատանքներին հնարավորին չափ մեծ թվով մասնագետներ ներգրավելու նպատակով «Իրավունք և օրինականություն» ամսագրում մշտապես կիրատարակվեն աշխատանքային հանձնաժողովների կողմից ընդունված գլուխները և բաժինները: Քննարկումներ և բանավեճեր կկազմակերպվեն ինչպես նշված, այնպես էլ «Օրենք և իշխանություն» հանդեսում և «Օրենք և իշխանություն» հեռուստածրագրով ու ռադիոծրագրով:

24. ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Իրավաբանների ուսուցումը կկազմակերպվի դատաիրավական բարեփոխումների ծրագրի իրականացմանը զուգընթաց: Ուսուցման մեթոդներն ու եղանակները կլինեն բազմազան և բազմաբնույթ:

Այսօր իսկ դատաիրավական օրենսգրքերի և օրենքների նախագծերի մշակման համար Ազգային ժողովի և կառավարության կողմից կազմավորված համապատասխան հանձնաժողովների աշխատանքներին մասնակցում են մեծ թվով իրավաբաններ, ինչն ինքնին նաև ուսուցում է:

Կարելի է առանձնացնել իրավաբանների պատրաստման և վերապատրաստման երկու ուղղություն՝

ա. բուհական ուսուցում

բ. վերապատրաստում մասնագիտացված դպրոցում:

Բուհական ուսուցումը

Դատաիրավական բարեփոխման ժամանակային սեղմ գրաֆիկը թելադրում է այսօր իսկ բուհի իրավաբանական ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսումնական ծրագրերի վերանայում՝ նոր նախապատրաստվող օրենսդրության հաշվառմամբ:

Դասավանդվող առարկաներից կարելի է առանձնացնել սահմանադրական իրավունքը, քրեական իրավունքը, քաղաքացիական իրավունքը, քրեական դատավարությունը, քաղաքացիական դատավարությունը և դատարանակազմությունը, որոնց դասավանդման և ուսուցման ժամաքանակը պետք է մեծացվի՝ ի հաշիվ ոչ մասնագիտական առարկաների: Այս առարկաների ուսուցումը պետք է կրի պարտադիր բնույթ և ավարտվի քննությամբ: Դրան համապատասխան՝ այլ առարկաների ուսուցման մեջ պետք է լայնորեն կիրառվի ֆակուլտատիվ դասավանդման սկզբունքը:

ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետում ուսումնական ծրագրերի վերանայումը կազմակերպական և դասավանդման լուրջ դժվարություններ չի հարուցի:

Իրավաբանական կադրեր պատրաստող այլ բուհերը հնարավորություն ունեն պայմանագրային հիմունքներով օգտագործելու վերը նշված օրենսգրքերի նախագծերը մշակող աշխատանքային խմբերի անդամների հնարավորությունները: Վերը նշված՝ իրավունքի հիմնական ճյուղերի ուսուցման ընթացքում լայնորեն կկիրառվեն համեմատական-իրավաբանական մեթոդները, կհամադրվեն Հայկական ԽՍՀ Սահմանադրությունը, օրենսգրքերը և գործող Սահմանադրությունն ու դրա հիման վրա մշակվող նոր օրենսգրքերի նախագծերը (ապա նաև՝ ընդունված օրենսգրքերը), համապատասխան օրենսգրքերի եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ երկրների մոդելները և այլն: Այս ամենն առավել հրատապ է դարձնում հիշյալ օրենսգրքերի գիտագործնական մեկնաբանությունների ու դրանց հիման վրա համապատասխան բուհական դասագրքերի ստեղծման խնդիրը:

Վերապատրաստում մասնագիտացված դպրոցում

Ուսումնասիրելով Եվրոպայի զարգացած երկրների՝ այս ոլորտում ունեցած փորձը և նկատի ունենալով այն հանգամանքը, որ այսօրվա բուհական դիպլոմ ունեցող, նույնիսկ գերազանցությամբ ավարտած ուսանողները մասնագիտական և գործնական պատրաստվածության առումով պատրաստ չեն ինքնուրույն պրակտիկ աշխատանքի, պետք է ստեղծել դատավարական և դատախազական կադրերի պատրաստման հատուկ մասնագիտացված դպրոց, որում ընդունվելու իրավունք կունենան բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած անձինք:

Դպրոցը կարելի է ձևավորել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր: Ենթադրվում է, որ դպրոցում ընդունելությունը կկատարվի հեղինակավոր իրավաբանների խիստ մասնագիտական հանձնաժողովի կողմից, մրցութային հիմունքներով: Ուսուցումը այդ դպրոցում կսահմանվի մինչև երեք տարի ժամկետով: Հնարավոր է առավել նեղ մասնագիտացում, ուսուցման ցիկլային բաժանման նախատեսում:

Դատավորների և դատախազների պաշտոնական պիտանիության ամենամյա ցուցակներում (որը հաստատվում է Արդարադատության խորհրդի կողմից) իրավունք պետք է տրվի ընդգրկվելու միայն մասնագիտացված դպրոցն ավարտած կամ դրա ծրագրերով անհատական կարգով քննություններ հանձնած և աշխատանքի ստաժ ունեցող իրավաբաններին: Պետական իրավաբանական բուհ ավարտած ուսանողների համար կարող է սահմանվել կրճատ ուսումնական ժամկետ: Որոշ կատեգորիայի իրավաբանների համար կարող են սահմանվել բացառություններ:

Մասնագիտացված դպրոցի ստեղծումը իրական համեմատական գնահատական կտա նաև պետական և ոչ պետական (արտոնագրված) բուհերի ավարտական դիպլոմներին և կլուծի պետական և ոչ պետական բուհերի մրցունակության խնդիրը:

Աժ-ի հավանությանն արժանացած դատաիրավական բարեփոխումների հայեցակարգի հիման վրա մինչև 2000-2001 թթ.

մշակվեցին և ընդունվեցին «Դատարանակազմության մասին», «Դատավորի կարգավիճակի մասին», «ՀՀ արդարադատության խորհրդի մասին» ՀՀ օրենքները, օրենսդրորեն կանոնակարգվեցին ու մանրամասնվեցին դատավորների թեկնածությունների ընտրության, նշանակման գործընթացները, դատավորների անկախության իրավական, նյութական, սոցիալական երաշխիքները, անձնական անձեռնմխելիության ապահովման, կարգապահական պատասխանատվության ու հետկանչի ընթացակարգերը: Արդյունքում ձևավորվեց ու գործնականում ներդրվեց հիմնովին տարբեր նոր դատական համակարգ ու դատարան:

Դատական նոր համակարգի կազմավորմանն ու ներդրմանը զուգահեռ, միջազգային փորձագիտական կենտրոնների գործունե աջակցությամբ, ընդունվեցին նյութական և դատավարական հիմնական օրենսգրքերը: Ձեռնարկված միջոցները հնարավորություն ընձեռեցին սեղմ ժամկետներում մշակել ու ավարտել մեկ տասնյակ կարևորագույն օրենսգրքեր և օրենքներ: Դրանց ընդունմամբ՝ դատաիրավական համակարգը նորանկախ Հայաստանում սկսեց գործել լիարժեքորեն:

ԳԱԳԻԿ ԶՀԱՆԳԻՐՅԱՆ

Արդարադատության նախարարի առաջին տեղակալ, 1995-1997 թթ.

ՀՀ զինդատախազ, 1997-2006 թթ.

ՀՀ գլխ. դատախազի տեղակալ, 2006-2008 թթ.

ԱԺ պատգամավոր՝ 2012-2017 թթ.

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

1990 թվականի օգոստոսի 23-ին առաջին անգամ ժողովրդավարական եղանակով ընտրված Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որն ամրագրեց նորանկախ Հայաստանի պետականության հիմնարար սկզբունքները, և Հռչակագրի 12-րդ կետի համաձայն՝ այն պետք է հիմք ծառայեր Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նոր օրենսդրության մշակման ու ընդունման համար:

Նորանկախ Հայաստանի Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թվականի նոյեմբերի 5-ին ստեղծվեց քսան անդամից բաղկացած Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողով՝ այդ ժամանակաշրջանում Գերագույն խորհրդի նախագահ, իսկ 1991 թվականի հոկտեմբեր ամսից՝ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ, իսկ հետագայում՝ 1994 թվականի հունիսին սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնումից հետո, նաև Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանի համանախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին Գերագույն խորհրդի քարտուղար, այնուհետև՝ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը, արդարադատության նախարար Վահե Ստեփանյանը, պատգամավորներ, իրավաբան-գիտնականներ հասարակական-քաղաքական գործիչներ:

Սահմանադրության նախագիծը վերջնական տեսքով հանձնաժողովի կողմից ընդունվեց 1995 թվականի ապրիլի 13-ին, որը 1995 թվականի մայիսի 12-ին արժանացավ Գերագույն խորհրդի հավանությանը և որպես Հիմնական օրենք ընդունվեց 1995 թվականի հուլիսի 5-ին՝ ժողովրդական հանրաքվեի արդյունքում:

Այդպիսով՝ սահմանադրական եղանակով իրականացավ հայոց ինքնիշխան պետության վերականգնման՝ մեր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, և ինչպես ազդարարված էր Սահմանադրության

նախաբանում՝ նվիրված հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին:

Որպես պետականության կառուցման և զարգացման անփոփոխելի սկզբունքներ՝ հաստատագրվեցին ինքնիշխանությունը, ժողովրդավարությունը, սոցիալական արդարությունն ու իրավունքի գերակայությունը: Իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը՝ որպես պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական հավասարակշռության ապահովման կարևորագույն սկզբունք, երաշխավորվեց սահմանադրական մակարդակով:

Անկախության հռչակագրի՝ իրավահավասարության սկզբունքով օրենսդիր և գործադիր իշխանություններին զուգահեռ ապաքաղաքականացված արդարադատություն իրականացնող պետական իշխանության մասնագիտացված անկախ մարմինների համակարգ ստեղծելու չափազանց կարևոր պատգամն իր սահմանադրական հաստատագրումը ստացավ Սահմանադրության 6-րդ գլխում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Այս առումով, հայկական նորանկախ պետականաշինության բնագավառում առանձնահատուկ ձեռքբերում էր հատկապես արդարադատության միջոցով սահմանադրական վերահսկողության գործառույթի (սահմանադրական արդարադատության) ներդրումը, համաձայն որի՝ իրավական ակտերի (դրանցում ամրագրված նորմերի), վավերացման ենթակա միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականության հարցի լուծումը, ի թիվս նաև այլ գործառույթների, բացառապես վերապահվեց այդ նպատակով կազմավորվելիք Սահմանադրական դատարանին: Եվ չնայած այն հանգամանքին, որ դեռևս Սահմանադրության նախագծի մշակման աշխատանքներում որոշակիորեն նկատելի էր ֆրանսիական ժամանակակից սահմանադրագիտության դասական մոտեցումների ազդեցությունը, այնուհանդերձ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովում գերակայեց սահմանադրական արդարադատության,

այսպես կոչված, եվրոպական (մայրցամաքային) և առավել տարածում ստացած մոդելի ընտրությունը, որի հիմքում դրված էին Ավստրիայի սահմանադրական դատարանի հիմնադիր Հանս Կելզենի դոկտրինալ սկզբունքային լուծումները, համաձայն որոնց՝ սահմանադրական վերահսկողությունը (առավելապես՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը որոշելու պարագայում) պետք է իրականացվի արդարադատության միջոցով և այն էլ՝ այդ նպատակով իշխանության մյուս ճյուղերի համամասնական մասնակցությամբ ստեղծված անկախ մարմնի կողմից:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական վերահսկողության նման մոդելի ընտրության առավելությունը պայմանավորված էր եվրոպական մայրցամաքում 20-րդ դարի կեսերից սկսած և դրան հաջորդող աշխարհաքաղաքական իրադարձություններով պայմանավորված մարտահրավերներին դիմակայելու առավել ճկուն հնարավորությամբ, անցումային պետության առջև ծառայած խնդիրների արդյունավետ լուծման կարողությամբ, ինչը այդ ժամանակաշրջանում Հայաստանում առկա հասարակական-քաղաքական իրողությունների, ժողովրդավարական զարգացումների տրամաբանությանն առավել համահունչ էր և արդիական է առայսօր: Սահմանադրական վերահսկողության այդ մոդելն ընդունելի էր նաև այն տեսանկյունից, որ հասարակական հարաբերությունների արմատական վերափոխումների տվյալ ժամանակաշրջանում գնահատման չափորոշիչ հանդիսանա այն, թե ընդունվող իրավական ակտերը կամ պետական իշխանության մարմինների գործողությունները որքանով են համապատասխանում այդ հարաբերությունների կարգավորման սահմանադրորեն որոշված սկզբունքներին:

Ի դեպ, պետք է նշել, որ հիշյալ մոդելն իր ընդհանուր բովանդակությամբ՝ եզակի բացառություններով, նախընտրելի դարձավ հետխորհրդային գրեթե ողջ տարածքում և այդպիսին է առայսօր: Համակարծիք չեմ ներկայումս որոշ հայ տեսաբանների (և ոչ միայն) արտահայտած այն կարծիքին, թե Հայաստանում պետք է ներդրվի սահմանադրական արդարադատության ապակենտրոն կամ, այսպես կոչված՝ «ամերիկյան» («անգլոսաքսոնական») մոդելը: Դա քննարկման առանձին թեմա է:

Այսպիսով՝ ըստ 1995 թ. Սահմանադրության, ՀՀ-ում սահմանադրական վերահսկողության մարմինը Սահմանադրական դատարանն էր, որի բացառիկ լիազորություններն էին օրենքով սահմանված կարգով որոշել օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության որոշումների, վավերացման ենթակա միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, ինչպես նաև լուծել հանրաքվեների, Հանրապետության նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը, անհրաժեշտ հիմքերի առկայության պայմաններում որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին: Սահմանադրական դատարանին էր վերապահված նաև Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության, նրա կողմից իր լիազորությունների կատարման անհնարինության, Հանրապետության նախագահի թեկնածուի համար առաջացած խոչընդոտների հաղթահարելիության կամ վերացած ճանաչելու, ռազմական դրություն հայտարարելու, սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքերում նախատեսված միջոցառումների վերաբերյալ եզրակացություններ տալը: Սահմանադրությամբ նախատեսվեցին Սահմանադրական դատարանի և նրա անդամների անկախության միջազգային-իրավական մակարդակի ամենաբարձր չափանիշներ, ինչպես նաև սահմանվեց դատարանի կազմավորման և դրանում Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի համամասնական մասնակցության կարգը:

Այսպիսով՝ 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ սահմանադրական արդարադատության կառուցակարգի ներդրմամբ կիրառվեց պետության և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հնարավոր ճգնաժամային իրավիճակների համար սահմանադրական լուծում նախատեսելու մի կարևոր սկզբունք, որը կոչված էր ծանրակշիռ և միաժամանակ միջազգային փորձառությամբ հաստատագրված երաշխիք հանդիսանալ հանրային իշխանության գործադրման բնագավառում՝ խուսափելու սահմանադրորեն

կանխորոշված սկզբունքների հնարավոր շեղումներից ու ներքաղաքական պայքարի անցանկալի՝ ոչ իրավական դրսևորումներից, այսինքն՝ այնպիսի նպատակներ, որպիսիք ուղղակիորեն բխում էին Հաստատանի անկախության հռչակագրից, ինչպես նաև 1991 թ. սեպտեմբերի 25-ին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքից:

Սահմանադրության ընդունումից հետո՝ 1995 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, մեկնարկեցին «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նախագծի շուրջ խորհրդարանական քննարկումները: Տողերիս հեղինակը պատիվ է ունեցել, պաշտոնեական պարտականությունների բերումով, անմիջական մասնակցություն ունենալ այդ քննարկումներին, որոնք նախապես տեղի էին ունենում Գերագույն խորհրդի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում՝ երջանկահիշատակ Էդուարդ Եգորյանի ղեկավարմամբ:

Քննարկումների առանձնահատկությունն այն էր, որ սահմանադրական արդեն իսկ նախատեսված կարգավորումների շրջանակներում հնարավոր սեղմ ժամկետում անհրաժեշտ էր գտնել Սահմանադրական դատարանի գործունեության օրենսդրական կարգավորման անհրաժեշտ և արդյունավետ լուծումներ: Արդյունքում հանձնաժողովը մերժեց օրենքի նախագծի՝ կառավարության մինչ այդ ներկայացրած տարբերակը, և փորձագիտական մակարդակում որոշվեց հանձնաժողովի, իսկ այնուհետ նաև՝ Ազգային ժողովի առաջիկա քննարկմանը ներկայացնել Սահմանադրական դատարանի մասին օրենքի նոր նախագիծ՝ հնարավորինս հաշվի առնելով սահմանադրական արդարադատության բնագավառում առկա հատկապես գերմանական և ռուսական իրավակարգավորումների փորձը, քանի որ նման դեպքում կլուծվեր նաև հետխորհրդային և եվրոպական մակարդակներում ձևավորված իրավական ավանդույթների ներդաշնակման խնդիրը, ինչը, մեր կարծիքով, նախընտրելի էր սահմանադրական առկա կարգավորումների շրջանակում՝ ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեության արդյունավետությունը երաշխավորելու տեսանկյունից: Իհարկե, չկար այն մտայնությունը, թե ընդունվելիք օրենքն այլևս կատարելագործման կարիք չի ունենա:

Ազգային ժողովում «Սահմանադրական դատարանի մասին» օրենքն ընդունվեց 1995 թվականի նոյեմբերի 20-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվեց նույն թվականի դեկտեմբերի 6-ին և ուժի մեջ մտավ դեկտեմբերի 8-ին:

Սահմանադրական դատարանի առաջին կազմը ձևավորվեց 1996 թվականի փետրվարի 5-ին և 6-ին: Հանրապետության նախագահի հրամանագրերով 1996 թվականի փետրվարի 5-ին Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնում նշանակվեցին Ալվինա Գյուլումյանը, Վոլոդյա Հովհաննիսյանը, Միքայել Սևյանը և Հրանտ Նազարյանը (տողերիս հեղինակը): 1996 թվականի փետրվարի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանադրական դատարանի անդամի պաշտոնում նշանակվեցին Գագիկ Հարությունյանը, Վահե Ստեփանյանը, Հենրիկ Խաչատրյանը, Վալերի Պողոսյանը և Վլադիմիր Սահակյանը: Նույն օրը՝ Ազգային ժողովի թիվ Ն-075-Մ որոշմամբ, Գագիկ Հարությունյանը նշանակվեց նաև Սահմանադրական դատարանի նախագահ: Դատարանն իր կազմից Սահմանադրական դատարանի նախագահի տեղակալ ընտրեց Վահե Ստեփանյանին:

Այդպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ կազմավորվեց Սահմանադրական դատարան՝ դատարանի նախագահի, նախագահի տեղակալի և սահմանադրական դատարանի 7 անդամների կազմով:

Նորաստեղծ դատարանի առջև ի սկզբանե ծառայան նստավայրի որոշման, նյութատեխնիկական, ինչպես նաև կազմակերպական բնույթի բազում այլ խնդիրներ, որոնք համեմատաբար արագ լուծում ստացան: Ձևավորվեց աշխատակազմ, դատարանն իր որոշմամբ հաստատեց աշխատակազմի կանոնադրությունը: Սահմանադրական դատարանն իր անդրանիկ նիստը հրավիրեց 1996 թվականի մարտի 13-ին՝ Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա քննության առնելով «Հայաստանի Հանրապետության և Միջազգային զարգացման ընկերակցության միջև 1996 թվականի մարտի 4-ին կնքված կառուցվածքային բարեփոխումների վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության մասին» գործը՝ արդյունքում որոշելով, որ համաձայնագրում ամրագրված

պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Սակայն, Սահմանադրական դատարանի բնականոն գործունեության մեկնարկով և սահմանադրական արդարադատության բուն գործառույթի իրականացմամբ պայմանավորված, շուտով ակնհայտ դարձավ մի կարևոր հանգամանք՝ Հայաստանի Հանրապետությունում այդ բնագավառում առկա էր արդարադատություն իրականացնելու ինստիտուցիոնալ փորձի պակաս: Հետևաբար՝ օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ համախմբել և կենտրոնացնել դատարանում առկա մտավոր և մասնագիտական ողջ ներուժը՝ ուսումնասիրելու սահմանադրական արդարադատության գործառույթի իրականացման միջազգային փորձը, այդ նպատակով ձևավորել ու զարգացնել գործնական կապեր թե՛ հետխորհրդային նորանկախ, թե՛ եվրոպական ու ամերիկյան պետությունների սահմանադրական-արդարադատական մարմինների, ուսումնական և գիտական հեղինակավոր կենտրոնների հետ: Այդ գործը գլխավորեց Սահմանադրական դատարանի առաջին նախագահ Գագիկ Հարությունյանը: Դատարանում բոլորս միակարծիք էինք, որ բավարար չէ ամփոփվել միայն պաշտոնեական գործառույթների իրականացմամբ: Անհրաժեշտ էր հնարավորինս կարճ ժամկետում դատարանում ներդնել և զարգացնել սահմանադրական իրավունքի տարբեր բնագավառներում գիտահետազոտական և տեսագործնական բնույթի մշտական ուսումնասիրություններ կատարելու և դրանց արդյունքները գործող սահմանադրական լուծումների շրջանակում ներդնելու մշակույթ:

Արդեն իսկ սկսած իր կազմավորման առաջին իսկ տարվանից՝ ՀՀ Սահմանադրական դատարանն անդամակցեց Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովին (Վենետիկի հանձնաժողով): Մեկ տարի անց՝ 1997 թ. հոկտեմբերին, հիմնադրվեց «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը, որի աշխատանքները համակարգում էր ՀՀ Սահմանադրական դատարանը, իսկ 2000 թվականին, երբ Հայաստանը դեռ Եվրախորհրդի անդամ չէր, ՀՀ Սահմանադրական դատարանն ընտրվեց որպես «Եվրոպական երկրների սահմանադրական

դատարանների միջազգային կոնֆերանս» կազմակերպության լի-իրավ անդամ: Իր նախադեպը չունեցող այդ իրադարձությանն այն ժամանակ յուրահատուկ գնահատական տվեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի նախագահ պարոն Գենան՝ հայտարարելով. «Հայաստանի Սահմանադրական դատարանն արդեն կայացած ինստիտուտ է, և նրա՝ նման բացառությամբ կոնֆերանսի լիիրավ անդամ դառնալը ապացուցվել է եվրոպական այս խոշոր կառույցին իր գործուն մասնակցությամբ, իր ակտիվությամբ և բազում հետաքրքիր իրատեսական առաջարկներով»:

Դատարանի նախաձեռնությամբ միաժամանակ ձևավորվեց երևանյան միջազգային ամենամյա խորհրդաժողովներ կազմակերպելու ավանդույթ: Յուրաքանչյուր խորհրդաժողով նախորդից տարբերվել է քննարկվող թեմայի հրատապությամբ, բազմազանությամբ, մասնակիցների լայն ընդգրկումով, միջազգային հեղինակություն ունեցող իրավագետների ու սահմանադրագետների, տարբեր պետությունների սահմանադրական վերհսկողության մարմինների ղեկավարների, դատարանների նախագահների և դատական իշխանության այլ ներկայացուցիչների գործուն մասնակցությամբ: Ներկայացված զեկույցները, թեմատիկ քննարկումների նյութերը և վերլուծությունները պարբերաբար հրապարակվել են «Սահմանադրական արդարադատություն» ռուսերեն և անգլերեն լեզուներով հրատարակվող ամսագրերում, «Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում» միջազգային քառալեզու ամենամյա տարեգրքում, Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքում և զանգվածային էլեկտրոնային լրատվության այլ միջոցներով: Ի դեպ, Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքը և էլեկտրոնային տեղեկատվական համակարգը լավագույններից են ճանաչվել միջազգային համապատասխան հարթակներում:

Կարևոր է նշել, որ մասնագիտական քննարկումներում առաջադրված մոտեցումներն ու իրավակիրառման փորձը, այնուհետ ամփոփվելով, հիմք էին ծառայում՝ նախանշելու սահմանադրական արդարադատության հետագա զարգացման ու արդյունավետության հնարավոր ուղղությունները: Առաջնային խնդիրը, թերևս, մարդու իրավունքների

պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների հետագա ամրապնդման ու կատարելագործման հիմնահարցերն էին և, մասնավորապես, անհատական սահմանադրական գանգատի կառուցակարգի ներդրումը: Կարևորությամբ ոչ պակաս խնդիրներ էին նաև իշխանությունների տարանջատման և հավասարակշռման, դատական իշխանության անկախության և Սահմանադրական դատարանի դերի ապահովման առավել արդյունավետ ընթացակարգերի ներդրման հարցերը:

Արդեն արդիական էր նաև Սահմանադրական դատարանում հանրային իշխանության մարմինների լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման հիմնահարցերի ու նորանկախ պետականության զարգացման անցումային փուլում դրանց առանձնահատկությունների փաստագրման ու սահմանադրաիրավական լուծում տալու անհրաժեշտությունը: Սա խոսում փաստ է այն իրողության, որ Սահմանադրական դատարանը, իր կազմավորման առաջին իսկ տարիներից սկսած, անմասն չէր Հայաստանում իրավական և ժողովրդավարական զարգացումներով պայմանավորված խնդիրների ինչպես վերլուծության, այնպես էլ լուծման գործընթացներից:

Կարճ ժամկետում ՀՀ Սահմանադրական դատարանում ստեղծվեց մասնագիտական բազմահազար գրականությամբ հագեցած գրադարան, մշակվեցին և գործնական կիրառման ներկայացվեցին տարբեր լեզուներով թարգմանված աշխարհի ավելի քան 150 երկրների սահմանադրություններ, օրենսդրական ակտեր և դրանց համեմատական վերլուծություններ: Որպես տեղեկատվական եզակի ծրագիր՝ այն Սահմանադրական իրավունքի միջազգային ասոցիացիայի կողմից ընդունվեց և հասանելի դարձավ մասնագիտական լայն հանրության ու տարբեր պետությունների սահմանադրական արդարադատության մարմինների համար:

Մշակվեց նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պաշտոնական փաստաթղթերի համեմատական վերլուծության էլեկտրոնային համալիր ծրագիր, որում ներառվեցին ՄԱԿ-ի և Եվրոպական միջազգային բոլոր կառույցների կողմից ընդունված շուրջ 1500 փաստաթուղթ: Ավարտին հասցվեցին նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նյութերի և Եվրոպական

դատարանի փորձի ուսումնասիրման ու վերլուծության, որոշումների հասանելիության ապահովման աշխատանքները:

Վերոհիշյալ ձեռքբերումները, առանց ավելորդ համեստության, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ միջազգային չափանիշներով կայացած ինստիտուտ լինելու անառարկելի վկայությունն են: Եվրոպական բազմաթիվ կառույցներում միջինստիտուցիոնալ հարաբերությունների լիարժեք և իրավահավասար սուբյեկտի դեր ստանձնելով՝ ՀՀ Սահմանադրական դատարանը, իր կազմավորման և գործունեության առաջին տարիներից սկսած, միաժամանակ ծանրակշիռ ավանդներդրեց Հայաստանի նորանկախ պետականության միջազգային հեղինակության բարձրացման գործում:

Այսպիսով՝ Հայաստանում սահմանադրական արդարադատության ներդրման ու զարգացման, պայմանականորեն ասված, առաջին փուլի (1995-2005 թթ.) շրջանակներում Սահմանադրական դատարանում ստեղծվեցին ինստիտուցիոնալ, մասնագիտական և, ինչու չէ, նաև իրավամշակութային որոշակի անհրաժեշտ նախադրյալներ՝ Սահմանադրությամբ պատվիրակված գործառույթների արդյունավետ իրականացման համար:

Այնուամենայնիվ, մի կողմից՝ դատարանի ընթացիկ գործունեությունը, ստացվող դիմումներում բարձրացված հարցերի բովանդակությունն ու դրանց իրավական համապատասխան լուծում տալու անհրաժեշտությունը և աճող հասարակական պահանջը, մյուս կողմից՝ միջազգային համագործակցության շրջանակներում մշտապես ակտիվ քննարկումներն ու դրանց արդյունքներով արված եզրակացությունները միարժեք հանգեցնում էին այն հետևությանը, որ անհրաժեշտ է հասարակական-քաղաքական զարգացումների դինամիկային համապատասխան սահմանադրական և օրենսդրական կարգավորման մակարդակներում շարունակական միջոցներ ձեռնարկել՝ ժողովրդավարական պետության իրավական համակարգին հարիր կոնկրետ լուծումներ տալու և հատկապես դատական իշխանության անկախության, գործունեության արդյունավետության բարձրացման և մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների հետագա ամրապնդման ուղղությամբ: Այդ խնդիրները սահմանադրական արդարադատության առնչությամբ ունեին առաջնահերթ կարևորություն,

առանց որոնց անկարելի կլիներ լիարժեք ապահովել Սահմանադրության գերակայությունն ու մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորումը:

Անհրաժեշտ էր վերարժևորել (զարգացնել) Անկախության հռչակագրի դրույթները: Նախ, պետություն-անհատ հարաբերությունների հայեցակարգային բովանդակության հիմքում ներառել արժանապատվության սկզբունքը, որպես պետության սահմանադրաիրավական գլխավոր առաքելություն նախանշել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների համար անհրաժեշտ պայմանների էլ ավելի ամրապնդումն ու լրացուցիչ երաշխիքների ապահովումը, իսկ օրենքի գերակայության փոխարեն՝ որպես հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության սահմանադրաիրավական գլխավոր չափանիշ, նախանշել հատկապես իրավունքի գերակայությունը և այդ համատեքստում սահմանել իրավական ակտերի հիերարխիա՝ բարձրագույն դեր վերապահելով, նախ, Սահմանադրությանը և այնուհետ՝ օրենքներին, իրավական այլ ակտերին:

Սահմանադրական դատարանի գործունեության առաջին տարիների փորձը համոզիչ փաստարկներով վկայում էր, որ Անկախության հռչակագիրն իր էությամբ բովանդակում էր պետությանը պատվիրակված շատ ավելի՝ տասնամյակներ պահանջող նպատակային լուծումներ, քան կարելի էր պատկերացնել առաջին հայացքից: Լրացուցիչ ջանքեր էին պահանջվում՝ էականորեն բարելավելու և ընդլայնելու մարդու իրավունքների պաշտպանության միջոցները՝ երաշխավորելով ոչ միայն դատական պաշտպանության, այլև՝ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը, ինչպես նաև ներպետական բոլոր ընթացակարգերի սպառման դեպքում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու իրավունքը:

Այդպիսով՝ պահանջվում էր կյանքի կոչել իրավունքների և ազատությունների համապարփակ պաշտպանության առավել ժողովրդավարական կառուցակարգ, քան նախատեսվել էր 1995 թվականի Սահմանադրությամբ, Հայաստանում սահմանադրական

արդարադատության միտվածությունը համապատասխանեցնել հանրային պահանջմունքների մակարդակին, գլխավորապես՝ միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը գնահատող մարմնից Սահմանադրական դատարանը վերափոխել մարդու հիմնական իրավունքները պաշտպանող և Սահմանադրության գերակայությունն ապահովող դատարանի:

Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանը տարիներ շարունակ թե՛ դիմումների քննության, թե՛ մասնագիտական տարբեր հարթակներում ընթացող քննարկումների շրջանակներում հաճախ է անդրադարձել 1995 թ. խմբագրությամբ Սահմանադրության 38-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի՝ նաև որպես սահմանադրական գանգատի իրավունքի իրացման հնարավորության տեսանկյունից մեկնաբանման խնդրին, քանի որ նման գանգատի ինստիտուտի բացակայությամբ էականորեն սահմանափակվում էր մարդու դատական պաշտպանության իրավունքը: Եվ քանի որ անհատը Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկում ընդգրկված չէր, և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում (1995 թ. խմբագրությամբ) նախատեսված չէր համապատասխան իրավակարգավորում, սահմանադրական գանգատի իրավունքի իրացման հարցն առկախված էր: Հետևաբար՝ պետք է ազնվորեն խոստովանել նաև, որ նման պայմաններում միայն Սահմանադրության 38-րդ հոդվածի 2-րդ մասի առավել տարածական մեկնաբանման միջոցով դժվար թե անցումային և դեռ կայացման փուլում գտնվող դատարանը, ինչպիսին նորաստեղծ ՀՀ Սահմանադրական դատարանն էր, իր որոշմամբ ի զորու լիներ առանց սահմանադրական համապատասխան կարգավորումների հաղթահարել իրավական այդ բացը:

Դեռևս նշանակալի էր նաև, այսպես կոչված, նորմատիվիստական իրավամտածողության՝ նախկին իրավահամակարգից ժառանգված իներցիոն ազդեցությունը, և թերևս, հավելյալ ժամանակ էր անհրաժեշտ դեպի ազատական-իրավավերլուծության մշակույթին անցում կատարելու համար: Դա համակարգային խնդիր էր և հստակ գիտակցվում էր: Սահմանադրական դատարանի որոշումներն իրավունքի զարգացման կարևոր աղբյուր են, ունեն նշանակալի և ուղղորդող անմիջական ազդեցություն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառական

պրակտիկայում (հատկապես՝ դատական), և դա հաշվի չառնել անկարելի էր:

Հետագա զարգացումների արդյունքում կյանքի կոչվեց սահմանադրական (անհատական) գանգատի ինստիտուտը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ձեռք բերեց յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով տվյալ անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարան դիմելու իրավունք վերապահվեց դատարաններին, գլխավոր դատախազին, մարդու իրավունքների պաշտպանին և տեղական ինքնակառավարման մարմիններին: Կյանքի կոչվեց իրավական նորմերի սահմանադրական կոնկրետ վերահսկողության ինստիտուտը: Ընդլայնվեց Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա նորմատիվ իրավական ակտերի շրջանակը. օրենքներից, Ազգային ժողովի որոշումներից, Հանրապետության նախագահի հրամանագրերից և կառավարության որոշումներից բացի, Սահմանադրական դատարանի քննության առարկա հանդիսացան վարչապետի և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները: Որպես տեղական ինքնակառավարման ինստիտուտի արդյունավետ գործադրման կարևոր միջոց՝ երաշխավորվեց նաև համայնքի ղեկավարի պաշտոնանկության հարցի լուծման նախնական սահմանադրական վերահսկողության ընթացակարգը:

Հստակեցվեցին հանրաքվեների, Հանրապետության նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերի լուծման սահմանադրաիրավական կարգավորման շրջանակները: Հաշվի առնելով Սահմանադրական դատարանում նման վեճերի լուծման ժամանակային օբյեկտիվ սահմանափակումները և ընդգրկվող հարցերի չափազանց լայն շրջանակը, ինչպես նաև ընտրական վեճերով մի կողմից՝ ընդհանուր իրավասության, մասնագիտացված դատարանների և մյուս կողմից՝ Սահմանադրական դատարանի լիազորությունների սահմանազատման ու հստակեցման անհրաժեշտությունը, առավել կոնկրետացվեց այդ վեճերի և դրանցում լուծվող հարցերի շրջանակը. Սահմանադրական դատարանին վերապահվեց

միայն ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների, այսինքն՝ ընտրությունների արդյունքներն ամփոփող լիազոր մարմինների վերջնական որոշումների հետ կապված վեճերի լուծման գործառույթ: Արդյունքում՝ այդպիսի վեճերի լուծման օրենսդրական կարգավորումներն իրավական տեսանկյունից առավել որոշակիացվեցին, ինչից ուղղակիորեն հետևում էր, որ Սահմանադրական դատարանում այսուհետ վիճարկման ենթակա էին համապետական ընտրությունների արդյունքներով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերջնական ամփոփիչ որոշումները և մեծամասնական ընտրակարգով՝ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կայացրած վերջնական որոշումները:

Պետք է նշել, որ անհատական գանգատի կառուցակարգի ներդրմամբ կտրուկ աճեց Սահմանադրական դատարան հասցեագրվող դիմումների քանակը: Սահմանադրական ու օրենսդրական փոփոխություններին հաջորդած միայն երկու տարվա ընթացքում Սահմանադրական դատարանում մուտքագրված անհատական դիմումների քանակն արդեն իսկ հասավ շուրջ երկու հազարի: Սակայն այդ դիմումների ընդամենը 9 տոկոսն էր բավարարել «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի պահանջներին և քննության առնվել դատական կազմերի կողմից: Եվ միայն 39 անհատական դիմումների քննության արդյունքներով կայացվեցին որոշումներ՝ վիճարկվող նորմերի սահմանադրականության հարցով: Հատկանշական է նաև, որ 2006 թվականի արդյունքներով՝ Սահմանադրական դատարանում մուտքագրված 234 անհատական դիմումներից 210-ը չեն ընդունվել դատարանի կողմից, քանի որ դրանք չեն համապատասխանել «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի պահանջներին:

Ավելորդ չէր համարվի նշել, որ անհատական գանգատի կառուցակարգի ներդրումը և դրա օրենսդրական կարգավորումները պայմանականորեն նույնիսկ որոշակի բարդություններ ստեղծեցին դիմումատուների և նրանց ներկայացուցիչների համար՝ այդ դիմումների շարադրման, դրանցում բարձրացվող հարցերի պատշաճ հիմնավորման տեսանկյունից: Այդ ժամանակահատվածում ներկայացված դիմումների հիմնական մասը վերաբերել է օրենքների կիրառման

իրավաչափությանն առնչվող կամ ընդհանուր իրավասության դատարանների իրավագործությանը վերաբերող հարցերին, և զգալի թիվ են կազմել նաև այն դիմումները, որոնք վերաբերել են մարդկանց սահմանադրական այս կամ այն իրավունքի խախտմանը, սակայն չեն առնչվել օրենքի նորմի սահմանադրականության խնդրին:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում հաճախ է անդրադարձել «գործը լուծող վերջնական դատական ակտ», «օրենքի դրույթի կիրառում», «դատական պաշտպանության բոլոր միջոցների սպառում», «տվյալ գործով կիրառված օրենքի դրույթ» եզրույթների իրավական իմաստի պատշաճ ընկալման խնդիրներին: Ավելին, որպես պարտադիր պայման՝ դիմումում Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ օրենսդրական պահանջը նույնպես տարակերպ էր ընկալվում հաճախ դիմում ներկայացրած անձանց փաստաբան-ներկայացուցիչների կողմից: Հիշյալ խնդիրների շուրջ Սահմանադրական դատարանն ընդունել է ուղեցույց հանդիսացող աշխատակարգային որոշումներ՝ նպատակ հետապնդելով ձևավորելու միասնական մոտեցում թվարկված եզրույթների միատեսակ ընկալման ուղղությամբ: Անհրաժեշտ էր նաև հստակ ու միարժեք սահմանազատել ընդհանուր իրավասության դատարանների և Սահմանադրական դատարանի գործառնական առանձնահատկությունները, սահմանադրական կարգավիճակը՝ խուսափելու համար Սահմանադրական դատարանը երբևէ որպես դատական «չորրորդ» ատյան դիտարկելու փորձերից:

Կարևոր է նաև արձանագրել, որ անհատական գանգատի կառուցակարգով ոչ միայն առավել ամբողջացվեց անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխիքների համակարգը, այլև այն առանձնահատուկ «լակմուսի թուղթ» հանդիսացավ՝ պարբերաբար վերհանելու արդարադատության բնագավառում առկա համակարգային խնդիրները՝ կապված դատական պաշտպանության, հավասարության պայմաններում արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում անձի՝ իր գործի հրապարակային քննության իրավունքի, սեփականության իրավունքի, սեփականությունից զրկելու, այն օտարելու սահմանադրական կարգավորումների

էության միակերպ և իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու հետ:

Թվարկված խնդիրների շրջանակներում Սահմանադրական դատարանն ընդունել է մի շարք որոշումներ, որոնք էական ազդեցություն ու նշանակություն են ունեցել՝ անձանց խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու և օրենսդրական կարգավորումները Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու, ինչպես նաև ընթացիկ օրենսդրությունը կատարելագործելու ուղղությամբ: Բավական է պարզապես հիշատակել Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104, 106 և 108 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2002 թվականի օգոստոսի 1-ին ընդունված՝ «Երևանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապատման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով Սահմանադրական դատարանի կայացրած որոշումը, որով վիճարկված բոլոր նորմերն իրավակարգավորման որոշակի մասերով ճանաչվեցին Սահմանադրությանը հակասող: Ընդ որում, Սահմանադրական դատարանն այնուհետ արձանագրեց ՀՀ կառավարության կողմից հիշյալ որոշման պահանջների չկատարման, ոչ պատշաճ կատարման փաստեր: Կամ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ նախադասությունում ամրագրված նորմի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի որոշումը, համաձայն որի՝ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի սահմանած սակագների մեծությունները դատական կարգով անբողոքարկելիությունը ճանաչվեց Սահմանադրությանը հակասող և անվավեր: Հիշատակման արժանի է նաև քաղաքացիներ Հակոբ Դանիելյանի և այլոց (շուրջ 31 քաղաքացիներ) դիմումով 09.04.2007 թ. Սահմանադրական դատարանի ընդունած որոշումը, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճառաբանման պարտադիր պայման

չնախատեսելու, հետևաբար նաև արդարադատության արդյունավետության, բավարար մատչելիության իրավական երաշխիքներ չսպասելու առումով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231.1 հոդվածի 2-րդ կետը (2006 թ. հուլիսի 7-ի խմբագրությամբ) ճանաչվեց Սահմանադրությանը հակասող և անվավեր:

Հիշատակման արժանի է նաև քաղաքացի Գևորգ Գզրարյանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311-րդ հոդվածի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարանի որոշումը (24.07.2007), որով վերջ դրվեց խորհրդային իրավահամակարգից դեռևս ժառանգություն փոխանցված և կոռուպցիոն մեծ ռիսկ պարունակող՝ դատարանի կողմից քրեական գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու կառուցակարգին, որով, ըստ էության, իրականացվում էր արդարադատության հետ անհամատեղելի գործառույթ: Մեկ այլ գործով՝ քաղաքացի Հովհաննես Ռուշանյանի և այլոց դիմումի հիման վրա կայացված որոշմամբ (08.10.2008), Սահմանադրական դատարանը «Փաստաբանության մասին» օրենքի 29.1-րդ հոդվածը ճանաչելով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, կարևորեց անձանց իրավունքների դատական պաշտպանության իրավունքի իրացման շրջանակներում փաստաբանական ծառայության արդյունավետության բարձրացմանն ուղղված օրենսդրական լրացուցիչ կարգավորման անհրաժեշտությունը:

Իրավունքի պաշտպանության արդյունավետության երաշխավորման տեսանկյունից՝ իր նշանակությամբ առանձնահատուկ է նաև նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման կառուցակարգի սահմանադրականության հարցով քննված գործով Սահմանադրական դատարանի ընդունած որոշումը (21.10.2008), համաձայն որի՝ նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման համակարգն արդյունավետ կարող է գործել միայն այն դեպքում, երբ կապահովվի նոր հանգամանքների հիմքով դատական բոլոր ատյանների ակտերի վերանայման հնարավորությունը՝ բացառելով ստորադաս ատյանի դատարանի կողմից վերադաս դատարանի ակտի վերանայումը: Նոր հանգամանքների հիմքով անձանց իրավունքների դատական պաշտպանության սահմանադրականության հիմնախնդրին Սահմանադրական դատարանն անդրադարձել

է նաև քաղաքացիներ Ա. Զեյնալյանի և Վ. Խաչատրյանի դիմումների հիման վրա քննվող գործով 13.10.2009 ընդունած որոշմամբ: Ընդհանուր առմամբ, նոր հանգամանքների հիմքով դատական ակտերի վերանայման սահմանադրականության խնդրին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-833, ՍԴՈ-943 որոշումներում: Վերջինիս դեպքում Սահմանադրական դատարանն առանձնահատուկ կարևորել էր, որ «...իրավական ակտերի սահմանադրականության որոշման վերաբերյալ գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար՝ նաև սահմանադրաիրավական պահանջ»: Նման իրավական դիրքորոշում արտահայտելու անհրաժեշտությունը բխում էր ոչ միայն տվյալ գործով դիմումում բարձրացված հարցի էությունից, այլև պայմանավորված էր ընդհանուր իրավասության դատարանների կողմից Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները հաճախ շրջանցելու իրողությամբ՝ հատկապես 2008-2012 թթ.: Ավելին, Սահմանադրական դատարանն իր պարբերաբար հրապարակվող տարեկան հաղորդումներում գրեթե շարունակաբար անդրադարձել է իր որոշումների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստերին՝ կապված թե՛ հակասահմանադրական ճանաչված իրավակարգավորումները Ազգային ժողովի կողմից ողջամիտ ժամկետում Սահմանադրության պահանջներին համապատասխանեցնելու, թե՛ նաև դատական իշխանության մարմինների կողմից այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները շրջանցելու խնդիրների հետ: Հետևաբար՝ Սահմանադրության գերակայության ապահովման տեսանկյունից և համապատասխան դիմումում բարձրացված հարցադրումների բովանդակությունից ելնելով է, որ, օրինակ, ՍԴՈ-984 որոշմամբ (15.07.2011), անդրադառնալով դատական հայեցողության էությանն ու շրջանակներին, Սահմանադրական դատարանն ըստ էության ուղղակիորեն պարտավորեցրեց իրավակիրառողին բացառել «նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման արդյունքում ՀՀ Սահմանադրությանը հակասող և

անվավեր ճանաչված նորմ կիրառած դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը»:

Իր էությամբ ու հասարակական հնչեղությամբ արժանի է հիշատակման նաև «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի որոշ նորմերի սահմանադրականության որոշման վերաբերյալ 02.04.2014 Սահմանադրական դատարանում քննված գործը: Ծավալուն որոշմամբ դատարանը եզրահանգեց, որ իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահանջներին համարժեք իրավունքների պաշտպանության կոնկրետ երաշխիքներ չամրագրելու և տվյալ իրավահարաբերություններում գործադիր իշխանության հայեցողության սահմանները չհստակեցնելու հանգամանքից ելնելով՝ հիշյալ օրենքի մի շարք դրույթներ և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված այլ նորմեր հակասում են Սահմանադրությանը:

Սահմանադրական դատարանի վերը թվարկված և բազմաթիվ այլ որոշումների ընդունման և դրանցում արտահայտված իրավական դիրքորոշումների հիմքում, իհարկե, դրված են հիմնականում անհատական դիմումներով բարձրացված հարցեր, ինչն անառարկելի վկայությունն է այն իրողության, որ անհատական գանգատի կառուցակարգը նշանակալի ազդեցություն է ունեցել Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության զարգացման ու ամրապնդման, իրավունքի գերակայության հաստատման գործում: Դատական պրակտիկայից վերը բերված օրինակները եզակի չեն: Միայն 2006-2015 թթ. ընթացքում Սահմանադրական դատարանն ընդունել է շուրջ 570 որոշում, որոնց սույն հրապարակման շրջանակներում բնավ հնարավոր չէ մանրամասն անդրադառնալ: Մյուս կողմից՝ այդ ժամանակաշրջանի իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ արդարացված էր միջազգային մասնագիտական տարբեր հարթակներում արտահայտված այն տեսակետը, որ անհրաժեշտ էր Հայաստանում ներդնել սահմանադրական գանգատի դասական գերմանական մոդելը, որի դեպքում հնարավոր կլիներ վիճարկել ոչ միայն դատական ակտով անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, այլև տվյալ գործով կայացված վերջնական դատական ակտի սահմանադրականությունը:

Իհարկե, սահմանադրական և օրենսդրական կարգավորումների մակարդակում նախապես անհրաժեշտ կլինե՞ր հստակ նախանշել նման գործառույթի իրականացման շրջանակները և դատական ակտը հակասահմանադրական ճանաչելու իրավական հետևանքները: Դրանով, նախ, էականորեն կամրապնդվե՞ր դատական իշխանության ներսում զսպումների ու հակակշիռների համակարգը, և որպես հետևանք՝ կնվազե՞ր մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին Հայաստանից հասցեագրվող դիմումների քանակը: Արդյունքում կարձանագրվե՞ր ինքնաբավ դատաիրավական համակարգի կառուցման գործընթացի կարևոր ձեռքբերում:

Այդ տարիներին հաճախ մասնագիտական որոշ շրջանակներից դժգոհություն էր արտահայտվում Սահմանադրական դատարանի հասցեին՝ կապված որոշումների ոճաբանության հետ: Բավական է միայն նշել, որ Սահմանադրական դատարանի որոշումներն իրենց բնույթով, նախապատրաստման և ընդունման մեթոդներով ու ընթացակարգով, նաև՝ շարադրման ոճով օբյեկտիվորեն տարբերվում են ընդհանուր իրավասության դատարանների ակտերից և ընդհանրապես՝ ցանկացած այլ նորմատիվ իրավական ակտից: Նախ, տարբեր են ընդհանուր և սահմանադրական-արդարադատական գործառույթների առջև դրված խնդիրները: Սահմանադրական դատարանը, ի տարբերություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների, փաստի դատարան չէ: Սահմանադրական դատարանի որոշումներում գլխավորապես բացահայտվում են իրավունքի էությունը, դրա ընկալման և կիրառման՝ Սահմանադրությամբ թույլատրելի շրջանակը: Այդ որոշումների հիմքում, որպես կանոն, ոչ թե փաստեր են և դրանց համադրման արդյունքում արված կոնկրետ հետևություններ, այլ Սահմանադրությամբ և միջազգային-իրավական հանրաճանաչ փաստաթղթերով հաստատագրված սկզբունքներ ու վարքագծի կանոններ, որոնց հետ վիճարկվող այս կամ նորմատիվ դրույթի համադրման և փոխկապակցված վերլուծության արդյունքում բացահայտվում է տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը, իրավական իմաստը: Հետևաբար՝ այդպիսի գործընթացների արդյունքում ընդունվող որոշումներն օբյեկտիվ թելադրանքով

իրավափիլիսոփայական են, և իհարկե, դրանք լիարժեք ընկալելու և գործադրելու համար պահանջվում են մասնագիտական որոշակի կարողություններ: Սահմանադրական դատարանում, հատկապես վերջին տարիներին, եղել են քննարկումներ՝ գործով ըստ էության ընդունված որոշումների հրապարակմանը զուգահեռ՝ հանրությանը տվյալ որոշման էության ու բովանդակության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն ներկայացնելու անհրաժեշտության մասին:

Ամփոփելով նորանկախ Հայաստանում Անկախության հռչակագրով նախանշված և 1995 թ. Սահմանադրությամբ կյանքի կոչված սահմանադրական արդարադատության հաստատման պատմական քննարկվող ժամանակահատվածի ձեռքբերումները՝ վստահորեն կարելի է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի համար այն եղել է կայացման պատասխանատու ժամանակաշրջան: Առկա էին անհրաժեշտ պայմաններ՝ դատարանի ինստիտուցիոնալ ողջ ներուժի բացահայտման և Սահմանադրության գերակայության ապահովման գործին այն ծառայեցնելու համար: Դրան մշտապես նպաստել են նաև դատարանում ստեղծված աշխատանքային ստեղծագործ մթնոլորտն ու պատասխանատվության բարձր գիտակցությունը, ինչպես նաև՝ դատարանի ողջ կազմի ու սպասարկող աշխատակազմի ներդաշնակ գործակցությունը:

Հայաստանում սահմանադրական արդարատության ներդրման և զարգացման առաջին տարիների ձեռքբերումների փաստագրությունն անառարկելի վկայությունն է այն իրողության, որ Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրական դատարանը, դիմակայելով նորանկախ պետականության կայացման ու զարգացման բոլոր օբյեկտիվ մարտահրավերներին, նշանակալի դերակատարում է ունեցել սահմանադրական կարգի և օրինականության պաշտպանության ու ամրապնդման, ինչպես նաև իրավունքի զարգացման գործում՝ միաժամանակ ձեռք բերելով միջազգային մեծ հեղինակություն:

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ՍԴ անդամ, 1996-2020 թթ.

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1990-1995 թթ.)¹

1990 թվականի օգոստոսի 23-ին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի² ընդունումից հետո Հայաստանի Հանրապետությունում սկսվեցին խորքային բարեփոխումները հասարակական և պետական կյանքի բոլոր ոլորտներում՝ ներառյալ անցումը պետական կառավարման խորհրդային բրգաձև համակարգից ժողովրդավարության պահանջներին համապատասխանող պետական կառավարման համակարգի:

Սակայն այս փուլում Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև այլ նորանկախ պետություններում, այդպիսի բարեփոխումների համար առկա էր շատ էական խոչընդոտ: Բարեփոխումների իրականացումը հնարավոր էր միայն գործող սահմանադրության մեջ լայնածավալ փոփոխությունների կամ սկզբունքորեն նոր սահմանադրություն ընդունելու միջոցով:

Այդ նպատակի իրականացման համար 1990 թվականի նոյեմբերի 5-ին ստեղծվեց Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողով: Այն բաղկացած էր քսան անդամից, որոնցից վեցը պատգամավոր չէին: Սահմանադրական հանձնաժողովի նախագահը Լևոն Տեր-Պետրոսյանն էր: Սահմանադրական հանձնաժողովի առաջին նիստում հանձնաժողովի կողմից նախագահի տեղակալ ընտրվեց արդարադատության նախարար Վահե Ստեփանյանը, իսկ քարտուղար՝ Արա Սահակյանը³: 1994 թվականի հունիսին սահմանադրական հանձնաժողովի կազմը ընդլայնվեց. նրա կազմում ընդգրկվեց ևս տասներեք անդամ, իսկ Գերագույն խորհրդի նախագահ Բաբկեն Արարքցյանը դարձավ հանձնաժողովի համանախագահ:

¹ Հոդվածում օգտագործվել են (Վ. Ստեփանյան, Հ. Ստեփանյան, Հ. Կետյան. Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները, Երևան, 2020) մենագրությունում իմ կողմից շարադրված նյութերը:

² ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990/16:

³ Պողոսյան Վ., Թովմասյան Հ.. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ. համառոտ պարզաբանումներ, Երևան, 2005, էջ 13:

Սահմանադրական հանձնաժողովի առջև դրված էր երկու հիմնական խնդիր՝ ա) նախապատրաստել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագիծ, և բ) Գերագույն խորհրդին ներկայացնել առաջարկություններ գործող սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Սահմանադրական հանձնաժողովի երկրորդ լիազորությունը՝ գործող սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ ներկայացնելը, պայմանավորված էր այն հանգամանքով, որ նոր սահմանադրության նախագծի շուտափույթ նախապատրաստումը հնարավոր չէր այն պարզ պատճառով, որ դեռևս հստակեցված չէին ձևավորվող պետականության էությունը, հիմնական հատկանիշները և զարգացման հեռանկարները: Դրավառ վկայությունն է «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը: Չնայած Հռչակագիրը դրական մեծ նշանակություն ունեցավ անկախ պետականության հաստատման գործընթացում, այն նաև համոզիչ ապացույց է գործող քաղաքական ուժերի կողմից պետության զարգացման հեռանկարների ոչ հստակ գիտակցման:

Այսպես, համաձայն Հռչակագրի 5-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, ներքին զորքերը, պետական և հասարակական անվտանգության մարմինները պետք է ենթարկվեին ոչ թե գործադիր, այլ օրենսդիր մարմնին: Հռչակագրի 7-րդ հոդվածով ամրագրված էր, որ ոչ միայն հողը և ընդերքը, այլև օդային տարածությունն է հանդիսանում Հայաստանի ժողովրդի սեփականությունը: Ավելին՝ ամրագրված էր, որ նաև օդային տարածության տիրապետման, տնօրինման և օգտագործման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Մինչդեռ ակնհայտ է, որ օդային տարածությունը չի կարող լինել սեփականության օբյեկտ: Այդ տարածությունը ոչ թե Հայաստանի ժողովրդի սեփականության իրավունքի օբյեկտ է, այլ տարածություն, որը գտնվում է Հայաստանի Հանրապետության բացառիկ և լրիվ ինքնիշխանության ներքո:

Գոյություն ունեւր նաև մեկ այլ բարդություն: Խորհրդային տոտալիտար համակարգի պայմաններում Հայաստանում, ինչպես և մյուս հետխորհրդային հանրապետություններում, չկային շուկայական հարաբերությունների վրա հիմնված իրավական պետության

սահմանադրության սկզբունքներին և գործողության կառուցակարգերին քաջատեղյակ մասնագետներ: Նույնիսկ Ռուսաստանի Դաշնությունը, որը Խորհրդային Միության մյուս հանրապետությունների համեմատ ավելի մեծ թվով և որակյալ սահմանադրական իրավունքի մասնագետներ ուներ, կարողացավ նոր սահմանադրությունն ընդունել միայն 1993 թվականի աշնանը: Ավելորդ չէ նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծերի քննարկումները խորհրդարանում տեղի ունեցան դրանից ընդամենը մի քանի ամիս անց:

Ակնհայտ է, որ հասարակական կյանքի զանազան ոլորտների (ներառյալ՝ պետական կառավարման ձևի) օրենսդրական բարեփոխումների իրականացումը չէր կարելի հետաձգել մինչև նոր սահմանադրության ընդունումը: Սակայն համապատասխան օրենքները և այլ նորմատիվ-իրավական ակտերը հաճախ խոր հակասության մեջ էին հայտնվում խորհրդային սահմանադրության դրույթների հետ: Այսպես՝ արդեն 1990 թ. աշնանն ընդունվել էր «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին»¹ օրենքը, որով նախատեսվում էր սեփականության տարբեր ձևերի հավասարություն և հավասար իրավական պաշտպանություն, ինչը պետք է քաղաքացիական հասարակության և իրավական պետության ձևավորման իրավական հիմքը հանդիսանար: Մինչդեռ խորհրդային սահմանադրությամբ ամրագրված հասարակության տնտեսական համակարգի հիմքն էր հանդիսանում արտադրության միջոցների նկատմամբ պետական սեփականության բացառիկ իրավունքը: Ուստի ««Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կիրարկելու մասին» Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշման 8-րդ կետով Սահմանադրական հանձնաժողովին հանձնարարական տրվեց առաջարկություններ ներկայացնել գործող Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին²: Նման հանձնարարական էր պարունակում նաև «Հայաստանի Հանրապետության ժողովրդական

¹ ՀՀ ԳԽՏ, 1990/20:

² ՀՀ ԳԽՏ, 1990/20:

վերահսկողության կոմիտեն լուծարելու մասին» Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի որոշման 2-րդ կետը¹:

Այդպիսով՝ բարեփոխումների առաջին փուլում Հայաստանի Հանրապետությունում որդեգրվել էր դասական մոտեցում. ընդունվում էին օրենքներ, որոնք, սակայն, իրավաբանական ուժի մեջ էին մտնում գործող սահմանադրության մեջ անհրաժեշտ փոփոխություններից հետո: Այսպես, 1990 թվականի օգոստոսի 13-ին, նույն թվականի հոկտեմբերի 17-ին, նոյեմբերի 13-ին գործող խորհրդային սահմանադրության մեջ կատարվեցին մի շարք փոփոխություններ:

Նման հիմնախնդիր էր առաջացել նաև մի շարք այլ հետխորհրդային հանրապետություններում: Առավել դյուրին էր մերձբալթյան հանրապետությունների վիճակը, որոնք մինչև խորհրդայնացումն ունեին իրենց «բուրժուական» սահմանադրությունները: Նրանք պարզապես դադարեցրին խորհրդային սահմանադրությունների գործողությունը՝ վերականգնելով 30-ական թվականների իրենց «բուրժուական» սահմանադրությունների գործողությունը: Մյուս հանրապետությունները, ինչպես Հայաստանի Հանրապետությունը՝ անցումային շրջանի առաջին փուլում, ընտրեցին դասական ճանապարհը. մինչև նոր օրենքների կիրառումը գործող սահմանադրության մեջ կատարվում էին համապատասխան փոփոխություններ:

Սակայն նման մոտեցումն արդյունավետ է միայն հասարակության աստիճանական, էվոլյուցիոն զարգացման ժամանակ: Անցումային, բեկումնային փուլերում ի հայտ են գալիս այդ գործելակերպի մի քանի էական թերություններ:

Նախ՝ դանդաղում էին իրականացվող բարեփոխումների տեմպերը: Գործող սահմանադրության համաձայն՝ սահմանադրական փոփոխություններ կարող էին կատարվել պատգամավորների ընդհանուր թվի ճայների երկու երրորդով՝ որակյալ մեծամասնությամբ: Որպես կանոն՝ նման մեծամասնություն ձևավորվում էր համազգային, այսպես կոչված, ազգային-ազատագրական խնդիրների հետ առնչվող օրինագծերի քվեարկության ժամանակ: Սակայն մյուս օրինագծերի, հիմնականում՝ հասարակության տնտեսական հիմքերին կամ քաղաքական համակարգին առնչվող օրինագծերի

¹ ՀՀ ԳԽՏ, 1990/21:

քննարկման ընթացքում, խորհրդարանում ներկայացված տարբեր քաղաքական ուժեր ունեին առանձնահատուկ մոտեցումներ և, բնականաբար, քվեարկում էին տարբեր կերպ: Հատկանշական է, որ Ռուսաստանի Դաշնության խորհրդարանում հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքի ամրագրման հարցը տևեց մեկ տասնամյակից ավելի:

Բացի դրանից, անցումային փուլում բազմաթիվ և լայնածավալ սահմանադրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանում: Դրա հետևանքով սահմանադրության մեջ կարող էին առաջանալ անլուծելի հակասություններ, ինչն անխուսափելիորեն փաստաթղթին կհաղորդեր հատվածական, ներքուստ հակասական բնույթ:

Թվում էր, թե ստեղծված իրավիճակից կար շատ պարզ ելք՝ կատեցնել խորհրդային սահմանադրության գործողությունը: Սակայն Սահմանադրական հանձնաժողովի քննարկումներից պարզ դարձավ, որ դա նույնպես հնարավոր չէր: Բանն այն է, որ հասարակական հարաբերությունների մի շարք կարևորագույն ոլորտներ անմիջականորեն կարգավորվում էին սահմանադրական նորմերով, և սահմանադրության գործողության կասեցումն անխուսափելիորեն էական բացեր կառաջացներ համապատասխան ոլորտների իրավական կարգավորման մեջ: Սահմանադրական նորմերով էին ամրագրված, մասնավորապես, Գերագույն խորհրդի կառուցվածքը, այդ մարմնի կազմավորման և գործունեության կարգը, Գերագույն խորհրդի և դրա մարմինների լիազորությունները, Կառավարության կազմավորման և գործունեության կարգը, դատական համակարգը, երկրի վարչատարածքային բաժանումը և այլն:

Ստեղծված պայմաններում որդեգրվեց խնդրի լուծման, եթե կարելի է այդպես անվանել, «թավշյա հեղափոխական» մոտեցում: 1990 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը՝ Սահմանադրական հանձնաժողովի առաջարկությամբ, ընդունեց «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենք, որի համաձայն՝ «Մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող

Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»¹:

Չնայած Հայաստանի անկախ պետականության ձևավորման գործում այս օրենքն ունեցավ առանցքային նշանակություն, այն դեռևս լուրջ իրավագիտական վերլուծության չի ենթարկվել:

Քննարկվող օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգ ներմուծվեց նոր իրավական ֆենոմեն՝ իրավունքի աղբյուրի նոր տեսակ:

Սահմանադրական օրենքը չդադարեցրեց խորհրդային սահմանադրության գործողությունը և դրանով իսկ հնարավորություն տվեց խուսափելու բացերից սահմանադրական կարգավորման ոլորտում: Այդ օրենքը պարզապես զրկեց գործող սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժից, ավելի ճիշտ՝ սահմանադրությունը վերափոխվեց այլընտրանքային իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ-իրավական ակտի: Այն պահպանեց իր բարձրագույն իրավաբանական ուժը բոլոր նորմատիվ-իրավական ակտերի, այդ թվում՝ օրենքների նկատմամբ, բացառությամբ Հռչակագրի հիման վրա ընդունված օրենքների: Վերջիններիս դրույթները գործող սահմանադրության նորմերի նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժ ստացան:

Սկզբունքորեն՝ այդպիսի մոտեցումը հիմնականում համապատասխանում էր Հռչակագրի 12-րդ կետի դրույթին, համաձայն որի՝ «Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող Սահմանադրության մեջ՝ փոփոխություններ ու լրացումներ կատարելու... համար»²: Սակայն զուտ իրավագիտական տեսանկյունից սահմանադրական օրենքով ամրագրված մոտեցումն անխոցելի չէր:

Միշտ չէ, որ հնարավոր է համոզիչ հիմնավորել, որ կոնկրետ օրենքի այս կամ այն իրավադրույթն ընդունվել է Հռչակագրի հիման վրա: Այսպես՝ համաձայն «Հայաստանի անկախության մասին»

¹ ՀՀ ԳԽՏ 1990/23:

² ՀՀ ԳԽՏ 1990/16:

հռչակագրի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում: Սակայն ակնհայտ է, որ իշխանությունների տարանջատումը, այդ իշխանությունների միջև հակակշիռների և զսպումների մեխանիզմի ներդրումը հնարավոր է ապահովել և՛ նախագահական, և՛ կիսանախագահական, և՛ խորհրդարանական հանրապետություններում: Ավելին, այդպիսի տարանջատում արդյունավետ ապահովվում է նաև ժամանակակից սահմանադրական միապետություններում: Ուստի ամենևին միանշանակ չէ, որ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին»¹ օրենքը հիմնված է Հռչակագրի որևէ դրույթի վրա: Հատկանշական է, որ Գերագույն խորհրդում օրենքի նախագծի քննարկման ժամանակ բազմաթիվ պատգամավորներ հետևյալ հարցն էին բարձրաձայնում. քննարկվող օրենքը ուժի մեջ մտնելու համար պետք է արդյոք համապատասխան փոփոխություններ կատարել գործող սահմանադրության մեջ: Միակ հնարավոր պատասխանն այն էր, որ պատգամավորներն իրենք պետք է որոշեն՝ անհրաժեշտ են այդ փոփոխությունները, թե՞ ոչ: Ի վերջո, օրենքը ուժի մեջ մտավ առանց սահմանադրական փոփոխություններ կատարելու:

Միևնույն ժամանակ, քննարկվող սահմանադրական օրենքը հնարավորություն ստեղծեց սովորական օրենսդրական ընթացակարգերով հաղթահարելու գործող խորհրդային տիպի սահմանադրության «դիմակայությունը» իրականացվող բարեփոխումներին: Սահմանադրական օրենքի հիման վրա իրականացվող բարեփոխումներն ընդգրկում էին ոչ միայն պետական կառավարման ոլորտը, այլ նաև հասարակության և պետության տնտեսական ու քաղաքական հիմքերը: Մասնավորապես, հենց քննարկվող սահմանադրական օրենքը հնարավորություն ստեղծեց ընդունելու և առանց սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու՝ կիրառելու «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին օրենքը»², որն ամրագրեց հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը, ինչպես նաև «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների

¹ ՀՀ ԳԽՏ 1991/15:

² ՀՀ ԳԽՏ 1991/2:

մասին օրենքը»¹, որը լեգալ հիմք հանդիսացավ բազմակուսակցական քաղաքական համակարգի ձևավորման համար:

Սահմանադրական օրենքը լեգալ հիմք հանդիսացավ նաև խորհրդային կառավարման ձևը ժողովրդավարության պահանջներին համապատասխանող կիսանախագահական կառավարման ձևի անցման համար:

Այդ ժամանակ դեռևս գործող ՀԽՍՀ 1978 թ. սահմանադրության 98-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության բարձրագույն մարմինը Գերագույն խորհուրդն էր, որը, բացի սահմանադրությամբ իրեն ուղղակի վերապահված լիազորություններից, կարող էր նաև քննարկել ու լուծել հասարակական և պետական կյանքի ցանկացած կարևորագույն հարց²:

Միաժամանակ, նույն սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված էր, որ հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը կոմունիստական կուսակցությունն է: Այդպիսի իրավակարգավորումների արդյունքում պետական կառուցակարգում ձևավորվել էր ավանդույթ, համաձայն որի՝ Գերագույն խորհրդի նստաշրջանից մեկ-երկու օր առաջ տեղի էր ունենում իշխող՝ Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենում, որը քննարկում էր Գերագույն խորհրդի նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցերը և համապատասխան կերպով քվեարկելու հանձնարարական էր տալիս Գերագույն խորհրդի ճնշող մեծամասնությունը կազմող

¹ ՀՀ ԳԽՏ 1991/4:

² Կիրառելով ՀԽՍՀ սահմանադրության հենց այս հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թվականի ապրիլի 17-ին որոշում ընդունեց «Հայաստանի Հարապետության կոմունիստական կուսակցության և նախկին Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության ունեցվածքն ազգայնացնելու մասին»: Այս որոշման դրույթների վերլուծությունը միանշանակ հանգեցնում է այն եզրակացության, որ Գերագույն խորհուրդը տվյալ դեպքում փաստացի իրականացրել է մի գործառույթ, որը, համաձայն իշխանությունների տարանջատման տեսության, դատական իշխանության գործառույթն է:

Այդ որոշման ընդունումից ընդամենը երկու օր անց տողերիս հեղինակին (Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար) էր ներկայացել Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության պաշտոնաթերթի՝ «Պրավդա» օրաթերթի հատուկ թղթակիցը՝ հետևյալ հարցադրմամբ. ինչո՞ւ է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունել մի որոշում, որով մխրճվել է դատական իշխանության գործառույթների ոլորտը: Նախարարի կողմից հղում կատարվեց ՀԽՍՀ սահմանադրության վերը նշված դրույթին (համապատասխան իրավադրույթ պարունակում էր նաև ԽՍՀՄ սահմանադրությունը), որից հետո թղթակիցը ստիպված էր ընդունել, որ Գերագույն խորհուրդը գործել է իր սահմանադրական լիազորությունների շրջանակում:

կոմունիստ-պատգամավորներին: Հատկանշական է, որ 30-ական թվականների կեսերից մինչև Գորբաչովյան վերակառուցումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի և միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդների բոլոր ակտերը ընդունվել են միաձայն:

Այս պայմաններում բարձրագույն պետական իշխանությունը գործնականում ամբողջությամբ կենտրոնանում էր կառավարող կուսակցության ձեռքում: Խորհրդային իշխանության իրականացման կառուցակարգի համար կարևորագույն նշանակություն ուներ նաև Կոմունիստական կուսակցության կանոնադրությամբ ամրագրված, այսպես կոչված, դեմոկրատական ցենտրալիզմի առանցքային սկզբունքը, որի գործողության արդյունքում որոշումների ընդունման փաստացի կենտրոն էր հանդիսանում Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի մոտ երկու տասնյակ անդամներից բաղկացած քաղբյուրոն և առաջին հերթին՝ գլխավոր քարտուղարը¹:

Այդպիսով, 1990 թվականի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունում առկա էր պետական իշխանության բրգաձև կառույց, որի գագաթը ոչ թե ձևականորեն որպես այդպիսին հռչակված Գերագույն խորհուրդն էր, այլ միակ կուսակցության բարձրագույն վերնախավի մի քանի ներկայացուցիչներ:

Հայտնի է, որ պետության ինքնիշխանությունը ոչ միայն պետական իշխանության անկախությունն է միջազգային հարաբերությունների ոլորտում, այլ նաև դրա գերակայությունը երկրի ներսում: Այլ կերպ՝ ինքնիշխան պետության ներսում չի կարող լինել պետական իշխանությունից վեր կանգնած որևէ այլ իշխանություն: Մինդեռ այս պայմաններում Կոմունիստական կուսակցության վերնախավի իշխանությունը փաստացի գերակայություն ուներ պետական իշխանության նկատմամբ: Կարելի է պնդել, որ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն իրապես պետական իշխանության բարձրագույն մարմին է հանդիսացել միայն 1990 թվականի գարնանից, երբ հերթական ընտրությունների արդյունքում Կոմունիստական կուսակցությունը Գերագույն խորհրդում այլևս չուներ ձայների մեծամասնություն, և Գերագույն խորհուրդը դուրս եկավ կոմկուսի վերնախավի խնամակալությունից:

¹ Միութենական հանրապետություններում՝ Հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների բյուրոն և առաջին քարտուղարը:

Դրանից հետո, փաստորեն, միանգամից ակնհայտ դարձավ, որ նոր պայմաններում Գերագույն խորհուրդն ի վիճակի չէ ինքնուրույն, լրիվ ծավալով և արդյունավետ իրականացնելու իշխանության բարձրագույն մարմնի գործառույթները: Այսպես՝ նոր կազմավորվող կառավարության անդամներ նշանակելու՝ Գերագույն խորհրդի բազմաթիվ ձախողված փորձերը ստիպեցին 1990 թվականի նոյեմբերի 30-ին ընդունել «Հայաստանի Հանրապետության Կառավարությանը և նրա նախագահին հատուկ լիազորություններ տալու մասին» որոշում, որով ժամանակավորապես՝ մինչև մեկ տարի ժամկետով, Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահին իրավունք վերապահվեց նշանակելու և պարտականությունից ազատելու Նախարարների խորհրդի անդամներին¹: Ուստի Հայաստանի Հանրապետության անկախության մասին Հռչակագրում արդեն իսկ ամրագրված՝ խորհրդային կառավարման ձևից ժողովրդավարության պահանջներին համապատասխանող ձևի շուտափույթ անցման անհրաժեշտությունը որևէ կասկած չէր հարուցում:

Այդ խնդիրը լուծվեց քննարկվող սահմանադրական օրենքի հիման վրա «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին»² և «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին»³ օրենքներով, որոնցով պետական կառավարման համակարգ ներմուծվեցին իշխանությունների տարանջատման էական տարրեր, և ձևավորվեցին կիսանախագահական կառավարման սահմանադրաիրավական հիմքերը: Սակայն պետք է արձանագրել, որ այդ օրենքներով բարեփոխումներն ընդգրկեցին միայն պետական իշխանության օրենսդիր և գործադիր թևերը: Դատական իշխանության համակարգը տարբեր (հիմնականում՝ սուբյեկտիվ) պատճառներով, ըստ էության, մնաց նույնը՝ խորհրդայինը:

Պետք է արձանագրել, որ անցումային ժամանակաշրջանի բարդ պայմաններում և պատերազմական իրավիճակում այդ կառավարման ձևը հնարավորություն տվեց իրականացնելու բավական արդյունավետ պետական կառավարում և խուսափելու պետականությանը սպառնացող բազմաթիվ վտանգներից:

¹ ՀՀ ԳԽՏ, 1990/22:

² ՀՀ ԳԽՏ, 1991/15:

³ ՀՀ ԳԽՏ, 1991/22:

Վերը նշված բարեփոխումներին զուգահեռ՝ Սահմանադրական հանձնաժողովում կատարվում էին աշխատանքներ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի նախապատրաստման ուղղությամբ: Սահմանադրության ընդունումը հրատապ խնդիր էր, և դա գիտակցվում էր բոլոր քաղաքական ուժերի և հանրության կողմից: Այդ մասին Սահմանադրական հանձնաժողովի նիստում նշեց Հանրապետության նախագահ, Սահմանադրական հանձնաժողովի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը. «Բոլորս էլ գիտակցում ենք, որ պետության կայունության հիմքը սահմանադրությունն է, և միայն նրա ընդունմամբ կթուլանա ներքաղաքական պայքարը, քանի որ դրանից հետո ոչ մի ուժ՝ ո՛չ իշխանությունը, ո՛չ ընդդիմությունը, չեն կարող հավակնել շրջանցելու ժողովրդի կամքը...»¹:

Սակայն Սահմանադրական հանձնաժողովի առաջին իսկ նիստերում քննարկումների ժամանակ ի հայտ եկան մի շարք հայեցակարգային հիմնախնդիրներ, որոնց վերաբերյալ հանձնաժողովի անդամների կողմից արտահայտվեցին տրամագծորեն հակադիր դիրքորոշումներ: Ծավալված բանավեճը հիմնականում վերաբերում էր պետական կառավարման ձևի ընտրությանը: Այսպես՝ ԱԺՄ ներկայացուցիչները պնդում էին, որ երկրում գոյություն ունեցող իրավիճակում առավել նպատակահարմար է խորհրդարանական կառավարման մոդելը, իսկ Պ. Հայրիկյանի համոզմամբ՝ այդ պայմաններում միակ ընդունելի կառավարման ձևը նախագահ-վարչապետ, այսինքն՝ ամերիկյան մոդելի նախագահական կառավարման համակարգի ամրագրումն էր: Պետական կառավարման առավել նախընտրելի ձևի հարցի շուրջ ծավալված դիսկուրսը պայմանավորված էր նաև օբյեկտիվ, նաև սուբյեկտիվ գործոններով: Ուստի, ինչպես նշում է Լ. Տեր-Պետրոսյանը, երկու կողմերն էլ ունեին իրենց փաստարկներն ու շարժառիթները²:

Սահմանադրական հանձնաժողովի իրավաբան-անդամները ավելի շատ հակված էին դեպի կիսանախագահական կառավարման ձևը:

Հատկանշական է, որ Սահմանադրական հանձնաժողովի մի քանի նիստեր նվիրված էին ժամանակակից աշխարհի տարբեր պետական

¹ Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Երևան, 2006, էջ 361:

² Տես նույն տեղում:

կառավարման ձևերի հիմնական հատկանիշների և Հայաստանի Հանրապետության առկա կոնկրետ պայմաններում այդ ձևերի արդյունավետության հիմնախնդիրների տեսական քննարկումներին: Քննարկումների ժամանակ, նախ, ընդգծվում էր այն հանգամանքը, որ օբյեկտիվորեն գոյություն չունեն լավ կամ վատ, առավել ևս՝ իդեալական, բոլոր պայմաններում արդյունավետ կառավարման ձևեր: Ցուրաքանչյուր կառավարման ձևի առանձին հատկանիշները կարող են կոնկրետ պայմաններում ունենալ դրական կամ բացասական ազդեցություն պետական իշխանության մեխանիզմի գործառնության արդյունավետության վրա:

Այդպես՝ նախագահական հանրապետությանը թերևս հատուկ է իշխանությունների տարանջատման առավել հստակ կառուցակարգ: Եվ նախագահը, և՛ խորհրդարանն ունեն առաջնային մանդատ՝ ընտրվում են Ժողովրդի կողմից ուղղակի կամ անուղղակի ընտրակարգերով: Նախագահը ոչ միայն պետության գլուխն է, այլև բարձրագույն գործադիր իշխանության ղեկավարը: Դրա շնորհիվ օրենսդիր և գործադիր իշխանությունները հստակ տարանջատվում են: Նախագահը՝ որպես բարձրագույն գործադիր իշխանության սուբյեկտ, չի կարող արձակել խորհրդարանը, և միևնույն ժամանակ՝ նա քաղաքական պատասխանատվություն չի կրում խորհրդարանի առջև և կարող է պաշտոնանկ արվել միայն իմպիչմենտի կարգով:

Նախագահական կառավարման համակարգում նախագահին վերապահվում են լայնաձավալ և էական լիազորություններ: Որպես պետության գլուխ՝ նա զինված ուժերի գլխավոր հրամանատարն է, ընդունում է ենթաօրենսդրական ակտեր, ունի հաղթահարվող վետոյի իրավունք, լայնաձավալ լիազորություններ արտաքին քաղաքականության ոլորտում: Որպես կանոն՝ նախագահը էական դերակատարություն ունի նաև դատական կորպուսի կազմավորման գործընթացում: Միաժամանակ՝ նա լայնաձավալ լիազորություններով է օժտված նաև որպես բարձրագույն գործադիր իշխանության միակ կրող: Այդպիսի լիազորություններ մեկ անձը կարող է արդյունավետ իրացնել թերևս միայն դաշնային պետություններում, որտեղ գործադիր իշխանության շատ գործառնություններ փոխանցված են դաշնության սուբյեկտների գործադիր իշխանության մարմիններին:

Մյուս կողմից, այդ պայմաններում նախագահի ձեռքում հաճախ կենտրոնացվում է ամբողջ բարձրագույն պետական իշխանությունը, և հաստատվում է ավտորիտար պետական կառավարման կառուցակարգ: Կարելի է պնդել, որ նախագահական կառավարման այդպիսի ձևը արդյունավետ և ժողովրդավարության պահանջներին համապատասխան գործում է միայն ԱՄՆ-ում՝ կայացած քաղաքացիական հասարակության, ուժեղ խորհրդարանի և ինքնավար ու հզոր դատական իշխանության առկայության պայմաններում:

Լատինաամերիկյան բազմաթիվ պետություններում հաճախ իրականություն է դառնում այդպիսի կառավարման ձևին հատուկ՝ ավտորիտար (կամ ամբողջատիրական՝ տոտալիտար) քաղաքական ռեժիմի ձևավորման վտանգը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նախագահի ձեռքում լայնածավալ լիազորությունների կուտակումը հաճախ հանգեցնում է նրա անփոփոխելիության և, որպես հետևանք, պետական հեղաշրջումների գայթակղություն և իրական հնարավորություններ է ստեղծում: Դրա վառ ասպցույցն են նախորդ դարում լատինաամերիկյան մի շարք պետություններում տեղի ունեցած հեղաշրջումները: Ուստի ակնհայտ է, որ այդ մոդելը կիրառելի չէր նոր երիտասարդ ժողովրդավարական պետություններում:

Պետք է նկատել, որ արդարադատության նախարարությունում՝ իրավագիտության դոկտոր Վ. Նազարյանի ակտիվ մասնակցությամբ, 1991 թ. գարնանը ստեղծված սահմանադրության առաջին նախագծում ամրագրված էր պետական կառավարման նախագահական ձևը: Սակայն նույնիսկ Սահմանադրական հանձնաժողովի շրջանակներում այն լայն քննարկման չդրվեց՝ հաշվի առնելով վերը նշված՝ նախագահական կառավարման այն յուրահատկությունները, որոնք ՀՀ առկա կոնկրետ քաղաքական իրավիճակում կարող էին խաթարել պետական կառավարման կառուցակարգի արդյունավետ գործառնությունը:

Խորհրդարանական հանրապետություններում իշխանության կենտրոնը միապալատ կամ երկպալատ խորհրդարանն է: Միայն խորհրդարանն է օժտված առաջնային մանդատով՝ պատգամավորներն ընտրվում են անմիջապես ժողովրդի կողմից: Պետական իշխանության բոլոր այլ կառույցները, փաստորեն, ձևավորվում են

խորհրդարանում և խորհրդարանական մեծամասնության կողմից: Ասվածը վերաբերում է նաև կառավարության ձևավորմանը և պետության գլխի՝ նախագահի ընտրությանը:

Խորհրդարանական հանրապետությունում պետության գլուխը գործադիր գործառույթներ չունի և, որպես կանոն, իրականացնում է միայն ներկայացուցչական գործառույթներ: Այն դեպքում, երբ նրան նշանակալից լիազորություններ են վերապահվում, գործնականում դրանք իրականացվում են կառավարության կողմից: Նախագահի ընդունած ակտերը պետք է ստորագրվեն նաև վարչապետի կամ համապատասխան նախարարի կողմից (կոնտրասիգնացիայի ինստիտուտ):

Թերևս տեսականորեն խորհրդարանական կառավարման ձևն օժտված է ժողովրդաիշխանության և ժողովրդավարության ապահովման առավել մեծ ներուժով: Բանն այն է, որ այս մոդելի կիրառման դեպքում ինչպես օրենսդիր և գործադիր մարմինների կազմավորումը, այնպես էլ նախագահական ընտրությունների արդյունքները միանշանակ պայմանավորված են խորհրդարանական ընտրությունների արդյունքներով: Այլ կերպ ասած՝ դրանք ձևավորվում են միաժամանակ և ժողովրդի մեկ կամարտահայտության արդյունքում: Այս հանգամանքն էականորեն նվազեցնում է ընտրությունների ժամանակ քաղաքական և վարչական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները:

Սակայն պետք է նաև նկատել, որ խորհրդարանական կառավարման ձևն արդյունավետ է գործում միայն զարգացած քաղաքացիական հասարակության և, մասնավորապես, երկու հզոր կուսակցությունների կամ կուսակցությունների երկու հզոր և մշտապես գործող դաշինքների առկայության դեպքում: Միայն այդ պայմաններում է հնարավոր խորհրդարանում կայուն մեծամասնության և, հետևաբար, խորհրդարանի ու որպես դրա արդյունք՝ ամբողջ պետական իշխանության համակարգի (առաջին հերթին՝ կառավարության) կայուն և արդյունավետ գործառնության ապահովումը: Այդպիսի համակարգի բացակայությունը հանգեցնում է նրան, որ խորհրդարանը կազմավորվում է մեծաքանակ «միջին քաշային» կուսակցությունների ներկայացուցիչներից: Ինչպես ցույց է տալիս հետպատերազմյան Իտալիայի,

Ֆրանսիայի և որոշ այլ եվրոպական պետությունների փորձը, այդպիսի «խայտաբղետ» խորհրդարանը մեծ դժվարությամբ է կարողանում ձևավորել կառավարություն, ինչին հետևում են կրկնվող կառավարական ճգնաժամերը, որոնք, վերջին հաշվով, հանգեցնում են խորհրդարանական ճգնաժամի: Թերևս անհրաժեշտ է նաև ընդգծել, որ խորհրդարանական կառավարման ձևը ինքնին չի կարող բացառել բռնատիրական քաղաքական ռեժիմի ձևավորումը: Դրա վառ օրինակը նացիստական Գերմանիան է, որտեղ բացարձակ իշխանությունը կենտրոնացված էր կանցլերի՝ վարչապետի ձեռքում: Ուստի և այս մոդելը նույնպես կիրառելի չէր նոր երիտասարդ ժողովրդավարական պետություններում:

Կիսանախագահական կառավարման ձևի դեպքում նույնպես և՛ խորհրդարանը, և՛ նախագահին ունեն առաջնային մանդատ: Նախագահը՝ որպես պետության գլուխ, օժտվում է լայնածավալ լիազորություններով ներքին և արտաքին քաղաքականության ոլորտներում: Նա կարող է արձակել խորհրդարանը: Սակայն բարձրագույն գործադիր իշխանության կրողը ոչ թե նախագահն է, այլ վարչապետի գլխավորությամբ գործող կառավարությունը, որը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև: Խորհրդարանի կողմից կառավարությանն անվստահություն հայտնելու կամ պարսավանքի բանաձև ընդունելու դեպքում վարչապետը կառավարության հրաժարականի մասին դիմում է ներկայացնում նախագահին: Ուստի կառավարության կազմավորման գործընթացում էական դերակատարություն ունեցող նախագահը գործադիր իշխանության բարձրագույն մարմին ձևավորելու գործընթացում միշտ ստիպված է լինում հաշվի առնել խորհրդարանական մեծամասնության դիրքորոշումը՝ անկախ նրանից՝ այդ պարտավորությունը ուղղակիորեն ամրագրված է սահմանադրությամբ, թե ոչ:

Կիսանախագահական կառավարման համակարգում առաջնային մանդատով օժտված նախագահը կատարում է էական կայունացնող (ստաբիլիզատոր) դեր՝ նպաստելով ոչ միայն իշխանական, այլև որոշ չափով նաև ընդդիմադիր ուժերի համախմբմանը: Այս հանգամանքն ապահովում է օրենսդիր և գործադիր իշխանությունների կայունությունը:

Հատկանշական է, որ այս կառավարման ձևն առաջացավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ֆրանսիայում, երբ պատերազմի հետևանքով պառակտված հասարակության, փլուզված քաղաքական համակարգի, ինչպես նաև Հնդկաստանում և Ալժիրում ռազմական գործողությունների պայմաններում խորհրդարանական կառավարման ձևն այլևս չէր ապահովում պետական մեխանիզմի կայուն և արդյունավետ գործառնությունը: Հենց այդ պայմաններում առաջացավ «ազգային առաջնորդի» ինստիտուտի գաղափարը, որը հետագայում դարձավ նոր՝ կիսանախագահական կառավարման համակարգի հենասյունը:

Այդպիսով՝ կարելի է արձանագրել, որ պետական կառավարման ձևերի բազմազանությունը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ գործոններով, առաջին հերթին՝ երկրի քաղաքական համակարգի, մասնավորապես՝ կուսակցությունների համակարգի զարգացածության աստիճանով, պետության տարածքի չափերով, հասարակության գոյատևման արտաքին կոնկրետ-պատմական պայմաններով, կրոնական և մի շարք այլ գործոններով: Ինչպես ճշմարտացիորեն նշում էր Ի. Ա. Իլյինը, «Յուրաքանչյուր ժողովուրդ և յուրաքանչյուր երկիր կենդանի անհատականություն է՝ իր յուրահատուկ տվյալներով, իր անկրկնելի պատմությամբ, էությամբ և խառնվածքով... Հենց այդ պատճառով յուրաքանչյուր ժողովուրդ փորձում է հասնել իրեն հատուկ անհատական կառավարման ձևին և սահմանադրությանը, որը համապատասխանում է իրեն և միայն իրեն»: ¹ Ֆրանսիայի հինգերորդ Հանրապետության փորձը ապացուցում է, որ փոխակերպվող հասարակական-քաղաքական պայմաններում առավել արդյունավետ է կիսանախագահական կառավարման ձևը: Ուստի հատկանշական է, որ հետսոցիալիստական պետությունների մեծամասնությունում՝ ներառյալ Հայաստանի Հանրապետությունը, նախապատվությունը տրվեց այդ կառավարման ձևին:

Պետական կառավարման նոր ձևերն առաջացել են կոնկրետ պետություններում և այն ժամանակ, երբ արդեն հայտնի ձևերն այլևս չեն համապատասխանել կոնկրետ հասարակության տնտեսական, քաղաքական և արտաքին գոյատևման պայմաններին:

¹ Ильин И. А., Почему мы верим в Россию, М., 2006, с. 14-21.

Իհարկե, այս ոլորտում ոչ բոլոր «նորամուծություններն» են ապացուցել իրենց կենսունակությունը, և այդտեղ էական ազդեցություն ունի սուբյեկտիվ գործոնը: Հատկանշական է, որ հետսոցիալիստական պետություններում արդեն երեք տասնամյակ շարունակվում է առավել նպատակահարմար պետական կառավարման ձևերի փնտրտուքը: Դրա վառ ապացույցն են այդ երկրներում պերմանենտ սահմանադրական փոփոխությունները, որոնց հիմնական նպատակն է հռչակվում տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններին առավել համապատասխանող պետական կառավարման ձևի ամրագրումը կամ առկա մոդելի կատարելագործումը: Սակայն հաճախ այդ փոփոխությունների իրական նպատակը ոչ թե կառավարման ձևի կատարելագործումն է, այլ դրա համապատասխանեցումը իշխանության ղեկի մոտ գտնվող քաղաքական առաջնորդների անձնական կամ իշխող ուժերի խմբակային շահերին: Սահմանադրական «բարեփոխումների» ժամանակ հաճախ երկարաձգվում են նախագահների պաշտոնավարման ժամկետները կամ վերացվում են նախագահի պաշտոնում ընտրության հետ կապված սահմանափակումները (ասենք՝ նախագահի պաշտոնում անընդմեջ երկու անգամից ավելի ընտրվելու սահմանափակումը) կամ «չեղարկվում են» նախագահի պաշտոնավարման նախորդ ժամկետները (ինչը վերջերս իրականացվեց Ռուսաստանի Դաշնությունում): Ստեղծվում են նաև «հիբրիդային» կառավարման ձևեր, որոնց պայմաններում պետության գլխի ձեռքում են կենտրոնանում և՛ նախագահական, և՛ կիսանախագահական կառավարման ձևերում նախագահի համար յուրահատուկ լիազորություններ: Շատ դեպքերում սահմանադրական փոփոխությունների «հիմնադիր հայրերը» (սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամները) չեն մոռանում նաև իրենց անձնական շահերի մասին, որոնց իրացումը հաճախ ապահովում են հենց սահմանադրական մակարդակով:

Այս գործընթացները բնորոշ են նաև Հայաստանի Հանրապետությանը: Հատկանշական է, որ Սահմանադրության 2015 թ. խմբագրությամբ ստեղծվեց Բարձրագույն դատական խորհուրդը, որի Ազգային ժողովի կողմից ընտրված անդամի համար, ի տարբերություն

Սահմանադրական դատարանի անդամի, առավելագույն տարիքային շեմ սահմանված չէ: Այդ հանգամանքը սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի նախագահի համար ԲԴԽ-ի նախագահի պաշտոնն զբաղեցնելու իրավական հիմքեր ստեղծեց: Սահմանադրության 2015 թ. խմբագրությամբ ստեղծվեց նաև «սողանցք», որը մասնագիտական հանձնաժողովի մեկ այլ անդամի հնարավորություն տվեց Ազգային ժողովի կողմից Սահմանադրական դատարանի նախագահ ընտրվելով՝ պաշտոնավարել մինչև 65 տարեկանը լրանալը՝ այդպիսով մի քանի տասնամյակով հետաձգելով ժողովրդավարության պահանջներին համապատասխանող այն դրույթի իրագործումը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանի նախագահն ընտրվում է Սահմանադրական դատարանի կողմից՝ 6 տարի ժամկետով:

Այդպես կոչված «թավշյա հեղափոխությունից» հետո համընդհանուր ճանաչում ստացավ այն թեզը, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների հիմնական և իրական նպատակը եղել է ոչ թե պետական կառավարման համակարգի կատարելագործումը, այլ գործող նախագահի իշխանությունը հավերժացնելը: Հանուն արդարության նշենք, որ տոտալիտար, ավտորիտար և անցումային ռեժիմ ունեցող պետություններին ընդհանուր առմամբ բնորոշ են այդպիսի մանիպուլյացիաները:

Մասնավորապես, 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների «հիմնադիր հայրերի» կողմից անտեսվեց այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում առկա պայմաններում՝ երկրի քաղաքական և կուսակցական համակարգերի առկա իրավիճակում, խորհրդարանական կառավարման ձևի անցումը հղի է վտանգավոր հետևանքով: Բազմաթիվ «միջին և ցածր քաշային» կուսակցությունների առկայության և կայացած՝ հզոր կուսակցությունների բացակայության պայմաններում հնարավոր չէ ապահովել խորհրդարանական մեծամասնության և, հետևաբար, խորհրդարանի և՛ դրանով իսկ ամբողջ պետական համակարգի կայուն գործառնությունը: Մինչդեռ բարդ համակարգերի, այդ թվում՝ պետական իշխանության համակարգի արդյունավետ կիրարկման վճռորոշ նախապայմանը դրա կայունությունն է: Հատկանշական է, որ հայաստանյան «հայր

հիմնադիրների» կողմից հեղինակած «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում՝ բազմիցս կրկնվում են «կայունություն» և «անկայունություն» եզրույթները (էջեր 13,27,32-33 և այլն):

Սակայն «ձեռքի հետ» նենգափոխվեց հենց «կայունություն» հասկացությունը: 2015 թ. «բարեփոխված» Սահմանադրության 89 հոդվածի 3-րդ մասով ամրագրվեց՝ «ընտրական օրենսգրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորում: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ»: Այս իրավադրույթների բովանդակությունից ակնհայտ է, որ հայաստանյան «հիմնադիր հայրերը» կայուն մեծամասնությունը պատկերացնում են որպես մեծամասնության մեջ ընդգրկված պատգամավորների որոշակի նվազագույն քանակ, այսինքն՝ քանակական հատկանիշ: Մինչդեռ «կայունություն» (stability) եզրույթը բնորոշվում է որպես համակարգի ունակություն՝ անհրաժեշտ ժամկետում գործել՝ չփոփոխելով սեփական կառուցվածքը, և պահպանել հավասարակշռությունը²:

Հետևաբար՝ խորհրդարանական մեծամասնության (խորհրդարանի) կայունության երաշխավորումը ընտրական օրենսգրքի կարգավորման առարկայից դուրս է: Մեծամասնության կայունության ապահովման խնդիրը առաջանում է արդեն խորհրդարանի գործառնության ընթացքում, և կայունության ապահովմանն ուղղված նորմերը կարող են և պետք է ամրագրվեն ոչ թե ընտրական օրենսգրքում, այլ սահմանադրությամբ և Ազգային ժողովի կանոնակարգով:

Ավելին՝ խորհրդարանական մեծամասնության կայունությունը ընդհանրապես հնարավոր չէ ապահովել միայն իրավական կարգավորման միջոցների կիրառմամբ: Իրավական կարգավորման միջոցները կարող են միայն որոշ չափով նպաստել խորհրդարանական մեծամասնության (և դրանով իսկ՝ խորհրդարանի) կայունության մակարդակի բարձրացմանը: Զուտ իրավական միջոցներով կայունություն

¹ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ. Եր., 2014:

² St'u /Dic. akademik.ru/dic.nsf/socio/3918/%DO%A1%D0%A2%DO%90%DO%91%DO%98%DO%9BDO%AC

երաշխավորելու նպատակը կարելի է գնահատել որպես իրավական ֆետիշիզմի դրսևորում:

Խորհրդարանական մեծամասնության կայունության աստիճանը, առաջին հերթին, կախված է երկրում քաղաքական ուժերի հարաբերակցությունից, կուսակցությունների համակարգի հասունության աստիճանից, քաղաքացիական հասարակության որակից: Պատմական փորձը միանշանակությամբ ապացուցում է, որ առավել կայուն են այն խորհրդարանական պետությունների խորհրդարանները, որտեղ առկա է հստակ երկկուսակցական համակարգ: Սակայն նույնիսկ այդ պարագայում խորհրդարանական մեծամասնության կայունության ապահովման հիմնախնդիրը չի վերանում, և կիրառվում են իրավական կարգավորման միջոցներ, որոնք որոշակիորեն նպաստում են կայունության մակարդակի բարձրացմանը: Վերջին տասնամյակներում ավելանում է սահմանադրական այն դրույթների քանակը, որոնք ուղղված են խորհրդարանների և կառավարությունների կայունության ամրապնդմանը և խորհրդարանական բանավեճերում պոպուլիզմը և դեմագոգիան կանխելուն: Մասնավորապես՝ կրճատվում են խորհրդարանի նիստերի և նստաշրջանների պարբերականությունը և տևողությունը, սահմանափակվում են ուղղումներ առաջադրելու՝ պատգամավորների օրենսդրական հնարավորությունները, ամրագրվում են ընթացակարգային նորմեր պատգամավորների քաղաքական պատասխանատվության բարձրացման համար և այլն: Քաղաքական անկայունության աստիճանը նվազեցնելու նպատակով պետության գլխին վերապահվում են լրացուցիչ լիազորություններ¹:

Ստիպված եմ արձանագրել, որ 2015 թ. խմբագրության ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված չէ որևէ դրույթ՝ ուղղված խորհրդարանի, հետևաբար՝ նաև ամբողջ պետական իշխանության համակարգի կայունության ամրապնդմանը: «Կայունություն» եզրույթի բովանդակության գիտակցված կամ անգիտակից նենգափոխման միջոցով այդ խնդիրը պարզապես օրակարգից «հանվեց»:

¹ Стів Медушевский А.Н. Сравнительное конституционное право и политические институты. М., 2002, էջեր 197-198:

Միևնույն ժամանակ, մեզանում դեռևս հասունացած չեն օբյեկտիվ պայմաններ խորհրդարանական կառավարման ձևի արդյունավետ գործառնության համար: Վ.Ի. Գերյեի դիպուկ բնորոշմամբ՝ խորհրդարանական կառավարումը «պետական իշխանության փոխանցումն է կուսակցություններին»¹: Մինչդեռ փորձը ցույց է տալիս, որ մեզանում ժամանակավորապես «հզորանում» են միայն իշխանության ղեկի մոտ կանգնած կամ հեղափոխական ալիքի վրա «վեր հառնված» կուսակցությունները:

Ուստի կարելի է արձանագրել, որ 2015 թ. սահմանադրական «բարեփոխությունները» դարձան յուրօրինակ «խաղ՝ զրոյական արդյունքով»: Մարդիկ, որոնց շահերով էին պայմանավորված տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունները, ոչինչ չստացան, իսկ պետությունը և հասարակությունը հայտնվեցին շատ վտանգավոր իրավիճակի շեմին: Առաջիկա (հերթական կամ արտահերթ) ընտրությունների արդյունքում, կարծում եմ, մեզանում անխուսափելիորեն կձևավորվեն անկայուն խորհրդարանական մեծամասնություն և «թիթեռնիկի կյանքի» տևողությամբ կառավարություններ: Ուստի «բարեփոխված» սահմանադրության շուտափույթ բարեփոխման, դեպի կիսանախագահական կառավարման ձև վերադառնալու անհրաժեշտությունն ու հրատապությունը որևէ կասկած չի հարուցում:

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Արդարադատության նախարար, 1990–1996 թթ.

ՍԴ նախագահի տեղակալ, 1996–1997 թթ.

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

¹ Герье В.И. О конституции и парламентаризме в России. М., 1906, էջ 26:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՔՆԻՇԻԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Խորհրդային Հայաստանի միջազգային իրավասությունը ԽՍՀՄ կազմում

Չնայած Խորհրդային Հայաստանը, ինչպես մյուս միութենական հանրապետությունները, ԽՍՀՄ և հանրապետական սահմանադրությունների համաձայն՝ ունեին արտաքին քաղաքական գործունեություն իրականացնելու որոշակի իրավունքներ, այդուհանդերձ, չի կարելի պնդել, որ մինչև Երրորդ հանրապետության հռչակումը Հայկական պետությունն այս ոլորտում օժտված էր իրական միջազգային իրավասություններով:

Հայկական ԽՍՀ-ի՝ արտաքին հարաբերություններում հանդես գալու իրավական հիմքը 1978 թ. Սահմանադրության 74-րդ և ԽՍՀՄ Սահմանադրության 73-րդ և 80-րդ հոդվածներում ամրագրված իրավադրույթներն էին:

Համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության 73-րդ հոդվածի՝ ԽՍՀՄ տնօրինությանը, ի դեմս նրա պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների, ենթակա էին՝ «ՍՍՀՄ-ը միջազգային հարաբերություններում ներկայացնելը. ՍՍՀՄ կապերը օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ. օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ միութենական հանրապետությունների հարաբերությունների ընդհանուր կարգի սահմանումը և կոորդինացումը. արտաքին առևտուրը և արտաքին տնտեսական գործունեության մյուս տեսակները պետական մենաշնորհի հիման վրա.» (կետ 10): Իսկ 80-րդ հոդվածում նշվում էր. «Միութենական հանրապետությունը իրավունք ունի հարաբերությունների մեջ մտնելու օտարերկրյա պետությունների հետ, նրանց հետ կնքելու պայմանագրեր և փոխանակելու դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչներ, մասնակցելու միջազգային կազմակերպությունների գործունեությանը»:

Հայկական ԽՍՀ Սահմանադրության 74-րդ հոդվածը սահմանում էր՝ «Հայաստանի Հանրապետությունն իրավունք ունի հարաբերությունների մեջ մտնել օտարերկրյա պետությունների հետ, կնքել նրանց հետ պայմանագրեր և փոխանակել դիվանագիտական ու հյուպատոսական ներկայացուցիչներ, մասնակցել միջազգային կազմակերպությունների գործունեությանը»:

Միութենական հանրապետություններին տրված նշված իրավունքները ձևական բնույթի էին. հանրահայտ է, որ ինչպես Խորհրդային Հայաստանը, այնպես էլ մյուս խորհրդային հանրապետությունները, չնայած նշված սահմանադրական իրավակարգավորումներին, իրականում արտաքին հարաբերություններում հանդես գալու որևէ գործնական հնարավորություն չունեին:

Այս հարցում որոշակի առանձնահատկություն գոյություն ուներ՝ կապված Ուկրաինական և Բելոռուսական Խորհրդային Հանրապետությունների հետ: Ինչպես հայտնի է, նշված հանրապետությունները ՄԱԿ-ի հիմնադիր անդամներից էին. փաստ, որը շատերին տարակուսանք էր պատճառում, քանի որ վերջիններս իրենց կարգավիճակով ոչնչով չէին տարբերվում մյուս խորհրդային միութենական հանրապետություններից:

Ըստ խորհրդային տարիներին տարածված բացատրության՝ Ուկրաինան և Բելոռուսիան ՄԱԿ-ի անդամ դառնալու իրավունք ձեռք բերեցին՝ շնորհիվ Գերմանիայի ջախջախման գործում ունեցած մեծ ներդրման: Այս բացատրությունն այնքան էլ հիմնավոր չէր, քանի որ իրականում Գերմանիայի դեմ տարած հաղթանակում կարևոր դերակատարություն ունեցան բոլոր խորհրդային միութենական հանրապետությունները: Ավելին, եթե Ռուսաստանի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության՝ ՄԱԿ-ի հիմնադիր անդամ չդառնալու փաստը կարելի է բացատրել նրանով, որ արտաքին աշխարհը, որպես կանոն, ՌՍՖՍՀ-ն նույնականացնում էր ԽՍՀՄ-ի հետ, ապա որևէ կերպ չէր կարելի ուրանալ մյուս խորհրդային միութենական հանրապետությունների ներդրումը Գերմանիայի դեմ տարած հաղթանակի գործում:

Իրականում, Ուկրաինան և Բելոռուսիան ՄԱԿ-ի հիմնադիր անդամ դարձան ժամանակի հզոր պետությունների դիվանագիտական

մանիպուլյացիաների արդյունքում: Խնդիրն այն է, որ ՄԱԿ-ի հիմնադրմանն ուղղված հենց առաջին քայլերը վկայեցին, որ ԽՍՀՄ-ի՝ մի կողմից, և ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի՝ մյուս կողմից, շահերն էապես հակասական են: Խորհրդային Միությունը, որպեսզի ՄԱԿ-ում լայնորեն ներկայացված լինի, կարծում էր, որ այդ կազմակերպության հիմնադիր և ինքնուրույն անդամ պետք է դառնան բոլոր միութենական հանրապետությունները, մինչդեռ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան համարում էին, որ վերջիններս ինքնիշխան պետականության որակներ չունեն:

Նշված պնդումը չեզոքացնելու նպատակով 1944 թ. հունվարի 27-ին ՀԿԿ(Բ) ԿԿ հերթական պլենումը քննության առավ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Վ.Մ. Մոլոտովի զեկույցը «Պաշտպանության ժողկոմը և Արտաքին գործերի ժողկոմը համամիութենականից՝ միութենական-հանրապետական ժողկոմի վերակազմավորելու մասին»¹:

Ամիջապես ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն ընդունեց երկու օրենք՝ «Միութենական հանրապետությունների զինվորական միավորումների կազմավորման մասին» և «Միութենական հանրապետություններին արտաքին հարաբերություններում լիազորություններ տրամադրելու մասին»²:

Նշված կուսակցական որոշման և օրենսդրական իրավակարգավորման հիման վրա զինվորական միավորումներ ստեղծվեցին միութենական բոլոր հանրապետություններում, ինչպես նաև վերջիններիս լիազորություններ տրամադրվեցին արտաքին հարաբերությունների ոլորտում: Միութենական հանրապետություններին նման լիազորություններ տրամադրելը նպատակ ուներ տպավորություն ստեղծել, թե վերջիններս օժտված են բավարար ինքնիշխանությամբ և իրավունք ունեն մասնակցելու ՄԱԿ-ի հիմնադրմանը:

Իրականում, ԽՍՀՄ-ին չհաջողվեց համոզել ԱՄՆ-ին և Անգլիային. վերջիններս միանշանակ դեմ էին, որ բացի Ուկրաինայից և

¹ <http://xn--80afqtm.xn--p1ai/fond-2-opis-1-plenumy-ck-vkpb-kpss-xviii-xix-xx-xxii-sozyvov> (վերցված է՝ 20.01.2021թ.):

² <https://topwar.ru/121146-kak-belarus-i-ukraina-stali-osnovatelyami-organizacii-obedinennyh-naciy.html> (վերցված է՝ 22.01.2021թ.):

Բելոռուսիայից՝ մյուս միութենական հանրապետությունները նույնպես դառնան ՄԱԿ-ի անդամ:

Քանի որ միութենական հանրապետություններին նշված լիազորությունները տրվեցին՝ պայմանավորված իրավիճակից բխող քաղաքական նկատառումներով, ուստի այդ լիազորությունները պահպանվեցին մինչև 1946 թվականը:

Ինչ խոսք, խորհրդային տարիներին Հայաստանում կատարվեցին խոր վերափոխումներ, որոնք շոշափեցին հասարակական կյանքի բոլոր կողմերը: Աննախընթաց վերելք ապրեցին գիտությունն ու մշակույթը, կրթությունն ու առողջապահությունը: Գրեթե չունենալով արդյունաբերություն՝ Հայաստանում ստեղծվեցին տեխնիկապես զինված ավելի քան 700 ժամանակակից արդյունաբերական ձեռնարկություններ¹: Սակայն, նշված ձեռքբերումներով հանդերձ, Խորհրդային Հայաստանը թեկուզ աննշան միջազգային իրավասուբյեկտությամբ օժտված չէր:

ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը

ԽՍՀՄ փլուզման սոցիալ-տնտեսական և քաղաքական պատճառները դուրս են սույն հետազոտության շրջանակներից. այդուհանդերձ, հարկ է նշել, որ եթե ԽՍՀՄ փլուզման նախադրյալները ձևավորվեցին 1980 թ. երկրորդ կեսին՝ Մ.Գորբաչովի ձեռնարկած վերակառուցման քաղաքականության արդյունքում, ապա սովետական կայսրության վերջնական փլուզման գլխավոր պատճառը, անշուշտ, միութենական հանրապետությունների արդարացի ձգտումն էր «վերակառուցվող» Խորհրդային Միությունում ունենալ ավելի լայն քաղաքական ինքնիշխանություն և ավելի շատ տնտեսական անկախություն, քան ԽՍՀՄ Սահմանադրությամբ նախատեսվածներն էին:

«Վերակառուցման» քաղաքականությունն ի վերջո մի քանի փուլերով փլուզեց ժամանակի խոշորագույն կայսրությունը՝ ԽՍՀՄ-ը:

Խորհրդային Միության փլուզման իրավաբանական հիմքը դրվեց 1991 թ. դեկտեմբերի 8-ին ստորագրված Բելովեժյան

¹ St'u Ysu.am/files/01A_Esayan.pdf (վերցված է՝ 20.01.2021թ.):

համաձայնագրով: Համաձայնագիրը, որը ստորագրվեց Բելուուսիայի, Ռուսաստանի Դաշնության /ՌՍՖՍՌ/ և Ուկրաինայի կողմից, արձանագրեց, որ ԽՍՀՄ-ը՝ որպես **միջազգային իրավունքի սուբյեկտ և քաղաքական իրողություն, դադարում է գոյություն ունենալ:** Համաձայնագիրը հռչակեց Անկախ Պետությունների Համագործակցության՝ որպես նախկին խորհրդային հանրապետությունների համագործակցությունը համակարգող միջազգային նոր ինստիտուցիայի հիմնումը /ԱՊՀ/:

ԽՍՀՄ փլուզման հաջորդ փուլը 1991 թ. դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում ստորագրված Հռչակագիրն էր, որտեղ ձևակերպվեցին ԱՊՀ նպատակները և սկզբունքները: Հռչակագիրը հաստատեց Բելովեժյան համաձայնագիրը՝ ամրագրելով, որ ԱՊՀ ստեղծմամբ դադարում է ԽՍՀՄ-ի գոյությունը:

1991 թ. դեկտեմբերի 25-ին Մ. Գորբաչովը վայր դրեց ԽՍՀՄ Նախագահի լիազորությունները:

1991 թ. դեկտեմբերի 26-ին ընդունվեց Խորհրդային Միության՝ որպես պետության գոյության դադարման վերաբերյալ հռչակագիրը: Դրանով վերջնականապես իրավաբանորեն ավարտվեց այդ միութենական պետության գոյությունը, և սկսվեց նախկին խորհրդային հանրապետությունների անկախության իրավական և գործնական հիմքերի ձևավորման փուլը:

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը

ԽՍՀՄ փլուզումը, ինչը, անշուշտ, XX դարի խոշորագույն աշխարհաքաղաքական իրադարձություններից է, ի թիվս այլնի, հնարավորություն տվեց նախկին խորհրդային հանրապետությունների ազգաբնակչությանը, այդ թվում նաև՝ հայ ժողովրդին, իրականացնել անկախ պետականությունը կերտելու իրենց վաղեմի երազանքը:

Որքան գրավիչ և ոգևորող էր անկախ պետություն ունենալու գաղափարը, այդքան դժվար և խութերով լի էր դրա գործնական իրականացման ուղին: Ասվածի համատեքստում կարելի է վստահաբար պնդել, որ փլուզված ԽՍՀՄ-ի ավերակներից համեմատաբար նվազ կորուստներով դուրս գալու և ինքնիշխան Հայաստանի Հանրապետության կերտման հարցում հսկայական դրական դերակատարություն

ունեցան ինչպես մեր ժողովրդի կամքը և հավաքական միտքը, երկրի քաղաքական ղեկավարության խելամտությունը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության առաջին Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի անձնական դիրքորոշումն այս հարցում:

Խորհրդային Հայաստանն այն քիչ միութենական հանրապետություններից էր, որն իր անկախացման գործընթացն իրականացրեց՝ պահպանելով անհրաժեշտ իրավական պահանջները, այդ թվում՝ անկախության գործընթացի իրականացմանը ներկայացվող Խորհրդային Միության օրենսդրական պահանջները:

Նախ, 1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհուրդն իր առաջին նստաշրջանում ընդունեց «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը», որտեղ արձանագրվեցին երկրի պետաիրավական համակարգի բարեփոխման, տնտեսական կյանքի կազմակերպման, արտաքին քաղաքական հարաբերությունների կառուցման և ինքնիշխան պետության կերտման համար անհրաժեշտ այլ իրավադրույթներ:

Հռչակագրի 2-րդ կետը արձանագրեց, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը և օրենքները:

Այնուհետև՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին, Հայաստանում անցկացվեց անկախության հանրաքվե՝ հետևյալ հարցադրմամբ. «Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն, ԽՍՀՄ-ի կազմից դուրս»: Հանրաքվեին մասնակցեց ընտրողների 99,5 %-ը, որոնցից անկախության հռչակման օգտին քվեարկեց 95% -ը¹:

Հանրաքվեի արդյունքում 1991 թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Գերագույն Խորհուրդը, հավատարիմ մնալով Հայաստանի անկախության մասին Հռչակագրին և հենվելով մարդու իրավունքների և ազգերի ազատ ինքնորոշման միջազգային իրավունքի **jus cogens** սկզբունքների վրա, հաստատեց Հանրապետության ելքը ԽՍՀՄ-ի կազմից²:

¹ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի 30-ամյակը: Փաստաթղթերի ժողովածու: Անտարես, Երևան 2020, էջ՝ 89:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագրի 30-ամյակը: Փաստաթղթերի ժողովածու: Երևան 2020, էջ՝ 90:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի ղեկավարությունը բավականին հեռատես գտնվեց այն առումով, որ երկրի անկախացման օրենսդրական ողջ գործընթացը իրականացրեց ոչ միայն ԽՍՀՄ օրենքների, այլ նաև միջազգային իրավունքի հիման վրա: Կարծում ենք, սա կարևոր հանգամանք էր այն առումով, որ եթե մինչև ԽՍՀՄ փլուզման գործընթացի սկիզբը միութենական հանրապետությունների հարաբերությունները ինչպես միմյանց, այնպես էլ ԽՍՀՄ դաշնային մարմինների հետ կարգավորվում էին բացառապես Խորհրդային Միության Սահմանադրությամբ և օրենքներով, ապա 1991 թ. ստորագրված Բելովեժյան համաձայնագիրը և Ալմա-Աթայում ստորագրված Հռչակագիրը, ըստ էության, միութենական հանրապետությունների հարաբերությունները ներպետականից վերափոխեցին միջազգային իրավական բնույթի:

Հավանաբար նշված հանգամանքը հաշվի առնելով՝ 1991 թվականի օգոստոսի 5-ին ՀՀ Գերագույն Խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նամակ ուղարկեց ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահ Անատոլի Լուկյանովին՝ հետևյալ բովանդակությամբ. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1991 թ. մարտի 1-ի որոշման համաձայն, 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում հանրաքվե է անցկացվելու՝ ԽՍՀՄ կազմից հանրապետության դուրս գալու հարցով: Հանրաքվեի անցկացման ամսաթիվը, ինչպես նաև մյուս կազմակերպչական հարցերը խստորեն սահմանված են ԽՍՀՄ օրենսդրության պահանջների հիման վրա: Խնդրում ենք Ձեզ, ԽՍՀՄ օրենսդրության համապատասխան լուծել Հայաստանի տարածքում, որպես դիտորդներ՝ ԽՍՀ Միության, միութենական և ինքնավար հանրապետությունների, ինքնավար կազմավորումների լիազոր ներկայացուցիչների ներկայության հարցը, ինչպես նաև հրավիրել Միավորված Ազգերի Կազմակերպության ներկայացուցիչների /ընդգծումն իմն է-վ.Հ/1:

Անկախության հռչակագիրը պատմական նշանակություն ունեցող իրավաքաղաքական փաստաթուղթ է, որը կանխորոշեց Հայաստանի

¹ Письмо Председателя ВС Республики Армения Председателю ВС СССР от 05.08.1991 <https://ru.wikisource.org/wiki/> (վերցված է՝ 05.04.2017թ.)

Հանրապետության պետաիրավական համակարգի ռազմավարական զարգացման ուղղությունները:

Ինչպես ցանկացած նորանկախ պետություն, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը, ներպետական կյանքի կազմակերպմանը զուգահեռ, ձեռնամուխ եղավ իր միջազգային իրավական հարաբերությունների կառուցմանը: Հարկ է նշել, որ միջազգային հարաբերություններում վստահելի գործընկերոջ համբավ ձեռք բերելու համար, ի թիվս այլնի, էական նախապայման է պետության ներսում կայուն ժողովրդավարական հասարակություն ունենալու հանգամանքը: Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ նշված փաստաթղթի նախաբանում տեղ գտած դրույթը, համաձայն որի՝ հայ ժողովուրդը, հռչակելով անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը, խնդիր է դնում ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակարգ:

Պետությունների միջազգային ընտանիքի լիարժեք անդամ դառնալու համար Հռչակագիրը պարունակում է հետևյալ անհրաժեշտ նախադրյալները: Նախ, նախաբանում ընդգծվում է, որ Հռչակագրի ընդունման հիմք են հանդիսանում՝ «ժողովրդի միասնական կամքը», «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքները» և «միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերը»: Այնուհետև նշվում է, որ նախկին ՀԽՍՀ-ն, որը վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, օժտված է միջազգային իրավունքի սուբյեկտի համար անհրաժեշտ ինքնիշխանությամբ:

Դրա տարրերը Հռչակագրում ամրագրվեցին հետևյալ ձևակերպումներով.

- * «Հայաստանն ինքնիշխան պետություն է, և այստեղ գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները» (կետ 2),
- * «Հայաստանի ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին» (կետ 3),
- * «Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, վարում է անկախ արտաքին քաղաքականություն» (կետ 6):

Որպես ՀՀ արտաքին քաղաքականության անկյունաքար՝ Հռչակագիրը սահմանեց, որ «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականին Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործին» (կետ 11):

Ինչպես նշվում է Հռչակագրի 12-րդ կետում՝ սույն փաստաթուղթը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող Սահմանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

Եթե անկախության հռչակումից անմիջապես հետո Հայաստանի Հանրապետությունն իր ներպետական կյանքի ինստիտուցիոնալիզացման համար կարող էր առանձին դեպքերում հենվել Խորհրդային Հայաստանի օրենսդրության վրա, ապա իր միջազգային իրավական հարաբերությունները նա տիպված էր սկսել «մաքուր թղթից»:

1990 թ. մայիսի 20-ին ընտրված Գերագույն խորհուրդն իր գործունեության ընթացքում վավերացրեց թվով 148 միջազգային պայմանագիր: Հարկ է նշել, որ դրանց թվում էին մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ այնպիսի միջազգային իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են՝ 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը¹, Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին 1948 թ. կոնվենցիան², Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագիրը³, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին կից կամընտիր արձանագրությունը⁴, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագիրը⁵ և մարդու իրա-

¹ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. հունիսի 23-ին:

² ՀՀ Գերագույն խորհրդի որոշում 1991թ. դեկտեմբերի 10, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. հունիսի 23-ին:

³ ՀՀ Գերագույն խորհրդի որոշում 1991թ. ապրիլի 1, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ին:

⁴ ՀՀ Գերագույն խորհրդի որոշում 1991թ. ապրիլի 1, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. սեպտեմբերի 23-ին:

⁵ ՀՀ Գերագույն խորհրդի որոշում 1993թ. հունիսի 9, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993թ. դեկտեմբերի 13-ին:

վունքների վերաբերյալ այլ կարևորագույն միջազգային իրավական փաստաթղթեր:

Հարկ է նկատել, որ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերին միանալն ինքնանպատակ չէր: Նախ, այն անհրաժեշտ էր միջազգային հանրությանը վստահեցնելու, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը ձգտում է իր պետական կյանքի կազմակերպումը, ի թիվս այլնի, կառուցել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ միջազգային չափորոշիչներին համապատասխան, և երկրորդ՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերին միանալը նաև անհրաժեշտ էր՝ դրանցում տեղ գտած առավել առաջադիմական իրավակարգավորումները ՀՀ ազգային օրենսդրության մեջ իմպլեմենտացիայի ենթարկելու համար:

Անշուշտ, պետությունների միջազգային ընտանիքին անդամակցելու գլխավոր նախադրյալը ՄԱԿ-ին անդամակցելն է: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտավ 1992 թ. մարտի 2-ին: Այս կազմակերպությանը անդամակցելը կարևոր էր այն առումով, որ հնարավորություն ստեղծվեց, ի թիվս այլնի, մասնակցել դրանում ընթացող իրավաքաղաքական գործընթացներին, ինչպես նաև օգտվել ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված՝ պետությունների անվտանգությունը երաշխավորող միջազգային կառուցակարգերի պաշտպանությունից:

Հայաստանի Հանրապետությունն անկախություն ձեռք բերելուց հետո անդամակցեց նաև բազմաթիվ այլ միջազգային ունիվերսալ, ինչպես նաև տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների:

Կարծում ենք, մեր Հանրապետությունում ժողովրդավարության և մարդու իրավունքների երաշխավորման, ինչպես նաև պետական մարմինների գործունեության բարեփոխման համար էական նշանակություն ունեցավ հատկապես Եվրոպայի խորհրդին անդամակցելու և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորությունը ճանաչելու հանգամանքը:

2001 թ. հունվարի 25-ին անդամակցելով Եվրոպայի խորհրդին՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց արմատապես

վերանայել իր ազգային օրենսդրությունը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ և այն ամբողջովին համապատասխանեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և կից արձանագրությունների իրավապահանջներին: Նշված փաստաթղթերում ամրագրված այնպիսի պահանջներ, ինչպիսիք են, օրինակ՝ մահապատժի վերացումը կամ այլընտրանքային զինվորական ծառայության նախատեսումը, մեր հասարակության համար գուցե այնքան էլ ընդունելի չէին, սակայն, ընդհանուր առմամբ, Եվրոպայի խորհրդին անդամակցելը հնարավորություն ընձեռեց էապես բարեփոխել մարդու իրավունքների վերաբերյալ ազգային օրենսդրությունը: Ավելին, քանի որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և կից արձանագրությունները ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են հանդիսանում, ուստի Կոնվենցիայի համակարգում գործող Մարդու իրավունքների եվրոպական դատարանին դիմելու իրավունքը կարևոր երաշխիք էր, որ ՀՀ դատարաններն այսուհետ պարտավոր են արդարադատություն իրականացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ եվրոպական չափորոշիչներին համահունչ:

Պնդել, որ անկախության ձեռքբերումից հետո պետականաշինության ուղղությամբ աշխատանքները մեր հանրապետությունում ընթացել են հարթ և արդյունավետ՝ լուրջ չէ, սակայն սեփական կյանքը, իր ճակատագիրն ինքնուրույն, առանց արտաքին, ոչ իրավաչափ միջամտությունների որոշելու իրավունքը ոչ միայն առանձին անհատի, այլ նաև յուրաքանչյուր ազգի և ժողովրդի իրավաբանական իրավունքն է, իրավունք, որի իրացումը կարող է երաշխավորվել միայն պետությունների միջազգային ընտանիքում ինտեգրվելու դեպքում:

Ինքնիշխանության կարևոր տարրերից է արտաքին քաղաքականության ինքնուրույն իրականացումը: ՄԱԿ-ի կանոնադրությունը պարունակում է բավարար երաշխիքներ այս հարցում: Սակայն ինչպես ցանկացած պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական կյանքի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների ապահովման, ինչպես նաև արտաքին վտանգների չեզոքացման համար անհրաժեշտ է իրականացնել նաև խելամիտ ներպետական քաղաքականություն:

Ինչ խոսք, պետական ինքնիշխանությունը՝ որպես պետության իրավական որակ, կախվածության մեջ չի գտնվում նրա միջազգային պայմանագրային պարտավորությունների բարեխիղճ կամ ոչ բարեխիղճ կատարումից, նրա ազգային օրենսդրությունից, ինչպես նաև նրա ներպետական քաղաքական ռեժիմից¹, սակայն, ինչպես վկայում է միջազգային պրակտիկան, պետությունների միջազգային ընտանիքը բավականին անբարյացակամ է վերաբերվում այն երկրներին, որոնց նկատմամբ նաև պատժամիջոցներ է կիրառում, եթե դրանք, չարաշահելով ինքնիշխանության հանգամանքը, իրենց պետության ներսում ոտնահարում են մարդու իրավունքները կամ կոպտորեն խախտում իրենց միջազգային իրավական պարտավորություններն այլ պետությունների նկատմամբ:

Ամփոփելով՝ պարտավոր ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության հռչակմամբ վերջապես իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը, այն է՝ ունենալ իր սեփական պետությունը, որը, որպես պետությունների միջազգային ընտանիքի լիիրավ անդամ, ինքնիշխան է և միանգամայն ինքնուրույն է որոշում իր ներպետական կյանքին և արտաքին հարաբերություններին վերաբերող բոլոր կենսական հարցերը:

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, 1991-1996 թթ.

ՀՀ ՍԴ դատավոր, 1996-2018 թթ.

ՀՀ ՍԴ փոխնախագահ, 1996-2005 թթ.

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

¹ Стів А.А. Моисеев. Суверенитет государства в международном праве. Учебное пособие. М. Восток Запад. С. 25:

ԲԱԶՄԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ժառանգված իրականությունը

Խորհրդային Միությունը կուսակցապետություն էր: Սահմանադրության 6-րդ հոդվածով ամրագրում էր երկրում գործող միակ՝ Կոմունիստական կուսակցության կարգավիճակը. «Սովետական հասարակության ղեկավար և ուղղություն տվող ուժը, նրա քաղաքական սիստեմի, բոլոր պետական ու հասարակական կազմակերպությունների միջուկը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն է: ՍՄԿԿ-ն գոյություն ունի ժողովրդի համար և ծառայում է ժողովրդին: Զինված մարքս-լենինյան ուսմունքով՝ Կոմունիստական կուսակցությունը սահմանում է հասարակության զարգացման գլխավոր հեռանկարը, ՍՍՀՄ ներքին և արտաքին քաղաքական գիծը, ղեկավարում է սովետական ժողովրդի մեծ ստեղծարար գործունեությունը, գիտականորեն հիմնավորված բնույթ է տալիս կոմունիզմի հաղթանակի համար նրա պայքարին»¹:

Սա նրա համար ոչ միայն իշխանական մենաշնորհ էր, այլև շատ ավելին. սրանով Կոմկուսը դրվում էր օրենքից վեր: Եւ այդպես էլ կար գործնականում. երկրում վերից վար գործում էր իշխանության զուգահեռ երկու համակարգ. մեկը՝ իրական՝ ի դեմս կոմունիստական կուսակցական կազմակերպության կառույցների, և երկրորդը՝ բուտաֆորիկ՝ ի դեմս իշխանության սահմանադրական մարմինների՝ Խորհուրդների: Վերջիններս, չնայած ամբողջությամբ ձևավորվում էին նույն կուսակցության վերահսկողությամբ և հենց իր անդամներից, սակայն գործնականում զրկված էին ինքնուրույն գործելու և անգամ ամենափոքր հարցերում որոշումներ կայացնելու որևէ հնարավորությունից: Այսինքն՝ ամբողջ իշխանությունը ոչ թե Կոմկուսին էր ընդհանրապես, այլ նրա ապարատին:

Որևէ այլ կուսակցության գոյության իրավունքի մասին, բնականաբար, խոսք լինել չէր կարող: Կոմունիստականից բացի՝ որևէ խոսք լինել չէր կարող նաև այլ մի գաղափարախոսության մասին: Որևէ մեկին

¹ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրություն (հիմնական օրենք), Երևան, 1989, էջ 7:

տրվող աշխատանքային կամ այլ բնութագրի (շատ տարածված մի փաստաթուղթ) մեջ պարտադիր տող կար մարդու քաղաքական նկարագրի մասին. եթե այդ փաստաթղթում չկար «քաղաքականապես կայուն է» արձանագրումը, նա դրանով ոչ մի տեղ գնալ չէր կարող: Որևէ մեկի համար ասվող «քաղաքականությամբ է զբաղվում» միտքը ծանրագույն մեղադրանք էր և կարող էր նրա համար քրեական հետապնդման ու պատժի հիմք հանդիսանալ:

Խորհրդային ամբողջատիրության հիմնասյուն հանդիսացող միակուսակցական համակարգն անխաթար պահելու, կոմունիստական միակ գաղափարախոսության դեմ այլակարծության ամեն մի առաջացում կանխելու համար ստեղծված էին որոշակի մեխանիզմներ: Իշխանության համակարգում, վերևից ներքև, ամենածանրակշիռ ու հզոր օղակները համարվում էին գաղափարախոսական բաժինները: Կենտրոնական, հանրապետական, ավտոնոմ կազմավորումների առաջին դեմքերից հետո իշխանական սանդղակում հաջորդը գաղափարախոսության ոլորտի պատասխանատու պաշտոնյան էր՝ երկրորդ քարտուղարը: Գաղափարախոսական ոլորտը մանրակրկիտ մշակված հսկայածավալ մի համակարգ էր, առաջնայինը և, թերևս, ամենածախսատարը ռազմականից հետո: Սրանք էին վերահսկում ուսումնական, գրականության, մշակույթի և այլ բնագավառները, զանգվածային լրատվության բոլոր միջոցները: Իրականացվում էր համընդհանուր գրաքննություն: Պետության ամենահզոր կառույցը՝ Պետական անվտանգության կոմիտեն (ԿԳԲ-ՊԱԿ), կուսակցական ենթակայություն ուներ, և հիմնական գործառույթը գաղափարական անվտանգության ապահովման խնդիրն էր, երկրի ներսում այլախոհների հայտնաբերումը:

Պետական գաղափարախոսության, միակուսակցական համակարգի պահպանման խնդիրն էր՝ նվազագույնի հասցնել ազգային առանձնահատկությունները, ստեղծել նոր՝ «սովետական ժողովուրդ» («հոմո սովիետիկոս»): «Կոմունիզմ կառուցող» մարդու դաստիարակությունը սկսվում էր նախադպրոցական հիմնարկներից և շարունակվում ուսումնառության ողջ ընթացքում: Կրթական հաստատություններն իրենց ներքին կյանքով ավելի շատ զորանոցների էին նման: Դպրոց մուտք գործող երեխան առաջին օրից, աշակերտ լինելուց

առաջ, պարտադրվում էր դառնալ նաև կազմակերպության անդամ, հաջորդաբար՝ հոկտեմբերիկ, պիոներ, կոմերիտական: Միակ՝ կոմունիստական գաղափարախոսությունը պարտադրելու ելակետով էին կազմված բոլոր ուսումնական ծրագրերը, դասագրքերը, ձեռնարկները՝ որքանով որ դա հնարավոր էր անել: Նույնը շարունակվում էր հետագա կրթությունն ապահովող ուսումնական հաստատություններում, «քաղպարապնունքների» տեսքով՝ նաև աշխատանքային հիմնարկներում: Այդ նպատակին էին ծառայում գրականությունը, արվեստը, կինոն, ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը:

Կոմունիստական կուսակցության կազմակերպական կառույցը ոչ միայն տարածքային, այլ նաև արտադրական սկզբունքի վրա էր հիմնված: Կոմկուսը կազմակերպություններ ուներ անխտիր բոլոր բնակավայրերում, հիմնարկներում, ձեռնարկություններում, պետական մարմիններում, զորամասերում և այլն: Նույն տեղերում զուգահեռ գործում էին նաև նույն կուսակցության երիտասարդական կառույցները՝ կոմերիտմիությունը: Սրանց հիմնական գործը նույնպես կոմունիստական գաղափարախոսության քարոզչությունն էր, այլապարծության դեմ պայքարը, «կուսակցության գծի» ապահովումը:

Այս ամենը իրական ժողովրդավարական քաղաքական կյանքը բացառող մի մեխանիզմ էր: Եւ այդպիսին էլ կլիներ, անկախ այն բանից, թե այդ մեխանիզմով ինչ գաղափարախոսություն էր քարոզվում կամ սպասարկվում:

Բնական է, որ այս համակարգը առաջին ուղեփակոցը պետք է լիներ ժողովրդավարական որևէ սկզբունքի ներդրման համար: Բնական է, որ դրա վերացումը, կազմաքանդումը, որպես խնդիր, պետք է մտներ ԽՍՀՄ-ում 1988-ից ծայր առած ժողովրդավարական շարժումների օրակարգ: Բնական է, որ ետկոմունիստական նորանկախ հանրապետություններում առաջնային ու ամենաարմատական բարեփոխումներից մեկը պետք է լիներ այս ասպարեզը վերափոխելը, բազմակուսակցական համակարգի ներդրումը:

Իսկ ԽՍՀՄ-ում առաջին համաժողովրդական ժողովրդավարական շարժումը 1988-ի փետրվարից ծավալվեց Հայաստանում, և այն առաջին կես տարում միայնակ էր ողջ Միության մեջ:

Խնդրի արձանագրումը ՀՀԾ Ծրագրում, դրա լուծմանն ուղղված ջանքերը Շարժման տարիներին

Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման սկզբից կես տարի անց՝ 1988 թ. օգոստոսի 19-ին, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն հրապարակեց Շարժման կառույցի՝ Հայոց Համազգային Շարժման (ՀՀԾ) Ծրագրի նախագիծը: Այդ ժամանակ դեռևս որևէ կերպ չէր նշմարվում իշխանության գալու, իշխանափոխության խնդիր, և հիմնական՝ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծումը հետապնդվում էր ԽՍՀՄ գոյության պայմաններում ու նրա իրավական դաշտում: Հրապարակված փաստաթուղթը Լեռնային Ղարաբաղի ՄԻԱԿ քաղաքական խնդիրը դարձնում էր ՀԻՄՆԱԿԱՆ՝ այն խարսխելով հանրահայտ ժողովրդավարական խնդիրների մի համակարգի վրա: Այստեղ արդեն, հիշյալ ժողովրդավարական խնդիրների մեջ, բնականաբար, դրված էր նաև գոյություն ունեցող միակուսակցական համակարգի ժխտումն ու, ըստ էության, բազմակուսակցական համակարգ ստեղծելու նպատակը, ինչն արտահայտված էր հետևյալ դրույթում.

«Պետական կազմավորման գերագույն իշխանությունը ժողովրդի կամքն է՝ արտահայտված համաժողովրդական հանրաքվեներով կամ ազատ ընտրություններով ստեղծված ներկայացուցչական խորհրդարանի վճիռներով»¹:

Այս դրույթի իրականացումն աներևակայելի էր միակուսակցական և, առավել ևս՝ այդ կուսակցությանը սահմանադրությամբ վերապահված «դեկավար դերի» պայմաններում:

Հաջորդ մեկ տարվա ընթացքում շատ բան փոխվեց: ԽՍՀՄ և Հայաստանի քաղաքական կյանքում կատարված որակական փոփոխությունները հնարավորություն էին տվել, թելադրել էին առաջին պլան բերել անկախության խնդիրը՝ որպես բոլոր, նաև առաջնային համարվող Ղարաբաղյան հարցի լուծման միակ ուղի: ՀՀԾ Ծրագրի նախագիծը լրամշակվեց և նրա առաջին համագումարում (1989 թ. նոյեմբերի 4-6) ընդունված տեքստում խնդրո առարկա հարցը ստացավ ավելի հստակ ձևակերպում.

¹ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Բաբկեն Արարքցյան, Աշոտ Սարգսյան, Գոհար Խաչատրյան, Երևան, 2016, էջ 14:

«Պետության կառավարումը պետք է իրագործվի՝ առաջնորդվելով սոցիալական արդարության, խոսքի, մամուլի, խղճի ազատության, սեփականության ձևերի բազմազանության, **բազմակուսակցականության, որևէ կուսակցության ղեկավար դերի բացառման, հասարակական և քաղաքական կազմակերպությունների ազատ գործունեության վրա խարսխված ժողովրդավարության սկզբունքներով**»:

Խնդիրը վերջին հաշվով հանգում էր Սահմանադրության վերոհիշյալ 6-րդ հոդվածի չեղարկման անհրաժեշտությանը: Գործնականում այս ուղղությամբ ինչ-որ բնագծեր արդեն նվաճվել էին: 1988-ի աշնանը արդեն Հայաստանի Գերագույն խորհրդի մասնական ընտրություններում ՀՀՇ-ին հաջողվել էր այլընտրանքային թեկնածուներ առաջադրել, նաև հաղթանակի հասնել: Եթե նույն բանը կատարվեր նաև ԳԽ-ի ընդհանուր ընտրություններում, և ձևավորվեր ոչ կոմունիստական խորհրդարան, կստացվեր անհեթեթ մի վիճակ: Սահմանադրությամբ իշխանության գերագույն մամինը՝ կազմված բոլորովին այլ քաղաքական ուժերից, նույն Սահմանադրության մեկ այլ հոդվածի թելադրանքով պետք է առաջնորդվի Կոմկուսի մարմիններում կայացված որոշումներով:

Խնդիրը, բնականաբար, միութենական էր՝ վերաբերում էր նաև մյուս հանրապետություններին, և ժողովրդավարական ուժերը ամենուր պայքարում էին նույն նպատակին հասնելու՝ Սահմանադրության 6-րդ հոդվածը չեղարկելու համար²:

Որպես ՀՀՇ-ի օրենսդրական նախաձեռնություն՝ խնդիրը առաջ քաշվեց Հայաստանի Գերագույն խորհրդում 1989 թ. դեկտեմբերի 4-ին: ՀԽՍՀ ԳԽ նստաշրջանին ներկայացվեց «Հռչակագիր՝ Հայաստանում արմատական դեմոկրատական վերափոխումներ անցկացնելու մասին» վերնագրով փաստաթուղթը: Դրանով նստաշրջանի քննարկմանը և հաստատմանն առաջարկվող յոթ միջոցառումներից մեկը այսպիսին էր.

¹ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Հայաստանի անկախության վերականգնումը, 1990-1991, Երևան, Անտարես, 2020, էջ 484, (փաստաթուղթն ամբողջությամբ՝ նույն տեղում, էջ 483-491):

² Ռուսաստանում այդ պայքարի առաջամարտիկներից էր հայտնի իրավապաշտպան Անդրեյ Սախարովը (տե՛ս նույն տեղում, էջ 69-70, նաև **Сахаров А. Д.**, Выступление на съезде народных депутатов 09. июня 1989г. <https://www.youtube.com/watch?v=LGnqZ8HPv0g>:

«Հանրապետության Սահմանադրությունից հանվում է Կոմունիստական կուսակցության ղեկավար դերին վերաբերող 6-րդ հոդվածը: Հայաստանում թույլատրվում է տարբեր հասարակական կազմակերպությունների, այդ թվում քաղաքական կուսակցությունների ազատ գործունեությունը»¹:

Կոմունիստական Գերագույն խորհուրդը, իհարկե, մերժեց ընդունել նման մի փաստաթուղթ, դրանում արձանագրված խնդիրներն իրականացան հաջորդ ամիսներին՝ կամ Շարժման ճնշմամբ ու իրավիճակի թելադրանքով, կամ ամռանը՝ արդեն կոմունիստականին փոխարինած նոր Գերագույն խորհրդի կողմից:

1990 թ. մայիսի 20-ին նշանակված ՀԽՍՀ ԳԽ ընտրություններում քաղաքական հին համակարգի ապամոնտաժման և ժողովրդավարության հաստատման համար կարևորագույն այս խնդիրը, բնականաբար, առաջին տեղերից մեկում էր Հայոց Համազգային Շարժման նախընտրական ծրագրում: Այն, «Հասարակական կյանքի ապակուսակցականացում» վերնագրով, ձևակերպված էր այսպես.

«Իրավահավասար պայմաններ ապահովել բոլոր կուսակցությունների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության համար,

օրենքով արգելել կուսակցական պատկանելությունը վարչական և դատական մարմիններում պաշտոնները համատեղելու հետ,

կառավարության և իշխանության մարմիններում, հիմնարկ ձեռնարկություններում, ուսումնական հաստատություններում արգելել քաղաքական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը,

ՀԿԿ-ից առգրավել նրա սեփականության այն մասը, որը ձեռք է բերվել ոչ թե կուսակցական, այլ պետական կամ հասարակական միջոցների հաշվին»²:

¹ Ամբողջական փաստաթուղթը տես **Տեր-Պետրոսյան Լ.**, Ընտրանի, Երևան, 2006, էջ 65-67:

² «Հայք», 13.05.1990:

Քաղաքական բարեփոխման իրականացումը ՀՀԾ իշխանության առաջին տարում

1990 թ. մայիս-հունիս ամիսներին խորհրդարանական հերթական ընտրություններում հաղթեց Հայոց Համագգային Շարժումը: Օգոստոսի 4-ին պետության ղեկավարի՝ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնում ընտրվեց ՀՀԾ-ի առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը: Անմիջապես հետո խորհրդարանը ձեռնամուխ եղավ հիմնական փաստաթղթի՝ Հայաստանի անկախության մասին հռչակագրի ստեղծմանը: Հիմնարար այդ փաստաթուղթը, որ միաձայնությամբ ընդունվեց օգոստոսի 23-ին, բնականաբար, ամփոփում էր ՀՀԾ հիմնական ծրագրային դրույթները: Փաստաթղթի 9-րդ կետը հռչակում էր.

«Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում, բազմակուսակցություն, կուսակցությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում»¹:

Ընդգծված այս վերջին դրույթն էր, ահա, որի հիման վրա ընդունվելիք օրենքները և որոշումները պետք է արմատապես վերափոխեին Հայաստանի քաղաքական կյանքը՝ այն դնելով ժողովրդավարական ուղու վրա:

Բազմակուսակցականությունը Հայաստանում կար արդեն 1988-1990 թվականներին: Ճիշտ է, խորհրդային օրենքներով դրանք պաշտոնապես գրանցվում էին (եթե գրանցում էին) որպես հասարակական կազմակերպություններ, սակայն, ըստ էության, գործում էին որպես քաղաքական ուժեր: Այդպիսին էր Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման կառույցը՝ ՀՀԾ-ն, որ ստեղծվեց 1988-ի ամռանը, և երկար պայքարից հետո հաջողվեց գրանցվել (որպես հասարակական կազմակերպություն) միայն 1989-ի նոյեմբերի 1-ին, իր առաջին համագումարի նախօրյակին: Կային քաղաքական կյանքում էական դերակատարում չունեցող այլ մանր կազմավորումներ: Քաղաքական գործունեությամբ զբաղվելու հավակնությամբ բազմաթիվ մանր կազմակերպություններ էլ ստեղծվեցին հատկապես

¹ Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, էջ 40:

1989 թ. ամռանից սկսած («Ղարաբաղ» կոմիտեի ազատվելուց հետո, երբ արդեն դա մեծ ռիսկի հետ չէր կապված): 1990 թ. գարնանը դրանց թիվը անվանապես 5 տասնյակի կարգի էր: Սակայն նույն թվականի մայիսի 20-ին ԳԽ ընտրություններին որպես հիմնական միավորներ մասնակցեցին ՀՀՇ-ն և Կոմկուսը:

Խորհրդային որևէ օրենք չկար, որը կարգավորեր քաղաքական կազմակերպությունների՝ կուսակցությունների գործունեությունը: Չկար այն պարզ պատճառով, որ ԽՍՀՄ-ում միայն մի կուսակցություն գոյություն ուներ (այդ բառը նույնիսկ հոգնակի թվով չէր գործածվում և լիակատար նույնանում էր «կոմունիստական»-ին) որն էլ, ինչպես ասվեց, սահմանադրությամբ օրենքից վեր էր դրված: Այսինքն՝ երկրի քաղաքական կյանքի կարևորագույն այս բնագավառը պետք էր օրենսդրորեն կարգավորել զրոյական կետից:

Հայաստանի Գերագույն խորհուրդը, ելնելով Անկախության հռչակագրի համապատասխան դրույթից, 1990 թ. նոյեմբերի 5-ին ընդունած իր որոշմամբ ապաքաղաքականացրեց Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, պետական ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, զինվորական ստորաբաժանումները՝ դրանցում դադարեցնելով կուսակցական և հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը¹:

Բազմակուսակցական համակարգի իրավական-օրենսդրական հիմնական կարգավորումը կատարվեց 1991 թ. փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքով²:

Օրենքի 1-ին հոդվածը սահմանում էր «հասարակական-քաղաքական կազմակերպություն» հասկացությունը.

«Հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամավոր հիմունքներով միավորված՝ Հայաստանի Հանրապետության

¹ Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1990, 21, հոդվ. 405:

² Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 4, հոդվ. 73: Օրենսդիրն այդ ժամանակ որոշ նկատառումներով այսպես՝ «հասարակական-քաղաքական կազմակերպություն» անվամբ նպատակահարմար համարեց կոչել կուսակցությունները: Պատճառներից մեկը խորհրդային իրականության վերջին տասնամյակներում և հատկապես Շարժման տարիներին «կուսակցություն» բառի նկատմամբ հասարակության մեջ ձևավորված խիստ բացասական վերաբերմունքն էր: Այս շարադրանքում մենք կօգտագործենք «կուսակցություն» բառը:

ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորում է, ունի ծրագիր և կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև՝ հանրապետության հասարակական-քաղաքական, մշակութային կյանքին»:

Այսինքն՝ կուսակցություններն էին դառնում ընտրությունների միջոցով պետական իշխանության մարմինների կազմավորման հիմնական միջոցը:

Օրենքով ամրապնդվեց ԳԽ վերոհիշյալ որոշմամբ ամրագրված այն դրույթը, ըստ որի՝ կուսակցություններին արգելվում էր կառույցներ հիմնել պետական մարմիններում, ինչպես նաև հիմնարկներում, ձեռնարկություններում, կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում: Այսինքն՝ այս օրենքով ամրագրվեց, որ՝

ա) կուսակցություններն իրենց կառույցները կարող էին կազմավորել միայն տարածքային սկզբունքով,

բ) Հայաստանում գործող կուսակցության անդամ կարող էին լինել միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Օրենքը երաշխավորում էր կուսակցությունների իրավահավասարությունը և հավասար պայմաններ սահմանում դրանց կազմավորման, գործունեության և զարգացման համար: Սահմանվում էին նվազագույն անհրաժեշտ և հանրահայտ այն պահանջներն ու պայմանները, որոնց առկայության դեպքում միայն կարող էին կայանալ ու գործել քաղաքական կազմակերպությունները, ապահովվել ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ նորմալ քաղաքական պայքարի հնարավորությունը:

Օրենքի ուժ ստացավ պետական մարմինների ապաքաղաքականացման այն կարևորագույն դրույթը, որը վաղուց արդեն հետապնդում էր ՀՀԾ-ն: Որևէ կուսակցության անդամ լինել չէին կարող արդարադատության, ներքին գործերի, պետական անվտանգության, դատախազության, մաքսային ծառայության, պետական արբիտրաժի, արդարադատության, զինված ուժերի համակարգերում աշխատողներն ու ծառայողները՝ այդ մարմիններում աշխատելու կամ ծառայության ժամանակահատվածում¹:

¹ Հայաստանի սահմանները պաշտպանող և Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպա-

Առանձին կետով սահմանավեց, որ՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպության ղեկավար մարմինը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում»: Այս պահանջը վերաբերում էր առաջին հերթին Կոմունիստական կուսակցությանը, որը ԽՄԿԿ մի մասնաճյուղն էր և ղեկավարվում էր Մոսկվայից: Բայց ոչ միայն. այն վերաբերում էր նաև Սփյուռքի կուսակցություններին, որոնց անուններով արդեն կազմակերպություններ էին ստեղծվում (հավաքագրվում) Հայաստանում:

Կուսակցություններին արգելում էր նաև.

- «ղեկավարվել Հայաստանի տարածքից դուրս գտնվող կազմակերպությունների, պետական մարմինների կողմից, մտնել այդ կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի մեջ,

- ձեռնարկել Հայաստանի Հանրապետության իշխանության պետական և քաղաքական կարգի բռնի փոփոխություն, քաղաքացիների ու կազմակերպությունների դեմ ուղղված բռնի գործողություններ, հանդես գալ նման կոչերով, համագործակցել բռնություն ձեռնարկող կազմակերպությունների հետ,

- հրահրել թշնամանք ազգային, ռասայական, կրոնական, սոցիալական խմբերի միջև,

- ֆինանսական և նյութական օգնություն ստանալ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող պետական մարմիններից, պետական հաստատություններից...

- հիմնել կազմակերպական կառուցվածքներ պետական մարմիններում, ինչպես նաև հիմնարկներում, ձեռնարկություններում, կազմակերպություններում, ուսումնական հաստատություններում,

- ունենալ ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնող օբյեկտներ՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի,

- զբաղվել օրենսդրությանը հակասող այլ գործունեությամբ»:

Ընձեռած հնարավորությունների և դրված արգելքների այս շրջանակը լիովի բավարար էր առողջ ու բնականոն քաղաքական կյանք

նությունն իրականացնող ջոկատների մեծագույն մասը կազմվել էր ՀՀԾ կառույցների կողմից: Հետևելով օրենքի այս պահանջին՝ այդ ջոկատների մարտիկները դադարեցրին իրենց անդամությունը ՀՀԾ-ին: Մինչդեռ որոշ կուսակցություններ, որոնք նույնպես գինված ջոկատներ ունեին, չարեցին նույնը: Սա է պատճառը, որ այդ շրջանի մամուլի նյութերում չի հանդիպում «ՀՀԾ- ջոկատներ» արտահայտությունը: Այլ կուսակցությունների անուններով նման ջոկատների հիշատակումներ կան:

և դրանում առողջ մրցակցության հավասար պայմաններ ունենալու ժողովրդավարության արմատավորման հիմքերը դնելու համար: Ավելին, դրանք պարտադիր էին նաև որևէ երկրի ինքնիշխանության և ընդհուպ՝ ազգային անվտանգության ապահովման նկատառումներով: Հասկանալի ու պարզ տրամաբանությամբ՝ այլ երկրներում ղեկավար մարմին ունեցող կամ դրանցից նյութական օժանդակություն ստանալով իշխանության եկած քաղաքական ուժը չէր կարող գործել անկախ ու ինքնուրույն, և իր ծրագրերն ու գործունեությունը պետք է համապատասխանեցներ ոչ թե երկրի, այլ նյութական օժանդակություն տրամադրողների թելադրանքներին ու պահանջներին: Իսկ այդ դեպքում խոսք լինել չէր կարող ո՛չ անկախ պետականության, ո՛չ ժողովրդավարության, ո՛չ էլ ինքնուրույն քաղաքականության մասին: Անկախության, իրական քաղաքական կյանքի ու ժողովրդավարության բավարար ավանդույթ ունեցող ամեն մի պետության համար ևս այս պահանջները ավելի քան սովորական էին, այնքան, որ դրանք պարզապես կարող էին նաև չարձանագրվել համապատասխան օրենքում: Հայաստանում այլ կերպ վարվել հնարավոր չէր:

Մոտ մեկ ամիս բուռն և երկարատև քննարկումներ ծավալվեցին օրենքի վերոհիշյալ դրույթների շուրջ: Դիմադրությունը մեծ էր Կոմկուսի կողմից, որը ղեկավարվում և ֆինանսավորվում էր Մոսկվայից, ու դրա հետ միասին, բնականաբար, ստանում էր նաև համապատասխան քաղաքական պատվեր: Կոմկուսը համարում էր, որ օրենքը, մասնավորապես՝ հիմնարկներում ու ձեռնարկություններում կուսակցական կազմակերպությունների արգելումը, ուղղված է իր դեմ: Սակայն այս մեղադրանքն անհիմն էր. դեռ 1988 թ. Շարժման առաջին շաբաթներին ստեղծված «Ղարաբաղ» ենթակոմիտեները, ապա դրանց հիման վրա ստեղծված ՀՀՇ սկզբնական կազմակերպությունները, ինքնաբերաբար, որպես հակակշիռ իշխանական կոմունիստականի, նույնպես արտադրական հիմքի վրա էին ստեղծվել, և կոմունիստական կազմակերպություններին զուգահեռ գործում էին բոլոր հիմնարկներում, կազմակերպություններում ու բնակավայրերում: Ավելին՝ եթե Կոմկուսի հիմնարկային սկզբնական կազմակերպություններն արագորեն հյուծվում էին, ապա ՀՀՇ-ի սկզբնական կազմակերպությունները, հատկապես՝ 1990 թ. ԳԽ ընտրություններում

նրա հաղթանակից հետո, արագորեն համալրվում և հզորանում էին: Այնպես որ՝ այդ որոշումը մի քանի անգամ ավելի մեծ «անհարմարություններ» էր ստեղծում ՀՀՇ-ի համար: Սակայն խնդիրը, որպես ժողովրդավարության հաստատման հիմնաքար, շատ ավելի կարևոր էր, քան որևէ կուսակցական շահ, և նոր իշխանությունն այն դրեց ու օրենքով լուծեց ըստ այդմ¹:

Ընդդիմացողը միայն Կոմկուսը չէր: Դրա դեմ պայքարում էին «ավանդական կուսակցությունները» և նրանց ազդեցության տակ գտնվող մի շարք պատգամավորներ՝ մատնանշելով «մեր ազգային առանձնահատկությունները»՝ Սփյուռքը և Սփյուռքում կուսակցություններ ունենալու հանգամանքը: Համարվում էր, որ դրանով խախտվում են սփյուռքահայության իրավունքները, արգելք է ստեղծվում սփյուռքահայ կուսակցությունների՝ Հայաստան «վերադարձի» համար: Վերջիններս ևս ձգտում էին, իրենց կենտրոններն ունենալով արտասահմանում, Հայաստանում գործել որպես «համահայկական» կուսակցության տարածքային մի կազմակերպություն, բայց՝ հայաստանյան կուսակցությունների հետ նույն կարգավիճակով: Այլ խոսքով՝ բանավեճի հիմքում նույն կեղծ քաղաքական պատկերացումներն էին, կեղծ-ազգայնականությունը, գլխիվայր շուռ տրված քաղաքական արժեքային համակարգը՝ ազգ և պետություն, հայ և Հայաստանի քաղաքացի հասկացությունների արհեստական հակադրմամբ, քաղաքական և պետական մտածողության բացակայությունը: Մինչդեռ այս օրենքի պահանջները անկախ պետականության, նրա անվտանգության, ինքնուրույն քաղաքական կյանքի, ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ պարզագույն, հանրահայտ և անհրաժեշտ նախապայմանների ու պահանջների արձանագրումն էին ընդամենը²:

¹ Գորբաչովն ապրիլի 23-ին հրամանագիր ստորագրեց, որով այս օրենքի դրույթները հայտարարվում էին ԽՍՀՄ օրենսդրությանը հակասող, ու կասեցվում էր նրանց գործողությունը (տե՛ս Տեղեկագիր ԽՍՀՄ ԳԽ-ի, 1991, 18, հոդվ. 530), սակայն Հայաստանի Հանրապետությունում այն շարունակեց գործել:

² Այս օրենքի դեմ հատկապես ակտիվ էր պայքարում Դաշնակցությունը: Եթե Ռամկավար և Ղուզանյան կուսակցությունները համակերպվեցին օրենքի հետ և աշխատեցին բավարարել նրա պահանջները, Դաշնակցությունը դրա հետ չհամակերպվեց: Նա շարունակում էր համարել, որ «Բազմակուսակցական դրության որդեգրման փոխարեն փետրվար 1988-են ետք կազմված թե՛ անկե՛ առաջ՛ ամբողջ հարյուրամյա ուղի կտրած կուսակցությունները վարչահրահանգչական արգելքներով կաշկանդելու օրենք պարտադրվեցավ» («Դրոշակ», 19.06.1991):

Կուսակցություններին քաղաքական գործունեության հավասար պայմաններ տրամադրելու համար անհրաժեշտ էր կատարել կարևոր մի քայլ ևս, ինչը նույնպես մինչ այդ առանձին արձանագրված էր ՀՀԸ-ի ծրագրային փաստաթղթերում: Կոմկուսը հսկայական միջոցներ, հարստություն էր կուտակել իր իշխանության 70 տարիների ընթացքում: Ընդ որում՝ նա այդ հարստության մեծագույն մասը կուտակել էր ոչ օրինական՝ կուսակցական անդամավճարների, այլ ժողովրդի աշխատանքի հաշվին: Առանց այդ միջոցների ազգայնացման անիմաստ էր խոսել կուսակցությունների մրցակցության հավասար հնարավորությունների մասին:

1991 թ. ապրիլի 17-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը կայացրեց հետևյալ որոշումը. «Ազգայնացնել Հայաստանի կոմունիստական կուսակցության և նրա փաստացի մաս կազմող նախկին՝ Հայաստանի լենինյան կոմունիստական երիտասարդական միության (ներկայումս՝ Հայաստանի երիտասարդական միություն) ամբողջ ունեցվածքը, համարել այն պետական սեփականություն և դրա տնօրինման իրավունքը հանձնել Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին»¹:

Չնայած Մոսկվայից եկած զգուշացումներին, ընդհուպ՝ սպառնալիքներին, Հայաստանի իշխանությունը հետևողական գտնվեց այս հարցում, և կատարեցին այդ ազգայնացումը²:

Ժողովրդավարության հաստատման կարևոր հիմքերից մեկը հանդիսացող այս բարեփոխումը, բացի բազմակուսակցական՝ արդեն առկա վիճակը օրինականացնելուց և առողջ քաղաքական պայքարի դաշտ ստեղծելուց, կոչված էր լուծելու շատ ավելի կարևոր ևս մի խնդիր՝ պայմանավորված հայ իրականության յուրահատկությամբ: Այն ուղեփակոց էր դնում հակաքաղաքական ու, որպես այդպիսին՝ պետականության համար վտանգավոր գաղափարախոսությունների

¹ *Տեղեկագիր ՀՀ ԳԽ-ի, 1991, 08, հոդվ. 146:*

² Սա մի խնդիր էր, որը պետք է կանգներ ժողովրդավարության ուղի բռնած բոլոր երկրների առջև: Ռուսաստանում, օրինակ, Կոմկուսի գույքի ազգայնացումը կատարվեց ՌԴ Նախագահ Բորիս Ելցինի 1991թ. օգոստոսի 23-ին ստորագրած հրամանագրով (տե՛ս Տեղեկագիր ՌՍՖՍՀ ԳԽ-ի, 1991, 35, հոդվ. 1149, 1164):

դեմ: Խոսքը վերաբերում է, առաջին հերթին, այսպես կոչված՝ «հայ դատականություն»-պահանջատիրությանը, ինչը, նախորդ հարյուրամյակում ազգակործան մի քանի աղետների հանգեցնելով հանդերձ, տարբեր հանգամանքների բերումով, շարունակում էր հայ հասարակական քաղաքական մտքի առանցքը կազմել: Ճիշտ է՝ ի դեմս դեռ 1988 թ. հրապարակված ՀՀ առաջին ծրագրի, այն մերժվել էր Ղարաբաղյան կամ Հայկական ժողովրդավարական շարժման կողմից. հիմա այդ մերժումը բարձրացավ օրենսդրական մակարդակ: Կատարված այս բարենորոգման շնորհիվ՝ ճիշտ է, օբյեկտիվ պատճառներով հնարավոր չեղավ լիակատար արմատախիլ անել հայդատականություն-պահանջատիրությունը՝ որպես հակապետական մի երևույթ, բայց, հաշված 1988-ից, շուրջ տասը տարի, մինչև 1998 թվականը, թույլ չտրվեց, որ այն դրվի գործնական քաղաքականության հիմքում, և մնաց լուսանցք մղված վիճակում¹: Եւ հայդատականության մերժման 10-ամյա այս շրջանում է, որ հնարավոր եղավ կռել հաղթանակներ, լուծել ազգային խնդիրներ, որոնք, իրոք, աննախադեպ էին Հայոց պատմության ոչ թե վերջին հարյուրամյակի, այլ, թերևս, վերջին հազարամյակի կտրվածքով:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԽ պատգամավոր՝ 1990-1995 թթ.

ՀՀ ԱԺ պատգամավոր՝ 1995-1999 թթ.

Պատմական գիտությունների թեկնածու

¹ Եվ դա՝ անկախ այն հանգամանքից, որ գրանցված քաղաքական ուժերի մեծագույն մասի ծրագրերում այս կամ այն կերպ և այս կամ այն չափով որպես «հայրենասիրության դրսևորում» արտահայտված էր հակաքաղաքական այս երևույթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՍԵՆՍՈՒՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Նախաբան

1988 թ. մեկնարկած համաժողովրդական շարժումը, նախահիմքում ունենալով Խորհրդային Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման վերջնանպատակը, իրադարձությունների կարճ, բայց հախուռն ընթացքում փոխակերպվեց անկախության շարժման: 1990 թ. Գերագույն խորհրդի ընտրություններում Կոմկուսը գրկվեց մենիշխանությունից, և ժողովրդավարական ուժերի հաղթանակով հանրապետությունում մեկնարկեցին հանրային-պետական կյանքի բոլոր ոլորտների արմատական վերափոխումները: Այդ համատեքստում, սակայն, Հայաստանի անկախության հիմնահարցը բոլոր խնդիրների նկատմամբ բնականորեն ձեռք բերեց գերակայողի կարգավիճակ:

Անկախությունը, հանրային-քաղաքական կյանքի ամենակարևոր հարցը լինելով, ինչպես նաև պայմանավորված դրա բացարձակ քաղաքական բնույթով, օրինաչափորեն պիտի դառնար հայաստանյան քաղաքական կազմակերպությունների միջև ընթացող մրցակցության հերթական, սակայն անկյունաքարային մարաթոնը: Բացի Կոմկուսից, մնացած բոլոր կուսակցությունները, մի կողմից՝ հանդես էին գալիս անկախության ջատագովությամբ, մյուս կողմից՝ անկախության հաստատման միջոցների ու մարտավարության հարցում ունեին խորքային տարաձայնություններ: Այդպիսի պայմաններում անկախության հարցը երբեմն ստորադասվում էր նեղ կուսակցական շահերին՝ տուրք տալով ինչպես սուր քաղաքական բանավեճերի, այնպես էլ թյուր տպավորություն ստեղծելով, թե անկախությունը համազգային ձեռնարկ չէ, և այդ գաղափարի շուրջ ներազգային համախոհություն չկա: 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն, սակայն, դրա հակառակի ապացույցն էր՝ թե՛ արդյունքի, թե՛ համազգային ոգևորության, թե՛ գործընթացի քաղաքական անվրեպ հաշվարկվածության տեսանկյունից:

Անկախությունը՝ օրակարգում

Հայաստանի անկախության գաղափարը քաղաքական առանձին կազմակերպությունների ու անհատների կողմից արծարծվել էր ինչպես նախորդ տասնամյակներում, այնպես էլ 1988 թ. Շարժման մեկնարկից ի վեր, սակայն «ճակատագրական շրջադարձը» տեղի ունեցավ Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) հիմնադիր համագումարում, երբ հարցը գործնական հողի վրա դրվեց և դարձավ կուսակցության ծրագրի մաս¹: Ի սկզբանե հարկ է արձանագրել, որ հայաստանյան հիմնական քաղաքական կազմակերպությունները (ՀՀՇ, Ազգային ինքնորոշում միավորում (ԱԻՄ), Հայաստանի հանրապետական կուսակցություն (ՀՀԿ), Հայաստանի քրիստոնեա-դեմոկրատական միություն (ՀԲԴՄ) և այլն), առանց վերապահումների, ձգտում էին անկախության: Նրանք պատկերացնում էին ուժերի դասավորությունը թե՛ ԽՍՀՄ ներսում, թե՛ Հայաստանում՝ անմիջականորեն գործելով խորհրդային իրականությունում: Նրանց համար ակնհայտ էր, որ ուժային բալանսը փոխվել էր, և Միության փլուզումն ընդամենը ժամանակի հարց էր, որտեղ հարցը վերաբերում էր լոկ գործընթացի ձևին ու եղանակին:

Մինչդեռ հայկական սփյուռքում իրավիճակն այլ էր:

Սփյուռքահայ քաղաքական կազմակերպությունները, պայմանավորված իրենց գործունեության միջավայրի, կուսակցական փոխկապակցվածությունների ու նպատակահարմարության, պատմական հիշողության առանձնահատկություններով, Շարժման հանդեպ միանշանակ վերաբերմունք չդրսևորեցին: Այդ համատեքստում ուշագրավ է Հայ յեղափոխական դաշնակցության (ՀՅԴ), Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) ու Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության (ՍԴՀԿ) աննախադեպ համաձայնությամբ հրապարակված համատեղ կոչ-հորդորը 1988 թ. հոկտեմբերին՝ որպես արձագանք Հայաստանում ծավալվող իրադարձություններին: «Միացյալ» հայտարարությամբ երեք քաղաքական կազմակերպությունները Խորհրդային Հայաստանի իշխանություններից պահանջում էին առաջնահերթության կարգով արդարացի լուծում գտնել

¹ Տես Սարգսյան Ա., ՀՀՇ պատմությունը, ՄԱՍ II (հատուկ մաս), <https://goo.gl/b15Xm7> (25.02.2018):

ԼՂ-ի հարցին, իսկ Հայաստանի ու Արցախի ժողովուրդներին հորդորում էին խուսափել գործադուլներից, դասադուլներից և այլն՝ չխափանելու համար ներհայաստանյան կարգուկանոնը, տնտեսական, կրթական և մշակութային հարաբերությունները¹: Նմանօրինակ կոչն ինքնին առհավատյա էր, թե սփյուռքյան կազմակերպությունները շարժման սկզբնական փուլում որքան անհաղորդ էին հայաստանյան իրողություններին:

1990թ. նոր՝ ոչ կոմունիստական իշխանության ձևավորման առաջին առարկայական արդյունքը դարձավ 12 կետից բաղկացած «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը: 1990 թ. օգոստոսի 4-ին ՀԽՍՀ ԳԽ որոշմամբ ստեղծվեց հռչակագրի նախապատրաստման 15 հոգանոց հանձնաժողով, որին իրենց առաջարկները ներկայացրին հասարակական-քաղաքական կազմակերպությունները (Հայաստանի կոմունիստական կուսակցություն (ՀԿԿ), Սահմանադրական իրավունք միություն (ՄԻՄ), ՀՀԿ և այլն), իսկ արդեն օգոստոսի 20-ին հանձնաժողովը ԳԽ դատին հանձնեց նախագծի միասնական տարբերակը²: 1990 թ. օգոստոսի 24-ի ամփոփիչ քվեարկությամբ (192 կողմ և 2 ձեռնպահ) ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը վերածվեց Հայաստանի անկախության առաջին կոչնակի:

ԽՍՀՄ-ին այլևս սպառնում էր դոմինոյի էֆեկտով շղթայական անկախությունների վտանգը, ուստի կենտրոնական իշխանությունները քայլեր ձեռնարկեցին այդ ընթացքը կասեցնելու ուղղությամբ: 1990 թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը օրենք ստորագրեց, որով հանրապետությունների՝ միությունից դուրս գալու և անկախություն հռչակելու ընթացակարգն արհեստականորեն բարդացվում էր³: 1991 թ. հունվարի 16-ին էլ ընդունվեց ԽՍՀՄ ԳԽ-ի նոր որոշումը՝ նույն թվականի մարտի 17-ին միության պահպանման վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին: Պարադոքսալ կարող է թվալ, սակայն ՀՀ անկախության կերտման ճանապարհին առանցքային նշանակություն ունեցավ հենց այդ որոշումը՝ ականայից հրատապ օրակարգ բերելով անկախության հարցը:

¹ Տե՛ս «Դրօշակ», Ա., 12 հոկտեմբերի 1988:

² Տե՛ս Պողոսյան է., Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 թթ.), Ե., 2013, էջ 31:

³ Տե՛ս «Известия», М., 7 апреля 1990.

Անկախությունը՝ կուսակցական ընկալումներում

Հայաստանյան կուսակցություններն անկախության նկատմամբ իրենց դիրքորոշմամբ կարող են բաժանվել երեք պայմանական խմբի: Առաջինը արմատական անկախականներն էին՝ ԱԻՄ-ն ու նրան գաղափարապես մոտ ուժերը (ՀՀԿ, ՀԲԴՄ և այլն), որոնք պնդում էին օր առաջ անկախություն հռչակելու անհրաժեշտությունը: Երկրորդ խումբն իրեն հռչակում էր «առավել չափավոր անկախական»՝ ներկայանալով ՀՅԴ առաջնորդությամբ: ՀՅԴ-ն այդժամ առավելապես ներդաշնակում էր Կոմկուսի քաղաքական գծին, որը դեմ էր ԽՍՀՄ կազմից դուրս գալուն և այդ սահմաններով անկախություն հռչակելուն: Այստեղ շեշտը դրվում էր «միացյալ Հայաստանի» գաղափարի վրա՝ պահանջատիրության հարցի համատեքստում: Երրորդ խումբը ղեկավարում էր ՀՀՇ-ն, որն «անկախության երազանքի» իրագործմանը վերաբերվում էր «սառնարտորեն՝ առանց զգացմունքայնության»¹: Արդ, ՀՀՇ-ն առաջարկում էր անկախության գնալ առանց միութենական իշխանությունների հետ ուղղակի առճակատման:

Վերոնշյալ միութենական հանրաքվեն ընկալելով որպես ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների դիրքերի ամրապնդմանը միտված քայլ՝ ՀՀՇ-ն առաջարկում էր անկախության գնալ՝ ԽՍՀՄ օրենքի դրույթներից և իրավական ընթացակարգերից չջեղվելով: Ուստի ենթադրվում էր անկախության հարցով հանրաքվեն անցկացնել 1991 թ. սեպտեմբերին: ՀՀՇ-ն հաշվարկում էր, որ ԽՍՀՄ «Կենտրոնը» Հայաստանում հանրաքվեի դրական արդյունքի պարագայում պարտավորված էր ենթարկվելու սեփական օրենքին և ճանաչելու իր կազմից դուրս եկող հանրապետության իրավական նոր կարգավիճակը²: Ի դեպ, Կոմկուսը նույնպես աջակցում էր այդ առաջարկին՝ անշուշտ, միանգամայն այլ շարժառիթով: ՀԿԿ-ն հայտնվել էր անորոշ ու սպասողական դրության մեջ՝ հաշվի առնելով Միության ապագայի հանդեպ բոլորին համակած անորոշությունը, ուստի որքան հնարավոր էր, ձգտում էր հետաձգել անկախության հանրաքվեն³: Ի հեճուկս սրա՝ ԱԻՄ-ը պնդում էր շուտափույթ հանրաքվե անցկացնել, իսկ ԳԽ մի

¹ Տես «Երկիր», Ե., 20 սեպտեմբերի 1991:

² Տես Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում, «Վ.Ի.Վ. Այսօր և վաղը», Ե., 2002, էջ 109:

³ Տես «Հայք», Ե., 5 մարտի 1991:

շարք պատգամավորներ առաջարկում էին հանրաքվեն նշանակել 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին: Վերջիններս նկատի էին առնում ԽՍՀՄ-ում իրադարձությունների զարգացման շեշտակի արագությունն ու դրանց ընթացքից դուրս մնալու վտանգավորությունը:

Այնուհանդերձ, 1991 թ. մարտի 1-ին Հայաստանի ԳԽ-ն որոշեց ՀՀ տարածքում չանցկացվել միութենական հանրաքվեն՝ հղում անելով դրա՝ ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին հակասելու փաստին¹: Միաժամանակ, ԳԽ-ի մեկ այլ որոշմամբ՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին նշանակվեց Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվե: 1991 թ. մարտի 4-ին էլ կայացավ Հայաստանի քաղաքական կազմակերպությունների խորհրդակցությունը՝ նվիրված անկախության հարցով սեփական հանրաքվեի նախապատրաստությանը, որին մասնակցում էին Հայաստանի բոլոր ազդեցիկ կուսակցությունները՝ ՀՀԾ, ՀԿԿ, ՀՅԴ, ՀՌԱԿ, ԱԻՄ, ՀՀԿ և այլն, ինչպես նաև ներկա էին ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն ու ՀՀ ՄԽ նախագահ Վազգեն Մանուկյանը: Ըստ էության, բացի Կոմկուսից, մնացած բոլոր քաղաքական կազմակերպություններն առարկություններ չունեին անկախության հարցով առանձին հանրաքվե անցկացնելու շուրջ: Այս փաստն անկախության երթուղու ներհայաստանյան միջկուսակցական կոնսենսուսի մի եզակի դրսևորում էր:

Հասկանալով, որ անկախությունների շղթան արհեստական խոչընդոտներով կտրել հնարավոր չէր, ԽՍՀՄ իշխանությունները որոշեցին հանրապետությունների միջև նոր միութենական պայմանագիր կնքել: 1991 թ. հունիսի 18-ին հրապարակված նախագիծը նորովի բորբոքեց անկախության հանրաքվեի պատրաստվող ՀՀ կուսակցությունների տարաձայնությունները: ՀԿԿ-ն, համառորեն հրաժարվելով միանալ անկախականների նախաձեռնություններին, խիստ կարևորում էր նոր միութենական պայմանագիրը: Հետաքրքրական էր, որ նման դիրքորոշում էր արտահայտում նաև ՀՅԴ-ն՝ քննադատելով անկախության հասնելու հարցում ՀՀԾ-ի քայլերի «արագ տեմպը»²: Մինչդեռ ՀՀԾ-ն նոր միութենական պայմանագրին մոտենում էր

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, փաստաթղթերի ժողովածու, կազմողներ՝ Բաբկեն Արարքյան, Աշոտ Սարգսյան, Գոհար Խաչատրյան, Երևան, 2016, էջ 63:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», Ե., 3 հուլիսի 1991:

վերապահումներով՝ համոզված, որ դրանով Հայաստանը վերածվելու էր նոր միության կցորդի, անկախությունն էլ մնալու էր իբրև «անհեռանկարային խաբկանք»¹:

Հայաստանը միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ դարձնելու քաղաքականության հարցում ՀՀՇ-ի մոտեցումներն առավելապես հավանություն էին գտնում ՀՌԱԿ-ի մոտ²: Այս քաղաքական գիծը ԽՍՀՄ ապագան տեսնում էր միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող անկախ պետությունների համագործակցության սկզբունքով³: Փաստացիորեն, առաջարկվում էր հորիզոնական հարաբերություններով փոխկապակցված պետությունների մի ընդհանուր համակարգ, որտեղ որոշումներն ընդունվելու էին համաձայնության և հավասարության սկզբունքներով: Սակայն ՀՀՇ-ի այս քաղաքականությունը հանդիպում էր դեռևս չպառակտված Կոմկուսի դիմադրությանը, որը Հայաստանի ապագան տեսնում էր միայն նորացված դաշնության կազմում⁴: ՀՅԴ-ն նույնպես համոզված էր, որ ԽՍՀՄ-ը մեծանշանակ դեր էր կատարելու հայկական հարցի լուծման գործում⁵:

ՀՅԴ-ն, անկախության գաղափարն իր ծրագրից չհանելով հանդերձ, համոզված էր, որ անկախ և ինքնուրույն Հայաստանը տեսանելի ապագայում պետք է գտնվեր ԽՍՀՄ նորացված համակարգում⁶: ՀՅԴ-ի համար առանց «միացյալ Հայաստանի»՝ անկախությունն ամբողջական չէր, մինչդեռ ԽՍՀՄ-ի կազմում «միացյալ Հայաստանի» կերտումը միանգամայն հնարավոր էր: Անհեռանկարային համարելով անգամ նոր միության կազմում մնալը՝ ՀՀՇ-ն հավատացած էր, որ ամբողջատիրական պետությունը նոր որակի համագործակցության հարթակ դարձնելու միջոցով հնարավոր էր քանդել արդեն վերևից՝ «կառուցողական գործունեությամբ»⁷: Հատկանշական է, որ Հայաստանը դրականորեն էր վերաբերվում ԽՍՀՄ կառուցվածքի փոփոխությունների շուրջ⁸ քննարկումներին՝ միաժամանակ, փաստորեն, առա-

¹ Տե՛ս «Հայք», 26 հունիսի 1991:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հուլիսի 1991:

³ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի, Ե., 2006, էջ 175:

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 21 հունիսի 1991:

⁵ Տե՛ս Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Ե., «Նոյյան տապան», 2011, էջ 209:

⁶ Տե՛ս «Ազատամարտ», Ե., թիվ 18, հունիս 1991:

⁷ Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., նշվ. աշխ., էջ 231:

⁸ Տե՛ս «Le monde», P., 25.07.1991.

ջարկելով գործընթացի հիմքում դնել «ավերումի» «ստեղծագործ» կերպի գաղափարը, ինչը, սակայն, ԽՍՀՄ արագ անկման պատճառով չստացվեց իրագործել, և ինչի արդյունքում անդամ-պետությունները կարող էին խուսափել փլատակների տակ մնալուց:

Անկախության ճանապարհին հայաստանյան հասարակական-քաղաքական ուժերի մի յուրօրինակ համաձայնության օրինակ դարձավ 1991 թ. հուլիսի 10-ին ՀՀ ԳԽ-ում ՀՀՇ-ի, ՀՀԿ-ի, ՀՌԱԿ-ի, ՀԲԴՄ-ի, ԱԽՄ-ի և Ազգային-պահպանողական կուսակցության (ԱՊԿ) միացյալ հայտարարությունը: Այս հայտարարությունը չմիացան ՀԿԿ-ն և ՀՅԴ-ն: Դրա առանձնահատկությունը, նախ, այն էր, որ մեկ բլոկում էին հավաքվում քաղաքական աջ ուղղվածություն ունեցող ուժերը, որոնք համատեղ պատասխանատվություն էին ստանձնում անկախության գործընթացը տրամաբանական հանգրվանին հասցնելու առումով՝ պատրաստակամորեն լծվելով ՀՀ-ում ազգային անկախ պետականություն հաստատելու գործին: Հայտարարության առանցքն այն միտքն էր, որ ազգային զարգացումն ու բարգավաճումը կարող էին ապահովվել միայն անկախ պետականության պայմաններում¹: Հայտարարությունն, ըստ էության, ժողովրդին ուղղված հորդոր էր՝ կերտել «նախնիների երազանքն ու գալիք սերնդի ազատ և արժանապատիվ ապագան»՝ «այդ» ասելով անկախությանը²:

Ի տարբերություն անկախության գաղափարի շուրջ գրեթե բոլոր ուժերի համախոհությանը՝ դրա հռչակման պահի նպատակահարմարության շուրջ նույնօրինակ կոնսենսուս չկար: Ավելին՝ հարցը դարձավ ակտիվ ներքաղաքական պայքարի առարկա, որտեղ բանավիճող հիմնական բևեռները ՀՀՇ-ն ու ՀՅԴ-ն էին: Ընդգծելի է, որ երկու կուսակցությունների միջև գաղափարական հակադրությունները դրսևորվում էին հանրային-քաղաքական գրեթե բոլոր հարցերի շուրջ՝ այդպիսով ձևավորելով «դիմության»-ընդդիմության քաղաքական ներկայանակը, և քանի դեռ այդ տարաձայնությունները մնում էին քաղաքական-գաղափարախոսական մակարդակի վրա, Հայաստանում քաղաքական գործընթացներն առողջ հունով էին ընթանում:

¹ Տե՛ս Մանուկյան Վ., նշվ. աշխ., էջ 137-138:

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հուլիսի 1991:

ՀՀԾ-ի վերաբերմունքն անկախության հարցում երկվություններ չէր ենթադրում՝ կայսրությունը փլվում էր, հետևաբար՝ Հայաստանն ամեն կերպ պիտի խուսափեր դրա ավերակների տակ մնալուց: Այս տեսանկյունից առաջնային նշանակություն ուներ այլ պետությունների հետ հարաբերությունների հաստատումը, ինչից Հայաստանը զրկված էր ԽՍՀՄ կազմում: ՀՀԾ-ի այդ «համարձակությունը», սակայն, հանդիպում էր ՀՅԴ-ի «զգուշավորությանը», որը մտահոգված էր Թուրքիայի կողմից նոր ցեղասպանության վտանգով: ՀՅԴ-ն հավատացած էր, որ Հայաստանը միշտ գտնվելու էր Թուրքիայի պանթուրքիստական հավակնությունների կիզակետում, ինչը, ըստ կուսակցության, զսպվում էր միայն ԽՍՀՄ-ի պես գերտերության կողմից, ուստի վերջինիս բացակայությամբ Հայաստանը ենթակա էր լինելու թուրքական ուղիղ սպառնալիքին: ՀՅԴ-ն շրջանառության մեջ էր դնում նոր եզրույթ՝ «նեոպանթուրքիզմ», որտեղ Մեծ Թուրանի միասնական պետության ստեղծման գաղափարը փոխարինվել էր թուրքալեզու ժողովուրդների ամբողջացման մեկ համակարգով¹: ՀՅԴ-ն չէր պատկերացնում Հայաստանի խաղաղ ու անվտանգ կյանքը Թուրքիայի պես հարևանի կողքին՝ առավել ևս անկախացած ու ռուսական աջակցությունից «զրկված»: Մինչդեռ կուսակցությունը հենց ռուսական պետության կազմում էր պատկերացնում Հայաստանի փրկությունը՝ ներդաշնակելով Զ. Բալայանի «ռուսական կողմնորոշման» թեզին²: Արդ, կուսակցության առաջնորդ Հրայր Մարությանն անկախության հռչակման այդ պահն աննպաստ էր որակում³: Այս համատեքստում էլ նաև ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախություն հաստատելու ճգնումը ներկայացվում էր հակառուսականության լույսի ներքո, ինչն աղճատում էր բանավեճը և շեղում իրական հարցից, որտեղ միմյանց էին բախվում որևէ հովանավոր տերության աջակցությամբ գոյատևելու ու սեփական ապագան ինքնուրույնաբար կռելու գաղափարական ըմբռնումները⁴:

Ռեալ-պոլիտիկի դիրքերից չժխտելով թուրքական վտանգը՝ ՀՀԾ-ն առաջարկում էր դրա լուծման սեփական տարբերակը: Շեշտվում էր,

¹ Տես Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Ե., 1995, էջ 85:

² Տես «Դրօշակ», 5 հուլիս 1989:

³ Տես «Դրօշակ», 19 հուլիսի 1989:

⁴ Տես «Որն է մեր ճանապարհը» (կզմ. Ա. Բլեյան, «Արևիկ», Ե., 1990, էջ 119) գրքույկը:

որ Հայաստանի անկախությունը ոչ թե վերականգնվելու էր, ինչը կարող էր անվտանգային ու պարտավորությունների հսկա բեռ մատուցել, այլ հաստատվելու է: Հաշվի առնելով Հայաստանի յուրահատուկ դրությունը՝ ճկուն քայլ էր կատարվում խուսանավելու Թուրքիայի հետ հնարավոր տարածքային վեճերից: Անկախության հարցով սեփական հանրաքվեն, ՀՀԾ-ի պատկերացմամբ, անկախության հռչակագրի տրամաբանական շարունակությունն էր, երբ անկախությունը ճանաչվում էր իբրև օրվա հրամայական, իսկ անկախ Հայաստանի ապագան՝ առնչակցվում պետության հզորությանը¹:

ՀՅԴ-ի համար, սակայն, այդպիսի սահմաններով Հայաստանը հաջողված անկախություն չէր ունենալու: Կուսակցությունը դնում էր ամբողջական հայրենիքի անկախության հարցը՝ «միացյալ Հայաստան» գաղափարախոսությամբ: Հայ դատը հռչակելով որպես հայ ազգի կենսական նպատակ՝ ՀՅԴ-ն հաշտ չէր դրա առանձին մասերի անկախության հետ՝ պնդելով, որ Հայ դատը չէր կարող հանգել իր մասերին, ինչպես հայ ազգի անկախությունն ու ազատությունը՝ նրա մեկ մասի, այսինքն՝ լոկ ՀՀ-ի ազատությանն ու անկախությանը՝ մոռացած Արևմտահայաստանի, Զավախքի, Նախիջևանի մասին: Այսպիսով՝ Հայ դատի խնդրի լուծումը կուսակցությունը դիտարկում էր շղթայական իրադարձությունների համատեքստում՝ առաջնային համարելով «միացյալ Հայաստանի» կերտումն ու ոչ թե մաս առ մաս, այլ հավաքական անկախությունը²: Ուստի ՀՅԴ-ն 1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեն համարում էր սոսկ «հռչակագրային անկախություն»³:

Կոմկուսը, լինելով միակ կուսակցությունը, որ դեմ էր անկախության գաղափարին անգամ, ԽՍՀՄ կազմից դուրս չէր պատկերացնում Հայաստանի գոյությունը՝ որպես փաստարկ բերելով տնտեսության կազմակերպման և սոցիալ-տնտեսական խնդիրները: Ըստ Կոմկուսի՝ ԽՍՀՄ-ը շարունակելու էր իր գոյությունը, և Հայաստանը, զատվելով տնտեսական այդ համակարգից ու զրկվելով թիկունքում հզոր ուժից, աղետի էր բախվելու: Սակայն ՀՀԾ-ն համոզված էր ԽՍՀՄ-ի փլուզման անխուսափելիության հարցում, ուստի առաջարկում էր կենտրոնանալ անկախ պետության կարգավիճակով մյուս հանրապետությունների

¹ Տե՛ս Եգորյան Է., Տեր կանգնենք մեր վաղվա օրվան, Ե., 2003, էջ 73:

² Տե՛ս «Ազատամարտ», 18 հունիսի 1992:

³ «Հայաստանի Հանրապետություն», 3 հուլիսի 1991:

հետ ազատ տնտեսական հարաբերություններ կառուցելու վրա: Կուսակցությունը հենց անկախությունն էր համարում տնտեսական կուլապսից խուսափելու երաշխիքներից մեկը՝ մատնացույց անելով ԽՍՀՄ-ի տնտեսության նվազող ցուցանիշները¹:

Անկախության հարցով գաղափարական բանավեճից անմասն չէին նաև մյուս կուսակցությունները: Վճռական «այո»-ի ճամբարում հանդես էր գալիս ԱԻՄ-ը, որի դժգոհության առարկան հանրաքվեի ուշացումն էր: Կուսակցությունը համոզված էր, որ հարկ էր օգտվել անկախություն հռչակելու ընձեռված հնարավորությունից²: Հատկանշական է, որ ԱԻՄ-ը, ՍԻՄ-ի հետ դաշնակցած, առաջարկում էր Հայաստանի անկախությունը հռչակել ԼՂ-ի հետ միավորված: 1991 թ. մայիսին այս կուսակցություններն առաջարկում էին վերափոխել ՀՀ սահմանները՝ նրա վարչատարածքային կազմում ընդգրկելով Շահումյանը, Գետաշենն ու ԼՂԻՄ-ը: Պահանջների մեջ ավելի խորանալով՝ ԱԻՄ-ն ու ՍԻՄ-ը առաջարկում էին պաշտոնական պահանջագիր հղել ՄԱԿ-ին՝ Պարսից ծոցում գտնվող խաղաղարար զորքերը Հայաստանի նոր սահմանների երկայնքով տեղակայելու և վերամիավորված Հայաստանի անկախությունը ապահովելու համար³: Անրջային թվացող այս պահանջները, սակայն, էականորեն կաղում էին իրատեսականության հարցում, քանի որ, միջազգային արձագանքը հաշվի չառնելու հետ մեկտեղ, անորոշ էին թողնում գործողությունների մեխանիզմն ու Հայաստանին սպառնացող հետևանքները:

ՌԱԿ-ը լիակատար հավանություն էր տալիս ՀՀԾ-ի քաղաքականությանը՝ ազատության ու անկախության հաստատումը առաջնահերթություն դիտելով: Կուսակցության ընկալմամբ՝ այդ հանրաքվեն «մտասևեռման հանգրվան» էր՝ անկախության գործընթացը շարունակելու պարտադիր պայման: Նույն քաղաքական-գաղափարական գծի մեջ էր նաև ՀՌԱԿ-ը՝ անկախության հանրաքվեն համարելով սեփական քաղաքական կեցությունն ինքնուրույնաբար արտահայտելու բարձրագույն իրավունք⁴:

¹ Տե՛ս Մանուկյան Վ., Գնացքից թռչելու ժամանակն է, <https://goo.gl/cQTgty> (15.03.2018):

² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հուլիսի 1991:

³ Տե՛ս «Հայք», 14 մայիսի 1991:

⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հուլիսի 1991:

ՀՀՇ-ի դիրքորոշմանը հարում էր նաև նրանից անջատված ԱԺՄ-ն՝ տարբերությամբ, որ անկախությունը պիտի ոչ թե գործընթացի վերջնակետը դառնար, այլ ընդամենը միջանկյալ օղակը: Այստեղ կուսակցությունը ելնում էր հայ ազգի բացառիկության և ստանձնելիք համաշխարհային դերակատարության թեզից՝ «համաշխարհային ազգի» հայեցակարգի համատեքստում¹: ՀՀԿ-ն ու ՀԲԴՄ-ն նույնպես պաշտպանում էին անկախության հանրաքվեն²:

Միության հոգեվարքը

Մինչ Հայաստանում քաղաքական ուժերը բանավիճում էին անկախության պահի ու նպատակահարմարության հարցի շուրջ, իրադարձությունները ԽՍՀՄ-ում զարգանում էին կայծակնային արագությամբ: 1991 թ. օգոստոսի 19-ին Խորհրդային Միության կենսունակությանը հասցվեց վերջին հարվածը, երբ ԽՍՀՄ բարձրաստիճան պաշտոնյաները «երկրում իրավիճակի կայունացման» պատճառաբանությամբ իշխանազրկեցին Մ. Գորբաչովին ու իշխանությունն իրենց ձեռքը վերցրին: Ստեղծվեց «Արտակարգ դրության պետական կոմիտե» (ԱԴՊԿ)՝ հանրայնորեն ավելի հայտնի որպես ԳԿԶՊ (ԳԿԿՊ) կամ Պուտչ (Սյուչ), որի հիմնական նպատակը նոր միութենական պայմանագրի կնքումը կանխելն էր, որն իբր թուլացնելու էր միությունը: Ճակատագրի հեգնանքով միությունը չհասցրեց թուլանալ նոր պայմանագրով, այլ, ըստ էության, քաղաքականապես ոչնչացավ հենց ԱԴՊԿ-ի դավադրությամբ, քանի որ երեք օր անց Ռուսաստանի ժողովրդավարական ուժերը վերականգնեցին սահմանադրական կարգը: Օգոստոսյան իրադարձությունները ԽՍՀՄ-ն անշեղորեն տարան մայրամուտ՝ թե՛ առանց այն էլ ներքին անկայուն դրությունը վերջնականորեն խարխուլելով, թե՛ գերտերության միջազգային հեղինակությունը զրոյացնելով:

Բնականորեն՝ իշխանազավթման փորձը և դրա ձախողումը հուզումներ առաջացրին ողջ միության տարածքում, այդ թվում՝ Հայաստանում: Հայաստանի քաղաքական կազմակերպությունների միջև տարաձայնությունների նոր ալիք առաջացավ, երբ մի շարք

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 16 դեկտեմբերի 1990:

² Տե՛ս նույն տեղում, 11 հուլիսի 1991:

ընդդիմադիր կուսակցություններ պահանջում էին առանց սեպտեմբերի 21-ի հանրաքվեին սպասելու՝ Հայաստանն անմիջապես անկախ հռչակել՝ Արցախի հետ միասին: Նման պահանջով ՀՅԴ, ԱԻՄ, ՍԻՄ, ՀՀԿ, ՀԲԴՄ կուսակցությունները նույնիսկ բողոքի ցույց անցկացրին 1991 թ. օգոստոսի 31-ին: Հետաքրքիր է, որ ՀՅԴ-ն, մինչ այդ հանդես գալով ԽՍՀՄ կազմում մնալու ջատագովությամբ, այսժամ տրամագծորեն հակառակ պահանջ էր առաջադրում:

Ավելին՝ նշյալ կուսակցությունները, որ արդեն իսկ տեղավորվել էին ՀՀՇ-ին ընդդիմադիր դիրքերում, հեղաշրջման օրերին պահանջում էին դատապարտող պաշտոնական գնահատական հնչեցնել¹: Սակայն ՀՀՇ-ն և Հայաստանի ղեկավարությունը, այդուհանդերձ, չտրվեցին պահի գայթակղությանը՝ նախընտրելով սպասողական դիրքորոշումը, ինչը հետագայում դրական գնահատվեց անգամ գաղափարական հակառակորդների կողմից²: Լևոն Տեր-Պետրոսյանը, որպես ԳԻ նախագահ, սառնասրտության կոչ էր անում, որով ՀՀՇ-ն հրաժարվում էր ԱԴՊԿ-ին հապշտապ դատապարտողի դեր ստանձնելուց: Իրավամբ, պետական հեղաշրջումը կարող էր հաջողությամբ պսակվել՝ անդառնալի հետևանքներ ունենալով առաջին հերթին անկախության ճգնաժամ փոքր պետությունների համար, ուստի Հայաստանի չեզոքությունը քաղաքականապես հեռատես քայլ էր: Սակայն կուսակցություններն, այնուամենայնիվ, գտան փոխզիջումային տարբերակ՝ 1991 թ. օգոստոսի 26-ին ԳԻ-ի անունից Հայաստանի քաղաքացիներին ուղղված հայտարարություն-կոչ տարածելով և հորդորելով սեպտեմբերի 21-ին նշանակված հանրաքվեի ժամանակ կողմ քվեարկել անկախությանը³:

Անկախության հարցում կուսակցությունների համախոհության մեկ այլ դրվագ էր ՀՀՇ, ԱԻՄ, ՀՅԴ, ՀՀԿ, ՀՌԱԿ, ՍԻՄ, ՀԲԴՄ միացյալ ջանքերով ստեղծված անկախության հանրաքվեի համակարգիչ խորհուրդը: Վերջինի նպատակը անկախության հանրաքվեի դրական արդյունքի ապահովումն էր: Արժանահիշատակ է նաև ՀՀ անկախության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի ստեղծումը, որի

¹ Տե՛ս «Անկախություն», Ե., 30 օգոստոսի 1991:

² Տե՛ս Ղազարյան Ռ., Հաշվետու եմ, Ե., 2003, էջ 10:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, No 16 (996), 31 օգոստոսի 1991, էջ 15-16:

նախագահը ՀՀՇ վարչության անդամ, ԳԽ նախագահի առաջին տեղակալ Բաբկեն Արարքցյանն էր:

1991 թ. սեպտեմբերի 21-ին տեղի ունեցած ՀՀ անկախության հանրաքվեին մասնակցեց քվեարկելու իրավունք ունեցող 2.163.967 քաղաքացիներից՝ 2.056.758 (95.5%): «Այո» քվեարկեցին 2.042.627 քաղաքացիներ (94.39%), «ոչ»՝ 10.002 (0.46%), իսկ անվավեր ճանաչված քվեաթերթիկները՝ 4.129 (0.19%): Առանց վարանելու՝ սեպտեմբերի 23-ին ՀՀ Գերագույն խորհուրդը կայացրեց պատմական որոշում, որը ԳԽ ամբիոնից ի լուր աշխարհի ընթերցեց Արամ Մանուկյանը. «Հիմք ունենալով 1991 թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հանրաքվեի արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ պետություն»: Երկու օր անց ՀՀ ԳԽ-ն ընդունեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքը անկախ պետականության հիմնադրույթների մասին¹:

* * *

Այսպիսով՝ Հայաստանի անկախության գաղափարը ողջունվեց քաղաքական գրեթե բոլոր ուժերի կողմից, իսկ գործընթացն իրացվեց լայն համախոհությամբ: Նկատելի է, որ անկախությունն իբրև գաղափար քաղաքական յուրօրինակ համերաշխության հարթակ ստեղծեց կուսակցությունների միջև: Այդ գնահատականն ամենևին չի նսեմանում այն փաստով, որ անկախության նվաճման շրջանում Հայաստանի քաղաքական կուսակցությունները բաժանված էին երեք խմբերի (պայմանականորեն՝ ՀՀՇ-ի, ԱԻՄ-ի ու ՀՅԴ-ի գլխավորությամբ) և իրար հակադրվող ճանապարհային քարտեզներով եռուն բանավեճի մեջ էին: Եթե ՀՀՇ-ն ձգտում էր անկախության ԽՍՀՄ Սահմանադրության և օրենքների խստիվ պահպանմամբ, իսկ ԱԻՄ-ը պահանջում էր անկախության անվարան հռչակում, ապա ՀՅԴ-ն ներդաշնակում էր Կոմկուսին՝ աննպատակահարմար համարելով ԽՍՀՄ կազմից դուրս գալն ու անկախության հռչակումը: Արժանանշանակ է, սակայն, որ մարտավարական այդ հակադրությունները 1991 թ. սեպտեմբերի 21-ին լուսանցք մղվեցին, և բոլոր կուսակցությունները

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ, էջ 85-89:

ստիպված եղան ընդունելու անկախությունն իբրև կայացած փաստ: Կարելի է ասել, որ Հայաստանի անկախության հաստատման ողջ գործընթացը տեղի ունեցավ բացառիկ քաղաքականացվածության պայմաններում՝ գաղափարարական սուր ու սկզբունքային պայքարով: Անկախ նրանից, որ ՀՀ-ն էր այդ գործընթացի իրավա-քաղաքական պատասխանատուն, ՀԿԿ-ն ու ՀՅԴ-ն՝ ընդդիմությունը, իսկ մյուս կուսակցություններն այս կամ այն կերպ հարում էին բևեռներից մեկին, արդյունքը քաղաքական հասուն գործընթացն էր և Հայաստանի անկախության անցնցում հաստատումը:

Խիստ արժանանշանակ է, որ Հայաստանը դարձավ ԽՍՀՄ միակ հանրապետությունը, որի անկախացման գործընթացն ամբողջովին համապատասխանեց Միության՝ նույնիսկ բարդացված իրավական ընթացակարգերին ու օրենքներին: Եվ թերևս ամենակարևորը՝ արհեստականորեն սնուցված հակառուսականության դիսկուրսը որևէ շոշափելի հետևանք չունեցավ, և անկախության հաստատումը որևէ կերպ չառնչակցվեց ռուսատյացությանը: Անկախության հռչակումը միաժամանակ ազդարարեց Հայաստանի՝ որպես պետության փաստացի հիմնադրման գործընթացի մեկնարկը: Վերջինիս հիմքը դարձավ ազատականությունը՝ որպես գաղափարախոսություն, և դրանից բխող գործողություններն ու քայլերն էլ թելադրվեցին ազատականության սկզբունքներով՝ քաղաքական բարեփոխումներ (պետական ինստիտուտների, քաղաքական ու կուսակցական համակարգերի ստեղծում և այլն), տնտեսական ռեֆորմների (ազատ շուկայական տնտեսություն, հողի սեփականաշնորհում և այլն) ու արտաքին կապերի ձևավորում (ՀՀ-ի միջազգային ճանաչում, պետությունների համաշխարհային ընտանիքի անդամություն և այլն): Դա հնարավոր եղավ քաղաքական բազմաբևեռայնության, գաղափարների մրցակցության, սառը հաշվարկի և պատասխանատվության հանրագումարում՝ 1991 թ. միջկուսակցական կոնսենսուսն անկախության հարցի առնչությամբ վերածելով մի բացառիկ երևույթի:

ՆԺԴԵՀ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ԱԶԳՏ ՄԱՍՈՒԼԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԵՐՐՈՐԴ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանում ազատ մամուլը, որը «պաշտոնականացվեց» Անկախության հռչակագրի, իսկ այնուհետև նաև՝ «Մամուլի մասին» օրենքի ընդունմամբ, սերում է երեք հիմնական ակունքներից. 1/ խորհրդային շրջանի «սամիզդատը», 2/ նույն ժամանակաշրջանի մայրամուտին՝ 1980-ականների վերջին լույս տեսնող թերթերը, 3/ պոֆեսիոնալ լրագրությունը, որը զարգանում էր խորհրդային գրաքննության պայմաններում: Որոշ վերապահումներով՝ կարելի է նաև խոսել Սփյուռքի հայալեզու պարբերականների մասին, որոնց ազդեցությունը զգալի էր հատկապես 1980-1990-ականների սահմանագծին, երբ հայաստանյան մամուլն իր առաջին քայլերն էր անում:

Ազատ, պետության կողմից չվերահսկվող խոսքի զարգացումը կապվում է նախևառաջ «սամիզդատի» («ինքնահրատի») հետ, որը Խորհրդային Հայաստանի պարագայում յուրովի արտացոլում էր 1960-ականների ազգային զարթոնքի գաղափարները: Հետաքրքիր է նշել, որ Ռուսաստանում, «սամիզդատ» ասելով, հիմնականում հասկանում են կոմունիստական իշխանության կողմից արգելված գեղարվեստական գրականության երկերի հրատարակությունը: Մինչդեռ Հայաստանում «ինքնահրատ» լրատվամիջոցները, հանդեսները հենց սկզբից խիստ քաղաքականացված էին: Դա կարելի է ինչ-որ չափով ավանդույթի հիմք համարել. թե՛ այն ժամանակ և թե՛ հիմա հասարակության գիտակից մասին հետաքրքրում էին ազգային ինքնության պահպանության, պատմական արդարության՝ իրենց էությանը քաղաքական հարցերը:

1967 թ. ապրիլին, Ցեղասպանության օրվա կապակցությամբ, ընդհատակում գործող Ազգային Միացյալ Կուսակցությունը (ԱՄԿ) տարածում է «Փարոս» վերնագրով առաջին թռուցիկը, իսկ նույն տարվա հոկտեմբերի 19-20-ին տարածում է նաև չորս էջից բաղկացած «Փարոս» թերթը: Մեջբերենք մի քանի վերնագիր, որոնք ինքնին խոսուն են այդ շրջանի հայկական «ինքնահրատ»

լրատվամիջոցների բովանդակության տեսանկյունից. «Հայաստանը լծի տակ», «Հայկական հարցը», «Ինչ է ազգի լեզուն»:

Հայաստանի անկախության համար պայքարող այլախոհները՝ Հայկազն Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը, Ստեփան Զատիկյանը, Պարույր Հայրիկյանը, Աշոտ Նավասարդյանը, Ազատ Արշակյանը և ուրիշները, 1960-ական թվականներին «Փարոսից» բացի հրատարակել են մի շարք այլ «ինքնահրատ» թերթեր, մասնավորապես՝ «Երկունք», «Ցասում», «Հանուն հայրենիքի» անվանումներով: Թերթերը լույս էին տեսնում ստանդարտ տպագրական թղթի վրա, բազմացման տեխնիկայի օգնությամբ, սովորաբար՝ մի քանի հարյուր, բայց երբեմն ավելի մեծ տպաքանակներով: Հասկանալի է, որ «անկախական» բովանդակության թերթերի հրատարակիչները դաժան հետապնդումների էին ենթարկվում խորհրդային ՊԱԿ-ի կողմից, թերթերն առգրավվում էին, քաղաքական գործիչներն ու ակտիվիստները՝ ազատազրկվում: Ընդհանուր առմամբ՝ 1953-1990 թվականներին այլախոհության համար Հայաստանում դատապարտվել էր 100-ից ավելի մարդ, հիմնականում՝ «հակախորհրդային քարոզչության» հոդվածով:

Հավանաբար, այդ կարծի բռնաճնշումներն էին կարևոր պատճառներից մեկը, որ շուրջ 16 տարի՝ 1969-ից մինչև 1985 թվականը, Հայաստանում «ինքնահրատ» թերթերի մասին տեղեկություններ գրեթե չկան:

1985 թվականին Խորհրդային Միությունում հայտարարված «վերակառուցումը», որի առանցքային կարգախոսներն էին «հրապարակայնությունը», «բացախոսությունը», որոշակի հնարավորություններ ստեղծեց քաղաքացիների հասարակական ակտիվության համար: Հայաստանում ստեղծվեցին մի շարք հասարակական կառույցներ՝ «Մաշտոց», «Զանգակատուն», «Ամբերդի վերակազման ֆոնդ», «Գոյապայքար»: Վերջինս, օրինակ, գրանցվել էր որպես բնապահպանական կառույց, բայց իրականում օրակարգում ուներ քաղաքական խնդիրներ. պետք է հիշել նաև, որ 1980-ականներին բուն բնապահպանական խնդիրները նույնպես խիստ քաղաքականացված էին: Այդ կազմակերպությունը ինքնահրատ ճանապարհով տպագրում էր «Մաշտոց» շաբաթաթերթը, որի ստեղծման վրա

աշխատում էին, մասնավորապես, Վահան Իշխանյանը և Տիգրան Պասկևիչյանը:

Գրաքննության և բռնաճնշումների թուլացման պայմաններում ի հայտ եկան տասնյակ ինքնահրատ թերթեր, որոնցից շատերը երկար կյանք չեն ունեցել՝ լույս ընծայելով ընդամենը 2-3 համար: Դրանց մի մասը, սակայն, նշանակալից դեր խաղաց Հայաստանում ազատ խոսքի զարգացման տեսանկյունից: Այդպիսի թերթերից են ԱԻՄ-ի «Ինքնորոշում», «Անկախություն», «Հայրենիք» պարբերականները, 1988 թվականի Ղարաբաղյան շարժման գաղափարները տարածող «...և այլն»-ը, որը խմբագրում էր Ալեքսանդր Արզումանյանը, ինչպես նաև բուն ՀՀԾ կուսակցության «ՀՀԾ-ի խոսնակ», «88» ինքնահրատ պարբերականները: Դրանց մեծ մասն իրենց ոճով մոտ էր Ազատության հրապարակում տարածվող թռուցիկներին և պաստառներին, բայց արդեն պարունակում էր նաև զուտ լրագրողական նյութեր: Այս թերթերի բովանդակության մեջ, բացի իրավիճակով պայմանավորված հեղափոխական հրապարակախոսությունից, ի հայտ էին գալիս նոր՝ ազատ մամուլի ծիւերը՝ այն լրագրության, որն իր վերջանական տեսքը ստացավ խորհրդային վերջին տարիներին արդեն պաշտոնապես գրանցված և տարածվող, տպագրական մեքենաների միջոցով հրատարակվող թերթերում:

Խորհրդային շրջանում տպագրական եղանակով հրատարակվող, ոչ կոմունիստական առաջին հայկական թերթերից մեկը «Հայք» քաղաքական և հասարակական շաբաթաթերթն էր, որի առաջին համարը լույս է տեսել 1989 թ. նոյեմբերի 4-ին՝ ՀՀԾ առաջին համագումարի օրը: Թերթի առաջին գլխավոր խմբագիրը «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Սամվել Գևորգյանն էր: Թե՛ խորհրդային շրջանում և թե՛ անկախության տարիներին «Հայքը» չէր սահմանափակվում զուտ կուսակցական քարոզչությամբ՝ ամբիոն տրամադրելով տարբեր ուղղվածության լրագրողներին և հրապարակախոսներին՝ ներքին և արտաքին քաղաքականության բազմազան խնդիրների բաց քննարկման համար:

Ավելի վաղ՝ 1989 թվականի օգոստոսից, սկսել էր լույս տեսնել «Սահմանադրական իրավունք» միության «Իրավունք» շաբաթաթերթը: 1990-ականների կեսերին «Իրավունքը» ազդեցիկ և մեծ տպաքանակ ունեցող ընդդիմադիր լրատվամիջոցներից մեկն էր:

Եթե որպես առաջին «սահմանագիծ» ընդունենք 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագիրը, ապա դրան նախորդող ժամանակաշրջանի ոչ կոմունիստական մամուլի շարքում էր «Մունետիկը» (խմբագիր՝ Միեր Դավոյան), որի առաջին համարը լույս է տեսել 1990 թվականի մայիսի 27-ին: Պարբերականը թարմություն բերեց իր ազատ ոճով, կենցաղային, մարդկային թեմաների լայն ընդգրկմամբ, զվարճալի նյութերով: Անկախության առաջին տարիներին թերթի բովանդակությունը քաղաքականացվեց՝ ձեռք բերելով հիմնականում ընդդիմադիր ուղղվածություն:

Այս, պայմանականորեն ասած, անցումային շրջանում ի հայտ եկած նոր պարբերականներից արժե, թերևս նշել «Անդրադարձ» հանդեսը (խմբագիր՝ Ռիտա Շառոյան), «Ուրբաթ» շաբաթաթերթը, ինչպես նաև ռուսալեզու «Սվոբոդա» պարբերականը: Առաջին երկուսը 1990-ականների սկզբին համակրում էին Հայ Հեղափոխական դաշնակցությանը, իսկ վերջինը հիմնականում իրականացնում էր ԱԽՄ-ի քաղաքական գիծը:

Հայաստանի ազատ մամուլի նախապատմությունը լիակատար չէր լինի, եթե չհիշատակենք այն լրատվամիջոցները, որոնք ստեղծվել էին խորհրդային պաշտոնական մարմինների կողմից, բայց 1985 և, հատկապես, 1988 թվականից սկսած՝ աստիճանաբար ազատվել էին գրաքննության ճնշումներից: Ի վերջո, պետք է նշել, որ անգամ գրաքննության պայմաններում և լճացման ժամանակաշրջանում Հայաստանում աշխատում էին տաղանդավոր լրագրողներ, և հատկապես 80-ականների երկրորդ կեսին նրանք կարողացել են բարձրացնել հասարակությանը հուզող խնդիրներ, մասնավորապես՝ բնապահպանությանը և ազգային օրակարգին վերաբերող կարևորագույն հարցերը:

Նման լրատվամիջոցներից էր «Գարուն» ամսագիրը, որի խմբագիրներն էին Վարդգես Պետրոսյանը, այնուհետև՝ Մերուժան Տեր-Գուլանյանը: Իր հիմնական ուղղվածությամբ լինելով երիտասարդական (70-80-ականներին ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգանն էր) և գրական-գեղարվեստական՝ «Գարունն» ընդգրկում էր թեմաների լայն շրջանակ՝ գրական երկերով և հրապարակախոսական հոդվածներով նախապատրաստելով 1988 թվականի ազգային վերելքը: Արժե հիշատակել,

որ 1986-89 թվականներին այդ ամսագրի հրապարակախոսության բաժինը ղեկավարում էր Վազգեն Սարգսյանը՝ Երրորդ հանրապետության առանցքային դեմքերից մեկը:

«Գարուն» ամսագիրը 1990-ի մարտին հրապարակել էր նաև շաբաթաթերթ, որի առաջին և միակ համարում լույս էին տեսել Կարեն Սվալայանի, Վազգեն Սարգսյանի, Մեխակ Գաբրիելյանի, Ռաֆայել Իշխանյանի, Վազգեն Մանուկյանի հոդվածները, որոնք շատ բանով կանխորոշել էին անկախ Հայաստանի առաջին տարիների քաղաքական դիսկուրսը:

Կոմերիտմիության օրգան էր «Ավանգարդ» թերթը, իսկ «Երեկոյան Երևանի» հրատարակիչն էր Կոմկուսի Երևանի քաղկոմը (խմբագիր՝ Կամո Վարդանյան): Չնայած այդ պաշտոնական կարգավիճակին՝ 1988-90 թվականների ղարաբաղյան շարժման ժամանակ այդ պարբերականների խմբագրակազմերը և լրագրողներից շատերը իրենց սուր հրապարակումներով նպաստում էին ազգային խնդիրների շուրջ հասարակության համախմբմանը: Զուտ երգիծական ժանրի սահմաններից դուրս էր գալիս այդ տարիներին «Ուզնի» շաբաթաթերթը (խմբագիր՝ Արամայիս Սահակյան), որտեղ բարձրացվում էին ազգի և պետության զարգացման խնդիրները: Արամայիս Սահակյանը, Կամո Վարդանյանը, ինչպես և լրատվական աշխարհի մեկ տասնյակից ավելի այլ ներկայացուցիչներ, 1990 թվականին դարձան առաջին «ոչ կոմունիստական» Գերագույն խորհրդի պատգամավորներ: 1980-ականների վերջում առաջադեմ գաղափարների տարածման էր նպաստում նաև Հայաստանի գրողների միության վարչության օրգան հանդիսացող «Գրական թերթը»:

ՀԿԿ Կենտկոմի ռուսալեզու «Կոմունիստ» թերթը 1990 թվականին վերանվանվեց «Գոլոս Արմենիի» (խմբագիր՝ Ֆլորա Նախշբարյան): Լրատվամիջոցը մինչև 1998 թվականը արմատական ընդդիմադիր դիրքերում էր և աշխատակազմի պրոֆեսիոնալիզմի շնորհիվ զգալի ազդեցություն ուներ համապատասխան հայացքներ ունեցող լսարանի վրա: Ընդհանրապես, առաջ անցնելով, պետք է նկատել, որ 1990-1998 թվականներին լրատվամիջոցների ճնշող մեծամասնությունն ընդդիմադիր էր: Դրա հավանական բացատրություններից մեկն, ըստ ամենայնի, այն է, որ այդ ժամանակահատվածում ընդդիմադիր

շրջանակներն ու քաղաքական ուժերը տիրապետում էին զգալի նյութական միջոցների:

Անցումային շրջանի լրատվության և քննարկվող խնդիրների ընդգրկման վրա ազդեց նաև սփյուռքահայ մամուլը, որն ուներ տասնամյակների ավանդույթներ: Նման լրատվամիջոցներից կարելի է առանձնացնել Փարիզում հրատարակվող «Հառաջը», որն այն ժամանակ ուներ անկախ կարգավիճակ, Բեյրութում լույս տեսնող ՌԱԿ պաշտոնաթերթ «Զարթոնքը», ինչպես նաև ՀՅԴ պաշտոնաթերթ «Ազդակը»: Այդ և մի շարք այլ պարբերականներ 1980-ականների երկրորդ կեսից սկսեցին հասանելի դառնալ հայաստանյան ընթերցողին և նպաստում էին համազգային օրակարգի ստեղծմանը:

Խորհրդային գրաքննության պայմաններում ակտիվ քաղաքացիների համար այլընտրանքային լրատվության աղբյուր էին արտասահմանյան ռադիոալիքները՝ «Ազատությունը», BBC-ն, «Գերմանական ալիքը», «Ամերիկայի ձայնը»: 1985-ից հետո այդ ռադիոալիքներն այլևս չէին «խլեցվում»: Դրանք նույնպես կարելի է համարել հայաստանյան ազատ մամուլի աղբյուրներից մեկը՝ թե՛ թեմաների ընտրության և թե՛ զուտ լրագրողական մոտեցումների առումով:

1980-ականների յուրահատուկ երևույթ էին նաև, այսպես կոչված «խուժան ալիքները»՝ սահմանափակ սփռում ունեցող տնայնագործական ռադիոկայանները: Դրանք հիմնականում հաղորդում էին «կիսաարգելված» երաժշտության նմուշներ (մասնավորապես՝ արևմտյան ռոք-խմբերի գործեր), բայց խորհրդային դարաշրջանի վերջում այդ ալիքներով հնչում էր նաև լրատվություն: «Խուժան ալիքները» կարելի է համարել «սամիզդատի» ռադիո տարբերակ:

Ահա այսպիսի պատմական ընթացք էր անցել հայաստանյան մամուլը մինչ այն պահը, երբ 1990 թվականի հուլիսին ձևավորվեց ՀԽՍՀ 12-րդ գումարման Գերագույն խորհուրդը, որը նույն թվականի օգոստոսի 23-ին ընդունեց Հայաստանի անկախության հռչակագիրը: Այդ փաստաթղթի 9-րդ կետում նշվում է. «Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում»: Հատկանշական է, որ այստեղ մամուլի

ազատությունը և «ուժայինների» ապաքաղաքականացումը դրվում են միևնույն հարթության վրա՝ որպես ժողովրդավարության զարգացման գործոններ:

1991 թվականի հոկտեմբերի 10-ին Գերագույն խորհուրդն ընդունեց «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս լրատվամիջոցների մասին» օրենքը, որն ուժի մեջ մտավ հոկտեմբերի 16-ին: Օրենքն ամրագրում էր անցած մեկուկես տարում լրատվական դաշտում ստեղծված իրավիճակը՝ տպագիր լրատվամիջոցների ազատ, պետության վերահսկողությունից անկախ գործունեությունը:

1991 թվականի սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեից անմիջապես հետո ընդունված այդ օրենքի հիմնական իմաստն արտահայտված է 2-րդ հոդվածում. «Հայաստանի Հանրապետությունում մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները ազատ են, գրաքննության չեն ենթարկվում: Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ունեն մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք»: Այդպիսով՝ օրենքում ամրագրվում է ժողովրդավարության կարևոր հիմքերից մեկը՝ պետական գրաքննության մերժումը: Սկզբունքային նշանակություն ունեցող այս թեզը հիմնականում կյանքի էր կոչվում Երրորդ հանրապետության հետագա պատմության ընթացքում տպագիր լրատվամիջոցների պարագայում և ինքնին կարևոր առաջադեմ քայլ էր նախորդ՝ խորհրդային ժամանակաշրջանի համեմատ: Արձանագրենք, որ խոսքի ազատության նորմն ամրագրվել էր Հայաստանում դեռևս Խորհրդային Միության առկայության պայմաններում, թեև այդ պահին այդ միության գոյությունը որոշ իմաստով ձևական էր:

Օրենքի վերնագրում և բովանդակության մեջ խոսվում է ոչ միայն մամուլի, այլևս «զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին», որի տակ հասկացվում էր հեռուստա-ռադիոէթերը: Այս պարագայում նույնպես օրենքում ամրագրվում էր խոսքի ազատությունը, բայց իրականությունն այն էր, որ թե՛ պետական (հանրային) և թե՛ հետագայում՝ մասնավոր հեռուստաընկերությունների աշխատանքը հիմնականում վերահսկվում էր իշխանական կառույցների կողմից:

Մեկ այլ կարևոր սկզբունք ամրագրված է օրենքի 3-րդ կետում. «Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, հավասարության, մարդասիրության, տարակարծության, հանդուրժողականության, հարգանքի, խղճի ազատության սկզբունքներով և համամարդկային այլ արժեքներով, օժանդակում են հրապարակայնությանն ու ժողովրդավարությանը, մտքի, խոսքի, բազմակարծության ազատությանը»:

Այդ դրույթով Հայաստանի նոր իշխանություններն իրենց հավատարմությունն են հայտնում ունիվերսալ ազատական արժեքներին, որոնցով առաջնորդվում են զարգացած ժողովրդավարական երկրները (որքան էլ այդ արժեքներն այսօր կասկածի տակ դրվեն): Իհարկե, հանդուրժողականությանը, բազմակարծության հանդեպ հարգանքին հնարավոր չէ հասնել միայն պետական կարգավորումներով: Դա պահանջում է հասարակության և բուն մամուլի աշխարհի ներկայացուցիչների ամենօրյա համագործակցված ջանքեր: Թե՛ այն պահին գործող և թե՛ 1991 թվականից հետո հիմնված լրատվամիջոցները միշտ չէ, որ հավատարիմ են մնացել վերոհիշյալ համամարդկային արժեքներին:

Նույնը կարելի է ասել օրենքի 6-րդ հոդվածի մասին. «Հրապարակման ենթակա չէ պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, պոռնկություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ և չստուգված լրատվությունը: Առանց քաղաքացու համաձայնության չի թույլատրվում հրապարակել որդեգրման գաղտնիքը և քաղաքացու նեղ անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ»: Ոչ մի պետություն ի զորու չէ 100 տոկոսով երաշխավորել այդ սկզբունքների ապահովումը, եթե հասարակության մեծամասնության մեջ չկա ընդհանուր համաձայնություն, ասենք՝ բռնության քարոզը կամ «նեղ անձնական կյանքի մեջ մտնելը» մերժելու առումով:

Բավականին ազատական է օրենքի մոտեցումը լրատվամիջոցների գրանցման հարցում: 8-րդ հոդվածում նշվում է. «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներ թողարկողները իրենց գործունեությունը սկսում են Հայաստանի Հանրապետության

արդարադատության նախարարությունում գրանցվելուց հետո: Գրանցման համար հիմնադիրը ներկայացնում է դիմում և մամուլի կամ զանգվածային լրատվության այլ միջոցի խմբագրության կանոնադրությունը: Գրանցման դիմումը քննարկվում է մեկամսյա ժամկետում»: Այնուհետև նշվում են այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են լրատվամիջոցը գրանցելու համար (դրանք ընդամենը երեքն են): Ինչպես տեսնում ենք, գրանցման գործընթացը բավականին պարզեցված էր, և այս հարցում թերթերն իսկապես լուրջ խնդիրներ սովորաբար չունեին: Օրենքն ընդունելուց հետո մոտ երեք տարի անց եղել են պետության կողմից թերթերի գործունեության կասեցման դեպքեր, որոնց մասին կխոսվի ստորև:

Անկախության առաջին ամիսներին ընդունված «Մամուլի մասին» օրենքը պարունակում է մի շարք այլ առաջադեմ դրույթներ: Այդպիսին է 25-րդ հոդվածում նշված՝ աղբյուրները չբացահայտելու սկզբունքը. «Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները պարտավոր չեն նշել լրատվության աղբյուրները և իրավունք չունեն հրապարակելու լրատվությունը ներկայացրած անձի անունը՝ առանց նրա համաձայնության: Խմբագրությունը կամ լրագրողը պարտավոր են հայտնել լրատվության աղբյուրը միայն իրավապահ մարմինների պահանջով, եթե դա անհրաժեշտ է դատավարության համար»: Սա կարևորագույն նորմ է, որն ապահովում է մամուլի միջոցների անկաշկանդ աշխատանքը: Առանց դրա հնարավոր չէ հասարակությանը տեղեկացնել կյանքի բացասական երևույթների մասին, հնարավոր չէ, մեծ հաշվով, այդ երևույթների քննադատությունը: Անցած տասնամյակների ընթացքում գործող լրագրողների մեծ մասը բազմիցս վկայակոչել է այդ նորմը և ազատվել է «աղբյուր պահանջող» անձերի և կառույցների ճնշումներից:

Նույն տեսանկյունից կարևոր է օրենքի նաև 31-րդ հոդվածը, որը նախատեսում է, որ եթե անգամ մամուլի հրապարակման մեջ տեղ գտած լրատվությունը չի համապատասխանում իրականությանը, ապա թերթը կամ լրագրողն ազատվում են պատասխանատվությունից հետևյալ դեպքերում. «1. Առկա են պետական իշխանության, կառավարման, իրավապահ մարմինների, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունների պաշտոնական

փաստաթղթերում և հաղորդագրություններում: 2. Հրապարակային ելույթների բառացի և չաղավաղված վերարտադրությունն են: 3. Ստացվել են զանգվածային լրատվության այլ միջոցից կամ պետական ու հասարակական մարմինների լրատվական ծառայություններից»: Իրավական այդ նորմը օգնում է լրագրողներին մեջբերել քաղաքական գործիչների հայտնած տեղեկությունները կամ տեսակետները՝ մտավախություն չունենալով, որ դրանց համար պատասխանատվություն են կրելու՝ համապատասխան ծայնագրություն կամ տեսագրություն ունենալու դեպքում:

Սկզբունքային խնդիր էր, թե ովքեր կարող են լրատվամիջոց հիմնել: Այդ հարցի պատասխանն է տալիս օրենքի 7-րդ հոդվածը. «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունները, հասարակական շարժումները, ստեղծագործական միությունները, գիտական և այլ ընկերությունները, աշխատավորական կոլեկտիվները, կրոնական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող չափափաս քաղաքացիները ունեն մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների հիմնադրման իրավունք»: Դա նույնպես կարևոր առաջադեմ քայլ էր, որովհետև նախորդ դարաշրջանում պատկերացնելի չէր, որ լրատվամիջոցի հիմնադիրն ու հրատարակիչը կարող է լինել որևէ մեկը, բացի պետությունից: Հատկապես էական էր, որ հնարավոր հիմնադիրներից նշվում էին հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպությունները, հասարակական շարժումները՝ հաշվի առնելով հետագա մի քանի տարիների ընթացքը, երբ թերթերի հիմնադիրների զգալի մասը հենց կուսակցություններն էին, մեծ մասամբ՝ ընդդիմադիր:

Ընդհանուր առմամբ, 1991 թվականին ընդունված «Մամուլի մասին» օրենքը հիմնարար նշանակություն ուներ խոսքի ազատության համար, և պատահական չէ, որ ներկայումս գործող օրենքը, որն ընդունվել է 2004 թվականին, իր հիմնական դրույթներով կրկնում է առաջին օրենքում ամրագրված նորմերը: Օրենքի ընդունման պատմական նշանակությունն այն էր, որ դրա ընդունումից հետո 2-3

տարիների ընթացքում Հայաստանում բացվեցին մի շարք անկախ ռադիոկայաններ, ինչպես նաև հարյուրից ավելի թերթեր, իսկ գործող լրատվամիջոցների աշխատանքը ստացավ ինստիտուցիոնալ հիմք: Այն, որ անկախ Հայաստանի առաջին խորհրդարանն առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում ԶԼՄ-ներին, հաստատվում է նաև այն փաստով, որ Գերագույն խորհրդում գործում էր առանձին Լրատվության մշտական հանձնաժողով՝ մի բան, որը չկար հաջորդ գումարումներում:

Ազատ խոսքի զարգացմանն անմիջապես առնչվում է մեկ այլ օրենք՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»: Անկախության հանրաքվեից ամիսներ առաջ՝ 1991 թվականի փետրվարի 26-ին ընդունված այդ օրենքը խթանել էր բազմակուսակցական քաղաքական համակարգը: Օրենքի առանցքային դրույթներից մեկը հետևյալն է. «Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված հասարակական-քաղաքական կազմակերպություններն իրավահավասար են»: Ըստ էության, կոմունիստական կուսակցության իրավական մենաշնորհը խարխլվել էր դեռևս նախորդ տարիներին: 1989 թվականի նոյեմբերի 1-ին 11-րդ գումարման (դեռևս «կոմունիստական») Գերագույն խորհրդի որոշմամբ՝ Հայոց համազգային շարժումը գրանցվել է որպես քաղաքական կուսակցություն: Սակայն խորհրդային օրենսդրության պայմաններում կուսակցությունների իրավական կարգավիճակը հստակ չէր: «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը հնարավորություն տվեց կուսակցություններին գործելու օրենսդրությամբ նախատեսված դաշտում: Կարճ ժամանակում Հայաստանում, բացի ՀՀԾ-ից և Կոմկուսից, գրանցվեցին հայկական ավանդական կուսակցությունները՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (որը հաջորդ՝ 12-րդ գումարման Գերագույն խորհրդի աշխատանքի ընթացքում ձևավորեց իր պատգամավորական խումբը), Ռամկավար-ազատական կուսակցությունը, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը, ինչպես նաև այն կուսակցությունները, որոնք արդեն իսկ գործում էին Հայաստանում՝ Ազգային ինքնորոշում միավորումը, Հանրապետական կուսակցությունը, Սահմանադրական իրավունք միությունը, հետագայում՝ մի շարք այլ նոր կուսակցություններ:

Մամուլի տեսակետից կարևոր է, որ բոլոր նշված կուսակցություններն ունեին կամ ստեղծեցին իրենց լրատվամիջոցները, որոնց մի մասն այդ կուսակցությունների պաշտոնական օրգանն էր, մի մասն էլ այս կամ այն կերպ արտացոլում էր տվյալ կուսակցությունների տեսակետը: Որոշ վերապահումներով՝ կարելի է ասել, որ 1990-ականների առաջին կեսին լրատվական և հասարակական դաշտում տիրապետում էր կուսակցական մամուլը:

Բայց անկախության առաջին տարիներին բացված լրատվամիջոցների համառոտ ակնարկն արժե թերևս սկսել պաշտոնաթերթերից: 1990 թվականի հոկտեմբերի 9-ին Գերագույն խորհուրդը հիմնադրել էր «Հայաստանի Հանրապետություն» («ՀՀ») օրաթերթը, որի առաջին խմբագիրն էր Այդին Մորիկյանը: Առաջին համարում նա թերթի հիմնական նպատակներից առաջինը ձևակերպել է այսպես. Անկախության հռչակագրի «հիմնադրույթների իրականացման գործընթացի լուսաբանումը, վերլուծությունն ու գաղափարախոսական ապահովումը»: Որպես պաշտոնաթերթ՝ «ՀՀ»-ն պարտավոր էր հրապարակել Ազգային ժողովի և կառավարության որոշումները՝ դա նախատեսված էր Մամուլի մասին օրենքի 22-րդ հոդվածով («Պետական իշխանության և կառավարման մարմինների հիմնած զանգվածային լրատվության միջոցները պարտավոր են ժամանակին և անվճար հրապարակել այդ մարմինների պաշտոնական հաղորդագրությունները և դատարանի կողմից տրված տեղեկությունները»): Բնականաբար, այլընտրանքային և ընդդիմադիր լրատվամիջոցների առատության պարագայում «ՀՀ»-ն ընթերցողների մի մասի կողմից դիտվում էր չափից դուրս «պաշտոնական»: Բայց իր երկարամյա պատմության ընթացքում «ՀՀ»-ն հաճախ չէր սահմանափակվում զուտ պաշտոնական տեղեկագրի գործառույթներով՝ հրապարակելով պաշտոնականից տարբերվող տեսակետներ և վերլուծություններ: Ընդհանուր առմամբ, նույն մոտեցումն ուներ նաև խորհրդարանի կողմից հիմնված «Բեսպուրլիկա Արմենիի» ռուսալեզու օրաթերթը, որը խմբագրում էր Տիգրան Հակոբյանը:

Պաշտոնաթերթերից կարելի է առանձնացնել 1990 թվականի մարտի 6-ին հիմնած Ներքին գործերի նախարարության «02» շաբաթաթերթը (խմբագիր՝ Տիգրան Ֆարմանյան), որը ներկայացնում էր ընթերցողների շրջանում լայն սպառում ունեցող «քրեական

տարեգրությունը»: Հետագայում լայն տարածում էր գտել Հեռուստա-ռադիոպետկոմի «Եթեր» շաբաթաթերթը (խմբագիր՝ Գոռ Ղազարյան), որը հրապարակում էր շաբաթվա հեռուստատեսային ծրագրերը, ինչպես նաև գիտահանրամատչելի ու զվարճալի նյութեր:

Բայց 1990-ականների առաջին կեսին մամուլի հիմնական ուղղվածությունը տրվում էր, այնուամենայնիվ, հասարակական-քաղաքական բովանդակություն ունեցող թերթերով: 1991 թվականի փետրվարի 16-ին սկսեց հրապարակվել «Ազգ» թերթը, սկզբից՝ որպես եռօրյա, այնուհետև՝ օրաթերթ: Լրատվամիջոցի անփոփոխ խմբագիրն է Հակոբ Ավետիքյանը: Չնայած «Ազգն» այս կամ այն ձևով կապված է Սփյուռքի և Հայաստանի ռամկավարական շրջանակների հետ, թերթը հիմնադրման օրվանից որդեգրել էր բազմակարծության ապահովման սկզբունքը՝ փորձելով հավասարակշռություն պահպանել իշխանամետ և ընդդիմադիր ուժերի միջև: «Ազգի» զուտ ստեղծագործական մոտեցումները նույնպես այն ժամանակվա համար նորարարական էին՝ խոսուն վերնագրեր, կարճ լուրերի գերակայություն, նույն հրապարակման մեջ հակառակ կողմերի տեսակետի ներկայացում, լուսանկարների բովանդակության կարևորում: Արևմտյան լրագրության այդ կարևոր սկզբունքների կիրառումը շատ բանով կանխորոշեց հայաստանյան որակյալ մամուլի զարգացումը: Հիշատակման արժանի է նաև, որ «Ազգը» առաջին հայաստանյան օրաթերթն է, որը շարվել և ձևավորվել է համակարգչային եղանակով:

Նույն ժամանակահատվածում հասարակության վրա զգալի ազդեցություն ուներ դաշնակցական մամուլը թե՛ իր պաշտոնական օրգաններով և թե՛ կուսակցության անդամների կողմից հիմնադրված այլ լրատվամիջոցներով: Ազդեցությունը բացատրվում է, մի կողմից՝ սոցիալական խնդիրների սրմամբ և, համապատասխանաբար, քաղաքացիների աճող դժգոհությամբ (արմատական ընդդիմադիր թերթերն արձագանքում էին հասարակական այս դժգոհություններին), մյուս կողմից՝ Արցախյան առաջին պատերազմով պայմանավորված ազգայնական տրամադրությունների տարածմամբ: ՀՅԴ Բյուրոյի պաշտոնաթերթ «Ազատամարտը» հրապարակվում էր 1991 թվականի մարտի 8-ից, խմբագրի պաշտոնն էր զբաղեցնում Մուշեղ Միքայելյանը: Շաբաթաթերթն իր հավելվածներով («Միտք», «Վարուժան»,

«Զանգակ», «Ասպար») արտացոլում էր Դաշնակցության արժեքային համակարգը և սուր քննադատության էր ենթարկում այն ժամանակվա իշխանությանը՝ «ապագային կեցվածքի» համար:

1991 թվականի օգոստոսի 27-ից հրատարակվող «Երկիր» օրաթերթը ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթն էր: Թերթի հիմնադիր խմբագիրն էր ՀՅԴ Բյուրոյի անդամ, ամերիկահայ Աբո Պողիկյանը: Հետագա 2-3 տարիներին «Երկիրը» դարձավ ամենակարդացվող ընդդիմադիր լրատվամիջոցներից մեկը, 1993 թվականին թերթի տպաքանակը հասել էր 55 հազար օրինակի, որն, ըստ ամենայնի, հայաստանյան հասարակական-քաղաքական օրաթերթերի համար ռեկորդային թիվ է: Համեմատաբար բարենպաստ նյութական միջոցների շնորհիվ ունենալով թղթակիցների լայն ցանց՝ թերթը կարողանում էր օպերատիվ կերպով արձագանքել քաղաքական և հասարակական կարևոր իրադարձություններին, ինչպես նաև՝ մարտական գործողություններին՝ ներկայացնելով իր տեսակետը, որն արմատապես տարբերվում էր պաշտոնականից: «Երկիր» և «Ազատամարտ» թերթերի հրապարակումը դադարեցվեց 1994 թվականի դեկտեմբերի 28-ին՝ այն ժամանակ, երբ ՀՀ նախագահի հրամանագրով, իսկ այնուհետև 1995 թվականի հունվարի 13-ին՝ արդարադատության նախարարության որոշմամբ Հայաստանում կասեցվեց Դաշնակցության գործունեությունը՝ հանրապետությունում գործող քաղաքական կուսակցությունների մասին օրենքը խախտելու հիմնավորմամբ: 1998-ի ապրիլից «Երկիրը» սկսեց վերահրատարակվել, սակայն կորցնելով սուր ընդդիմադիր ուղղվածությունը՝ ընթերցողների շրջանակներում նույն հաջողությունն այլևս չունեց:

«Երկիր» և «Ազատամարտի» հետ դադարեցվել էր նաև այդ կուսակցության հետ կապվող մի շարք այլ պարբերականների՝ «Ուրբաթ», «Անդրադարձ», «Առազաստ», «Մարզաշխարհ» շաբաթաթերթերի հրապարակումը: Այդքանով հանդերձ՝ պետք է նշել, որ դրանից հետո էլ մամուլում ընդդիմադիր դաշտը դատարկ չմնաց. բազմաթիվ այլ լրատվամիջոցներ շարունակում էին հանդես գալ սուր քննադատական հրապարակումներով:

«Հնչակ Հայաստանի» շաբաթաթերթը Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության Հայաստանի կենտրոնական պաշտոնաթերթն էր,

որի առաջին համարը լույս տեսավ 1990 թվականի հոկտեմբերի 20-ին: Շաբաթաթերթի հիմնադիրն ու պատասխանատու տնօրենը Եղիա Նաճարյանն էր, որը նաև այդ պարբերականի գրեթե բոլոր հրապարակախոսությունների հեղինակն էր: Թերթն ուներ հստակ արտահայտված իշխանամետ բնույթ և կտրուկ ձևակերպումներով հակադարձում էր ընդդիմադիր գործիչների արտահայտած տեսակետներին:

1990-ականների առաջին կեսին իրենց լրատվամիջոցներն ունեին նաև Կոմունիստական («Հայաստանի կոմունիստ»), Հանրապետական («Հանրապետական»), Դեմոկրատական («Ազդարար») կուսակցությունները, որոնք այդ ժամանակահատվածում նույնպես ընդդիմադիր դիրքերում էին: Ընդհանուր առմամբ, այդ տարիներին Հայաստանում գործում էին 3 իշխանամետ թերթեր, մնացածներն այս կամ այն չափով ներկայացնում էին ընդդիմության կարծիքը՝ իրավիճակ, որն արտացոլում էր այն ժամանակվա քաղաքական մթնոլորտը և մամուլի հարցում իշխանությունների քաղաքականությունը մինչև 1994 թվականի վերջը:

Հայաստանի անկախության առաջին տարիների մամուլի բազմազանության մեջ պետք է հիշատակել նաև այն պարբերականները, որոնք չունեին կուսակցական ուղղվածություն, անմիջականորեն չէին մասնակցում քաղաքական պայքարին, բայց կարևոր դեր էին խաղում հասարակական օրակարգ ձևավորելու առումով: Այդպիսի պարբերականներ էին «Երկիր ավետյաց», «Հայություն», ինչպես նաև ռուսալեզու «Վրեմյա» և «Ուրարտու» թերթերը, որտեղ ուշադիր ընթերցողը կարող էր գտնել իրեն հուզող հարցերի պատասխան:

Պատկերը լիակատար չէր լինի, եթե չնշենք, որ «Մամուլի մասին» օրենքի ընդունումից հետո վերացավ ոչ միայն թերթերի, այլև լրատվական գործակալությունների պետական մենաշնորհը: Պետական կարգավիճակ ունեցող «Արմենպրես» գործակալության հետ մրցակցության մեջ էին մտել «Մնարքը», «Նոյյան տապանը»: Ի դեպ, վերջինս 1992 թվականին առաջին անգամ կիրառեց էլեկտրոնային փոստը՝ որպես լրատվություն տարածելու միջոց:

Այս ժամանակաշրջանի լրատվական դաշտում կարևոր դեր էին խաղում նաև Հայաստանի ԱԳՆ-ում գրանցված արտասահմանյան լրատվամիջոցների թղթակիցները: SUUU-ի, «Ինտերֆաքսի»,

«Ռոյթերսի», «Ֆրանսպրեսի» և այլ լրատվական գործակալությունների և, ինչպես նաև, աշխարհի այլ հեղինակավոր լրատվամիջոցների թղթակիցները նպաստում էին Հայաստանի քաղաքական և սոցիալական իրավիճակի մասին, մեր երկրի արտաքին քաղաքականության, ինչպես նաև Արցախյան պատերազմի մասին ճշմարիտ տեղեկությունների տարածմանը: Իսկ զուտ լրագրության առումով՝ դա նույնպես արժեքավոր դպրոց էր՝ լուրերը մատուցելու և տեղեկատվական նյութերը կառուցելու առումով:

Հարկ է նշել նաև, որ Հայաստանի պետական գերատեսչությունները, մասնավորապես՝ նախագահի աշխատակազմը, կառավարությունը, Արտաքին և Ներքին գործերի նախարարությունները սերտորեն համագործակցում էին բոլոր լրատվամիջոցների հետ՝ անկախ դրանց քաղաքական ուղղվածությունից, և այդ առումով չկար ո՛չ խտրականություն, ո՛չ էլ ավելորդ բյուրոկրատական քաշքշուկ:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ անկախ Հայաստանի առաջին խորհրդարանի ընդունած «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս լրատվամիջոցների մասին», «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» և մի շարք այլ օրենքներ ստեղծել են ժողովրդավարության հիմքերից մեկը հանդիսացող խոսքի ազատության զարգացման համար սուլիդ օրենսդրական հիմք: Այդ բարեփոխումները նպաստել են ազատ մամուլի ինստիտուտի ձևավորմանը: Անկախ այդ գործընթացում տեղ գտած բազմաթիվ սխալներից և տեղատվություններից՝ պետության այդ քայլերը նոր էջ բացեցին հայաստանյան լրատվամիջոցների պատմության մեջ:

** 1980-ականների վերջի և 1990-ականների սկզբի մամուլի մասին որոշ փաստական տվյալներ վերցված են Ներսես Հայրապետյանի կազմած «Մատենագրություն նորանուն հայկական պարբերական մամուլի. 1987-1996» գրքից. Երևան, «Գիրք», 1999:*

ԱՐԱՄ ԱՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ Նախագահի մամուլի քարտուղար, 1992-1994 թթ.

«Առավուտ» օրաթերթի խմբագիր

ԽՂԾԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի երրորդ Հանրապետությունում խղճի և կրոնի ազատության իրավունքի ապահովման ազատականացման հիմքերը դրվել են դեռևս 1988 թվականի համաժողովրդական շարժումով, որն ամբողջությամբ լիբերալ, դեմոկրատական շարժում էր: Նշյալ իրավունքների ազատականացման երաշխիքներից է նաև 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված Հայաստանի անկախության մասին Հռչակագրի «թ» կետը¹, որտեղ ամրագրված է՝ «Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատությունը»: Հաջորդը 1991 թ. ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքն է իր նախաբանով, որտեղ ամրագրված է. «Ղեկավարվելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր զարթոնքը, նրա դարավոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պատվար, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սկզբունքներով և հավատարիմ լինելով քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային Դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթներին՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունում է սույն օրենքը խղճի ազատության և կրոնական կազմակերպության մասին²»:

Խղճի և կրոնի ազատության իրավունքի ապահովման ազատականացման շարքին է դասվում նաև ՀՀ վարչապետի 04.07.1996 թ. № 331 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության կրոնի գործերի պետական խորհրդի վերաբերյալ³»:

¹ Տե՛ս <https://www.gov.am/am/independence/>:

² Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=82>:

³ Տե՛ս <https://www.arlis.am/documentview.aspx?docid=14676>:

խղճի և կրոնի ազատության պատմաիրավական վերլուծությունների հիմքում ընկած է անհատի բարոյական և իրավական ընտրության հիմնախնդիրը: Հիմնախնդիրն վերաբերող առաջին իրավական ակտերը վկայում են, որ ի սկզբանե խղճի ազատությունը դիտարկվել է որպես կրոնական հանդուրժողականության ազատություն:

Խղճի և կրոնի ազատությունը մարդկային էությունը բնութագրող հատկանիշներից է: Անմիջականորեն պայմանավորված լինելով բանական մարդու ներքին բարոյական գիտակցությամբ և նրա հոգեկան ներաշխարհի առանձնահատկություններով՝ խղճի և կրոնի ազատությունը անձի հոգևոր ինքնությունության և անհատականության դրսևորման կարևոր չափանիշ է: Ազատորեն առաջնորդվելով իր խղճով և դավանելով իր նախընտրած համոզմունքները՝ յուրաքանչյուր անհատ յուրօրինակ կերպով կարողանում է լիարժեք ինքնիրացվել տվյալ սոցիալական հանրությամբ: Բարոյական գնահատական տալով նախ իր, այնուհետև՝ այլ անձանց վարքագծին՝ մարդն ընտրում է կոնկրետ վարքագծի տեսակ և չափ, այն համադրում հասարակական հարաբերությունների մյուս մասնակիցների վարքագծի հետ, որի շնորհիվ էլ դրսևորվում է նրա՝ կազմակերպված հասարակությունում ապրելու, արարելու և ստեղծագործելու բնական պահանջմունքը:

Սոցիալական հանրությի յուրաքանչյուր անդամ խղճի և կրոնի իրական ազատությունը իր չափով ներդաշնակեցնում է մարդկային համատեղ գոյակցությանը, ձևավորում կոլեկտիվ բարոյական և հոգևոր արժեհամակարգեր, ընդհանուր համոզմունքներ, դրա հիման վրա՝ հավատ (դավանանք), իսկ կազմակերպված հասարակության ավելի բարձր մակարդակում՝ ազգային ինքնագիտակցություն և այլն:

Հատկանշական է, որ իրավագետների մի մասը խղճի ազատությունը դասում է քաղաքական սահմանադրական իրավունքների շարքին¹: Որոշ ժամանակակից հեղինակներ, օրինակ՝ Է. Գրիգոնիսը և Ա. Կովլերը, նույնպես հնարավոր են համարում խղճի և կրոնի ազատության իրավունքի դասումը քաղաքական իրավունքների շարքին²:

¹ Ст'я Советское государственное право, Москва, 1985, с. 96; **Ф. Хоменок**, Политические свободы граждан СССР, автореферат дисс. канд. юрид. наук, Москва, 1965, с. 11:

² Ст'я **Э. Григонис, В. Григонис**, Конституционное право России, Курс лекций, СПб, 2002, с. 72-73; А. Ковлер, Антропология права, Москва, 2002, с. 380-381:

Իսկ ժամանակակից ռուսական իրավագիտության տեսաբաններից Վ. Ներսիսյանցը կարծում է, որ խղճի և կրոնի ազատությունը պատկանում է անձնական (անհատական) իրավունքների և ազատությունների թվին, որոնք ճանաչում և պաշտպանում են մարդուն՝ որպես բանական և հոգևոր էակ, որպես ազատ անձ¹: Ըստ ֆրանսիացի փիլիսոփա Վոլտերի՝ խղճի ազատությունը իրավունք է, որով մարդը օժտված է բնությունից, և ոչ ոք չի կարող կրոնի հարցերում հարկադրել նրան: Անհրաժեշտ է մարդուն թույլատրել, որ նա աղոթի իր Աստծուն, քանզի յուրաքանչյուր անձ իրավունք ունի իր խղճի թելադրանքով դավանել այս կամ այն կրոնը²:

Մեր կարծիքով՝ առավել ընդունելի է խղճի և կրոնի ազատության իրավունքի ներառումը մարդու սուբյեկտիվ (անձնական) իրավունքների շարքում: Մասնավորապես, կոնկրետ անձի համար այս իրավունքը «բխում է» նրա էությունից, հոգեկան ներաշխարհից, հույզերից, ապրումներից, սուբյեկտիվ ընկալումից և վերջապես՝ անձնական-բարոյական արժեհամակարգից: Այս առումով, նախքան պետության կողմից այս իրավունքի ճանաչումը և դրա օրենսդրական ամրագրումը, անձը արդեն իսկ կողմնորոշված է իր վարքագծի ընտրության հարցում՝ ընտրելով այս կամ այն կրոնը:

Խղճի և կրոնի ազատության իրավունքի առկայությունը և իրացումը վկայում է իրավական, ժողովրդավարական պետության մասին, որը ենթադրում է խղճի և կրոնի ազատության ապահովումը մարդու և քաղաքացու կրոնաիրավական մակարդակի զարգացմամբ:

Հայաստանում եղել են պատմական ժամանակահատվածներ, երբ ամբողջովին սահմանափակվել է խղճի և կրոնի ազատության իրավունքի իրացումը: Այդ ժամանակատատվածներից է 20-րդ դարը՝ հատկապես խորհրդային կարգերի հաստատմամբ, երբ Հայ առաքելական եկեղեցին մշտապես ենթարկվում էր աթեիզմի կործանարար հարվածներին³:

¹ Տե՛ս **В. Нерсесяни**, *Общая теория права и государства*, Москва, 1999, с. 333-337:

² Տե՛ս **В. Гараджа**, *Религиоведение*, Москва, 1994, с. 76:

³ Տե՛ս **Հ. Ալեքսանյան**, *Հոգևոր-եկեղեցական կյանքի անկումը խորհրդային համայնքներում 1920-ական թթ.* // Հայոց պատմության հարցեր, Երևան, 2007, էջ 57:

Խորհրդային իշխանության առաջին օրենսդրական ակտերից է 1920 թ. հունվարի 20-ի «Խղճի ազատության, եկեղեցական և կրոնական ընկերությունների մասին» դեկրետը, որով վերացվում էին դավանանքի հետ կապված բոլոր արտոնությունները¹: Խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո Հայ առաքելական եկեղեցին Սահմանադրությամբ անջատ է համարվում պետությունից²: Դա վերաբերում էր ինչպես Ռուս Ուղղափառ, այնպես էլ Խորհրդային Միության տարածքում գտնվող բոլոր եկեղեցիներին, այդ թվում՝ Հայ առաքելական եկեղեցուն:

1920 թ. դպրոցը վերջնականապես բաժանվում է եկեղեցուց, քիչ ավելի ուշ առգրավվում է եկեղեցական ողջ ունեցվածքը՝ ծիսական սպասքը, թանգարանային նմուշները, ձեռագրական հարստությունը, հողատարածքները, քանդվում կամ պահեստների ու ախոռների են վերածվում հարյուրավոր եկեղեցիներ և վանքեր: Վիճակը սրվում է և հասնում ընդհուպ նրան, որ Հայ առաքելական եկեղեցին պետք է հրաժարվի եղեռնի զոհերին ապրիլի 24-ին հիշատակելուց³:

1920 թ. դեկտեմբերի 17-ին Հայիեղկոմն ընդունում է «Դեկրետ հոգևոր հաստատություններին պատկանող կուլտուրական հիմնարկությունների պետականացման մասին», որով նշված հիմնարկություններն անցնում են Լուսժողկոմատի⁴ տնօրինության ներքո⁵: Նույն թվականի դեկտեմբերի 31-ին Լուսժողկոմատի հրամանով արգելվում են կրոնական առարկաների դասավանդումը դպրոցներում և կրոնական ծեսերի կատարումը եկեղեցիներում⁶: Պետականացվում է Էջմիածնի մատենադարանը, իսկ 1920 թ. դեկտեմբերի 19-ին բռնագրավվում են Էջմիածնի վանքի շինություններն ու ունեցվածքի մի մասը⁷: 1921 թ. խորհրդային կարգերի հաստատումից հետո մինչև 1930-ական թվականները Հայաստանում, Արցախում, ինչպես նաև Խորհրդային

¹ Հմմտ. Պ. Սերոբյան, Հայ Առաքելական Եկեղեցու իրավական կարգավիճակը // Քրիստոնեություն և իրավունք, էջ 133:

² Տե՛ս Ս. Գուդուլյան, Отделение церкви от государства, Москва, 1924, с. 1:

³ Տե՛ս **Ա. սրկ. Մալխասյան**, Էջեր խորհրդային կարգերի օրոք Հայ Եկեղեցու և պետության փոխհարաբերությունների պատմությունից (ավարտաճառ), Ս. Էջմիածին, 2000, էջ 10:

⁴ Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 16:

⁵ Տե՛ս Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953, Երևան, 1999, էջ 114: ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1, էջ 16:

⁶ Տե՛ս «Կոմունիստ», 4 հունվարի, 1921, էջ 4, և 6 հունվարի, 1921, էջ 2:

⁷ Բանբեր Հայաստանի արխիվների, 1983, թիվ 2, էջ 46: «Կոմունիստ», 18 դեկտեմբերի, 1920, էջ 3:

Միության տարբեր հանրապետություններում փակվել էին գրեթե բոլոր հայկական եկեղեցիները: Դրանց մի մասը քանդվել էր, իսկ մյուս մասը՝ վերածվել ակումբների և պահեստների, վանքերը անխնամ վիճակում պահպանվում էին որպես պատմական հուշարձան-կոթողներ. կրոնական ցանկացած ծես արգելված էր օրենքով¹:

1922 թ. հունվարի 2-ին հրատարակվում է դեկրետ «Եկեղեցիների և թանգարանային ունեցվածքի բռնագրավման» վերաբերյալ, որը կիրառության մեջ է դրվում նույն թվականի մարտից²: Դրա համաձայն՝ Հայ առաքելական եկեղեցուց բռնագրավվում է թանգարանային և հոգևոր արժեք ներկայացնող գրեթե ողջ գույքը: 1922 թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կենտրոնական կոլլեկտիվը ընդունվում է «Խղճի ազատության մասին» դեկրետը³: Այն ուներ և՛ դրական, և՛ բացասական կողմ: Դրա-

¹ Տե՛ս Հայ առաքելական եկեղեցի, Քրիստոնեության ծագումը, Հայ առաքելական եկեղեցին Հայաստանի անկախությունից հետո 1991-2004, <http://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=5624&pid=61>:

² Տե՛ս **Ա. Տեղչանյան**, Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945թ., էջ 26):

³ 1. Յուրաքանչյուր քաղաքացի կարող է դավանել ցանկացած կրոն կամ չդավանել ոչ մի կրոն, իսկ մինչ այդ՝ հին ցարական օրենքով, արգելվում էր քաղաքացիներին պատկանել այս կամ այն կրոնին:

2. Բոլոր եկեղեցիները և կրոնական համայնքները կարող են աստվածապաշտական ծիսակատարություններ կատարել առանց սահմանափակումների և արգելքների:

3. Արգելվում է տեղական իշխանություններին այլափոխ կարգադրություն անել, որը կսահմանափակի մարդկանց խղճի ազատությունը:

4. Կրոնական ծեսերի ազատ արարողությունը ապահովվում է այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չեն ոտնահարում հասարակական կարգը, ինչպես նաև՝ քաղաքացիների և Խորհրդային իշխանության իրավունքները: Նման դեպքերում տեղական իշխանությունները կիրառում են իրենց լիազորությունները հասարակական կարգն ապահովելու համար:

5. Քահանայի կամ քահանայապետի կողմից, եկեղեցում քարոզի ընթացքում, էթե խոսվի քաղաքական թեմայի շուրջ, այդ ժամանակ իշխանության կողմից եկեղեցական քարոզը կճանաչվի որպես հանրահավաք:

6. Եկեղեցին պետությունից բաժանվելով՝ բոլոր կրոնները և եկեղեցիները իրավահավասար են դառնում, ինչպես նաև ոչ մի եկեղեցի կամ կրոնական համայնք կառավարությունից աջակցություն չի ստանում:

7. Կառավարությունը հավատացյալների կրոնական համոզմունքների մեջ չի միջամտում, բայց նա իրավունք ունի պահանջելու, որ ամեն մարդ սրբորեն կատարի իր քաղաքացիական պարտականությունները: «Ոչ մի մարդ չի կարող հրաժարվել քաղաքացիական պարտականություններից՝ պատճառ բերելով իր կրոնական համոզմունքները»: Բացառիկ դեպքերում այդպիսի բան կարող է լինել միայն ժողովրդական դատավորի թույլտվությամբ, բայց այդպիսի դեպքերում էլ քաղաքացիական պարտականությունները փոխարինվում են մեկ ուրիշով (տե՛ս Ն. Լուկին, Եկեղեցի և պետություն, Եկեղեցին պետությունից բաժանելու մասին եղած դեկրետը, էջ 44-55: Ս. Բեիբուդյան, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության «1921-1938 թթ.», Երևան, 1994, էջ 4):

կան կողմն այն է, որ սահմանված է մարդու մտքի, խղճի, կրոնի ազատության, ինչպես նաև կրոնական ծիսակատարությունների ազատ անցկացման իրավունքը, որը, սակայն, կրում էր ձևական բնույթ և չէր իրագործվում: Իսկ բացասական կողմն այն է, որ Հայ առաքելական եկեղեցին նույնացվում է մյուս կրոնական կազմակերպությունների հետ:

1924 թ. հոկտեմբերի 13-ին Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմի նախագահությունը որոշում է ընդունում հոգևորականության քայքայման մասին¹: Այդ օրենքի կիրառմամբ Հայ առաքելական եկեղեցին զրկվում էր ևս մեկ՝ ազատ գործունեության իրավունքից: Օրենքի կիրառման միջոցով Խորհրդային Միությունը ցանկանում էր ամեն կերպ սահմանափակել Հայ առաքելական եկեղեցու իրավունքները՝ պաշտամունքի և այլ կարևոր նպատակների համար ծառայող շենքերի, շինությունների փակման և բռնագրավման միջոցով: Ասվածը հիմնավորվում է 1925 թ. հունվարի 19-ին ընդունված օրենքով, որի համաձայն՝ բռնագրավվում են Գևորգյան հոգևոր ճեմարանի շենքը, վանքի մատենադարանը, տպարանը, թանգարանը, միաբանական շենքը, էլեկտրական կայանը, շտեմարանը, սեղանատունը,

¹ Ըստ այդ որոշման՝ պետք է իրականացվեին հետևյալ քայլերը՝
1) Հոգևորականության քայքայման նպատակով (տվյալ կազմակերպությունը) պետք է շրջվի դեպի «նոր եկեղեցու» կողմնակիցների կազմակերպած միավորման սկզբնական խմբերը,
2) «Նոր եկեղեցու» կողմնակիցների սկզբնական խմբերի կազմակերպման առթիվ անհրաժեշտ համարել «նոր եկեղեցու» ծրագրի ձևավորումը:
3) Հոգևորականության քայքայման նպատակով տեղական կազմակերպությունների ներգրավումն անցկացնել գաղտնի՝ խիստ սահմանափակելով այդ նպատակով ներգրավված ընկերների շրջանակները: Սա հնարավորություն կտար կոմունիստներին ազատվելու Հայ առաքելական եկեղեցուց, բայց վերջնական նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր նաև մի այնպիսի օրենք, ինչպիսին «Կրոնական համայնքների մասին» օրենքն էր, որը 1925 թ. հունվարի 19-ին Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, Կենտգործկոմը և Ժողկոմխորհը միացյալ նիստում ընդունեցին: Օրենքում մասնավորապես նշվում էր, որ պաշտամունքի շենքերի փակման հիմք են ծառայում՝
1. Կրոնական կազմակերպության լուծարումը,
2. Հավատացյալների կողմից հակահեղափոխական քայլերին մասնակցելը,
3. Պաշտամունքի շենքը երկու տարի շարունակաբար չօգտագործելը,
4. Պաշտամունքի գույքի զեղծումը կամ վատնումը,
5. Աշխատավոր մասսաների բազմաստորագիր հավաքական դիմումների, որոշումների և այլ ձևով պաշտամունքի շենքերի փակումը պահանջելու և տվյալ տարածքում բնակչության, բժշկա-սանիտարական և կուլտուր-կրթական նպատակների համար շենքի սուր կարիք զգացվելը (տե՛ս Հայաստանի Հանրապետության նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 113, ց. 5, գ.107, թ. 36, ինչպես նաև ֆ. 113, ց. 5, գ.107, թ. 36):

փուռը, Սինոդի շենքը, հյուրանոցը, Ս. Հռիփսիմեի վանքը, Զվարթնոցը, նոր վեհարանը, Ս. Էջմիածնին ենթակա բոլոր այգիները¹:

1926 թ. Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտկոմի նախագահության՝ «Հայաստանի պետական քաղաքական վարչության իրավունքների, վարչական արտաքսման, համակենտրոնացման ճամբարների մասին» որոշմամբ սկիզբ է դրվում հայ հոգևորականների արտաքսման և ոչնչացման գործողություններին, որի հետևանքով 10-15 տարիների ընթացքում բազում հայ հոգևորականներ կամ սպանվում են, կամ արտաքսվում Սիբիր: Եվ Երևանում, և՛ շրջաններում փակվում կամ քանդվում է եկեղեցիների մեծ մասը²:

Պետության և եկեղեցու իրավահարաբերությունները փոքր-ինչ կարգավորվում են 1940 թվականից, երբ Հայ առաքելական եկեղեցին աստիճանաբար սկսում է վերագտնել տարիներ առաջ կորցրած իր իրավունակությունը և դիրքը:

Թե՛ իրավական, թե՛ կրոնական առումով՝ փոխվում է իշխանության մոտեցումը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: Օրինակ՝ Հայ առաքելական եկեղեցու առաջնորդը դիմում էր ինչպես տեղի, այնպես էլ Խորհրդային Միության իշխանության մարմիններին՝ փորձելով աքսորավայրերից ազատել բանտարկյալ հոգևորականներին և վերաբացել կարևոր նշանակություն ունեցող որոշ վանքեր ու եկեղեցիներ³: Այս տեսանկյունից հատկապես կարևորվում են Գևորգ Չորեքյան կաթողիկոսի ջանքերը՝ ամրապնդելու Հայ առաքելական եկեղեցու հիմքերը՝ բարձրացնելով Ս. Էջմիածնի դարավոր հեղինակությունն ու դերը:

1941 թվականին Խորհրդային Միությունը ստիպված էր փոփոխություններ կատարել երկրի ներքաղաքական կյանքում՝ ժամանակավորապես դադարեցնելով հակաեկեղեցական քաղաքականությունը՝ ժողովրդին միասնական պայքարի առաջնորդելով ընդհանուր թշնամու դեմ:

¹ Տե՛ս Զաւեն աւ. քհնյ. Արզումանեան, Ազգապատում, Դ հատոր, Նիւ Յորք, 1997, էջ 1:

² Տե՛ս Թ. սրկ. Համբարձումյան, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության իրավական փոխհարաբերությունները, էջ 47:

³ Տե՛ս **Ա. Տերչանյան**, Հայ առաքելական եկեղեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939-1945), էջ 84:

1941 թ. սկիզբ առած Հայրենական մեծ պատերազմի տարիներին Հայ առաքելական եկեղեցին, իր սահմանափակ հնարավորություններով հանդերձ, կանգնում է Խորհրդային Միության կողքին մի շարք նախաձեռնություններով, օրինակ՝ Մայր Աթոռը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն ստեղծելու համար հատկացնում է մի շարք թանկարժեք իրեր և խոշոր գումար¹: Այնուհետև կազմակերպում է հանգանակություններ² ու դրամահավաքներ Հայ առաքելական եկեղեցու հետեվորդների շրջանում³: Խորհրդային իշխանության կողմից այս փաստերը հաշվի են առնվում, և Ի. Ստալինը 1944 թ. մի նամակով ողջունում է և շնորհակալություն է հայտնում Հայ առաքելական եկեղեցու թեմերին՝ Կարմիր բանակին աջակցելու համար⁴: Իսկ 1945-ին Հայ առաքելական եկեղեցուն թույլատրվում է կաթողիկոսական ընտրություններ անցկացնել, ինչպես նաև վերսկսել «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը: Այս քայլերով Խորհրդային իշխանությունը ցույց էր տալիս իր դրական վերաբերմունքը և վստահությունը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ:

Հայ առաքելական եկեղեցին սկսում է զարթոնք ապրել, երբ 1950 թ. կաթողիկոսական գահին բազմում է Վազգեն Ա. կաթողիկոսը: Ավելանում է հոգևորականության թիվը, վերանորոգվում ու կառուցապատվում են Ս. Էջմիածինը, բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր (Ս. Գայանե, Ս. Հռիփսիմե, Ս. Շողակաթ, Գեղարդավանք, Խոր Վիրապ), ուշադրություն է դարձվում կրթությանը ճեմարանում, խորացվում են հայրենիք-սփյուռք, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերությունները: Իսկ 1967 թ., երբ կառուցվում է Եղեռնի զոհերի հուշահամալիր Ծիծեռնակաբերդը, Հայ առաքելական եկեղեցիներում սկսում են զոհերի հիշատակի համար հոգեհանգիստ կատարել: Սա փաստում է այն մասին, որ Խորհրդային Միության կոշտ քաղաքականությունը Մայր Աթոռի և ամբողջ Հայ առաքելական եկեղեցու հանդեպ

¹ Տե՛ս **Ս. Կերտող** (Ս. Ստեփանյան), Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 140:

² Տե՛ս **Վ. Ենգիբարյան, Ա. Չախոյան**, Հոգևոր իրավունքի հիմունքներ, էջ 46:

³ Տե՛ս **Ս. Բեհբուդյան**, Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք Զ, Երևան, 1999, էջ 178-179:

⁴ Տե՛ս **Ա. Տերչանյան**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Երևան, 2010, էջ 40, ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 409, ց. 1, գ. 720, թ. 1:

աստիճանաբար մեղմանում է, որը առիթ է հանդիսանում Հայ առաքելական եկեղեցու համար՝ բռնելու զարգացման և բարգավաճման ուղին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը աստիճանաբար ձեռք էր բերում արտաքին դիվանագիտական հարաբերություններ վարելու իրավունք, ինչը հնարավորություն էր տալիս՝ համախմբելու իր թեմերը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շուրջը: Իրադարձությունների դրական տեղաշարժը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մղում էր իրավական դաշտում կայունացնելու իր դիրքերը, արտահայտելու սեփական դիրքորոշումները, որոնք վերաբերում էին եկեղեցական և մասամբ արտաքին դիվանագիտական հարցերին:

1991 թ., երբ Հայաստանի Հանրապետությունն անկախացավ, Հայ առաքելական եկեղեցին փորձում էր սատարել նորանկախ պետությանը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ոլորտներում: Հայ առաքելական եկեղեցին ջանք չէր խնայում եկեղեցի-պետություն իրավահարաբերությունները ստեղծելու համար: Օրինակ, 1990 թ. հուլիսի 20-ին նորանկախ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի անդրանիկ նիստում հայրապետական մաղթանքով, կոչով հանդես եկավ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Պալճյանը¹, ապա երկար տարիների դադարից հետո 1991 թ. սեպտեմբերի 29-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը օրինեց նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին մյուռոնը՝ անվանելով «Անկախության մյուռոն»²:

Ինչպես վերը նշել ենք՝ Խորհրդային Միության անաստվածության տարիներին Հայաստանում գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները վերածվել էին ակումբների, պահեստների և ախոռների, սակայն Հայաստանի անկախացումից հետո համարյա բոլոր վանքերն ու եկեղեցիները դարձան գործող, իսկ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող եկեղեցիներն ու պատմամշակութային ժառանգություն համարվող կառույցներն ընդգրկվեցին պետության հոգածության ներքո:

¹ Տե՛ս <http://tert.nla.am/archive/HGG%20AMSAGIR/echmiadzin-vagharshapat/1990/10-12.pdf>:

² Տե՛ս <https://www.qahana.am/am/christian/show/924741049/30>:

1991 թ. հունիսի 17-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը գործում է մինչ օրս: Լինելով իր ընդունման ժամանակաշրջանի համար առաջադեմ և ժողովրդավարական փաստաթուղթ՝ այս օրենքը հավատարիմ է միջազգային տարբեր դաշնագրերի որդեգրած սկզբունքներին:

Ինչպես նշվեց, Հայաստանի երրորդ Հանրապետությունում ձևավորվեց խղճի և կրոնի ազատության իրավունքի ազատականացումը, ինչը հիմք հանդիսացավ Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք կրոնական կազմակերպությունների՝ կրոնական հանդուրժողականության՝ ոլորտում ազատ գործունեության համար:

Բացի ՀՀ Սահմանադրությամբ և գործող օրենսդրությամբ ամրագրված կոնկրետ իրավակարգավորումներից, Հայաստանի Հանրապետությունում խղճի և կրոնի ազատության սահմանադրական իրավունքի իրական երաշխավորվածության մասին է վկայում նաև հասարակությունում առկա հանդուրժողականության վերաբերմունքը տարբեր կրոնական կազմակերպությունների գործունեության նկատմամբ:

Կրոնական հանդուրժողականության դասական օրինակ է այսօր Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված 65 կրոնական կազմակերպությունների առկայությունը:

Մեր հոդվածի շրջանակում որպես խղճի և կրոնի ազատության իրավունքի անմիջական երաշխիքներ կարող են դիտարկվել այս օրենքի մի քանի հոդվածներ: Մասնավորապես, ըստ հիշյալ օրենքի 1-ին հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում ապահովվում է քաղաքացիների խղճի և կրոնական դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն է որոշում իր վերաբերմունքը

¹ Կրոնական հանդուրժողականությունը կրոնի հետևորդների կողմից հանդուրժողական վերաբերմունքն է այլ կրոնական համայնքի ներկայացուցիչների նկատմամբ: Յուրաքանչյուր անձ շարժվում է իր կրոնական համոզմունքներով, ճանաչում և հարգում է այլոց կրոնական իրավունքները: Կրոնական հանդուրժողականությունը կարելի է բաժանել երկու մասի՝ «դրական» և «բացասական»:

«**Դրական**» ընկալմամբ՝ կրոնական հանդուրժողականությունը այլոց կրոնական համոզմունքները, արժեքները, գաղափարները ճանաչելն ու հարգելն է:

«**Բացասական**» ընկալմամբ՝ կրոնական հանդուրժողականությունը ենթադրում է անհանդուրժողականություն այլոց կրոնական պատկանելիությանը, ինչի արդյունքում կրոնական հողի վրա ի հայտ են գալիս թշնամանքի, ատելության դրսևորումներ և բախումներ:

կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր»¹:

1991 թ. հունիսի 17-ին ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը փոփոխվել և լրացվել է 1997 թ. սեպտեմբերի 19-ին և 2001 թ. ապրիլի 25-ին, ամփոփում է 20-րդ դարավերջի և 21-րդ դարասկզբի Հայ առաքելական եկեղեցու իրավական կարգավիճակը:

1991 թ. ընդունված «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը պետության կողմից Հայ առաքելական եկեղեցու հանդեպ դրական վերաբերմունքի արտահայտություններից է, որը բխում է պետության վերնախսավի քաղաքական կամքից: Սակայն այդ օրենքը, իր բոլոր առավելություններով հանդերձ, ուներ մեկ հիմնական բաց. Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին համահավասարեցվում էր կրոնական կազմակերպություններին²: «Կրոնական կազմակերպություն» հասկացության ներքո ընկալվում են բոլոր այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են կրոնական գործունեություն՝ միևնույն ժամանակ չընդունելով քրիստոնեական վարդապետությունը:

Պետության դրական վերաբերմունքի շարքին կարելի է դասել նաև «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը, որի 9-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է ՀՀ կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրված համաձայնագրով սահմանված կարգի համապատասխան Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ կանոնական ծեսով իրագործած ամուսնություններն ու հռչակած ամուսնալուծությունները»³:

¹ Տե՛ս «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված (համար Ն-0333-1, 17.06.1991, սկզբնաղբյուրը՝ ՀՀԳԽՏ 1991/12):

² Տե՛ս Լ. Ավագյան, Եկեղեցի-Պետություն իրավական փոխհարաբերությունների շուրջ // «Նորավանք» հիմնադրամ, հոդվածներ և վերլուծություններ, 13.09.2007, <http://www.noravank.am>:

³ ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», հոդված 9 (ընդունվել է՝ 14.03.2007, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 28.03.07/17(541), հոդ. 359):

Կարծում ենք՝ անհրաժեշտ է, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որպես հայ ժողովրդի հոգևոր կյանքի, ազգային մշակույթի, ազգային ինքնության պահպանման գործում կարևոր առաքելություն ունեցող եկեղեցի, օգտվի իր հատուկ սահմանադրական կարգավիճակից և ճանաչվի ազգային եկեղեցի:

Մի շարք պետությունների սահմանադրություններով (օրինակ՝ Դանիա, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Մեծ Բրիտանիա, Մոնակո, Նորվեգիա, Վրաստան) նախատեսված է ազգային եկեղեցու հատուկ կարգավիճակ: Վենետիկի հանձնաժողովը 2017 թ. «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի առնչությամբ ներկայացված կարծիքի 23-րդ կետում նշել է, որ եկեղեցու առանձնահատուկ կարգավիճակն ինքնին անթույլատրելի չէ, պարզապես չպետք է թույլ տալ, որպեսզի այն հանգեցնի կրոնական կամ համոզմունքի այլ համայնքների նկատմամբ խտրականության, իսկ 24-րդ կետում նշելով, որ կրոնական կազմակերպություններից մեկի համար տարբերվող իրավական կարգավիճակ սահմանելն ինքնին մարդու իրավունքների միջազգային պահանջների խախտում չէ¹:

Եվրոպական դատարանը 1989 թ. «Darby v. Sweden» գործով որոշման մեջ անդրադարձել է ազգային եկեղեցի ունենալու փաստին: «Պետական եկեղեցի ունենալու իրողությունը» Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չէ: Պետական եկեղեցի ունենալու իրողությունը, որպեսզի համապատասխանի նշյալ կոնվենցիայի 9-րդ հոդվածի պահանջներին, պետք է ներառի հատուկ երաշխիքներ անհատի կրոնական ազատությունների վերաբերյալ: Մասնավորապես, ոչ ոք չի կարող ստիպված անդամակցել կամ լքել պետական եկեղեցին:

Միջազգային փորձը թույլ է տալիս եզրակացնելու, որ սահմանադրությամբ և օրենքներով պատմական նշանակություն ունեցող ազգային եկեղեցուն հատուկ կարգավիճակ տալու որևէ արգելք սահմանափակված չէ, իսկ այդ կարգավիճակից բխող որոշ

¹ Տե՛ս <https://www.osce.org/hy/odihr/352161>:

առանձնահատկություններ սահմանելը չի դիտարկվում իբրև անհատի խղճի և կրոնի ազատության իրավունքի խախտում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերը որևէ արգելք չեն պարունակում եկեղեցի-պետություն հարաբերություններում: Եկեղեցու և պետության հարաբերությունների կարգավորումը թողնված է տվյալ պետության հայեցողությանը:

Հավելենք, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի», ինչպես նաև «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի» որևէ նախադեպ չի պարունակում բացառիկ պատմական նշանակություն ունեցող ազգային եկեղեցու համար հատուկ կարգավիճակ սահմանելու արգելք¹:

Հարկ ենք համարում նշել, որ ավանդական եկեղեցիներին արտոնություններ շնորհելը լայն տարածում ունի նաև Արևմտյան Եվրոպայի երկրներում: Միջազգային այս փորձը վկայում է, որ ավանդական եկեղեցիներին վերապահվում են բազմաթիվ արտոնություններ, քան ընդունված է հայրենական իրավական ոլորտում:

ՀՀ կրոնի գործերի պետական խորհրդի առաջարկությամբ 1997 թ. հուլիսի 14-ի ՀՀ կառավարության № 274 որոշմամբ՝ վճռվեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եկեղեցիներ և վանքեր հանձնել: Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ և Սուրբ Աստվածածին, Նորատուս գյուղի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Դոփունց վանք), Ձորագյուղի Մասրունց Անապատ Սուրբ Կարապետ, Վարդենիկ գյուղի Իշխանավանք եկեղեցիները, Արծվանիստ գյուղի Վանեվանք, Մաքենիս գյուղի Մաքենյայց վանքերն անհատույց հանձնվեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ սեփականության իրավունքով²: 2000 թ. մարտի 17-ին ՀՀ կառավարության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ստորագրվեց «Մտադրությունների հուշագիր», որը հիմք պիտի հանդիսանար եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները կարգավորելու համար: Սա պատմական կարևոր փաստաթուղթ էր,

¹ Տե՛ս Ա. Ղամբարյան, Թ. Շաքարյան, Դոկտորինալ հայեցակարգ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու:

² Տե՛ս ՀՀ կառավարության № 274 որոշումը՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն եկեղեցիներ և վանքեր հանձնելու մասին (սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 11.08.97, ընդունման ամսաթիվը՝ 14.07.1997):

որն առաջին անգամ ստորագրվում էր Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու և Հայաստանի երրորդ Հանրապետության միջև:

Ըստ «Մտադրությունների հուշագրի»՝ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու դերը հայ ազգի ինքնության պահպանման և Հայաստանի Հանրապետության կայացման ու զարգացման գործում ունեցած մեծ ավանդի համար. «Առանձնակի կարևորելով պետականության հետագա զարգացման և ամրապնդման գործում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անուրանալի դերակատարումն ու նշանակությունը, ինչպես նաև առաջնորդվելով մարդու իրավունքների և հիմնարար ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքներով և նորմերով՝ նպատակ ունենք առավել պարզորոշել Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոխհարաբերությունների բնույթը և բովանդակությունը»¹:

2007 թ. ընդունելով «Հայաստանի Հանրապետության և Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը² Հայաստանը երկրորդ հանրապետությունն էր (Վրաստանից հետո), որ օրենսդրական ճանապարհով ազգային եկեղեցին տարանջատում է երկրում գտնվող մյուս կրոնական կազմակերպություններից՝ ընդգծելով ազգային եկեղեցու դերը և բացառիկ նշանակությունը ժողովրդի կյանքում:

Սա ինքնին օրինական դաշտ է բերում եկեղեցու և պետության միջև արդեն առկա օրենսդրական փոխհարաբերությունները կրթական, մշակութային և այլ ոլորտներում՝ ավելի ընդարձակելով դրանց շրջանակը և էլ ավելի խորացնելով եկեղեցի-պետություն իրավական հարաբերությունները:

Պետություն-եկեղեցի իրավական հարաբերությունների զարգացման համար հիմք հանդիսացավ նաև այն, որ պետությունն ըստ արժանվույն գնահատեց հասարակության մեջ կրոնական դաստիարակության նշանակությունն ու կարևորությունը, որում մեծ

¹ Տե՛ս «Մտադրությունների հուշագիր Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև», 17.03.2000:

² Տե՛ս «ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է՝ ՀՕ-80-Ն, 22.02.2007):

դերակատարություն ունի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին¹:

Ամփոփելով Հայաստանի երրորդ Հանրապետությունում խղճի և կրոնի ազատության իրավունքի ապահովման ազատականացման վերաբերյալ հողվածը՝ կարծում ենք, որ այսօր Հայաստանում կրոնական հանդուրժողականության առկայությունը հասարակության մեջ պետության վարած ճիշտ և ճկուն քաղաքականության արդյունք է, որը սկիզբ է առել դեռևս Հայաստանի երրորդ Հանրապետության ձևավորմանը զուգահեռ:

ՎԱԿԵ ՍԱՅԱԴՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

¹ Հմմտ. Վ. Ենգիբարյան, Ա. Չախոյան, Հոգևոր իրավունքի հիմունքներ, էջ 57:

ՔԱՂԱՔԱՑԻՎԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Խորհրդային հասարակարգը արևմտյան ժողովրդավարություններից տարբերող հիմնական առանձնահատկությունը թերևս այդ հասարակարգի վերից վար կազմակերպման ու կառավարման մոդելն էր, որտեղ թե՛ հասարակությունը, թե՛ այդ հասարակության առանձին հատվածները ձևակերպվում, ձևավորվում և բովանդակություն էին ստանում վերևից՝ Կոմունիստական կուսակցության կողմից: Հասարակարգի նման մոդելը գրեթե տեղ չէր թողնում պաշտոնական գաղափարախոսությունից տարբերվող, կամավորության սկզբունքով արժեքների շուրջ ձևավորվող միավորումների համար, իսկ նման միավորումների առաջացման ցանկացած փորձ կանխվում էր սաղմնային փուլում: Այդ իսկ պատճառով քաղաքացիական հասարակությունը, որը, մի շարք հետազոտողների կարծիքով՝ ներառում է պետական և մասնավոր հատվածից և քաղաքական կուսակցություններից դուրս գոյություն ունեցող այն բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ միավորումներն ու կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական ու հասարակական շարժումներն ու նախաձեռնությունները, որոնք հիմնվում են արժեքների, կամավարության և բազմակարծության սկզբունքների վրա, խորհրդային հասարակարգում պարզապես տեղ չէր կարող ունենալ: Ուստի անկախ, ինքնաբուխ, ինքնակազմակերպման սկզբունքով ձևավորվող և արժեքահենք քաղաքացիական հասարակության առաջացումը ԽՍՀՄ փլուզման, ինչպես նաև նորանկախ Հայաստանի ազատականացման առաջին նշաններից էր:

Գորբաչովյան վերակառուցման և գլաստնոստի քաղաքականությանը զուգահեռ՝ 1980-ականների վերջին Խորհրդային Միությունում սկսեցին ձևավորվել պետական վերահսկողությունից դուրս որոշ քաղաքացիական նախաձեռնություններ: Հայաստանում ևս խորհրդային հասարակարգի փլուզման առաջին նշաններից մեկը կենտրոնական իշխանության վերահսկողությունից դուրս ինքնակազմակերպվող

քաղաքացիական նախաձեռնությունների ի հայտ գալն էր: Կոմունիստական ճամբարի մի շարք երկրներում առաջին նման միավորումները հիմնականում ձևավորվում էին բնապահպանական խնդիրների շուրջ¹: Կոմունիստական երկրներում միայն որոշ տիպի հասարակական ակտիվություն էր օրենքով թույլատրելի: Բնապահպանությանն առնչվող խնդիրների բարձրաձայնումը այդ թույլատրելի շրջանակում էր: Հետագայում, սակայն, բնապահպանական խնդիրների շուրջ առաջացած խմբերն ու քաղաքացիական նախաձեռնությունները վերածում էին լայն ազգային կամ ժողովրդավարական քաղաքացիական շարժման՝ կոնկրետ քաղաքական և քաղաքացիական պահանջներով: Մինչդեռ նման շարժումները հաճախ հանդես էին գալիս «ազգային արժեքների պաշտպանության» դիրքից, իրականում դրանք դեմ էին գործող քաղաքական իշխանությանը²: Ղարաբաղյան շարժումը, որը Հայաստանում սկիզբ առավ 1988-ին, ճիշտ է, չի զարգացել բնապահպանական շարժումից, սակայն բնապահպանական խնդիրները միշտ առկա են եղել զանգվածային հանրահավաքների ժամանակ և անգամ արդյունավետ կերպով օգտագործվել 1990 թ. նախընտրական արշավում, որն ի վերջո իշխանության բերեց Հայոց համազգային շարժմանը³:

Չնայած Ղարաբաղյան շարժումը և այդ շարժման հիմքում ընկած, ինչպես նաև շարժման ընթացքում ձևավորված արժեքներն ու գաղափարական մոտեցումները (ազգային, ժողովրդավարական, ազատական) կազմեցին նորանկախ Հայաստանի քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնական գաղափարական հենքը՝ այդ քաղաքացիականությունը, ինչպես որոշ առումներով Ղարաբաղյան շարժումն ինքը, սնուցվում և զարգանում էր ոչ միայն Ղարաբաղյան շարժման ձևավորած շրջանակում, այլև մի շարք այլ հանգամանքների ազդեցությամբ: Այդ հանգամանքներից կարելի է առանձանցնել, մասնավորապես, հետևյալը.

¹ Abrahamyan L. H., *Aggressiveness and National Violence in the Former USSR*. In *Divided Europeans: Understanding Ethnicities in Conflict*, Kluwer Law International 1999, pp. 59-75:

² Abrahamyan L. H., *Aggressiveness and National Violence in the Former USSR*. In *Divided Europeans: Understanding Ethnicities in Conflict*, Kluwer Law International 1999, pp. 59-75:

³ Նույն տեղում:

- ◀ Հասարակական կազմակերպությունների սահմանումը, տեղը և դերը խորհրդային տարիներին,
 - ◀ Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժումներն ու խմբերը,
 - ◀ Հայաստանի անկախացման գործընթացն ու անկախության առաջին տարիների համատեքստը:
- Արանցից յուրաքանչյուրին անդրադառնում ենք ստորև:

Հասարակական կազմակերպությունների սահմանումը, տեղը և դերը խորհրդային տարիներին

Մինչդեռ աշխարհի շատ երկրներում քաղաքացիական հասարակության կազմակերպված/ֆորմալ կառույցները հաճախ կոչվում են ոչ կառավարական կազմակերպություններ՝ շեշտելով վերջիններիս՝ պետական ինստիտուտներից դուրս լինելու հանգամանքը, անկախության առաջին իսկ տարիներին Հայաստանի իշխանությունները նախընտրեցին նման միավորումների նկատմամբ կիրառել «Հասարակական կազմակերպություն» եզրը, որն արդեն իսկ պարտադրում էր որոշակի բովանդակություն: Բանն այն է, որ Խորհրդային Միությունում Հասարակական կազմակերպություններն (ՀԿ) իրականում գործող իշխանության կցորդն էին: Կոմունիստական կուսակցությունը, հենվելով իր գաղափարախոսության վրա, ինքն էր սահմանում Հասարակական կազմակերպությունների առաքելությունը, նպատակները, գործառույթներն ու գործունեության շրջանակը:

Նման կազմակերպություններ էին ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում գործող և նաև համամիութենական ներկայություն ունեցող տարբեր ստեղծագործողների միությունները, ինչպես, օրինակ, Գրողների միությունը, Նկարիչների միությունը, Կոմպոզիտորների միությունը, Ճարտարապետների միությունը և այլն: Թվում է, թե այս կազմակերպությունները ստեղծվել էին համանման մասնագիտական հետաքրքրություններ և շահ ունեցող մարդկանց միավորելու համար, և նրանց առաջնային առաքելությունը պետք է լիներ իրենց անդամների մասնագիտական շահերն առաջ մղելը և նրանց խմբային շահը ներկայացնելը: Սակայն իրականում դրանք մեկ հովանոցի տակ էին հավաքում տարբեր հայացքներ ու մոտեցումներ

ունեցող մարդկանց՝ վերջիններիս ավելի կառավարելի դարձնելու և Կենտրոնից իջեցվող հրահանգներն ավելի արագ իրագործելու համար: Այս միությունները ստեղծվել էին վերևից ներքև՝ 1930-ականներին իրենց մեջ կլանելով մինչ այդ եղած միավորումների ու խմբակների ողջ բազմազանությունը: Այսպես, օրինակ, մինչև 1934 թ. օգոստոսը Հայկական ԽՍՀ գրողները մտնում էին տարբեր գրական միավորումների մեջ (Հայ գեղարվեստական գրականության աշխատավորների միություն, Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա, «Նոյեմբեր» գրական միություն և այլն), սակայն 1934 թ. օգոստոսին հիմնվում է Հայաստանի գրողների միությունը՝ որպես նույն թվականին ստեղծված ԽՍՀՄ Գրողների միության բաղկացուցիչ մաս, և մինչ այդ գործող բոլոր մյուս միավորումները լուծարվում/վերանում են:

Նման միավորումները տարբերվում էին Արհեստակցական միություններից (արհմիություններ), որոնք առանձին իրավական կարգավիճակ ունեին, չէին մտնում «Հասարակական կազմակերպություն» խմբի մեջ ու որպես կանոն՝ միավորում էին նույն հիմնարկում աշխատող անձանց և պետք է որ զբաղվեին գլխավորապես աշխատողների իրավունքների պաշտպանությամբ: ԽՍՀՄ-ում, սակայն, անգամ արհմիությունները, որոնք, ըստ էության, քաղաքացիական հասարակության միավորման տեսակ են և ստեղծվում են աշխատողների իրավունքները պաշտպանելու նպատակով, ավելի շատ հանդես էին գալիս որպես Կոմունիստական կուսակցության քաղաքականությանն օժանդակող/իրականացնող օղակ, քան որպես աշխատավորների և աշխատողների շահերի և իրավունքների պաշտպանությամբ հանդես եկող ինքնակազմակերպվող միավոր: ԽՍՀՄ վերջին տարիներին նրանց հիմնական գործառույթը դարձել էր հանգստյան տների ուղեգրերի տրամադրումը և/կամ տոների և միջոցառումների կազմակերպումը:

Հասարակական կազմակերպությունների մեկ այլ տեսակ էին «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեն» և, այսպես կոչված՝ «քույր քաղաքները», որոնք ստեղծվում էին ԽՍՀՄ-ից դուրս աշխարհի հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով և, ըստ էության, կրկին պետությանն էին ծառայում

տվյալ դեպքում վերջինիս արտաքին քաղաքականությանը: Կանանց իրավունքների պաշտպանությամբ պետք է հանդես գային ԽՍՀՄ բուլոր հանրապետություններում գործող Կանանց խորհուրդները: Սակայն սրանց դերը ևս այնքան էլ հստակ չէր: ԽՍՀՄ-ում օրենքի մակարդակում կանայք և տղամարդիկ հավասար իրավունքներ ունեին, և Կանանց խորհուրդները պետք է որ զբաղվեին իրականության մեջ այդ իրավունքները կյանքի կոչելով, կանանց խնդիրների բացահայտմամբ և վերհանմամբ: Իրականում, սակայն, այս կառույցները ևս պարզապես հանդես էին գալիս կանանց անունից՝ նպաստելով Կոմունիստական գաղափարախոսության առաջխաղացմանն ու պետական քաղաքականության իրականացմանը: Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատմանն ուղղված մեր մի հետազոտության ժամանակ Կանանց խորհրդի մի ներկայացուցիչ, մասնավորապես, պատմում էր, թե ինչպես է ինքն ընդգրկվել այդ կառույցում. «Ես աշխատում էի մի գիտահետազոտական ինստիտուտում, և մի օր ինստիտուտի տնօրենն ինձ տեղեկացրեց, որ հրաման է եղել մեր ինստիտուտում Կանանց խորհուրդ ձևավորելու մասին, և առաջարկեց ղեկավարել այդ նորաստեղծ խորհուրդը: Հետագայում նշանակումս ներկայացվեց որպես ընդհանուր քվեարկության արդյունք»¹: Այսինքն՝ նման կառույցների ղեկավարները հիմնականում Կուսակցության դրածոներ էին և տեղերում պետք է նպաստեին Կուսակցության դիրքերի ամրապնդմանն ու կուսակցական որոշումների իրականացմանը:

ԽՍՀՄ-ում Հասարակական կազմակերպությունները հիմնականում ֆինանսավորվում էին պետական բյուջեից և գրեթե ամեն ինչում կախված էին պետությունից: Այսպիսով՝ պետությունը տարիների ընթացքում ինստիտուցիոնալացրել և ուղղորդում էր քաղաքացիական միավորումների գործունեությունը, որն այլապես կարող էր ինքնաբուխ և համայնքահենք լինել: Նման հետաքրքիր օրինակ է տարիքային խմբերի ինստիտուցիոնալիզացիան Հասարակական կազմակերպությունների միջոցով, ինչպիսիք էին Կոմերիտմիությունը կամ Պիոներական կազմակերպությունը: Խորհրդային Միությունում տասը տարին լրացած յուրաքանչյուր երեխա ավտոմատ

¹ Blue, R. N., Payton, D. E., & Kharatyan, L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning 2001:

կերպով դառնում էր Պիոներական կազմակերպության անդամ: Յուրաքանչյուր դպրոց ուներ նման կազմակերպություն, իսկ դասարանների մակարդակում գործող այս օղակները միավորվում էին դպրոցի, այնուհետև՝ շրջանի, քաղաքի, հանրապետության և ԽՍՀՄ մակարդակում գործող Պիոներական կազմակերպությունների կոմիտեների մեջ: Երեխաներն անդամագրվում էին հատուկ երդման արարողությամբ: Այսպիսով՝ Խորհրդային Միության հսկայական տարածքում ապրող 10-14 տարեկան բոլոր երեխաները միևնույն կազմակերպության անդամ էին հանդիսանում: Այդ կազմակերպությունն ամենուր ուներ նույն կառուցվածքը, արարողակարգը, գաղափարախոսությունը և անգամ բառապաշարը: Պիոներիային հաջորդում էր Կոմերիտմիությունը: Խորհրդային իրականությունում երկու կազմակերպություններն էլ առաջնորդության դպրոց էին հանդիսանում երկրի ապագա քաղաքական և հանրային առաջնորդների համար: ՀԿ-ների ղեկավարները սովորաբար Կոմունիստական կուսակցության առաջնորդների կողմից ընդունելի մարդիկ էին և անգամ կարող էին պետական իշխանության անունից հանդես գալ¹:

Բացի ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում գործող այս ընդհանուր տիպի Հասարակական կազմակերպություններից, առանձին հանրապետություններում գոյություն ունեին նաև տեղական առանձնահատկություններով պայմանավորված ՀԿ-ներ: Հայկական ԽՍՀ-ում նման կազմակերպություն էր, օրինակ, «Սփյուռքի հետ կապերի կոմիտեն»: Այդպիսի տեղական առանձնահատկություններով պայմանավորված կառույցներ էին նաև հայրենակցական միությունները, որոնց թիվն աճեց անկախության առաջին տարիներին: Սակայն այս կազմակերպությունները ևս սերտորեն համագործակցում էին իշխանությունների հետ, իսկ որոշ դեպքերում ծառայում պետական քաղաքականության իրականացմանը: Սփյուռքի հետ կապերի կոմիտեն, օրինակ, ծառայում էր ԽՍՀՄ արտաքին քաղաքականությանը՝ համապատասխան երկրներում եղած հայկական սփյուռքի հետ կապերն օգտագործելով ի նպաստ խորհրդային շահերի:

Գործնականում ՀԿ-ները, բացառությամբ արհմիությունների և մանկապատանեկան կազմակերպությունների, հիմնականում

¹ Նույն տեղում:

կազմվում էին, այսպես կոչված, մտավորականությունից: Կարելի է ասել, որ մտավորականության ներկայացուցիչներն իրենց պատկերացումները հասարակության և տնտեսության վերաբերյալ հիմնականում ձևավորում էին գրականությունից և լրատվամիջոցներից, և քիչ դեպքերում էր, որ ունեին հասարակության տարբեր խավերի հետ շփման իրական փորձառություն¹: Սակայն ԽՍՀՄ-ում գոյություն ուներ համընդհանուր կարծիք, թե ՀԿ-ների առաջնորդները ժողովրդի համակրանքն ու վստահությունն են վայելում, և իշխանությունն անհրաժեշտության դեպքում օգտագործում էր այդ առաջնորդներին՝ իր գիծն առաջ մղելու նպատակով: Իշխանությունների թելադրանքով ՀԿ առաջնորդները հանդես էին գալիս ելույթներով և հայտարարություններով, հանդիպումներ կազմակերպում աշխատավորների հետ՝ պետական քաղաքականության իրականացմանը նպաստելու համար: Հասարակությունն ընդհանուր առմամբ հաշտվել էր ՀԿ-ների գոյության հետ, և մարդիկ վերջիններիս ընկալում էին որպես պետական կառավարում իրականացնող կազմակերպության տեսակ²: 1990-ականների վերջին մեր իրականացրած հարցազրույցները վկայում են, որ խորհրդային տարիներին մարդկանց մեծ մասը հազվադեպ էր կամավոր կերպով անդամակցում ՀԿ-ներին, և անգամ արհմիությունների անդամները, որոնք պարտադիր վճարումներ էին կատարում արհմիությանը, այդ կազմակերպություններին դիմում էին ոչ թե իրենց իրավունքները պաշտպանելու, այլ ֆինանսական կամ այլ տիպի օժանդակության ակնկալիքով:

Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժումներն ու խմբերը

Հայաստանի քաղաքացիական հասարակության ձևավորման առանձնահատկությունները հասկանալու համար կարևոր է անդրադառնալ Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժումներին: 1953 թ. Ստալինի մահվանը հաջորդող ձնհալի տարիները որոշ չափով թեթևացրին պետական խիստ վերահսկողությունը և վերջ դրեցին կոպիտ բռնաճնշումներին: Այս հանգամանքն անդրադարձավ

¹ Blue, R. N., Payton, D. E., & Kharatyan, L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning, 2001:

² Նույն տեղում:

պետության և հասարակության բոլոր հատվածների վրա և որոշակիորեն նպաստեց պաշտոնական գաղափարախոսությունից տարբերվող և անգամ դրան հակադրվող այլընտրանքային գաղափարների ձևավորմանն ու ընդհատակյա շրջանառմանը: Սակայն դասական իմաստով դիսիդենտությունը և/կամ այլախոհությունը ԽՍՀՄ-ում հայտնվեց 1960-ականների երկրորդ կեսին և շատ արագ դարձավ երկրի մշակութային, հասարակական և քաղաքական կյանքի նկատելի գործոն¹: Կարելի է ասել, որ հենց այլախոհական միտքը, շարժումներն ու խմբերը նպաստեցին ԽՍՀՄ տարածքում իրական քաղաքացիական հասարակության ձևավորման հնարավորությանը: Ի տարբերություն պաշտոնապես գրանցված Հասարակական կազմակերպությունների՝ նման ընդհատակյա շարժումներում ու խմբակներում ընդգրկված մարդիկ ոչ միայն չէին կիսում իշխող կոմունիստական գաղափարախոսությունը և չէին նպաստում այդ գաղափարախոսության ու պետական քաղաքականության իրագործմանը, այլև հաճախ հանդես էին գալիս այդ գաղափարախոսության դեմ: Նման խմբերը ձևավորվում էին կամավորության հիմունքներով և որոշակի արժեքների ու գաղափարների շուրջ, ինչը քաղաքացիական հասարակության կարևոր նախապայմաններից է:

Որոշ հետազոտողներ կարծում են, որ այլախոհական մտքի հիմնական շարժիչ ուժը խորհրդային մտավորականության այն հատվածն էր, որը ծավալելով այլախոհական գործունեություն՝ անցավ բռնաճշումների փորձություններով և, ի թիվս տարբեր քաղաքացիական սկզբունքների պաշտպանության, դարձավ վերածնվող ազգային ինքնագիտակցության և ինքնորոշման հիմնադիրը²: Խորհրդային Հայաստանում նույնպես 1960-ականներին ձևավորված ընդհատակյա կազմակերպությունների և շարժումների մեծ մասը համախմբվում էր

¹ Даниэль. А., “Истоки и корни диссидентской активности в СССР,” Неприкосновенный запас. 2002 # 1(21) <https://magazines.gorky.media/nz/2002/21/>:

² Brun Zejmis, J., “Who are the “enemies of Russia”? The question of Russophobia in the samizdat debate before glasnost.” *Nationalities Papers: The Journal of Nationalism and Ethnicity*, 1996, pp. 169-197; Հարությունյան Վ., «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում», Երևան 2014; Հովհաննիսյան Է., «1989 թ. հայկական սամիզդատում Ռուսաստանի հանդեպ նոր խոսույթի ձևավորումը հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում», *ՀԲԲԻԻԽԻ Հարավային Կովկասի տարածաշրջան Երևանի գրասենյակ-Հայաստան*, 2019, <https://ge.boell.org/en/2019/06/12/1989-t-haykakan-samizdatowm-rhowsastani-handep-norkhosowyti-dzewavorowme-hay>:

ազգային գաղափարների շուրջ¹: Այս շրջանում Հայաստանում ամբողջ խմբեր ձևավորվեցին, որոնց գործունեությունն ուղղված էր ազգային արժեքների տարածմանը, և որոնք իրենց հիմնական նպատակն էին համարում հենց ազգային խնդիրների լուծումը, ինչպիսիք էին ԽՍՀՄ-ից անջատումը, անկախ պետության ստեղծումը, Արևմտյան Հայաստանի հետ միավորումը և այլն, և ոչ թե սոցիալական խնդիրների լուծումն ու գոյություն ունեցող հասարակարգի փոփոխությունը²: Այս կազմակերպությունները հիմնականում ձևավորվում էին Ցեղասպանությունը վերապրածների ժառանգների, 1940-ականների հայրենադարձության ժամանակ Հայկական ԽՍՀ տեղափոխված հայրենադարձների և Հայաստան ուսանելու եկած սփյուռքահայերի կողմից և արտացոլում էին վերջիններիս անհամաձայնությունը ԽՍՀՄ-ում 1915 թ. Ցեղասպանության լռեցման քաղաքականությանը: 1960-ականներն աչքի են ընկնում նաև ավելի լայնածավալ ինքնաբուխ քաղաքացիական ինքնակազմակերպման դրվագներով: Նման օրինակ է 1965 թ. Օպերայի հրապարակում ավելի քան հարյուր հազարանոց հանրահավաքը՝ Հայոց ցեղասպանության հիսունամյակը նշելու նպատակով: Այս հավաքն ի վերջո վերաճեց 24-ժամյա ցույցի, որը նման տիպի և ծավալի առաջին իրադարձությունն էր Խորհրդային Միության տարածքում³:

Ազգայնական տրամադրություններին զուգահեռ՝ Խորհրդային Միության ընդհատակում զարգանում և տարածվում էին մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ժողովրդավարական գաղափարները: Հետազոտողները նկատում են, որ սա, մի կողմից՝ բխում էր խորհրդային գուլագներով անցած մարդկանց հասարակության մեջ վերինտեգրվելու և իրենց իրավունքները պաշտպանելու կենսական պահանջից, մյուս կողմից՝ ռուսական ազգայնականության

¹ Манукян С., “Возникновение националистического дискурса и подпольного движения в Армении в начале 1960-х годов,” *Южный Кавказ: Территории. Истории. Люди*, Тбилиси: Южно-кавказское региональное бюро Фонда им. Генриха Белля, 2006, ст. 81-92; Paturyan, Y., Gevorgyan, V., *Armenian Civil Society: Old Problems, New Energy After Two Decades of Independence*. Springer International Publishing 2020:

² Манукян С., “Возникновение националистического дискурса и подпольного движения в Армении в начале 1960-х годов,” *Южный Кавказ: Территории. Истории. Люди*, Тбилиси: Южно-кавказское региональное бюро Фонда им. Генриха Белля, 2006, ст. 81-92:

³ Paturyan Y., Gevorgyan V., “Armenian Civil Society: Old Problems, New Energy After Two Decades of Independence,” Springer International Publishing 2020:

և արևմտյան ժողովրդավարական արժեքների խառնուրդ էր¹, որն ավելի էր խորացնում հակասությունը կենտրոնի և ազգային հանրապետությունների միջև: Հայաստանյան ընդհատակյա կազմակերպություններն ու այլախոհ-ազգայնականները չէին կարող անմասն մնալ ԽՍՀՄ-ում ծավալված հակախորհրդային և, մասնավորապես, հակառուսական տրամադրություններից ու գործողություններից²: Հայաստանի այլախոհները սկսում են կապեր հաստատել Մերձբալթյան երկրների, Ուկրաինայի և Վրաստանի ընդհատակյա կազմակերպությունների հետ: Շփումների ընթացքում կիսվում էին ինքնահրատ մամուլի հրատարակման փորձով, ինչպես նաև ակտիվիստական հակակառավարական զանազան միջոցառումներ կազմակերպելու հմտություններով³:

Չնայած Հայկական ԽՍՀ-ում գործող որոշ այլախոհական խմբեր բարձրացնում էին Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը⁴, այնուամենայնիվ, Ղարաբաղյան խնդրի հետ այլախոհական շարժումը հիմնականում կապվեց 1980-ականներին⁵: Ինչպես վերևում նշել ենք, հայկական ինքնահրատի ու այլախոհական շարժման առաջին փուլի՝ 1960-70-ականների հիմնական թեման ցեղասպանությունն էր, որի շուրջ ձևավորվում էր ազգային-ազատագրական խոսույթը, և պատահական չէ, որ 1988-ի շարժման գերակշռող և համախմբող հանրային թեմաներից մեկը նույնպես ցեղասպանությունն էր⁶, թեև հռչակված համաժողովրդական պայքարը հանուն Ղարաբաղի միացման էր⁷: Թերևս ցեղասպանության

¹ Zisserman-Brodsky D., “Constructing Ethnopolitics in the Soviet Union: Samizdat, Deprivation, and the Rise of Ethnic Nationalism,” New York: Palgrave Macmillan, 2003; Հովհաննիսյան է., «1989թ. հայկական սամիզդատում Ռուսաստանի հանդեպ նոր խոսույթի ձևավորումը հայ-ադրբեջանական հակամարտության համատեքստում», *ՀԵԲ ԹՔԻԼԻՍԻ Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանի գրասենյակ-Հայաստան*, 2019, <https://ge.boell.org/en/2019/06/12/1989-t-haykakan-samizdatowm-rhowsastani-handep-nor-khosowytidzewavorowme-hay>:

² Հովհաննիսյան է., նույն տեղում:

³ Тер-Абрамян Г., “Ереванская городская среда и инакомыслие,” *Южный Кавказ: территории, истории, люди*, Тбилиси: Южно-кавказское региональное бюро Фонда им. Генриха Белля 2006, ст. 13-37:

⁴ Манукян С., նույն տեղում:

⁵ Հովհաննիսյան է., նույն տեղում:

⁶ Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը. Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2009:

⁷ Հովհաննիսյան է., նույն տեղում:

ազդեցությունը հայկական այլախոհական շարժումների վրա իսկապես հայկական առանձնահատկություն է: Այն հանդես էր գալիս որպես ճնշված տրավմատիկ հիշողության մոբիլիզացիոն բացարձակ դրսևորում՝ դառնալով քաղաքացիական հասարակության խմորող հիմնական գաղափար:

1960-ականների «Ազգային զարթոնքի» ժամանակ Հայաստանում ձևավորվեցին մի շարք ընդհատակյա կազմակերպություններ («Հայ երիտասարդների միություն», «Հայաստանի պատանիների միություն», «Հայաստանի վերամիավորման շարժում», «Հայ հայրենասերների միություն», «Ազգային միացյալ կուսակցություն», «Հանուն հայրենիքի», «Հայաստանի հելսինկյան խումբ» և այլն), որոնք, ըստ էության, քաղաքացիական հասարակության բջիջներ էին: Այդ կազմակերպություններում ընդգրկվում էին հասարակության ամենատարբեր տարիքային և սոցիալական խմբեր՝ երիտասարդներ և տարեցներ, ուսանողներ և դասախոսներ, հոգևորականներ, բանվորներ և այլն²: Այս կազմակերպությունները սկսում են հայերեն թարգմանել, ինչպես նաև հրատարակել ազգային թեմաներին առնչվող, ԽՍՀՄ-ում արգելված գրական ստեղծագործություններ՝ Մագդա Նեյմանի «Հայերը», Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Խաչիկ Դաշտենցի «Խողեղանը», Հովհաննես Շիրազի «Հայկական դանթեսականը» և այլն³: Գրքաննության առկայության և տեղեկատվության սղության պայմաններում ընդհատակյա կազմակերպություններն իրենց տպագիր օրգանների միջոցով փորձում էին բարձրաձայնել ԽՍՀՄ-ում տաբուացված թեմաները՝ անկախության, Խորհրդային Միության կազմից դուրս գալու, Ղարաբաղը և Նախիջևանը Հայաստանին միացնելու և այլնի մասին⁴:

1980-ականների Գորբաչովյան Վերակառուցման տարիներին այս կազմակերպությունների գործն, ըստ էության, շարունակեցին Հայաստանում ստեղծված մի շարք նոր հասարակական կազմակերպություններ՝ «Մաշտոց», «Զանգակատուն», «Ամբերդի վերականգնման

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ Манукян С., նույն տեղում:

⁴ Манукян С., նույն տեղում; Тер-Абрамян Г., նույն տեղում; Հովհաննիսյան է., նույն տեղում:

Ֆոնդ», «Վերածնունդ»¹: 1987 թվականից սկսած՝ այս կազմակերպությունները սկսեցին հրատարակել նաև այլախոհական մամուլ²: Իսկ 1988-ին սկիզբ առած Ղարաբաղյան շարժման ընթացքում Հայաստանի բազմաթիվ աշխատանքային կոլեկտիվներում կամավորական հիմունքներով՝ քաղաքացիների նախաձեռնությամբ, ինքնակազմակերպվեցին «Ղարաբաղ» կոմիտեներ՝ Ղարաբաղյան շարժմանը սատարելու համար³:

Այսպիսով՝ Հայաստանում գործող ընդհատակյա, ոչ պաշտոնական, այլախոհական կազմակերպությունները, վերջիններիս հրատարակած ընդհատակյա մամուլի և գրականության միջոցով տարածվող գաղափարներն ու օրակարգը անցումային օղակ հանդիսացան Ղարաբաղյան շարժման, Հայաստանի քաղաքացիական հասարակության ձևավորման, Հայկական ԽՍՀ վերջին տարիներին ձևավորված և արդեն անկախ Հայաստանում գործող որոշ հասարակական կազմակերպությունների համար: Ի տարբերություն պաշտոնապես գործող Հասարակական կազմակերպությունների՝ իրականում դրանց շրջանակներում էին ձևավորվում նոր քաղաքացիական, քաղաքական, անկախական, ազատական և ազգայնական գաղափարները, լեզուն ու խոսույթը:

Հայաստանի անկախացման գործընթացն ու անկախության առաջին տարիների համատեքստը

Ժամանակակից իմաստով «Քաղաքացիական հասարակություն», «Ոչ կառավարական կազմակերպություն», «Հասարակական կազմակերպություն» և նման այլ եզրույթները հայկական իրականություն մուտք գործեցին «շրջակա միջավայրի պաշտպանություն», «մարդու իրավունքներ», «իրավապաշտպան», «կանանց իրավունքներ», «հումանիտար օգնություն», «սոցիալապես անապահով», «փախստական» և նմանատիպ այլ բառ-բովանդակությունների հետ համատեղ⁴: Սակայն նորանկախ հայաստանյան իրականություն

¹ Գալոյան Ա., Հայաստանի անկախության գաղափարը «Սամիզդատ» թերթերում. 21-րդ ԴԱԲ 2015; Հովհաննիսյան Է., նույն տեղում:

² Հովհաննիսյան Է., նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Խառատյան Լ., Շագոյան Գ., «Ընտանիքը» արդի հասարակական կազմակերպությունների համատեքստում. Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները. Հանրապետական

մտնելով «Հասարակական կազմակերպություն» անվան տակ՝ ոչ կառավարական կազմակերպությունները կամ կազմակերպված քաղաքացիական հասարակությունը ժառանգեցին նաև խորհրդային անցյալի հետ կապված իմաստն ու բովանդակությունը¹: «Հասարակական կազմակերպության» նախկին իմաստային բեռը որոշակիորեն խոչընդոտ դարձավ նման կազմակերպությունների հասարակական ընկալման համար:

Չնայած այս հանգամանքին՝ անկախության առաջին տարիներին, մասամբ նաև ազատական բարեփոխումներով պայմանավորված, Հայաստանում, ինչպես խորհրդային այլ հանրապետություններում, սկսեցին մնկի պես աճել հասարակական, ոչ կառավարական կազմակերպությունները: Այսպես, 2000 թ. ԱՄՆ ՄԶԳ օժանդակությամբ իրականացվող մեր հետազոտության ժամանակ ձեռքի տակ ունեցինք ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած՝ Հայաստանում գրանցված ՀԿ-ների ցանկը: 2000 թ. մայիսի 31-ի դրությամբ՝ 1991 թվականից ի վեր Հայաստանում շուրջ 2300 ՀԿ էր գրանցվել²: Հետևելով 1999 թ. Կառավարության վերագրանցման պահանջին՝ նույն 2000 թ. մայիսի 31-ի դրությամբ այդ կազմակերպություններից ընդամենը 326-ն էր վերագրանցվել (շուրջ 14%ը)³: Այսինքն՝ 1990-ականներին գրանցված կազմակերպությունների շուրջ 85 տոկոսն այս կամ այն պատճառով մահացել էր:

Արևմտյան ժողովրդավարական արժեքների մուտքը նպաստեց տարբեր ազգային, հասարակական և քաղաքական շարժումների առաջացմանը: Առաջին նման կազմակերպությունները ձևավորվեցին բնապահպանական խնդիրների շուրջ, և դրանցից մի քանիսը հետագայում գրանցվեցին որպես ՀԿ-ներ⁴: Բնապահպանական շարժման արդյունքում Հայաստանում փակվեցին որոշ կարևոր արդյունաբերական ձեռնարկություններ՝ մարդկանց զրկելով աշխատանքից և

գիտաժողովի նյութեր՝ նվիրված Էմմա Կարապետյանի հիշատակին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2001:

¹ Blue R. N., Payton, D. E., & Kharatyan, L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning, 2001:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Blue R. N., Payton, D. E., & Kharatyan, L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning, 2001:

եկամուտներից: Արդյունքում՝ հասարակության մեջ սկսեց ձևավորվել այն մտայնությունը, թե տնտեսական ճգնաժամը և հսկայական չափերի հասնող գործազրկությունը կապված է բնապահպանական շարժման հետ¹: Չնայած ճգնաժամը հիմնականում այլ պատճառներով էր պայմանավորված, անկախության սկզբնական շրջանում բնապահպանությունը սկսեց բացասական ընկալվել հասարակության լայն խավերի կողմից, իսկ նման շարժումներում ընդգրկված ակտիվիստները՝ որպես իշխանություն տենչացող անհատներ, որոնք «բնության պահպանությունն» օգտագործում են իշխանության հասնելու համար:

Հայաստանյան քաղհասարակության ձևավորման ընթացքի վրա որոշակիորեն ազդել են 1988 թ. երկրաշարժը, Ղարաբաղյան պատերազմն ու ադրբեջանահայ փախստականների ներհոսքը, աղքատության աճող մակարդակը և այլն: Այս ամենի արդյունքում, ի պատասխան սոցիալական կարիքների՝ Հայաստանում առաջացան բազմաթիվ «բարեգործական կազմակերպություններ»: Մասնավորապես, երկրաշարժից հետո Հայաստանն աշխարհի ուշադրության կենտրոնում էր, և տարբեր միջազգային և/կամ օտարերկրյա ՀԿ-ներ սկսեցին հումանիտար օգնություն տրամադրել երկրաշարժից տուժածներին: Այս միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունները նախատիպ հանդիսացան տեղական բարեգործական կազմակերպությունների համար: Նմանապես կարևոր էին ինքաբուխ քաղաքացիական նախաձեռնությունները՝ ադրբեջանահայ փախստականների օժանդակության հարցում: Երկու դեպքում էլ արձագանքը շատ արագ և ինքնաբուխ էր: Վաղ շրջանի այս կազմակերպությունները, միավորումներն ու ինքնաբուխ քաղաքացիական նախաձեռնությունները պատասխանն էին ստեղծված բարդ իրավիճակի, և այդ ժամանակ դժվար թե որևէ մեկը դրանք քաղաքացիական հասարակության դրսևորում համարեր: Սակայն ավելի ուշ այս խմբերից մի քանիսը ֆորմալացան՝ գրանցվելով որպես Հասարակական կազմակերպություններ:

Միջազգային և օտարերկրյա Հասարակական կազմակերպությունները Հայաստանում սկսեցին աշխատել երկրաշարժից անմիջապես

¹ Abrahamyan L. H., Aggressiveness and National Violence in the Former USSR. In *Divided Europeans: Understanding Ethnicities in Conflict*, Kluwer Law International 1999, pp. 59-75:

հետո: Դրանց մեծ մասը կազմակերպված, արհեստավարժ և համեմատաբար հարուստ կազմակերպություններ էին¹: Սկզբում դրանք հիմնականում աշխատում էին կառավարության և վերջինիս ստորաբաժանումների հետ և/կամ միջոցով, իսկ տրամադրվող հումանիտար օգնությունը բաժանվում էր անփորձ տեղական իշխանությունների միջոցով, և օգնության բաշխումը հաճախ բնութագրվում է որպես անկազմակերպ և անարդար²: Երկրաշարժից տուժածներին, փախստականներին և սոցիալապես անապահով այլ խավերին ուղղված օժանդակության անարդար բաշխման հետ կապված խոսակցություններն առ այսօր առկա են հայաստանյան հասարակությունում, և գրեթե ջանք չի գործադրվել ձևավորված այս կարծիքը կազմաքանդելու ուղղությամբ³ հանգեցնելով բարեգործության և հատկապես հայկական բարեգործական կազմակերպությունների նկատմամբ ընդհանրացված անվստահության:

1994 թ. գինադադարից հետո հայաստանյան քաղիասարակության կյանքում որոշ փոփոխություններ տեղի ունեցան: Այսպես, մի շարք միջազգային, մասնավորապես՝ սփյուռքյան և/կամ օտարերկրյա կազմակերպություններ գրասենյակներ բացեցին Հայաստանում, և արևմտյան ժողովրդավարական համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը հեղեղեց երկիրը⁴: Ի տարբերություն առաջին փուլում երևան եկած բարեգործական կազմակերպությունների՝ այս կազմակերպություններն արդեն զբաղվում էին մարդու իրավունքներով, իրավապաշտպան և ժողովրդավարության զարգացմանը նպաստող գործունեություն էին ծավալում, ինչպես նաև երիտասարդների, կանանց և այլ թիրախային խմբերի վերապատրաստումներ իրականացնում: Նման միջազգային կազմակերպությունները նպաստում էին նաև տեղական քաղաքացիական հասարակության ձևավորմանն ու զարգացմանը՝ տեղական ՀԿ-ներին ներգրավելով իրենց կազմակերպած դասընթացներում, ֆինանսավորելով վերջիններիս ծրագրերի իրականացումը:

Հայաստանում ՀԿ-ների օժանդակության առաջին ծրագիրը նախաձեռնել է Ամերիկայի Հայկական Համագումարը՝ 1994 թ. իր հիմնած

¹ Blue R. N., Payton, D. E., & Kharatyan L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning, 2001:

² Blue R. N., Payton, D. E., & Kharatyan, L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning, 2001:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

«ՀԿ կենտրոնի» միջոցով, որը վերապատրաստում և օժանդակության այլ ծրագրեր էր իրականացնում Հայաստանի նորաստեղծ ՀԿ-ների համար: Հետագայում քաղաքացիական հասարակության զարգացման ծրագրեր սկսեցին իրականացնել Հայաստանում գործող տարբեր Միջազգային օժանդակության ծրագրեր՝ ԱՄՆ ՄԶԳ-ից մինչև ԵՄ: Սակայն ազատական վերափոխումների առաջին շրջանում տեղական քաղհասարակության ձևավորման գործում ամենամեծ ներդրումը թերևս ունեցել է «ՀԿ կենտրոնը»:

Քանի որ հետանկախական Հայաստանում քաղաքացիական հասարակությունն սկսեց ձևավորվել ծանրագույն սոցիալ-տնտեսական ճգնաժամի պայմաններում, երբ երկրի տնտեսական և արդյունաբերական հիմնարկների ճնշող մեծամասնությունը չէր գործում, և հայաստանյան հասարակությունը ճկաժ էր տնտեսական ճգնաժամի, պատերազմի ու երկրաշարժի բեռի տակ, ինքնաբուխ քաղաքացիական նախաձեռնությունները շատ արագ կամ մարեցին/դադարեցին գոյություն ունենալ, կամ գրանցվելով ու ֆորմալացվելով՝ մարդկանց համար եկամտի հիմնական աղբյուր դարձան: Ստեղծված իրավիճակում համատարած գործազրկության մատնված հայ հասարակությունը ինքնադրսևորման և աշխատանքի նոր ոլորտներ, ինչպես նաև եկամտի աղբյուրներ էր փնտրում, և բազմապիսի եկամտաբեր կազմակերպությունների կողքին ի հայտ եկած «շահույթ չհետապնդող» ՀԿ-ները տալիս էին գումար վաստակելու ևս մի հնարավորություն¹: Քաղաքացիական հասարակության նման զարգացմանը հատկապես նպաստեցին զարգացման օժանդակող միջազգային կառույցները, որոնք ՀԿ-ների գործունեությունը ֆինանսավորելով՝ սկսեցին նաև որոշակիորեն թելադրել դրանց գործունեության ուղղությունները²: Այսպիսով՝ 1990-ականների կեսերից «հանրային բարիքի» սահմանումն ու էվոլյուցիան շատ դեպքերում ոչ թե ներքևից-վերև տեղի ունեցավ, ինչպես պետք է լինի առողջ քաղաքացիական հասարակության պարագայում, այլ վերևից ներքև, տվյալ դեպքում՝ միջազգային

¹ Խառատյան Լ., Շագոյան Գ., «Ընտանիքը» արդի հասարակական կազմակերպությունների համատեքստում. *Ընտանիքի հետազոտման հիմնախնդիրները. Հանրապետական գիտաժողովի նյութեր՝ նվիրված Էմմա Կարապետյանի հիշատակին*, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2001:

² Blue, R. N., Payton, D. E., & Kharatyan, L. Z., Armenia NGO sector assessment. Report. Yerevan: World Learning, 2001:

դերակատարների կողմից, որոնք սահմանում էին հանրային կարիքներն ու դրանց համարժեք պատասխանը¹: Այսինքն՝ Խորհրդային մոնոլիտ պետությանը ինչ-որ առումով փոխարինելու եկան միջազգային դոնոր կազմակերպությունները, որոնք ֆինանսավորում և որոշակիորեն ազդում էին Հասարակական կազմակերպությունների գործունեության վրա: Իհարկե, երկրաշարժը, փախստականները, պատերազմը և այլն այս շրջանում շարունակում էին մնալ ՀԿ-ների ուշադրության կենտրոնում, սակայն առկա խնդիրներին զուգահեռ՝ ձևակերպվում և ձևավորվում էին նորերը՝ միջազգային և օտարերկրյա դոնորների օրակարգին ավելի համահունչ: Այսպես, 2000 թ. Համաշխարհային Ուսուցում կազմակերպության իրականացրած ՀՀ ՀԿ սեկտորի առաջին գնահատումը ցույց է տալիս, որ 1990-ականներին ստեղծված կազմակերպությունների գործունեության ամենտարածված տեսակը ծառայությունների մատուցումն էր (39%), և ՀԿ-ների մեծ մասն իրենց հիմնական շահառու էր համարում մարզինալացված խմբերին (43%): ՀԿ-ների հիմնական գործունեության ուղղությունները ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 1. ՀԿ գործունեության հիմնական ուղղությունները

Գործունեության տեսակ	Տոկոս*
<i>Շահերի պաշտպանություն</i>	9 %
<i>Տեղեկատվության տարածում</i>	22%
<i>Կրթություն</i>	10%
<i>Հետազոտություն</i>	3%
<i>Ծառայությունների մատուցում</i>	39%
<i>Եկամտի ստացում</i>	3%

*Տոկոսների գումարը 100-ի չի հանգում, քանի որ ընդգրկում է միայն այս հարցին պատասխանած ՀԿ-ներին

Աղբյուր. Բլու, Ռ. Ն., Փեյթըն, Դ. Ե., Խառատյան, Լ. Զ. (2001). Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում, զեկույց, Երևան, Համաշխարհային Ուսուցում

¹ Նույն տեղում:

1996 թ. ընդունվեց Հայաստանի Հանրապետության օրենքը Հասարակական կազմակերպությունների մասին: Օրենքը սահմանում էր, որ «Հասարակական կազմակերպությունը անձանց՝ շահերի ընդհանրության հիման վրա, հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր միավորում է»: Ուշագրավ է, սակայն, որ օրենքը տուրք էր տալիս ՀԿ-ների մասին խորհրդային ժամանակներից մնացած պատկերացումներին և բառապաշարին՝ հատուկ անդրադառնալով «մանկապատանեկան» կոչվող կազմակերպություններին և սահմանելով, որ «Հասարակական կազմակերպությունը համարվում է մանկապատանեկան, եթե նրա կանոնադրությամբ նախատեսվում է երեխաների անդամություն և նպատակ է հետապնդում գործունեության ծավալում երեխաների շրջանում»: Ավելին՝ թերևս Պիոներիայի և Կոմերիտմիության փորձից ելնելով՝ օրենքը հատուկ կետով արգելում էր կուսակցությունների մասնակցությունը մանկապատանեկան հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Օրենքը փորձում էր նաև կարգավորել պետություն-հասարակական կազմակերպություն հարաբերությունները՝ մասնավորապես նշելով, որ «պետությունն ապահովում է հասարակական կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը», ինչպես նաև արգելելով պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից հասարակական կազմակերպության գործունեությանը միջամտելը:

Ամփոփում

Այսպիսով, 1990-ականների ազատականացման շրջանը ստեղծել է հիմքեր՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության ձևավորման և կայացման համար, որի արդյունքում 1991-2000 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է շուրջ 2 300 Հասարակական կազմակերպություն: 1996 թ. ընդունված ՀԿ-ների մասին օրենքը նաև իրավական կարգավորումներ է սահմանել ՀԿ-ների գործունեության համար: Սակայն անկախացման ընթացքով, անկախության առաջին շրջանի դժվարություններով ու ընդհանուր համատեքստով պայմանավորված՝ քաղաքացիական հասարակության ձևավորումը Հայաստանում ունի

որոշակի առանձնահատկություններ: Դրանցից առանձնացրել ենք երեքը՝ «Հասարակական կազմակերպություն» եզրի կիրառումը և դրա բերած խորհրդային բեռը, Խորհրդային Հայաստանի այլախոհական շարժումների և Ղարաբաղյան շարժման փորձառությունը և անկախացման առաջին շրջանի սոցիալ-տնտեսական դժվարություններն ու միջազգային դոնորների ակտիվ ներգրավվածությունը: Այս գործոններից յուրաքանչյուրն իր ազդեցությունն է ունեցել Հայաստանում քաղաքացիական հասարակության ձևավորման վրա, և այդ ազդեցությունն առ այսօր ինչ-որ առումով տեսանելի է:

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

ՀՀ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտաշխատող

ԸՆՏՐՎԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Մինչ Երրորդ Հանրապետության ընտրական համակարգերը քննարկելը տեսնենք, թե ընտրական օրենսդրության ինչպիսի ժառանգություն ենք ստացել խորհրդային շրջանից:

ԽՍՀՄ-ում սկզբնական փուլում դրսևորվում էր բացահայտ դասակարգային մոտեցում: Հետագայում դասակարգային սահմանափակումները հանվեցին, տեղի ունեցավ «ժողովրդավարացում»։ Իհարկե, դա ձևական բնույթ էր կրում:

Ընտրությունները շարունակում էին անցկացվել ոչ այլընտրանքային հիմունքներով: Յուրաքանչյուր ընտրատարածքում առաջադրվում էր մեկ թեկնածու: Կուսակցական մարմիններն էին առաջադրման համար ընտրում այդ թեկնածուներին և հայտարարում, որ նրանք ներկայացնում են «կոմունիստների և անկուսակցականների բլոկը»: Նշենք, որ մինչ թեկնածուներին առաջադրումը կուսակցական մարմինները որոշում էին ընտրվող մարմիններում տարբեր սոցիալական խմբերի ներկայացվածությունը, համամասնությունը՝ բանվորների – գյուղի աշխատավորների – մտավորականների, կոմունիստների – անկուսակցականների և այլն: Պահպանելով այս համամասնությունը՝ առաջադրման համար ընտրվում էին թեկնածուներ, որոնք հլու-հնազանդ «կողմ» կքվեարկեն իշխանության ներկայացրած բոլոր նախագծերին: Հետագայում կուսակցական մարմինների կողմից առաջադրման համար ընտրված թեկնածուները ձևական կերպով առաջադրվում էին հիմնականում յուրաքանչյուրն իր տարածքում գտնվող աշխատավորական կոլեկտիվի/կոլեկտիվների կողմից, թեև համաձայն բրեժնևյան ԽՍՀՄ Սահմանադրության հ. 100-ի՝ «Պատգամավորի թեկնածուներ առաջադրելու իրավունքը պատկանում է Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցությանը, արհմիություններին, Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միությանը, կոոպերատիվներին և այլ հասարակական կազմակերպություններին, աշխատավորական կոլեկտիվներին, ինչպես նաև զորամասերում զինծառայողների ժողովներին»:

Սովորաբար՝ ընտրելու իրավունք ունեցողների «մասնակցությունը» ընտրություններին ներկայացվում էր 99,9%, և նրանց առնվազն 99%-ը «քվեարկում էր» միակ թեկնածուի օգտին, որը ներկայացնում էր «կոմունիստների և անկուսակցականների բլոկը»: Իհարկե, դա ընտրությունների իմիտացիա էր:

Խորհրդային Միության գոյության ավարտին մոտ ընտրական համակարգը ենթարկվեց որոշակի ժողովրդավարացման, մասնավորապես, 1988-1989 թվականների գորբաչովյան բարեփոխումների արդյունքում: Առաջին անգամ ընտրությունները դարձան մրցակցային՝ մեկ մանդատի համար պատգամավորների մի քանի թեկնածուների առաջադրմամբ: Օրինակ, 1989-ի գարնանը կայացած ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների ընտրություններում *մրցակցայնությունն* ապահովվեց. տարածքային և ազգային-տարածքային ընտրատարածքներում 1500 տեղի համար առաջադրվել էր 7531 թեկնածու, այսինքն՝ մեկ մանդատի համար մրցակցում էր միջին հաշվով մոտավորապես 5 թեկնածու:

Ակնհայտ էր, որ 80-ականների վերջին ԽՍՀՄ-ում առկա էր խորը տնտեսական և քաղաքական ճգնաժամ, որի հետևանքով խորհրդային կայսրությունը փլուզվելու էր:

Հայաստանում պետք էր հաշվի առնել, որ 1990 թ. փետրվարի 24-ին լրանում էր տասնմեկերորդ գումարման ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների լիազորությունների ժամկետը: ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. փետրվարի 13-ին ընդունեց որոշում՝ այդ ժամկետը երկարաձգել մինչև 1990 թ. մայիսի 20-ը: Քանի որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատների ընտրությունների մասին գործող օրենքը չէր համապատասխանում օրվա պահանջներին, այն նախատեսված էր իմիտացիոն ընտրություններ կազմակերպելու համար, անհրաժեշտ էր պատրաստել և ընդունել նորը, որը թույլ կտար կազմակերպել ազատ և արդար ընտրություններ: Նոր քաղաքական ուժերը գործում էին այդ ուղղությամբ և ամեն գնով ձգտում էին հասնել դրան: Դրան նպաստեց նաև Խորհրդային Միությունում սկիզբ առած «պերեստրոյկան»: Դա բերեց նրան, որ ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությունը ստեղծեց աշխատանքային խումբ, որում ընդգրկվեցին Կոմկուսի, արհմիությունների, նոր

հասարակական-քաղաքական ուժի՝ Հայոց համազգային շարժման ներկայացուցիչները, ինչպես նաև իրավաբան-մասնագետներ: Խմբի աշխատանքները ղեկավարում էր ՀԿԿ կենտկոմի վերահսկողության ստորաբաժանման ղեկավար Սարգիս Խաչատրյանը: Թեև խմբում ՀՀՇ-ի ներկայացուցիչները փոքրաթիվ էին, բայց աշխատում էին շատ ակտիվ, ձգտում էին պատրաստել մի օրինագիծ, որը մրցակցային հավասար պայմաններ կապահովեր բոլոր առաջադրված թեկնածուների համար, ներդնել մեխանիզմներ, որոնք հնարավորինս կնվազեցնեին ընտրախախտումները, ամեն կերպ խոչընդոտել, որ գործող, այսպես կոչված՝ «ընտրական օրենսդրությունում» առկա անտրամաբանական գործընթացները չտեղափոխվեն նոր օրինագիծ: Միշտ չէ, որ դա հաջողվում էր: Օրինակ, ինչպես վերը նշվեց, պատգամավորության թեկնածուն առաջադրվում էր հիմնականում յուրաքանչյուրն իր տարածքում գտնվող աշխատավորական կոլեկտիվների կողմից, մինչդեռ այդ կոլեկտիվներում աշխատողներից շատերը այդ ընտրատարածքի ընտրող չէին հանդիսանում: Այսպիսով՝ ընտրողների մի հոծ բանակ թեկնածու էր առաջադրում ոչ թե՛ որ ինքն ընտրի այդ թեկնածուին, այլ ուրիշները, ինչն անտրամաբանական էր: Խնդիրը լուծվեց մասնակիորեն: Առաջադրման այս մեխանիզմը չհաջողվեց բացառել, քանի որ իշխանական թևի ներկայացուցիչները, որոնք մեծամասնություն էին կազմում խմբում, կողմ էին դրան: Դա հասկանալի էր՝ աշխատավորական կոլեկտիվների ղեկավարները կուսակցական-սովետական բյուրոկրատիայի (նոմենկլատուրայի) ներկայացուցիչներ էին, և նրանք ամեն կերպ կջանային կատարել վերևից ստացած հրահանգները: Բայց և այնպես, հաջողվեց նախագծում ամրագրել թեկնածուների առաջադրման նաև մեկ այլ մեխանիզմ: Դա թեկնածուների ինքնառաջադրումն էր, որը պետք է երաշխավորվեր ընտրողների ստորագրություններով՝ այն ընտրատարածքի ընտրողների, որում պասիվ ընտրական իրավունք ունեցող քաղաքացին ցանկանում էր առաջադրվել: Բնականաբար, նախատեսվում էր ընտրություններն անցկացնել մեծամասնական ընտրակարգով, քանի որ համամասնական ընտրակարգը պահանջում էր երկրում բազմակուսակցական համակարգի առկայություն, որը միայն կայացման փուլում էր: Ի վերջո, նախագիծը ներկայացվեց խորհրդարան, և տասնմեկերորդ

գումարման ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց այն հետևյալ վերտառությամբ՝ «ՀԽՍՀ ժողովրդական դեպուտատների ընտրությունների մասին» ՀԽՍՀ օրենք:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

Ընտրությունների անցկացման համար կազմավորվեցին 260 միամանդատ ընտրատարածքներ ՀԽՍՀ և ԼՂԻՄ-ի տարածքում: Վերջինիս տարածքում ընտրատարածքներ ստեղծվեցին՝ հիմնվելով «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի՝ 01.12.1989 թ. որոշման վրա: Ընտրություններն անցկացվեցին բացարձակ մեծամասնական ընտրակարգով կամ, այլ կերպ ասած՝ երկփուլային մեծամասնական համակարգով: Օրենքում առկա էր ընտրողների քվեարկության մասնակցության քվորումի պահանջ (50%):

Քվեարկության առաջին փուլը կայացավ 1990 թ. մայիսի 20-ին, և այն ընտրատարածքներում, որտեղ թեկնածուն չէր ստացել ընտրողների ձայների բացարձակ մեծամասնություն, հունիսի 3-ին անցկացվեց քվեարկության երկրորդ փուլ: Իսկ այն ընտրատարածքներում, որտեղ ընտրողների քվեարկության մասնակցության քվորում չկար, հետագայում անցկացվեցին նոր ընտրություններ: Մայրաքաղաքում և այլ քաղաքներում հաղթեցին հիմնականում ՀՀՇ-ի ներկայացուցիչները, իսկ գյուղական բնակավայրերից կազմված ընտրատարածքներում՝ կոմկուսի ներկայացուցիչները: Եվ դա բնական էր, քաղաքաբնակ ընտրողները ավելի հակված էին բարեփոխումների, և հսկողությունն ավելի խիստ էր, ի տարբերություն գյուղաբնակների, ովքեր ավելի շատ էին գտնվում իշխանությունների ազդեցության ներքո, և ընտրախախտում կատարելն էլ այստեղ ավելի հեշտ էր: Կային նաև ընտրված այս երկու քաղաքական ուժերը չներկայացնող ազատ խորհրդարանականներ: Նորընտիր խորհրդարանը, մինչև «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի ընդունումը, գործում էր որպես 12-րդ գումարման ՀԽՍՀ

Գերագույն խորհուրդ: Այն սկսեց գործել 1990 թվականի հուլիսի 20-ից:

Թեև նոր խորհրդարանում սկզբում ներկայացված էր երկու քաղաքական ուժ՝ Հայոց համազգային շարժումը և Կոմունիստական կուսակցությունը, սակայն շուտով կազմավորվեցին ՀՀՇ, ՀՌԱԿ, ՀՅԴ, ՀԱԺԿ, ՀԿԿ կուսակցական խմբակցությունները: Այսպես, ստեղծվեցին «Հանրապետություն» (38 պատգամավոր), «Արցախ» (11 պատգամավոր), «Լիբերալ-դեմոկրատներ» (10 պատգամավոր), «Ազգային առաջադիմություն» (10 պատգամավոր) պատգամավորական խմբերը: ՀՅԴ խմբակցությունը վերափոխվեց պատգամավորական խմբի (12 պատգամավոր):

1990 թվականի օգոստոսի 4-ին կայացավ Գերագույն խորհրդի նախագահի ընտրությունը: Այդ պաշտոնին էին հավակնում ՀՀՇ-ն ներկայացնող Լևոն Տեր-Պետրոսյանը և ՀԿԿ-ի առաջնորդ Վլադիմիր Մովսիսյանը: ԳԽ նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Երկու օր անց նախագահի առաջին տեղակալ ընտրվեց Բաբկեն Արարքցյանը (ՀՀՇ), և տեղակալ՝ Գագիկ Հարությունյանը (ՀԿԿ):

Գերագույն խորհուրդն առաջին իսկ նստաշրջանում՝ 1990 թ. օգոստոսի 23-ին, ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որով հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հիմնվելով հռչակագրի վրա՝ հաջորդ օրը՝ օգոստոսի 24-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող տասներկուերորդ գումարման ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ:

ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդը.

1991 թ. մարտի 1-ին ընդունեց «1991 թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը:

1991 թ. հունիսի 25-ին որոշում կայացրեց 1991 թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ Նախագահի ընտրությունները նշանակելու մասին: Դրա իրականացման համար 1991 թ. օգոստոսի 1-ին ընդունվեց ՀՀ օրենքը

«ՀՀ Նախագահի մասին», և 1991 թ. օգոստոսի 2-ին՝ ՀՀ օրենքը «ՀՀ Նախագահի ընտրությունների մասին»:

1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետությունն անկախ պետություն հռչակեց՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին 1991 թ. սեպտեմբերի 21-ի անցկացված հանրաքվեի արդյունքների հիման վրա:

1991 թ. նոյեմբերի 11-ին հրավիրեց հատուկ նիստ՝ նվիրված ՀՀ Նախագահի երդման արարողությանը: Մինչ այդ՝ 1991թ. հոկտեմբերի 16-ին, Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ փոխնախագահ՝ Գագիկ Հարությունյանը:

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի և տեղակալների թափուր պաշտոնները համալրվեցին: 1991թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Բաբկեն Արարքցյանը, իսկ 1992 թ. ապրիլին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ՝ Արա Սահակյանը, և նոյեմբերին՝ նախագահի տեղակալ՝ Արտաշես Թումանյանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

1995 թ. ապրիլի 4-ին ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին»: Այդ օրենքով պետք է ընտրվեր ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովը: Նախորդ Խորհրդարանը (ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդը) ընտրվել էր խորհրդային շրջանում ՀԽՍՀ ԳԽ կողմից ընդունված օրենքով:

Համաձայն այդ նոր օրենքի՝ «Ազգային ժողովը կազմված է 190 պատգամավորից: Ազգային ժողովի ընտրություններն իրականացվում են մեծամասնական և համամասնական ընտրական համակարգերի հիման վրա:

Ազգային ժողովի 150 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրական համակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ Ազգային ժողովի պատգամավոր:

Ազգային ժողովի 40 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրական համակարգով, հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների թվից»:

Ինչպես տեսնում ենք, համամասնական ընտրակարգը մուտք է գործում մեր ընտրական համակարգ: Դա բնական է, արդեն քայլ էր կատարվել դեպի *բազմակուսակցական* համակարգ, թեև հասարակական-քաղաքական կազմակերպությունները (այն ժամանակվա օրենսդրության մեջ այդպես էին անվանվում կուսակցությունները) կայացման տարբեր աստիճանների վրա էին գտնվում և, ընդհանուր առմամբ, հեռու էին կայացած լինելուց:

Համաձայն օրենքի՝ «Պատգամավորության թեկնածուներն առաջադրվում են ընտրողների ստորագրություններով առաջադրման առաջարկությունը պաշտպանելու միջոցով:

Ցուցակով պատգամավորության թեկնածուները համարվում են առաջադրված, եթե առաջադրման համար ստորագրել է 10 000-ից 12 000 ընտրող:

Մեծամասնական ընտրական համակարգով պատգամավորության թեկնածուն համարվում է առաջադրված, եթե առաջադրման համար ստորագրել է տվյալ ընտրատարածքի 500-ից 700 ընտրող:»

Այսպիսի եղանակով բոլոր պատգամավորության թեկնածուների առաջադրումը անհամեմատ ավելի ժողովրդավարական էր, քան նախկինում, երբ պատգամավորության թեկնածուների զգալի մասն առաջադրվում էր աշխատավորական կոլեկտիվների կողմից: Ինչպես նշել ենք, այս կոլեկտիվների անդամների զգալի մասը տվյալ ընտրատարածքի ընտրող չէր, և մեկ այլ շատ կարևոր հանգամանք՝ շատ դեպքերում հիմնարկի ղեկավարությունը կարողանում էր ճնշում գործադրել և իր կամքը թելադրել աշխատավորական կոլեկտիվին, որը և առաջադրում էր ղեկավարության առաջարկած քաղաքացուն: Իր հերթին՝ ղեկավարությունը ցուցումը ստանում էր վերադասից:

Այսպիսով, 40 պատգամավոր ընտրվելու էին համամասնական ընտրակարգով, փակ կուսակցական ցուցակներով: Ընտրական սահմանագիծը (շեմը) 5% էր, այսինքն՝ կուսակցությունը կամ կուսակցությունների միավորումը սահմանագիծը հաղթահարած կլիներ, եթե

ստանար «վավեր ծայների առնվազն 5 տոկոս ծայներ՝ ստացած հասարակական-քաղաքական կազմակերպություններին կամ նրանց միավորումներին կողմ տրված ծայների ընդհանուր թվից»: Սա էլ առաջխաղացում էր, երբ արդեն հետխորհրդային առաջին խորհրդարանական ընտրություններում հայոց խորհրդարանի թեկուզ և փոքր մասն ընտրվում էր համամասնական ընտրակարգով:

150 պատգամավոր ընտրվելու էին մեծամասնական ընտրակարգով:

«Առաջին փուլում ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է առավելագույն կողմ ծայներ, բայց ոչ պակաս, քան վավեր ծայների 25 տոկոսը:

Եթե առաջին փուլում քվեարկվում են երկու թեկնածու, և նրանցից ոչ մեկը չի ստացել վավեր ծայների 25 տոկոսից ավելի կողմ ծայներ, ապա տվյալ ընտրատարածքում ընտրությունները համարվում են չկայացած, և ընտրատարածքի մանդատը մնում է թափուր:

Առաջին փուլում երկուսից ավելի թեկնածուների քվեարկվելու դեպքում, եթե ոչ մեկը չի ընտրվել, ապա առաջին և երկրորդ ամենաշատ կողմ ծայներ ստացած թեկնածուների միջև անց է կացվում կրկնական քվեարկություն (երկրորդ փուլ), որի արդյունքով ընտրված է համարվում ամենաշատ կողմ ծայներ ստացած թեկնածուն:

Ընտրությունների ցանկացած փուլում, երբ քվեարկվում է մեկ թեկնածու, ապա նա ընտրված է համարվում, եթե ստացել է վավեր ծայների կեսից ավելի կողմ ծայներ»: Սա հարաբերական և բացարձակ մեծամասնական ընտրակարգերի միջինացված տարբերակ էր: Այն մի կողմից ավելի դյուրին էր դարձնում թեկնածուի ընտրվելը՝ բացարձակ մեծամասնական ընտրակարգի համեմատ, մյուս կողմից՝ թույլ չէր տալիս չնչին քանակությամբ ծայներով (պակաս, քան վավեր ծայների 25 տոկոսը) ընտրվել՝ ի տարբերություն հարաբերական մեծամասնական ընտրակարգի: Շատ ցածր քանակի ծայներով թեկնածուի ընտրվելը լեգիտիմության խնդիր էր առաջացնում:

Անհամեմատ ավելի ժողովրդավարական էր հանձնաժողովների կազմավորման մեխանիզմը: Եթե նախկինում դրանք փաստացի կազմավորում էին միակուսակցական համակարգում կուսակցական մարմինները, ապա 1995 թ. օրենքում՝ «Կենտրոնական ընտրական

հանձնաժողովը կազմված է առնվազն 7 մարդուց՝ նախագահից և 6 անդամից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների թեկնածությունները առաջադրում են Գերագույն խորհրդի պատգամավորները՝ յուրաքանչյուր առնվազն 10 պատգամավորից 1 թեկնածու սկզբունքով»: Եթե ԿԸՀ առաջադրված անդամների թիվը պակաս է 6-ից, ապա թափուր տեղերը լրացնում է ՀՀ Նախագահը:

«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ տեղակալը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հաստատվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմից»:

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը կազմված է առնվազն 7 հոգուց: Մինչև Ազգային ժողովի պատգամավորության թեկնածուների գրանցման ժամկետի ավարտը հանձնաժողովի կազմում հավասար ներկայացուցչության ապահովմամբ ընդգրկվում են համամասնական ընտրական համակարգով ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները»:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը նույնպես կազմվում էր առնվազն 7 հոգուց և կազմավորվում նույն այն կարգով, որով կազմավորվում էր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Այսպիսով, կազմավորվում էին հավասար ներկայացվածությամբ բազմակուսակցական հանձնաժողովներ:

Պետք է նշել, որ ընտրությունից հետո ընտրողների ցուցակները մասնակիցների ստորագրությամբ փակցվում էին տեղամասային կենտրոնում՝ ի ցույց ընտրողների: Հետագա ընտրություններում պատճենահանման համար սահմանված գումարը վճարողին տրվում էին դրանց պատճենները: Սակայն հետագայում՝ 2000-ականներին, հրապարակայնությունը նվազեց, այդ ցուցակները դասվեցին գաղտնի փաստաթղթերի շարքին, որն աննախադեպ էր: Աշխարհում քվեարկության գաղտնիությունն ապահովվում է քվեարկված քվեաթերթիկի բովանդակությունը որևէ մեկին չցուցադրելու պարտադրանքով: Թեև տեղամասային կենտրոնից դուրս գալուց հետո կարող ես ասել, թե ում օգտին ես քվեարկել (ճիշտ կամ ոչ ճիշտ): Օրինակ, դրանց հիման

վրա, մինչև քվեատուփերում եղած քվեաթերթիկների հաշվարկը, հրապարակում են կայացած ընտրությունների արդյունքները՝ ըստ հարցման (ըստ էքզիթ-փոլի): Միայն 2016 թ. ընդդիմության ճնշման տակ ընդունված «Ընտրական օրենսգրքում» ընտրողների մասնակցության անհեթեթ գաղտնիությունը վերացվեց:

1995 թ. ընդունված ՀՀ օրենքը «ՀՀ ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ապահովում էր ընտրությունների հրապարակայնությունը «Ընտրական հանձնաժողովների նիստերին, այդ թվում՝ պատգամավորության թեկնածուներին գրանցելիս, քվեատուփերը կնքելիս, բացելիս և ձայները հաշվելիս, ընտրությունների արդյունքները որոշելիս, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում իրավունք ունեն ներկա լինել հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մամուլի, հեռուստատեսության և ռադիոյի ներկայացուցիչները, դիտորդները, տվյալ ընտրական տարածքում գրանցված պատգամավորության թեկնածուների վստահված անձինք»: Այսպիսի մեծաթիվ անձանց ներկայությունը բարդացնում էր խախտումների հնարավորությունը: 2000-ականներին սկսեց գործել ընտրակաշառքների երևույթը, ինչը կատարվում էր տեղամասային կենտրոնից դուրս, և դրանք գործնականում անհնար էր վերահսկել:

1995 թ. խմբագրության ՀՀ Սահմանադրությամբ ՏԻՄ-երի, ՀՀ ԱԺ-ի և ՀՀ Նախագահի լիազորությունների ժամկետները սահմանված էին համապատասխանաբար 3 տարի, 4 տարի և 5 տարի: Մեր Սահմանադրության «հայրերն» իմաստ էին տեսնում դրա մեջ. իշխանությունները միաժամանակ չեն փոփոխվում բոլոր մակարդակներում և իշխանության ճյուղերում, և դա ավելի բարձր հավանականությամբ կարող է ապահովել քաղաքական բազմազանություն, որի արդյունքում դրանց միջև կարող է գործել մեդիսոնյան հակակշիռների ու զսպումների մեխանիզմը: 2015 թ. ՀՀ Սահմանադրությամբ բոլոր թվարկվածների լիազորությունների ժամկետը հավասարեցվեց՝ դարձվեց 5 տարի:

ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի ընտրությունները տեղի ունեցան 1995 թ. հուլիսի 5-ին: Օրենքով սահմանված 5 տոկոսի սահմանագիծը հաղթահարեց 5 կուսակցություն, որոնց միջև մանդատները

բաշխվեցին այսպես. «Հանրապետություն» միավորում՝ 50 տոկոս (20 պատգամավոր), «Շամիրամ»՝ 20 տոկոս (8 պատգամավոր), ՀԿԿ՝ 15 տոկոս (6 պատգամավոր), ԱԺՄ՝ 7,5 տոկոս (3 պատգամավոր), ԱԻՄ՝ 7,5 տոկոս (3 պատգամավոր): Ստեղծվեց նաև «Բարեփոխումներ» պատգամավորական խումբը (31 պատգամավոր), և 21 պատգամավոր ընդգրկված չէր որևէ խմբակցության կամ պատգամավորական խմբի կազմում: Հետագայում ձևավորվեց «Երկրապահ» պատգամավորական խումբը (17 պատգամավոր): 1995 թ. հուլիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Բաբկեն Արարքցյանը, նույն օրը ԱԺ փոխնախագահ ընտրվեցին Կարապետ Ռուբինյանը և Արա Սահակյանը:

ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի աշխատանքներն սկսվել են 1995 թ. հուլիսի 27-ին և ավարտվել 1999 թ. հունիսի 9-ին: Գումարվել է 9 հերթական, 12 արտահերթ նստաշրջան, 64 հերթական, 14 արտահերթ և 2 հատուկ նիստ: Առաջին գումարման Ազգային ժողովն ընդունել է 302 օրենք, վավերացրել 154 միջազգային պայմանագիր: Ընդունվել է 658 որոշում, որոնցից 331-ը՝ նորմատիվային, 327-ը՝ արձանագրային:

1998թ. փետրվարի սկզբին Հայաստանում սկսվեց իշխանական ճգնաժամ, որը պայմանավորված էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման և, ընդհանրապես, ՀՀ զարգացման տարբեր մոտեցումների առկայությամբ: Լ. Տեր-Պետրոսյանը և իր կողմնակիցներն առաջարկում էին հակամարտության փոխզիջումային, խաղաղ կարգավորման, հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման, ապաշրջափակման ուղին: Հակառակ կողմը՝ Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Վազգեն Սարգսյանը և նրանց սատարողները, համարում էին, որ ստատուս-քվոյի անժամկետ պահպանման պայմաններում էլ կարող է երկիրը զարգանալ: Այս խմորումները բերեցին խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխման՝ ոչ հօգուտ ՀՀ Նախագահի, և նա հրաժարական տվեց, որին հետևեց Ազգային ժողովի ղեկավարության հրաժարականը:

Ինչպես այն ժամանակ հայտարարվեց, «խաղաղության ուժերը» զիջեցին «պատերազմի ուժերին»: Դրանում միարժեքորեն

համոզվելու համար պահանջվեց 20 տարուց մի փոքր ավելի: Այսօր արդեն ակնհայտ է 1998 թ. իշխանության եկած ուժերի անհեռատես լինելը: Ցավոք, դա հասկանալի դարձավ մեծ կորուստների գնով, այդ թվում՝ մարդկային:

1991 թ. Անկախության հանրաքվեի մասին

ՀՀ Գերագույն խորհուրդն առաջին իսկ նստաշրջանում 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որով հռչակվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Դրա շարունակությունը պետք է լիներ Անկախության հանրաքվեի անցկացումը: 1991թ. մարտի 1-ին ընդունեց «1991թ. սեպտեմբերի 21-ին ՀՀ տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին» որոշումը: Հանրաքվեի հարցադրումը պետք է լիներ. **«Համաձայն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ ժողովրդավարական պետություն, ԽՍՀՄ կազմից դուրս»:**

Ընդ որում՝ որոշվեց գործընթացները իրականացնել 1990 թ. ապրիլի 3-ին ընդունված «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի տառին համապատասխան: Օրինակ, հանրաքվեի անցկացման ժամկետը որոշվեց՝ վերոհիշյալ միութենական օրենքի հոդված 2-ի համապատասխան, որում ասվում էր. «Հանրաքվեն անց է կացվում գաղտնի քվեարկությամբ ոչ շուտ, քան վեց, և ոչ ուշ, քան ինը ամիս անց՝ ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հարցը բարձրացնելու մասին որոշման ընդունումից հետո»:

Դրանից հետո սկսվեց գաղափարական-քարոզչական պայքար: Հայոց համազգային շարժումը և մի շարք այլ հասարակական-քաղաքական կազմակերպություններ քարոզարշավ էին իրականացնում «այո»-ի օգտին: Այլ կազմակերպություններ «ոչ»-ի կողմնակից էին և այդ ուղղությամբ էին քարոզարշավ իրականացնում: Վերջիններս դա հիմնավորում էին, թե Ռուսաստանից անջատվելով՝ չենք կարող գոյատևել: Մոսկվայում 1991 թ. Օգոստոսյան պուտչի տապալումից (օգոստոսի 21-ից) հետո ի հայտ եկան ոչ հեռատես քաղաքական ուժեր, որոնք պահանջում էին չղեկավարվել միութենական օրենքով,

անհապաղ հռչակել անկախությունը Գերագույն խորհրդի միջոցով, իբր՝ սեպտեմբերի 21-ին արդեն ուշ կլինի:

ՀՀ ԳԽ Անկախ պետականության և ազգային քաղաքականության հարցերի մշտական հանձնաժողովն ընդդիմադիր քաղաքական ուժերի մասնակցությամբ այս թեմաներով կազմակերպեց քաղաքական քննարկումներ: Քննարկումների արդյունքում վեց կազմակերպություն 1991թ. հուլիսի 10-ին միասնական հայտարարությամբ հրապարակեցին սեպտեմբերի 21-ի հանրաքվեին մասնակցելու և դրական պատասխան տալու կոչով: Հայտարարությունը չստորագրեցին ՀԿԿ-ն և ՀՅԴ-ն:

Հանրաքվեն նախապատրաստելու և անցկացնելու համար կազմավորվեցին հանրաքվեի հանձնաժողովներ, որոնք, համաձայն օրենքի, եռաստիճան էին:

Հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի նախագահ էր ընտրվել Բաբկեն Արարքցյանը: Հանձնաժողովը շատ ներկայացուցչական էր: Օրինակ, դրանում ընդգրկված էին՝ անվանի գեղանկարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի ճարտարապետական հանձնախմբի և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գրիգոր Խանջյանը, փիլիսոփա, պատմաբան, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը և այլ անվանի մարդիկ:

Սեպտեմբերի 21-ին քաղաքացիները մեծ խանդավառությամբ էին մասնակցում հանրաքվեին, և արդյունքները այսպիսին էին.

1. Հայաստանի Հանրապետության հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցողների թիվը՝ 2.163.967 մարդ:

2. Քվեարկության մասնակիցների թիվը՝ 2.056.758 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 95,4 % -ը:

3. «Այո» քվեարկած քաղաքացիների թիվը՝ 2.042.262 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 94,39 %-ը:

4. «Ոչ» քվեարկած քաղաքացիների թիվը՝ 10.002 մարդ, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 0,46 %-ը:

5. Անվավեր ճանաչված քվեաթերթիկների թիվը՝ 4129, որը կազմում է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների թվի 0,19 %-ը:

Դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով ՀՀ Գերագույն խորհրդի, հասարակական-քաղաքական կազմակերպությունների կողմից հրավիրվել էր 117 դիտորդ՝ 25 երկրներից: Դիտորդների եզրակացությունները դրական էին, և հանրաքվեի անցկացման ընթացքում «ՀՀ հանրաքվեի մասին» օրենքի խախտման վերաբերյալ որևէ բողոք չի ներկայացվել:

Այն տարիներին իշխանության եկած քաղաքական ուժերը նպատակադրված էին անցում կատարել նոր հասարակական-քաղաքական և տնտեսական ֆորմացիայի, որն իրականացվեց: Նպատակներից մեկն էլ *քաղաքական ազատականացումն էր, ինչը քաղաքացուն կտար ազատ ընտրելու իրավունք և կպաշտպաներ այդ իրավունքը: Թեև այդ ժամանակահատվածը ծանր անցումային շրջան էր, բայց դա հնարավորինս իրականացվեց:*

ԽԱՂԱՏՈՒՐ ԲԵԶԻՐՋՅԱՆ

- ՀՀ առաջին գումարման Գերագույն Խորհրդի պատգամավոր, 1990-1995 թթ.
- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ, 1990 թ.
- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, 1991-1994 թթ.
- ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ, 1996-1999 թթ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱԶԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԸ**

Մաս 2

Կազմեց **Արամ Մանուկյանը**

Խմբագիր-սրբագրիչներ՝
Լիզա Ճաղարյան
Սեդա Մեսրոպյան
Իրավական խմբագրում՝
Արմեն Խաչատրյան

Հրատ. խմբագիր՝
Տեխն. խմբագիր՝
Էջադրումը՝
Կազմը՝

Արքմենիկ Նիկողոսյան
Արարատ Թովմասյան
Նարինե Հովհաննիսյանի
Սևանա Գրիգորյանի



**FRIEDRICH NAUMANN
FOUNDATION** For Freedom.

Հարավային Կովկաս

**Ֆրիդրիխ Նաումանի
«Հանուն Ազատության» հիմնադրամ**

Հարավային Կովկաս
Ճովելիձե փ. 10, 0108 Թբիլիսի
Հեռ.՝ (+995-32) 2250594
Ֆաքս՝ (+995-32) 2250594



Անտարես

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը
ՀՀ, Երևան 0009, Մաշտոցի պող. 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am



ԿնՏաբեք